



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2 1893

ՓԵՏՐԻԱՐ

1893 № 2

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	երես	
1 ՇԻՐՎԱՆՁԱԴԷ	197	Արսէն Դիմաքան:
2 ՄԽԹԱՐԵԱՆՅ, ԱՐՇԱԼՈՅՍ	253	Գարնանալին առաւօտ (բանաստ.):
3 ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ	255	Քեօլօղլին կալանաւոր:
4 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	267	Օրօրոցագող (բանաստեղծ.):
5 ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ	269	Առանց դաւանանքի (վէպ):
6 ԲԱԼԱԳԱՆ, ՍԱՄՈՒԷԼ	289	Լուի Պատեօր (վերջ):
7 ԹԱՌԱՅԵԱՆՅ, ՍԵՂԻՍԿ	297	Հալ բողոքական համայնքը:
8 Ս. Թ.	310	«Գոլուժեան կռիւներ»:
9 Ա.	315	«Նորալր Բիւզանդացի»:
10 ԼՈՒՍԻՆԻ	317	Ճամանակակից տեսութիւն:
11 ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՅ, ԱՐՇԱԿ	326	Թարգմանելու իրաւունքը:
12 Ֆ.	330	Ռուսաստանից:
13 ԽՄԲ.	343	Զանազան լուրեր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՅԻ

Типография М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1893



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2 1893

Փ Ե Տ Ր Ի Ա Ր

1893 № 2

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр., д. № 41.

1893

საქართველო

საქართველოს საზოგადოება

საქართველო

საქართველო

საქართველო

საქართველო

Дозволено цензурою. Тифлиси, 13 Февраля 1893 г.

საქართველო

საქართველო

საქართველო

საქართველო

საქართველო

V SURԻ ՄՈՒՐՃ՝ SURԻ V

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐՍԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1893

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻՍԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակի 1893 թվականին նոյն ծրագրով, որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակի ամեն ամիս 8 — 10 թերթ մեծութեամբ, աւելին կախած կը լինի բաժանորդների թւից:

«ՄՈՒՐՃ»-ի ցայժմեայ մշտական բաժինները կը մնան նաև 1893 թվականին, այն է 1) Յօդածներ մեր կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ): 2) Յօդածներ հասարակական կեանքի ընթացիկ խնդիրների և երևոյթների մասին (ներքին Տեսութիւն, Ամսույ քրոնիկ): 3) Հետազոտութիւններ անտեսական: 4) Յօդածներ քաղաքական անցքերի և ընդհանուր քաղաքական դրութեան մասին (Քաղաքակ. Տեսութիւն): 5) Դրական ընդարձակ քննադատութիւններ: 6) Յօդածներ ընթացիկ գրականութեան վերաբերեալ (Դրախօսութիւն): 7) Ընդհանուր յօդածներ գիտութիւններից: 8) Յօդածներ գիտութեան ընթացիկ խնդիրների մասին (Գիտական քրո-

նիկ): 9) Ճանապարհորդական նկարադրութիւններ: 10) Թղթակցութիւններ ուսաց կայսրութեան զանազան տեղերից: 11) Արտասահմանեան քրոնիկ: 12) Վէպեր, վէպիկներ, պատկերներ, 13) Ոտանաւոր բանաստեղծութիւններ: 14) Երաժշտական քրոնիկ: 15) Զանազան լուրեր: 16) Յայտարարութիւններ:

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ 1893 թւականին կը բաղկանայ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական վիպական գրաւորքներից: Ինքնուրոյնների մէջ կարեւորագոյն տեղը կը բռնի՝ «ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» վէպը, գործ մեր նոր աշխատակից պ. Ալեքսանդր Շիրական զաւգէի, որ կըսկսի տպւել 1893 թ. առաջին համարից և որ հաւանօրէն կը վերջանայ օգոստոս ամսին:

Թարգմանական մասի մէջ կը լինի շարունակութիւնը Հ. Սենկևիչի «ԱՌԱՅ ԴԱԻԱՆԱՆՔԻ» վէպի, այն է երրորդ և վերջին մասը: Նոր բաժանորդները ձրի կը ստանան այդ վէպի առաջին և երկրորդ մասերը:

Բացի դրանից կը տպւեն աւելի մանր վէպեր կամ վէպիկներ, պատկերներ և այլն, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, ինչպէս մինչ այժմ:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագիրն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները կարող են վճարել 8 ռուբլի:

ԲԱԺԱՆՈՐԴ գրելու համար դիմել կամ Խմբագրատունը՝ (Тифлис, Въ Редацію „МУРՇ“) կամ մեր գործակալներին (տես «Մուրճ»-ի կազմի ետևի երեսը):

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ

մա ս առաջիկ

(Շարունակութիւն ¹)

X

Երեկոյ էր: Տիկին Բարաթեանը, առանձնացած իւր սենեակում, զուգուում էր: Նա չարացած էր. օրիորդ Գալիանէն, առանց նրան սպասելու, արդէն գնացել էր իւր մի ընկերուհու մօտ: Այդտեղից նա Բարաթեանի հետ պէտք է ուղևորէր Թաորոն:

Դա մի թեթեւ պատճառ էր տիկնոջ համար, իսկ բուն շարժառիթը ուրիշ էր: Դառնութեամբ և սրտի կսկիծով նա խորհում էր առհասարակ իւր վիճակի մասին: Մի վիճակ, որ ստիպում էր այնքան թարմ, այնքան զեղեցիկ կնոջը թե թեի տւած թատրոն մտնել մի հնամաշ, ուժաթափ, մի ալեգարդ մարդու հետ: Որքան, երևի, ծիծաղում են նրա վրայ բաղդաւոր ընկերուհիները: Եւ իրաւունք ունեն. միթէ ինքը տիկինը չէր ծիծաղիլ մի ուրիշի վրայ:

Նա կանգնած էր բարձր հացելու առջև թեթեւ հագուստով, կիսաբաց կրծքով և հոլանի թեւերով: Նա հիանում էր ինքն իրա-

նով: Գանգուր և Թանձր մաղերը, ինչպէս մայիսեան դալար խոտ, փռւել էին նրա զիրուկի, սպիտակ և կիսամերկ թիկունքի և ուսերի վրայ: Ներքին յուզմունքից նրա կուրծքը ուժգին երերւում էր և կոկորդի բարակ կապտագոյն երակները փքւում: Նրա կամարաձև, սլարսկական ճաշակով դժաւորւած, սև յծնքերի տակ տեղաւորւած թուխ աչքերը պապղում էին կրքոտ կառուի աչքերի պէս: Նրա լիք-լիք կիսաբաց շրթունքները կապտել էին և թեթեակի դողում էին:

Նրբեմն նա զեղեցիկ արծաթեայ սանրը ազատում էր հարուստ մաղերի ալիքների միջից և աւելի ուշադիր դիտում իրան՝ սկսած տափակ նեղ և սպիտակ ճակատից մինչև ոտների ծայրերը: Նա անիծում էր իւր անսիրտ ծնողներին: Ինչո՞ւ հարստութեամբ հրապուրւելով իրանց տասնութ տարեկան աղջկան տւեցին քառասուն ու իննը տարեկան թառամածին: Անդու՞թ հայր, դու ծախեցիր քո աղջկան, դու քո սլարտատէրներից ազատւելու համար հարուստ փեսայ դասար, որ նա իւր փողով քեզ օգնի: Դու հասար քո նպատակին քո աղջկայ բաղդի գնով: Օ՞, եթէ նա այն ժամանակ ունենար այժմեան խելքը, համարձակութիւնը և կամքի կորովութիւնը, երբէք երբէք չէր մոնիլ այդ դժոխքը:

«Գոնէ մեռնէր, այրի դառնայի», — կրկնում էր նա մտքում:

Բայց Պետր Սոլումոնիչը չէր էլ մտածում մեռնելու մասին, այնքան նա առողջ էր, ամրակազմ և այնքան նա խնամում էր իւր առողջութիւնը:

Առաջին ծանօթը, որին տիկինը պատահեց թատրոնում, Դիմաքսեանն էր: Հակառակ սովորականին՝ նա սիրալիր կերպով բարեեց երիտասարդին, որպէս զի կամացուկ իւր թիւը ազատէ ամուսնու թևի տակից, որ այնպէս ամուր սեղմել էր նրան:

Պետր Սոլումոնիչը գովեց Դիմաքսեանի դասախօսութիւնը, հայրաբար ձեռը խփեց նրա ուսին և բարեկամաբար յանդիմանեց, որ ուշ ուշ է այցելում իրան: Արդարեւ, այն օրից երբ նա զգաց, որ անտարբեր չէ դէպի օրիորդ Գայիանէն, այն օրից նա ամաչում էր Բախտամեանների տուն գնալ, թէև կը ցանկանար ամեն օր այնտեղ լինել: Միայն ամեն առիթից օգտւում էր զոնէ դրսում տեսնելու օրիորդին և հետը խօսելու:

Երկու շաբաթ էր նա տենդային յուզմունքի մէջ էր։ Պաշտօնակիցները նրա հետ իրանց կռիւը նորոգել էին։ Այժմ նրան հալածում էին ամենքը։ Նոյն իսկ կողմնակիցները շատ թոյլ պաշտպանութիւն էին ցոյց տալիս։ Ամբողջ հոգով նա բողոք էր բարձրացրել դպրոցի հակաառողջական պայմանների, սենեակների փոքրութեան և մթութեան, օդի սակաւութեան դէմ։ Նա պահանջում էր արմատական վերանորոգութիւն։ Այս պատճառով հոգաբարձուների մեծ մասն էլ վրդովել էր նրա դէմ, որ անընդհատ դատապարտում էր նրանց թուլութիւնը և անուշադիր լինելը դէպի աշակերտների վիճակը։

Միւս կողմից, մի հայ լրագրում ծաղրի էին ենթարկել նրա դասախօսութիւնը։ Եւ նա իւր սրտի թոյնը այժմ ուղղել էր դէպի լրագրական թշնամիները։ Բայց աւելի նա վշտացած էր մի ուս թերթում տպած յօդածից։ Այստեղ անյայտ հեղինակը բաւական չէր որ պարսաւել էր նրա դասախօսութիւնը, այլ և զրպարտել էր նրան, առանց փաստերի, ասելով, թէ նա իւր բոլոր մտքերը քաղել է օտար գրքերից։ Այդ էլ բաւական չէր, յօդածագիրը կծու ծաղրով աւելացրել էր.

«Պարոն դասախօսի չարութիւնը հայ ինտելիգենցիայի դէմ կարելի է բացատրել հոգեբանօրէն։ Բայց ի՞նչ մեղաւոր են հայերը, որ անգուժ բնութիւնը երբեմն մարդկանց փոքրիկ մարմնի մէջ նրանց ուժից աւելի չար նախանձ է դնում»։

Նա մենակ նստած էր բուքետի կիսախաւար սենեակում և իւր սրտի վիշտը ճգնում էր խեղդել ծխախոտի թանձր ծխով։ Նրան մօտեցաւ բժիշկ Սալամբէկեանը սովորական դժգոհ և մաղձոտ ժպիտը երեսին։

—Դատարկ բան է,—եղաւ բժշկի առաջին խօսքը։

—Ի՞նչը։

—Աշխարհը։ Ինչո՞ւ համար են այդ կոմեդիաները, այդ ծիծաղելի իրարանցումը. մեր ազգից ոչինչ չի դուրս գալ, ոչինչ, ուր մնաց կանանց գործունէութիւնից։

—Դու էլ օրից օր պեսսիմիստ ես դառնում, չը գիտեմ քեզ ինչ է պատահել։

—Բժշկական օրէնքով խրոնիական կատարը ունեցողները պես-

սիմիստ են լինում, երեւի, իմն էլ դրանից է: Քո ստամոքսը առողջ է, կարող ես օգտիմիստ լինել, ինձ ինչ: Միայն այս կ'ասեմ, որ ես մարդկանց չեմ հաւատում, մանաւանդ այդ սիւրտուկ հագած նապաստակին:

Նա զլխով ցոյց տւեց իրաւաբան Վէքիլեանին, որ կանգնած էր մի խումբ մարդկանց մէջ:

— Ո՛ւհ, անարգ, անամօթ:

Գիմաքսեանը ապշած նայեց բժշկի երեսին. առաջին անգամն էր նրանից լսում այդպիսի կոպիտ ածականներ իւր ընկերոջ մասին:

— Ինչո՞ւ, ինչ է պատահել, — հարցրեց նա:

— Այն է պատահել, որ այն զարշէլի յօդածի հեղինակը դա է, այդ մեր խոհեմ և զգոյշ ընկերը:

— Վէքիլեանը:

— Նա ինքը:

Գիմաքսեանը ոտքի կանգնեց այնքան արագ, այնքան յանկարծակի, որ, կարծես, մէկը նրա մարմնին էլիկորական թելի ծայր կպցրեց: Նրա գոյնը թռաւ, շրթունքները կապտեցին, նօսր միւրուքի իւրաքանչիւր մազը էլեկտրական մի թել դարձաւ, ցնցելով երեսի բոլոր մկանունքները:

— Այդ անկարելի է, անհաւատալի է, — գոչեց նա շնչասպառ:

— Գիտես, որ առանց հիմնաւոր փաստի ես ոչ ոքի չեմ մեղադրում:

— Ո՞վ ասաց քեզ:

— Լրագրի աշխատակիցներից մէկը, մի բարեկամ մարդ, որ ինքն էլ վրդովւած է այդ պատկերի դէմ: Բայց մի՞թէ Վէքիլեանին զու նո՞ր ես ճանաչում:

— Ես նրան միշտ ազնիւ մարդ եմ համարել:

— Պէտք է ասած, որ զու էլ Մսերեանից պակաս յափշտակւողը չես:

Մի ծանր և դառն հոգոց զուրս թռաւ Գիմաքսեանի ալեկոծւող կրծքից: Այո, բժիշկը չէ սխալւում, յօդածի ոճը, հեղինակու ձևը միայն Վէքիլեանին է յատուկ:

— Բայց զու շատ վրդովւեցիր, Արսէն. եթէ իմանայի, չէի ասիլ, միթէ արժէ...

—Չարժէ, երբ տեսնում ես, մարդիկ խախտում են հաւատդ դէպի ընկերական զգացումները. չարժէ, երբ երեսիդ մէկ են ասում, ետեւիցդ — ուրիշ: Չարժէ վրդովւել այդ ստոր, խարդախ երեւթի դէմ: Զը գիտեմ ինչպէս քեզ, ուրիշներին, բայց ինձ ամեն բանից աւելի մարդկանց կեղծութիւնը և երկդիմի վարմունքն է կատաղեցնում:

Նա սկսեց ուժգնաբար ներշնչել ծխախոտի ծուխը, կարծես, կամենալով չետ մղել իւր սրտի մէջ բռնկւած կսկիծը:

Զանգակը հնչեց, և նա անգիտակցաբար, յուզւած, դեղնած դիմեց բժշկի հետ դէպի դահլիճ:

Թատրոնը բոլորովին լիքն էր: Նա նայեց վայր և վեր, նայեց շուրջը և դժարութեամբ անցնելով բազմած հանդիսականների միջով, գնաց նստեց իւր տեղը: Նա չէր նկատում, որ ներկայացումը արդէն սկսւել է և բեմի վրայ մի ինչ-որ կին և մի ինչ-որ աղամարդ անխնայ աղաւաղում են հայ լեզուն: Նրա աչքերը թափառում էին այս ու այն կողմ: Նա որոնում էր Վէքիլեանին. արդեօք գաղտագող իրաւաբանը երես կունենայ ուղիղ նրա երեսին նայելու: Նրա հայեացքը կանգ առաւ օթեակներից մէկի վրայ և տեսաւ մի ուրիշ կերպարանք, որին քանի մի րոպէ մոռացել էր:

Դա Գայիանէն էր, տիկին Բախտամեանի հետ նստած: Հովհարը մեղմիկ շարժելով, նա մերթ նայում էր դէպի բեմ, մերթ հանդիսականներին: Դիմաքսեանը աչքերով հետեւեց նրա հայեացքի ուղղութեանը և այնտեղ, պատշգամբի առաջին շարքում, տեսաւ Բարաթեանին, որ երբեմն նայում էր ցած, դէպի սլարտերը, երբեմն Գայիանէին և ժպտում:

Դիմաքսեանի նրբացած զգայուն սիրտը միայն հասկանում էր այդ ժպիտների բռն իմաստը: Գուշակում էր նա, որ ամեն ինչ վերջացած է, որ յաղթանակը արդէն Բարաթեանը տարել է: Յաղթանակ, միթէ նա մրցէլ էր: Ո՛չ, նրա կռիւը ներքին էր, հոգեկան, նրան զրգռում էր ոչ այնքան այն, որ Բարաթեանը գրաւել էր այդ օրիորդին, որքան այն, որ ինքը անկարող էր գրաւել նոյն օրիորդին, եթէ ոչ մի հակառակորդ էլ չ'ունենար: Սեպհական ապիկարութեան սոսկալի գիտակցութիւնն էր նրան վշտացնում: Ահա նա նստած է ուրիշ կանանց բազմութեան մէջ:

Ո՞վ է նրա վրայ ուշք դարձնում—Գրեթէ ոչ ոք: Իսկ եթէ կան նայողներ և հետաքրքրւողներ, լոկ նրա անւան համար են: «Ո՞րն է Դիմաքսեանը. նա, Ֆիլ, ի՞նչ ողորմելի է»: Մի ներքին չար ձայն այդ դարձածը անընդհատ հնչեցնում էր նրա ականջին: «Ֆիլ, ի՞նչ ողորմելի է», արդեօք կարող է սրանից աւելի վիրաւորական խօսք լինել մարդու մասին:

Գողճողութիւնը բեմի վրայ վերջացաւ մի պառաւ կնոջ ձեռով: Թատրոնը աղմկեց: Դիմաքսեանը ազատեց իւր փոքրիկ մարմինը բազկաթոռների նեղ միջանցքներից և դուրս եկաւ: Բժիշկ Սալամբէկեանը բռնեց նրա թևից, և նրանք միասին բարձրացան թատրոնի վերին չարկը:

Օթեակների նեղ և աղեղնաձև նախագաւիթը լիքն էր կանանցով: Մի ինչ-որ նորեկ հայ հուսար, որ նմանում էր թւերը կորած մորեխի, ընդհանուրի ուշադրութեան առարկան էր: Կուրծքը ուռցրած, բեղերը ոլորելով, նա Մարսի շանթահար հայեացքներ էր ձգում անցուդարձ անող կանանց վրայ:

— Բարև, Արսէն, — գոչեց հուսարը յանկարծ:

Դիմաքսեանը հազիւ կարողացաւ ճանաչել իւր մանկական ընկերներից մէկին, որ յայտնի էր իւր գեղեցիկ դէմքով և չար բնավորութիւնով: Քանի քանի անգամ երեսայ ժամանակ հուսարը ծաղրել էր նրան: Պէտք էր մի փոքր խօսել, ուստի նա ստիպւեց կանգ առնել:

— Ասա, խնդրեմ, — ընդհատեց հուսարը ինքն իւր խօսքը, — ո՞վ է այդ բրիւնետիկան:

Պատի տակ կանգնած էր տիկին Բախտամեանը մի ուրիշ տիկնոջ հետ և ստէպ ստէպ հովհարի ետևից նայում էր հուսարին: Տեսնելով Դիմաքսեանին գեղեցիկ սպայի հետ՝ նա ժպտաց և զլուխը շարժեց:

— Ան, զնաչիտ դու ծանօթ ես, — գոչեց հուսարը, — բրաւօ, զնաչիտ չաղթութիւններ ես անում: Զի՞ կարելի, որ ինձ էլ ծանօթացնես, նե դուրս ես կայեա, Պիտերում բլոնդին կաները զահլէս տարեցին: Նուսս, ծանօթացրո՞ւ: Նէ լճվկօ, ամ, զնայու ստարօվօ րեվնիվցա, վախենում ես, որ խլեմ ձեռքիցդ: Դու միշտ նախանձոտ էիր, պօմնիշ:

Դիմաքսեանը, շաղակրատ հուսարին թողնելով, առաւ բժշկի թէւը և հեռացաւ: Այժմ նա հոգով զղջում էր թատրոն գալու մասին: Նա երջանիկ էր համարում Մսերեանին, որ մենակ տանը նստած միտքը զբաղեցնում է ո՞վ գիտէ ինչ փիլիսոփայական զըր-ւածքով, հանգիստ, խաղաղ, հեռու մարդկային աղմկից, հեռու կեանքի խեղդող ալիքներից: Բայց միթէ նա կարո՞ղ է Մսերեան լինել, կարո՞ղ է թարմ հասակում կեանքը թաղել չորս պատե-րում փակած, գրքերի փոշիի մէջ: Մինչդեռ նրա սիրտը լիքն է ապրելու և զգալու բուռն ցանկութեամբ: Մի ցանկութիւն, որին նա երբէք, երբէք չէ կարող զիմադրել խելքի ուժով:

Նա ուշքի եկաւ այն ժամանակ, երբ բժիշկը ուժգին թօթ-ւեց նրա թէւը, ասելով, թէ վարագոյրը արդէն բացել է բեմի վրայ:

Յաջորդ խաղամիջոցներից մէկում նա մօտեցաւ Գայիանէին և սկսեց նրա հետ շրջել: Այս անգամ օրիորդը աւելի բարեհամբոյր էր և ուրախ: Նա ուրախ էր, որ ներկայացումը յաջողել էր և անդադար չիչում էր Բարաթեանի անունը: Ի՞նչ, մի՞թէ նա արդէն բոլորովին յափշտակել է, մի՞թէ Դիմաքսեանը այնքան նշանակու-թիւն չունի նրա աչքում, որ գէթ մի քանի վայրկեան նրա առաջ մոռանանք միւսին:

Նա զգում էր իւր տկարութիւնը այդ սիրուն, կենդանի և վարվռուն օրիորդի մօտ: Նա աշխատում էր խօսքը դարձնել այն-պիսի նիւթերի վրայ, որ նրա ուշքը խլէ Բարաթեանից: Բայց այդ չէր յաջողւում: Ամեն անգամ երբ նայում էր օրիորդի կապուտակ աչքերին, նրա կամքը սառուցի պէս հալւում էր այդ աչքերի հրա-տապ ներգործութիւնից: Մի վայրկեան նա այնպէս յափշտակեց, նրա միտքը այնքան պղտորեց, խելքը այնքան մթազնեց, որ պատ-րաստ էր հէնց այդտեղ իսկ, առանց տառանման, յայտնել իւր սէրը: Այո, նա նրան սիրում է, նա նրա համար տանջւում է, մորմոք-ւում: Այդ պէտք է հասկանայ օրիորդը, պէտք է գնահատի, եթէ խելք ունէ, պէտք է զգայ, եթէ սիրտ ունէ:

Նրանք խօսեցին բեմի վրայ խաղացւող պիեսի մասին: Հերոսը զո՞հ էր դառնում կրակոտ սիրոյ համար՝ մի ընտանեկան անյաղթելի խռնդոտի: Դիմաքսեանը չէր հաւանում պիեսի գա-

ղափարը: Նա ոգևորւած բացատրում էր սիրոյ անյաղթելի ոյժը: Օրիորդը չէր հակառակում: Այս, որքան նա այդ բոպէին հրապուրիչ էր, որքան բարի և ներողամիտ էր նրա հայեացքը:

Դիմաքսեանի ձայնը զողում էր: Անշուշտ նա անկարող կը լինէր իրան զսպելու, եթէ նրանք առանձին լինէին, մի խուլ անկիւնում, հեռու մարդկանց այդ ատելի աչքերից:

Յանկարծ օրիորդը լուրջ աչքերով նայեց նրա երեսին և, արագօրէն զլուխ տալով, հեռացաւ: Նա զգաց իւր խօսակցի հոգեկան զրուծիւնը, նա փախաւ աւելորդ խօսքերից:

Դիմաքսեանը միայնակ, շփոթւած, չը գիտէր ուր դիմէր, ինչպէս խոյս տար հասարակութիւնից: Նրան թւում էր, թէ չորս կողմից իւր վրայ են նայում:

Ահա հէնց այդ վայրկեանին նա տեսաւ Վէքիլեանին: Արիւնը մի նոր ուժով խփեց նրա գլխին, ականջները և ճակատը սկսեցին այրւել տաքութիւնից, երբ իրաւաբանը, անփոփոխ ժպիտը երեսին, ցիլինդրը սեղմեց կրծքին և գլուխ տուեց: Սովորոյթը ստիպեց նրան գլխի մի թեթեւ շարժումով պատասխանել այդ կեղծ բարեկամական ողջոյնին:

Իրաւաբանը մօտեցաւ նրան:

— Տեսնում ես, ինչ լաւ են խաղում:

— Կեանքում աւելի լաւ դերասաններ կան, — պատասխանեց

Դիմաքսեանը:

— Այո, այդ էլ ճիշդ է:

— Վէքիլեան, — աւելացրեց Դիմաքսեանը խիստ ձայնով, — ես քեզանից չէի սպասում:

— Ի՞նչ:

— Որ կարող ես մթին անկիւնից ինձ վրայ քարեր արձակել:

— Ձեմ հասկանում ասածդ:

— Այն անստորագիր պատկերի հեղինակը դու ես:

Վէքիլեանը այնպիսի մի զարմացական նշան արեց, որ, կարծես, աւելի անհեթեթ բան չէր լսել կեանքում:

— Ո՞վ է ասում:

— Մի մարդ, որին ամբողջ հոգով հաւատում եմ:

— Այդ մարդը ապացոյց ունէ:

—Ապացոյցներ պահանջում են դատարանում փաստաբաններից: Հասարակական կեանքում մարդու խիղճն է ապացոյցը: Յուսով եմ, մեղքդ կը խոստովանես:

—Արսէն, խեղճ մարդը զրպարտիչներին չի հաւատում:

—Բայց ճշմարիտը խօսողին պէտք է հաւատալ:

—Յօդւածը անստորագիր է, պատասխանատու է խմբագրատունը, ապացոյցների համար դիմիր այնտեղ:

—Այ, ուրեմն չես հերքում, որ դու ես հեղինակը:

—Մի բան կ'ասեմ, Արսէն. այն յօդւածը ով որ էլ գրած լինի, իմ կարծիքով, իւր մէջ քեզ համար վիրաւորական բան չէ պարունակում: Ով որ ուզում է ճշմարտութիւն քարոզել, պարտաւոր է եւ՝ ճշմարտութիւններ լսել, որքան էլ նրանք դառն լինեն: Pardon, հօրաքոյրս ինձ կանչում է:

Նա գլուխ տւեց և շտապով մօտեցաւ օթեակի դրան մօտ կանգնած մի կնոջ:

Դիմաքսեանի համար այլ ևս կասկած չը մնաց, որ Վէրիլեանը իւր դիմակաւորւած թշնամին է: Ուրեմն, ճիշդ է ասում Սալամբէկեանը, թէ այդ մարդու արտաքին վայելուչ ձևերի և բարեկամական ժպիտների տակ թաղնւած է օձային սիրու: Նա մինչև անգամ վիրաւորական չէ համարում իւր տմարդի վարմունքը:

«Կը նշանակէ՞ իմ դէմ սկսել են զինեւէնոյն իսկ իմ ընկերները: Բայց նրանք ինձ հետ ուխտել էին միևնոյն համոզմունքով, միևնոյն ուղղութեամբ գործել: Այդպէս են ուրեմն կատարում իրանց ուխտը: Այլ ևս ո՞ւմ վրայ յոյս դնել, ումո՞ն հաւատալ:»

Միթէ նա միայնակ պէտք է մնայ, միայնակ իւր սրտի բոլոր դառնութիւններով, հոգու բոլոր ձգտումներով: Բժիշկ Սալամբէկեանը տակաւին մաքուր է: Բայց կայ և մի ուրիշը — Մսերեանը: Այո, այդ մարդուն կարելի է հաւատալ, նրա պարզասրտութեան վրայ յոյս դնել: Նա կայ և կը մնայ միշտ անկեղծ, բարեհոգի, վեհանձն:

Ներկայացումը վերջացել էր: Հանդիսականները միահամուռ դիմում էին դէպի դուրս: Դիմաքսեանի աչքերը թափառում էին այս ու այն կողմ: Եւ դարձեալ նա տեսաւ Գայիանէին: Ահա եւ՝ «նա», միշտ ուրախ, միշտ զւարթ, միշտ ժպտուն: Նա հեռուում է օրիորդին և շշնշում տիկին Բախտամեանի հետ: Իսկ ինքը, Դի-

մաքսեմնը... երբէք նա այնքան փոքրիկ, ճնշւած և սեղմւած չէր իւր աչքում, որքան այժմ:

Նա կարծում էր, որ ամենքը խղճում են իրան, ծաղրում են և ծիծաղում: Մարդկանց խառն խուռն շարքերի մէջ նա երևում էր ինչպէս ծուռ բուսած մի ծառ անտառում: Նրա փոքրիկ մարմինը հրում և մղում էր ամեն կողմից, ինչպէս մի տաշեղ ալիքների մէջ: Եւ այդ աւելի սաստկացնում էր նրա սրտի կրակը:

Ճնշեցէք, ճնշեցէք այդ տձև մարմինը: Նա ծծում է իւր ներսը զինավորակ մի թունաւոր և պայթուցիկ ոյժ: Կը զայ ժամանակ, որ այդ սղմած, կարծրացած ոյժը այլ ևս չի դիմանալ արտաքին ճնշումներին: Սոսկալի զղրդիւնով նա դուրս կը ժայթքի ոչ միայն անհատների, Վէքիլեանների, Բարաթեանների դէմքին, այլ և ամբողջ հասարակութեան, ժողովրդի, ազգի վրայ, որ ծնում է և սնուցանում այդ անհատներին: Իսկ դու, զեղադէմ օրիորդ, դու, որ այնպէս երես ես դարձնում նրանից, զգոյշ, որ քո ընտրածը արդարացնի քո յոյսերը, զգոյշ, որ այդպէս ուրախ, այդպէս ծիծաղկոտ, այդպէս երջանիկ կառք ես նստում նրա հետ...

XI

Բարաթեանի համար անտանելի էր իւր հասարակական դիրքը: Այն զգացումը, թէ ինքը մի ինչ-որ ընկերութեան հասարակ գործակալ է, վիրաւորում էր նրա անձնասիրութիւնը: Եւ դիշեր-ցերէկ նա խորհում էր — արդեօք ինչպէս ընկերական կեանքում ստեղծի մի դուրսութիւն, որ գէթ մասամբ զոհացնէր նրա փառասիրական զգացմանը:

Նա վայելում էր հօր կատարեալ հաւատարմութիւնը: Կարող էր, զրաւելով ծերունուն, նրա կարողութիւնը գործադրել, ինչպէս կամենար: Բայց այդ կարողութիւնը այնքան մեծ չէր, որ կարելի լինէր գոնէ Ֆինանսական մի խոշոր գործ սկսել: Բացի դրանից, նրա ձգտումը միայն փող վաստակելը չէր: Միթէ դրա համար էր կեանք մաշել, «բարձրագոյն» ուսում ստացել:

Մի առաւօտ նա նոր էր զարթնել, երբ ծառան ներս մտաւ և ասաց, թէ հայրը կանչում է: Ինչպէս յարգող որդի, նա շտապեց հագնուել և զնաց Գերասիմ Գերասիմիչի առանձնասենեակը: Դա մօտ

վաթսուն տարեկան մի մարդ էր վտիտ դեմքով, կարճլիկ, ծայրերը կրտած բեղերով: Երեք տարի առաջ նա պարալիչ էր ստացել, ոտները կորցրել էին քայլելու ոյժը, և ամբողջ օրը նա պառկած էր յատկապես իւր համար պատրաստած մի երկարաձև, շարժուն բազկավթուռի մէջ: Մի ծառայ կարգւած էր նրան սպասաւորելու գիշեր-ցերեկ: Գերասիմ Գերասիմիչը նախկին չինովնիկ էր, եղել էր զանազան պաշտօններում և վերջը հասել էր նահանգական վարչութեան խորհրդականի (совѣтникъ губернскаго правленія) պաշտօնին: Իւր ճարպիկ բնաւորութեան և եռանդուն աշխատասիրութեան ու ջոցով նա յոյս ունէր աւելի առաջ գնալ, բայց ճակատադէրը դաւաճանեց նրան, և նա այժմ անդամալուծ դարձած, անպէտքացած, քաշքշում էր իւր կեանքի վերջին օրերը:

Նա ծառային հրամայեց զուրս գնալ, խակ որդուն հրաւիրեց նստել:

—Ե՛հ, ի՞նչ ես մտածում ապագայիդ մասին, — հարցրեց նա իւր խուլոտ և քայքայւած ձայնով:

—Ոչինչ:

—Ոչինչ, Վրեօշ բրատ, քո հասակում փառասիրութիւնը որդնի պէս ինձ ուռում էր: Իսկ դու և ես, բրատ, միեւնոյն պտուղն ենք: Ամուսնանալու միտք — բան չունեմ:

—Ունեմ, պապա, — պատասխանեց որդին համարձակ:

—Այ երեւիլի բան, խի խի խի, հըմ, քեզ և ինձ նման մարդկանց համար շուտ ամուսնանալը վատ բան չէ: Ինձ ամուսնութիւնը չը փրկեց, քեզ էլ չի փրկիլ, բայց կարող է գոնէ մի քիչ, զննեշ, էդ ահուճ ու լեօղկ ու յու ուղգու նալօժիտ նա ստրատի... խի խի խի: Ի՞նչու ես գլուխդ քաշ գցում, ամաչում ես, էհէ, գիտեմ ինչ ծառի պտուղ ես: Քեզ ճանաչելը շատ շեշտ է, ներսս մտիկ կանեմ, քո հոգին կը տեսնեմ պըպզած: Քո երակների մէջ վազում է քո հօր արիւնը, ինչպէս իմ երակների մէջ վազում է իմ հօր արիւնը: Մեր ցեղը յայտնի է իւր թուլութիւններով: Մօլչայտ! խօս երեխայ չես, գիտես որ իզուր չեմ աչս օրին հասել, գրեխի մօլօդօստի, բրատեց: Նո՛ւ, ասան տեսնեմ, ճում ես ուզում ճանկել:

Որդին, առանց մի բան թաղցնելու, յայտնեց սրտի դաղանիքը

հօրը, ինչպէս մի հաւատարիմ ընկերոջ, որ կարող էր յարգել նրա զգացումները:

— Պետք Սոլովոնիչի քրոջ աղջիկը, -- զոչեց անդամալոյծը, -- ճանաչում եմ, ճանաչում եմ, տեսել եմ: Նիշե՛վօ, բրատեց, դու բան նե դո՛ւրա: Փող էլ ունի, ի հարկէ:

— Այդ չը գիտեմ:

— Սուտ ես ասում, շեւմա, դու իմ որդին չես լինիլ, եթէ ասանց փողի աղջիկ ուզես: Այդ աղջիկը փող պէտք է ունենայ Պետրոսի մօտ, նրա հօրն էլ ճանաչում էի: Պետքսը վատ մարդ չէ, չի խաբիլ քեզ, բայց զգոյշ կաց: Ե՛է, ուրեմն ամեն բան վերջացրել ես, երբ ես ուզում պսակեմ:

— Նեռ յայտնի չէ, պապա, դրուծիւնս անորոշ է, այս պատճառով տատանւում եմ:

— Պ ու ս ո ս յ ե, ինչո՞ւ դրուծիւնդ որոշ չէ: Քոյրեր չունես ամուսնացնելու, եղբայրդ էլ չուտով ուսումը կաւարտի, դ օ խ ո օ ր օ մ մ ե դ ի յ ի ն ի վ ը ի յ դ ե տ, բրատեց: Իմ մասին մի՛ մտածիլ, իմ պէնսիան ինձ բաւական է, մնացեալը ինչ որ ունեմ, քոնն է ու եղբօրդ:

— Բայց ես հասարակական զիրք չունեմ, -- նկատեց որդին համեստաբար:

— Պ ու ու ա կ, ինչ ասել է հասարակական զիրք: Պատիւ, չին, յարգանք, դու միշտ կարող ես ձեռք բերել քո ուսումով: Փենիս, բրատեց, ժենիս, յետոյ ամեն բան հեշտ է: Ամուսնացած մարդուն աւելի են յարգում, քան խալաստօյ շալապայի՛ն: Մենք մեծ կապեր չունենք, քեզ յայտնի է, որ մեր ազգականները, թի՛ն, ս բ ր օ դ պ ա ր ե ա դ օ չ ն ի յ... Պետք Սոլովոնիչը, օօօ, նա ուրիշ է, նա քեզ կ'օգնի: Ափսոս մայրդ կենդանի չէ, շատ կ'ուրախանար խեղճը, քեզ տեսնելով: Շեւմա, ինչ զեղեցկացել ես, հէհէ, ժամանակին քեզանից վատ չէի: Նո՛ւ, զգոյշ կաց մամ'դ ելն երից, ես -- քեզ խրատ: Տեսնո՞ւմ ես, երիտասարդական սխալների հետեանքը հրբեմն այս է, օօօ, ինչպէս ցաւում են անպիտան ոսկորներս: Բայց կնոջդ հետ պէտք է լաւ վարուես: Խեղճ մայրդ, կարող եմ ասել, իմ զոհը դարձաւ: Լաւաւ, նե չե՛վօ ս կ ր օ մ ն ի շ ա տ, եթէ ինձպէս չը լինես, ինձանից շատ էլ լաւ չես լինիլ:

Ուրեմն պատկերում ես, շատ լաւ, շատ լաւ, ես համաձայն եմ:

—Պապա, չը կարծէք որ ես առանց ձեզ մի այդպիսի քայլ կ'անէի: Ես ինքս մտադիր էի այս օրերս ձեզ յայտնել և ձեր համաձայնութիւնը խնդրել:

—Լազնօ, լազնօ, ես յամառ ու կոպիտ հայրերից չեմ, որ հակառակեմ: Ես, բրատ, սօվրեմ եննից չեմ օվեկ, բան հասկացող եմ: Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, Էհ, գնա, որդի, աչքերիցդ երևում է Բարաթիւների ցեղիցն ես: Յաջողութիւն, ոտներս ծածկիր այն պլեդով, այ, այդպէս. ախ, ինչպէս տխուր է մենակ կեանքը, գնա...

Եւ ծերունին, իւր յոգնած գլուխը թեքելով բաղկաթուռի մէջքին, աչքերը խփեց, կարծես, նիրհելու համար:

Մարտ ամսի վերջն էր, երբ Բարաթեանի և Քայիանէի մէջ, վերջապէս, տեղի ունեցաւ բացարձակ խօսակցութիւն:

Տարօրինակ էր այդ օրը Քայիանէի դրութիւնը: Վերադառնալով տուն, նա փակեց սենեակում, ու ոքի չէր թողնում այնտեղ մտնել: Վերջապէս, նրա իղձը կատարեց: Նա վաղուց գիտէր, որ սիրւում է, բայց այլ էին լուռ նշանները, այլ էր բերանացի խոստովանութիւնը: Եւ Բարաթեանը բաց արեց նրա առաջ իւր սիրտը, այն մարդը, որ բոլոր երիտասարդների շարքում միակն էր, որ գրաւել էր Քայիանէին:

Այդ երիտասարդի մէջ, օրիորդի կարծիքով, կային բարոյական ոյժ, խելք և արտասովոր ձիրքեր: Առանձնապէս սիրելի էր Քայիանէի համար նրա կիսասնփոյժ և կիսահեղձական վերաբերութիւնը կեանքին: Նա հաւատացած էր, որ եթէ Բարաթեանը չէ ոգևորւում, — որովհետեւ ոգևորւելու բան չէ տեսնում, եթէ լրջօրէն չէ վիճում, չէ տաքանում, ինչպէս Դիմաքսեանը կամ ուրիշները, — որովհետեւ խելքով իրան հաւասար մարդկանց չէ հանդիպում: Նա համոզւած էր, որ հաճոյախօս, կատակասէր երիտասարդի ներքին աշխարհը պարունակում է մի սքանչելի բան, և այդ բանը վերջ ի վերջոյ պէտք է արտայայտւի ու ամենքին հիացնի: Յաճախ Քայիանէն ուզում էր իմանալ, թէ ինչ է այդ բանը, կամենում էր արժանալ երիտասարդի հաւատարմութեանը: Բայց Բարաթեանը երբէք չէր դաւաճանում իւր մշտական սովորոյթին: Նա օրիորդի

հետ ևս վարւում էր այնպէս, ինչպէս ուրիշների հետ, հեզներով և կատակելով: Եւ Գալիանէն չէր վիրաւորւում այդ բանից, ընդհակառակը նա դեռ իրան անարժան էր համարում Բարաթեանի հաւատարմութեանը:

Իսկ մշտմ... այժմ նա սիրւած է նրանից: Ուրեմն Բարաթեանը նրա հաւատարմ է, այլ ևս նրանց մէջ դադանիք չի կարող և չը պիտի լինի:

— «Շա երջանիկ եմ», կրկնում էր նա անդադար մտքում, յետ ու առաջ անց ու դարձ անելով իւր սենեակում:

Եւ այդ երջանիկ առանձնութեան մէջ նա չէր ուզում, որ մէկը խանգարի նրան: Նա մինչև անգամ ճաշի էլ չը նստեց տնացիների հետ, պառճառելով, թէ տէր է: Սակայն տիկին Բախտամեանը մտաւ նրա սենեակը, խանգարեց նրան և մի հայեացքով ամեն ինչ հասկացաւ:

— Զըլինի թէ ուզում էք առանց մեզ հարսանիք անել, — արտասանեց տիկինը դառն հեզնութեամբ:

— Վաղը նա կը գայ քեռիի և քեզ հետ խօսելու:

— Բարի գալուստ, — մրմնջեց տիկինը, շրթունքները կրծելով: Գալիանէն այնքան ոգեւորւած և յափշտակւած էր իւր բազմով, որ նրա յուզմունքը այս անգամ չը նկատեց: Նա միայն մի բան էր ցանկանում, որ տիկինը իրան մենակ թողնի, չը խանգարի նրա երջանիկ բուրհները:

Հետեւեալ օրը Պետր Սոլոմոնիչը սուրճ խմելով լրագիրներ էր կարդում, երբ ծառան յայտնեց, թէ Բարաթեանը ուզում է նրան տեսնել: Պատկառելի բուրժուան իսկոյն հասկացաւ, որ այս անգամ երիտասարդը մի կարեւոր գործի համար է եկել, քանի որ մինչև այժմ նա երբեք իւր գալստեան մասին այդպէս չէր ազդարարել ծառացի միջոցով:

Բարաթեանը հագնւած էր սովորականից լաւ և խնամքով: Նրա դէմքը արտայայտում էր անսովոր լրջութիւն, իսկ աչքերի մէջ նկատւում էր խորին ակնածութիւն: Պետր Սոլոմոնիչից: Այս բանը մեղմացրեց ծերունու սիրտը: Նա ընդունեց երիտասարդին համեմատաբար աւելի յարգանքով քան երբ և է ընդունել էր:

Բարաթեանին հարկաւոր էր մի փոքր կողմնակի բաներից խօ-

սեւ, որպէս զի մի կերպ խօսք բաց անէ իւր նպատակի մասին: Ուստի նա զխլօմատիական հմտութիւնով սկսեց բառական հեռուից և ապա հետզհետէ մօտեցաւ բուն դործին:

Պետր Սոլոմոնիւն լսում էր նրան լուս, մերթ ականոցը զնեւով քնթին, մերթ հանելով: Կարծես, նա փորձում էր - ապակիներով լաւ կը հասկանայ լսածը, թէ առանց ապակիներին:

Երբ Բարաթեանը ասելիքը վերջացրեց և զլուխը ուղիղ պահած խորին պատկառանքով պատասխանի էր սպասում, Պետր Սոլոմոնիւն նորից հանեց ականոցը և սկսեց նայել իւր պաճկոնակի կոճակներին: Թւում էր, որ նա զբաղեց է խորհրդակցում իւր սրտի հետ հանդիսաւոր առաջարկութեան մասին: Չայն եկաւ ներսից, թէ իսկի էլ վատ չէ Բարաթեանի նպատակը: Նախ, վերջապէս, պէտք է Գալիանէին մէկի հետ ամուսնացնել, երկրորդ, այդ Բարաթեանը, Աստուած վկայ, վատ երիտասարդի չէ նմանում: Գալիանէի համար է եղել նրա այցելութիւնը, կը նշանակէ Պետր Սոլոմոնիւն իզուր էր նրան ասում, կարծելով, թէ... Էհ, վերջապէս...

— Պարոն Բարաթեան, զուր Գալիանէին անկեղծ էք սիրում:

Սիրում է անկեղծ և շատ է սիրում:

— Պարոն Բարաթեան, ձեր հօրը Գերասիմ Գերասիմիչին ասել էք, թէ ուզում էք Պետր Սոլոմոնիւն Բախտամովի քրոջ աղջկայ հետ պսակել:

Ի հարկէ, ինչ ասել կուզի: Նա այն երիտասարդներից չէ, որ առանց իրանց ծնողների հաճութեան են ամուսնանում:

Երիտասարդի պատասխանները զիւր եկան Պետր Սոլոմոնիւնին: Ծերունին զլուխը հաւանական ձևով շարժեց և այս անգամ աչքերը յառեց զիմացիների կոճակներին:

— Մի բան էլ կայ:

— Հրամայեցէք, Պետր Սոլոմոնիւն, ձեր խոնարհ ծառան եմ:

— Մեր ժամանակում ընտանիք պահելը մի քիչ դժուար է:

— Այսինքն ինչպէս:

— Շատ փող է հարկաւոր:

Բարաթեանը ստանում է տարեկան երկու հազար ռուբլի ռոճիկ, ապրում է իւր հօր տանը և ամուսնանալուց յետոյ էլ պէտք

է այնտեղ ասլրի: Բացի զրանից, հայրը խոստանում է նրան ամսական երկու հարիւր թուրքի:

— Հայրդ ինչքան կարողութիւն ունէ, ամօթ չը լինի հարցնելը:

— Մեր տունը տեսել էք, Պետր Սողոմոնիչ:

— Լա-աւ: Գրաւ զրա՞ծ չէ:

— Ո՛չ:

— Արժէ ութսուն հազար:

— Օրթաճալումն էլ մի այգի ունենք:

— Գրօշ չ'արժէ: Փճղ, բան:

— Հաստատը չը գիտեմ, բայց, կարծեմ, իմ մասը մօտ քսանքսանուհինգ հազար զուտ փող կը լինի:

Պետր Սողոմոնիչը լսեց և դարձեալ նայեց իւր կոճակներին: Բարաթեանի պատասխանները բոլորովին զոհացուցիչ էին, խելօք մարդը այդ կարողութիւնով կարող է շատ լաւ ապրել: Բայց ինչ օրինասուր երիտասարդ է, օժիտի մասին իսկի մի խօսք: «Արի սրան փորձեմ», մտածեց նա:

— Պարոն Բարաթեան, ես Գալիանէին աչքիս լուսի պէս եմ սիրում:

— Ի հարկէ, ի հարկէ, ես շատ լաւ գիտեմ:

— Համբերեցէք: Հանդուցեալ քոյրս մեռնելիս ինձ տաց. «Պետրոս, աղջկանցս փողոցներում չը թողնես: Գալիանէն տասնուերեք տարեկան էր, Ովսանյան հինգ տարեկան, երբ նրանց բերեցի իմ տուն: Իննը տարի վեց ամիս է նրանց պահում եմ ու մեծացնում: Է՛հ, բան է, ժամանակիս երիտասարդ էք, կարելի է մտածում էք օժիտի մասին, պարզն եմ ասում, Գալիանէն ոչինչ չունէ:

«Խորամանկութիւն ես անում, բարեկամ, ինձ խաբել չես կարող», մտածեց Բարաթեանը:

Նա բարւոք համարեց առ այժմ հրաժարւել օժիտի դադարից: Ինչ օժիտ, ինչ բան, նա շատ ստոր մարդ կը լինէր, եթէ Գալիանէի հետ կամենար փողի համար ամուսնանալ: Ոչ, ոչ, նա սիրում է օրիորդին և միայն նրան է ուզում, թէկուզ առանց կոպէկի, թէկուզ մերկ էլ տաք, նա չի հրաժարւի:

— Մ ա լ ա դ չ ի ն ա, — զոչեց Պետր Սողոմոնիչը միանգամայն հիացած, — լաւ սղան այդպէս պէտք է անի:

Հազիւ նա արտայայտել էր իւր հիացումը, երբ զոները կամացուկ բացւեցին և հանդարտ քայլերով ներս մտաւ տիկին Բախտամեանը: Պետր Սոլումոնիչը ուղեց պատմել նրան, բայց տիկինը ձեռի շարժումով հասկացրեց, թէ տեղեակ է բանին:

—Երևի, եթէ ինքս եկած չը լինէի, դու ինձ չէիր կանչիլ,—ասաց նա վիրաւորած եղանակով:

—Փա՛հ, ո՞նց չէ, դու Գալիանէի համար մայր ես:

—Նա ինքը ինձանից տոսնապատիկ լաւ մայր է իրան համար:

—Էէ, հիմա՞ ասա տեսնե՞ք, համաձայն ես:

—Ի՞նչ ասել է համաձայն ես: Ես կամ դու ի՞նչ իրաւունք ունի՞նք, խօ՛մ մեր պապերի ժամանակը չէ, այժմ աղջիկը ու՛մ հաւանում է—նրան է գնում: Միայն ես մի բան եմ ուզում ասել, պարոն Բարաթեան, լաւ մտածեցէ՛ք, շատ չէ՞ք վաւրում պակելու, դուք այնքան երիտասարդ էք, որ...

—Զէ որ Գալիանէն էլ երիտասարդ է,—ընդհատեց Պետր Սոլումոնիչը:

Տիկինը ուսերը վեր քաշեց և ժպտալով պատասխանեց.

—Ինչո՞ւ, շատ էլ երիտասարդ չէ, ես ու նա համարեա միասին ենք մեծացել, մարդ չը պիտի թագցնի պակասութիւնը, բաւական հասակով է:

—Հասակի մասին խօսելը աւելորդ եմ համարու՛մ,—ասաց Բարաթեանը, չը գզալով, թէ որքան վիրաւորում է տիկնոջը, —միայն ես ձեռ համաձայնութիւնն եմ խնդրում:

—Ես համաձայն եմ,—գոչեց Պետր Սոլումոնիչը բանին վերջ տալու համար:

—Էհ, տա՛յ Ասուած, որ բաղդաւոր լինէ՛ք,—աւելացրեց տիկինը հառաչելով:

Բարաթեանը թոյլ տւեց, որ Պետր Սոլումոնիչը համբուրի իւր ճակատը, իսկ ինքը համբուրեց տիկնոջ ձեռը: Նա տիկնոջ հետ վարւում էր խորին որդիական յարգանքով և անասման համեստութեամբ:—Մի բան, որ թէ Պետր Սոլումոնիչին շատ դուր եկաւ և թէ նրա սրտից ջնջեց կասկածի վերջին նշոյլն անդամ...

XII

Չարագուշակ երեկոցից յետոյ Ռիմաքսեանը առհասարակ տնից չէր դուրս դալիս, բացի դպրոց դնալուց: Այժմ նա կատաղած էր ոչ միայն հակառակորդների, այլ և ամբողջ հասարակութեան, նոյն իսկ մարդկութեան դէմ: Ինչպէս նա սառնարիւն կրէր այն բոլոր ատելութիւնները, ծաղրը, արհամարհանքը, որոնց հանդիպում էր ամեն քայլափոխում:

Դպրոցը նա այժմ հանդիստ էր թողել, նրա մէջ տեղի ունեցած զեղծումները շատ էլ չէին զբաղեցնում նրա միտքը: Այս պատճառով պաշտօնակիցները և հոգաբարձուները բաւական հաշտ էին նրա հետ. վերջապէս, նա ինքը առ այժմ մասամբ գոհ էր: Նրա յարձակումները անհետևանք չէին մնացել. հոգաբարձուների մէջ դպրոցի համար նոր շէնք կառուցանելու խնդիր էր չղացել: Նրա ցանկացածն էլ առ այժմ այդ էր, մնացեալը արտագայի խնդիր էր: Ուստի առ ժամանակ նա լռեց:

Բայց նա նիւթում էր մի աւելի կատաղի կռիւ: Դա մի առանձին գրութիւն էր «Հասարակութիւն և անհատ» անունով: Նա պէտք է ապացուցանէր, թէ ընդհանուրի քաղաքակրթութեան հիմքը անհատն է. քանի որ չը կան բարոյական անհատներ—չի կարող լինել և բարոյական հասարակութիւն: Սակայն լոկ գրելը նրան չէր գոհացնում: Նա ձգտում էր գործով ու խօսքով էլ մաքառել ամբոխի տգիտութեան դէմ: Եւ այստեղ նրա առջև կանգնում էր մի խոչնդոտ: Այդ տեսակ կռիւ մղելու համար նախ հասարակ ուսուցչի պաշտօնը շատ աննշան էր, երկրորդ, անհրաժեշտ էր նիւթական անպայման անկախութիւն:

Նա գիտէր, որ եթէ հօր հետ հաշտւէր, կարող էր օգտուել նրա կարողութիւնից: Բայց, միևնոյն ժամանակ, չէր զղջում իւր արածի մասին և երբէք չէր համաձայնուիլ խոնարհել ծերունու առաջ, ներումն խնդրել նրանից:

Բարաթեանի նշանդրութեան լուրը հաղորդեց նրան Մսերեանը, որ լսել էր Սալամբէկեանից: Իդէալիստին յայտնի էր, որ Ռիմաքսեանը հակառէ դէպի օրիորդ Պաչիանէն: Ուստի նրա բարի սիրտը թոյլ չը տւեց այդ փափուկ խնդրի մասին խօսքը երկարացել և միայն ասաց.

— Ով ուզում է հասարակութեանը ծառայել, չը պիտի ամուսնանայ:

Դիմաքսեանը այս խօսքերի մէջ զգաց ճշմարտութեան մի մաս: Նա չը վիճեց, բայց և չը կարողացաւ այլ ևս թագցնել իւր սրտի զրգիւր: Երկու ընկերների մէջ բացւեց մի մտերիմ խօսակցութիւն: Վաղուց Դիմաքսեանը զգում էր այս տեսակ խօսակցութեան պահանջ, վաղուց ցանկանում էր բանալ իւր սրտի զաղտնի ծալքերը մէկի առաջ: Գուցէ այդպիսով թեթեւացնէր իւր հոգոյ ծանր բեռը: Եւ ում առաջ կարող էր պարզախօս լինել, եթէ ոչ Մսերեանի, որին հաւատում էր լիովին և որի անկեղծութիւնը անկասկածելի էր նրա համար:

Ճիշդ է, նա սիրում է Գայիանէին, ճիշդ է, չը կարողացաւ հանդուրժել կանացի հրապոյրներին: Բայց նա իւր սէրը օրիորդին չ'արտայայտեց, որովհետեւ ինչ հետեանքի կարող էր հասնել: Միթէ մի օրիորդ, որ ինքը գեղեցիկ է, կարող էր նրան հաւանել:

«Ի՞նչ, այլանդակիս...»:

Կարող էր գերադասել մի ուրիշից, այն մէկից, այն, այն ուրախ և ճարպիկ, գեղեցիկ և սալոնական Բարաթեանից: Բայց կայ և՛ մի ուրիշ, աւելի զօրաւոր պատճառ, որ ստիպում էր նրան լռել, նոյն իսկ այն տաք բոսիներին, երբ նա կարծում էր, թէ անկարող է լռել: Եթէ Գայիանէն նրան մերժէր և յետոյ դառնար Բարաթեանի կինը, նա կը խելագարւէր: Ինքնասիրութիւնը նրան կը սպանէր: Այն, նա շատ ինքնասէր է, չափազանց, այդ ինքն էլ գիտէ: Բայց մի՞թէ չէ հասկանում, թէ դա բարոյական հիւանդութիւն է, մի՞թէ խելքը չէ բողոքում դրա դէմ: Քանի՜ քանի անգամ նա ինքն իրան դատապարտել է, նախատել, յանդիմանել այդ մասին, բայց իզուր: Նրա եսը նրա մէջ մի չար օձ է: Գիշեր ու ցերեկ այդ օձը արթուն օղակաւ է ներսումը: Բաւական է մի թոյլ շշուկ, մի նուրբ շոշափում, և նա ամեն վայրկեան պատրաստ է գալարւել, բանալ բերանը, ցցել սուր ատամները նրա սրտի մէջ և թափել այնտեղ իւր սոսկալի թոյնը: Ահա հէնց այդ օձն է նրան ստիպում լինել միշտ դիւրագրգիռ, միշտ բարկացող, միշտ պատրաստ չար վշուկի պէս ճիրանները խրել առաջին պատահած հակառակորդի կոկորդին:

— Սմբատ, մի՛ մեղադրիլ ինձ, մի՛ հայհույիլ, ես քեզ խոստովանում եմ այն, ինչ որ երբեմն ինքս ինձ ամաչում եմ վախենում եմ խոստովանել: Բացատրիր միայն ինձ, ինչո՞ւ ես այդպէս եմ, ինչո՞ւ բնութիւնը դրել է իմ սրտի մէջ այդ վիշապին...

Նրանք հստակ էին հիւրանոցի մի առանձին սենեակում, ուր ոչ ոք չը կար: Մօտ կէս գիշեր էր: Ընթրիքը նոր վերջացրել էին: Սեղանի վրայ դրած էին մի շիշ գինի և երկու բաժակ:

Մտերեանը լսում էր ընկերոջը լուռ, մտերիմ բարեկամի խրախուսող չարզանքով, հաւանութիւն տալով նրա իւրաքանչիւր դարձածին: Կար այդ մարդու մէջ մի բան, որ խորին հաւատ էր ներշնչում և դիմացինին տրամադրում էր պարզել նրա մօտ սրտի ամենանւիրական զգացումները այն անդրդուլի համոզմունքով, որ զաղտնիքը կը մնայ նրա մօտ զաղտնիք մինչև գերեզման:

Աւարտելով իւր խոստովանքը, Ղիմաքսեանը գլուխը յենեց ձեռի ափին և հայեացքը յառեց անորոշ տարածութեան մէջ:

Վերջապէս, Մտերեանը խօսեց: Նա իւր ընկերոջ հոգին հասկանում է, հասկանում է, ինչ է այն բանը, որին թունաւոր օձ է համարում: Այո՛, նա թունաւոր է, բայց միայն Ղիմաքսեանի մէջ չէ գտնուում նա: Մի մի այդպիսի օձ նստած է ամեն մի մարդու կրծքի տակ և գիշեր-ցերեկ կրծում է նրա սիրտը, թուլացնում է նրա հոգին, ծծում է նրա կեանքի հիւթը: Մի տարբերութիւն կայ Ղիմաքսեանի և ուրիշների մէջ, նրա սրտի օձը աւելի մեծ է, աւելի թունաւոր և աւելի արթուն ու զգայուն: Նւ ինչո՞ւ, որովհետեւ նրա միտքը ևս աւելի զօրաւոր է, հոգին ևս աւելի բարձր, սիրտն ևս աւելի ընդարձակ:

— Ոչ,— գոչեց իդէալիստը զգացած, բռնելով ընկերոջ բազուկը,— վկայ է Աստուած, կեանքիս երեսուն ու հինգ տարւայ ընթացքում ոչ մի անգամ, ոչ մէկին չեմ շողոքորթել, թէ և կարիք ունեցել եմ շողոքորթելու... Բայց կը զայ ժամանակ, և ես համոզւած եմ նրա գալուն, որ դու խելքիդ ուժով կը ջախջախես այդ օձի գլուխը: Այնուհետև քո մէջ կը մնայ միմիայն մարդը, կատարելագործւած, կեանքի քուրայում ձուլւած և զուած մարդը: Յիշում ես այն երեկոն, երբ դու քեզ դժբաղդ անւանեցիր: Ես ասացի, դու ամենաբաղաւորը կը լինես մարդկանց մէջ: Նւ կը լի-

նեա: Սպանիր այդ օձին, և դու կը տեսնես, որ ես չեմ սխալուում, ինչպէս չեմ սխալուում, թէ կը դայ ժամանակ, որ անհատի բոլոր մանր ինստինկտները կենթարկւեն ընդհանուրի երջանկութեան պահանջներին...

Դառն և վշտալի ժպիտը մթազնեց Դիմաքսեանի երեսը: Շատ է աշխատել նա ջախջախել հրէշին, շատ է ճգնել ազատուել նրա տանջանքներից, բայց իզուր: Ծովային պոլիսի պէս հարիւրաւոր ճանկերով նա բռնել է նրա ամբողջ էութիւնը և սեղմում է անխնայ:

—Ահա, հէնց այժմ, այս վայրկեանիս, դու խօսում ես, իսկ նա արդէն արթնանում է: Ես վշտանում եմ, ինչո՞ւ դո՛ւ պէտք է ինձ խրատես, ինչո՞ւ ես միմիայն իմ և իմ խելքին չը պիտի հաւատամ:

—Տարիների փորձը կը տայ քեզ այն զէնքը, որի մի հարւածով կը կտրես նրա հարիւրաւոր ճանկերը: Ապրիր, գործիր և կը տեսնես:

Նրանք լռեցին: Արդէն ուշ գիշեր էր: Սպասաւորը հաւաքում էր հիւրանոցի աթոռները: Նրանք վերկացան և դուրս եկան:

Երբեմն Դիմաքսեանը փողոցում ատենում էր Բարաթեանին Գալիանէի հետ թէ թեի տւած զբօսնելիս: Նա միշտ ճանապարհը փոխում էր, որ երես առ երես չը հանդիպի նրանց:

Դա արդէն աւելի էր, քան թէ հասարակ նախանձը: Դա զուտ տանջանք էր: Տառապում էին նրա սրտի բոլոր թելերը, և տառապանքի պատճառը դարձեալ նա էր, այն օձը: Երջանիկ Մսերեան, ինչպէս կարողանայ սպանել վիշապին, երբ քաջութիւն չունէ հանդիպել անգամ մի ուրիշի երջանկութեանը, որ իւր ապերջանիկ լինելն է ցոյց տալիս:

Այդ օրերը նա իւր յիշատակարանի մէջ մոցրեց հետեւեալ տողերը.

«Եթէ բնութիւնը իմ այս փոքրիկ մարմնի մէջ դրած լինէր մի փոքրիկ և սառն սիրտ, միթէ աւելի բազդաւոր չէի լինիլ: Ինչո՞ւ այսքան զգայուն եմ, ինչո՞ւ սիրտս լիքն է անզուսպ կրքերով, ո՞չ-խղական կրքերով, այլ սիրելու և ատելու բուռն աւիւնով...»

Նա փորձում էր իւր վիշտը մոռանալ գործերի մէջ խորասուզւելով: Դպրոցում սկսւել էին հարցաքննութիւնները: Առ այժմ

զոհէ առ երես պաշտօնակիցները հաշտ էին նրա հետ: Մի անգամ միայն նա չը կարողացաւ իրան զսպել, երբ տեսուչը մի աշակերտի անւանեց «արջի զաւակ»: Բայց վէճը սուր կերպարանք չը ստացաւ: Գործերի դրութիւնը շատ խառն էր. արձակուրդների ժամանակը մօտենում էր, հակառակորդները չը կամեցան վիրաւորաւ ըստանալ:

Քննութիւնները նոր էին վերջացել, երբ Դիմաքսեանը մի օր հեռագիր ստացաւ, թէ հայրը հիւանդ է և անյաողաղ պահանջում է նրան: Որքան էլ անհաշտ լինէր, սակայն դժգոհութիւնը նրա մէջ տեղի տւեց որդիական զգացմանը:

Նա շտապեց ուղևորւել հայրենիք, որ երկու օրւայ հեռաւորութիւն ունէր Թիֆլիզից:

Ճանապարհին նա կարծում էր ծերունին արդէն մեռել է: Խղճի խալթոցը տանջում էր նրան. ինչո՞ւ որդիական սէրը մոռացաւ ծերունու կամակորութեան պատճառով: Սակայն քանի մօտենում էր հայրենի քաղաքին, այնքան խալթոցը մեղմանում էր: Միթէ՞ նա չէր սիրել հօրը: Այ, նա միայն իւր աշխարհահայեացքը չը կամեցաւ ենթարկել նրա յամառ կամքին: Գաղափարի մարդ է, պարտաւոր էր այդպէս անել:

«Նս կատարել եմ իմ բարոյական պարտքը, ինչո՞ւ եմ յանդիմանում ինձ»:

Այս խորհրդածութիւններով նա ոտք դրեց այն տան շէմքը, ուր ծնւել էր, սնւել և մինչև տասն ու հինգ տարեկան հասակը ապրել:

Չը կար այլ ևս այն ահագին գամբռը, որ գիշեր-ցերէկ հսկում էր այդ տան դռները և որի հետ նա շատ էր խաղ արել: Պարտիզի ծառերը միայն ողջունեցին նրա զալուստը: Դարաւոր կաղամախները խշխշացնում էին իրանց չղկած փայլուն տերևները սպիտակ ճիւղերի մէջ: Եւ նրանց վեհ և վիթխարի տեսքը պատկառանք էր ազդում: Հաստաբուն թթենիները արձակում էին նրա ոտների տակ իրանց հասուն պտուղները: Եւ արեգակի ուրախ շողքերը, ծառերի խիտ տերևների միջով անցնելով խնամքով, մաքրւած գետնի վրայ հաղարաւոր նախշեր էին գոյացնում: Այդ բոլորը խօսում էին նրա հետ անցեալի լեզուով և նրա սրտի մէջ զարթեցնում քաղցր չիշատակներ:

Ընդարձակ տան մէջ տիրում էր մենաստանային լուռութիւն։ Նա շտապով անցաւ լացն պատշգամբը, ուր այնքան նա վազվզել էր իւր քոյրերի հետ։ Նա մտաւ մի նեղ, մութ նախասենեակ և այնտեղից ուղղակի հօր ննջարանը։

Ծերունին կենդանի էր։ Անկողնի մէջ նստած, վերմակը ուսերին քաշած, հիւանդը նայում էր ցած, երբ ներս մտաւ նրա միակ արուզաւակը՝ երկար կօշիկները հագին, ոտից մինչև գլուխ փոշիի մէջ փաթաթւած։

Անկողնի առաջ կանգնած էր մի շիկահեր տղամարդ, ձեռները փորի վրայ դարսած, հլութեան դրոշմը ճակատին։ Նա սպասում էր հիւանդի հրամաններին և թուով էր, որ պատրաստ է ծերունու մի խօսքով կրակի մէջ նետուել։

Այն ինչ՝ հիւանդը լուռ էր, անշարժ, կարծես, նա իւր սրտի հետ խորին խորհրդածութեան մէջ էր։ Նրա տափակ ծոծրակով և քառանկիւնի ճակատով գլուխը հէնց առաջին հայեացք ազդու տպաւորութիւն էր գործում իւր կարճիկ մոխրագոյն մազերով, որ նմանում էին լարւած նետերի, պատրաստ ամեն վայրկեան դուրս պրծնել և ցցւել առաստաղին։ Նրա թանձր ընչացքը հովանաւորում էր մի խիստ բերան, որի անկիւններում փորւած էին երկու խոշոր ակօսներ։ Հիւանդութեան պատճառով չը սափրած երեսի կարճ միրուքը յիշեցնում էր ծալրերը կտորւած ասեղների մի փունջ։

Չը նայելով եղանակի տաքութեանը, ընդարձակ սենեակի անպաստառ խօնաւ պատերից փչում էր մի թափանցող զով։ Կահ-կարասին բազկացած էր մի քանի հնաձև աթոռներից և մի երկայն և լացն թախտից, որի ծալրում պառկում էր հիւանդը։ Մի անկիւնում սենեակի յատակին բեւեռւած էր մի երկաթեայ ժանգոտւած սնդուկ։ Նա փակ էր, նրա պարունակութիւնը ոչ ոք չը գիտէր, ինչպէս և անյայտ էր, թէ ինչ էն պարունակում նրա տիրոջ հոգին ու սիրտը։

Լսելով որդու բարեկիւլ ձայնը, Մարգար աղան գլուխը չը բարձրացրեց, չը նայեց նրա երեսին, ոչ էլ մի բառ արտասանեց։ Նա միայն իւր ջղոտ ձեռը մեկնեց նրան։ Արսէնը սեղմեց աչք կոշտ ձեռը։ Ծերունին շտապով յետ քաշեց, նա կարծում էր, թէ որդին գոնէ կը համբուրէ հաջրական աջը։ Շիկահեր մարդը մի աթոռ մօտեցրեց, և Արսէնը նստեց նրա վրայ։

— Ի՞նչպէս էք այժմ:

Ծերունին թաւ ալեխառն յօնքերը վեր քաշեց և մի ականթարթ միայն նայեց որդու երեսին: Այնուհետև դարձեալ նրա ծանր կուկուչւած կոպերը խոնարհեցին լուսամուտների վարագոյրների պէս, որ չը թոյլ տան արեգակի ճառագայթներին ներս թափանցել: Նորից սովորական խտուրթիւնը և մռայլութիւնը սքողեցին նրա դէմքը:

Մի քանի րոպէից յետոյ, վերջապէս, լսեց նրա ձայնը: Այդ ձայնը հնչում էր պղնձի պէս, նա ազդու էր և զալիս էր մի լայն ու հուժկու կրճքից: Նա սովոր էր հրամայել և գոռալ:

— Ինչո՞ւ ես եկել:

— Հեռագիր էի ստացել:

Ծերունին նայեց խոշոր հայեացքով անկողնի դէմ կանգնած շիկահերին և բարկացած գոչեց.

— Զասացի՛ ձեզ, թողէք մեռնեմ, զայ գերեզմանս էլ չը գտնի:

Յայտնեց, որ, իրաւ, ծերունին դէմ է եղել որդու զալտեանը: Արսէնին, հօրից զաղտնի, հեռադրած է եղել նրա մեծ քոյրը: Հիւանդը չէր կամեցել տեսնել իւր միակ որդու հետ: Նա չը կատարեց իւր հօր կամքը, արհամարհեց նրան, ուսումը աւարտելուց յետոյ անգամ չեկաւ ներում խնդրելու: Նա վիրաւորում է իւր ծնողին, ամեն ամիս երեսին շարեւելով նրանից ստացած նպաստը: Թող ուրեմն ինքն էլ արհամարհւած և մոռացւած մնայ:

— Կարելի է մտածում էիր, շատ եմ կարօտել կերպարանքիդ: Զէ, ես որդի չունեմ, ինչո՞ւ պիտի կարօտէի: Քոյրերդ էլ կարծում են աչքս ձանապարհին է, հա հա հա, շաբաթը երկու անգամ զալիս են իրանց լակոտների հետ... էէէ, ես շատ լաւ եմ ճանաչում ձեզ, չիմար չեմ, խելքս գլխիս դրուստ է: Դուք անհամբեր սպասում էք իմ մեռնելուն, ասում էք, կը սատկի պառաւը, կը գնանք ունեցած-չունեցածը կը ծանկենք, տակով կանենք: Շատ էք վազում, բացց սխալում էք, Աստուծոյ կարող զօրութիւնով Մարգար աղան ձեր խաթրու չի մեռնիլ:

Արսէնի ինքնասիրութիւնը սոխաւած էր դիմանալ այդ զրպարտութեանը, որովհետև որդին չէր կամենում հիւանդ հօրը աւելի զրգուել: Նա լուռ լսում էր, նաչելով մերթ սենեակի աններկ ու

մաշւած յատակին, մերթ սարդի ոտոյնով ծածկւած տռաստաղին։
Մերունին բարձի տակից հանեց կոտլետի լափ մի արծաթեայ
հնադարեան ժամացոյց, նայեց և դարձաւ շիկահերին։

—Այն զահրումարը տուր տեսնենք։

Շիկահերը վերցրեց լուսամտի յատակի վրայից կարմիր հեղու-
կով լի սրւակը, մի գլխւ լեցրեց, աւեց նրան։

—Իմ տունը քանդեց այն օրը, — շարունակեց ծերունին, գոյնգ-
գոյն թաշկինակով սրբելով թանձր ընչացքը, — երբ մայրդ մեռաւ։
Տասն ու հինգ տարի է ես մենակ եմ այս չորս պատերի մէջ։ Խնչ
են զաւակները. տանջանք։ Մարդուս բարեկամը նրա կնիկն է. «Լ
թողեալ զհայր և զմայր իւր՝ երթիցէ ի հետ կնոջ իւրոյ»։ Որդի
ունեմ, եկել է հօր սիրտը մխիթարելու, հա հա հա, փողի պէտք
ունէ, եկել է ինձ կողոպտելու...

—Հայր, — արտասանեց որդին խեղդւած ձայնով, — մի՛ վիրա-
ւորէք ինձ։

—Խօսում ես, խօսում, — գոչեց ծերունին, աւելի զրգուե-
լով, — բա՛ս ո՞ւմ գլխին թափեմ սրտիս լեղին։ Փահ, կարծում ես,
չեմ լսել։ Լսել եմ, ինչպէս չէ, անունս աշխարհի երեսին փառա-
ւորում ես, ասում են, զրում ես սրա ու նրա վրայ։ Մարդիկ հօրդ են
անիծում, շատ լաւ է, ինչ ասեմ, մեռնելուցս յետոյ էլ գերեզմանս
կը քրքրեն։ Շնորհակալ եմ քեզանից Աստուծ, լաւ որդի աւեցիր ինձ...

Նրա հազը բռնեց։ Նա թաշկինակը պտռեց և, շուտ չը գտնե-
լով, բարձրաձայն դռաց, հայհոյեց շիկահեր մարդուն։ Մի քիչ
անցած, նա հանդարտեց։

—Այ, այստեղ էր, — շարունակեց նա, — հէնց այս քանդւած
սենեակում։ Հանգուցեալը դրել էր քեզ թեւերի վրայ, մտիկ էր
անում, ուրախանում։ Դու ծըծըւում էիր խոզի ճտի պէս։ Մօտեցայ,
մտիկ արեցի աչքերիդ, սիրտս թրխեց, հասկացայ։ Ասացի, «Հերիք-
նազ, դու ինձ համար որդի չես ծնել, պատիժ, պատիժ»։ Կատար-
ւեց խօսքս։ Խեղճ կնիկ, լաւ է, որ կենդանի չես, հըմ, ինչ
կ'ուրախանայիր դրան տեսնելով, այս այս այս... զնն, չեմ ուզում,
ես որդի չունեմ, կորիք եկած ճանապարհովը...

Նա շտապով պտռեց, վերմակը քաշեց գլխին և երեսը դարձ-
րեց պատին։ Շիկահերը անզաղար հառաչում էր։

XIII

Չը նայելով հօր անհիւրընկալ ընդունելութեանը, Դիմաքսեանը մտադրեց մի առ ժամանակ մնալ հայրենի քաղաքում: Նրա քոյրերը վաղուց կարօտել էին իրանց միակ եղբօրը, պէտք էր գոնէ նրանց թախանձանքը յարգել:

Մարգար աղան, ինչպէս երևեց նրա խօսքերից, իւր աղջկերանց հետ էլ սառն էր: Մենակեցութիւնը օրից օր այդ մարդու մէջ ամրացրել էր մի անգամ չղացած կասկածը: Հնար չը կար նրան համոզելու, թէ իւր զաւակների սէրը շահախնդրութիւնից չէ առաջանում: Նա ինքը երբէք չէր այցելում աղջկերանց և չէր ուղղում, որ նրանք էլ իրան այցելեն: Ապրում էր վեց ընդարձակ սենեակներից բաղկացած հայրական տնում, ինչպէս մի երդւեալ ճգնաւոր: Հնաշէն տան լուսամուտները դէպի փողոց միշտ փակ էին, և ոչ ոք չէր կարող կարծել, թէ տնտէղ ապրում է կենդանի արարած: Նա պահում էր մի ծառայ, որ թէ այգեպան էր, թէ խոհարար և թէ սպասաւոր: Բացի այդ բազմապաշտօն ծառայից, նրա մօտ մօտք ունէր այն շիկահերը, որին Արսէնը տեսաւ: Դա ծերունու հեռաւոր ազգականներից էր, մի վերին աստիճանի հլու, կամակատար և շողոքութ արարած:

Սարիբէկը — այսպէս էր նրա անունը — կատարում էր Մարգար աղայի կառավարիչ-հաւատարմատարի պաշտօնը: Նրա ձեռքով էին ստացւում գիւղացիներից կալածների հարկը և քաղաքացիներից խանութների ու տների վարձը: Նա էր վաճառում այգիների բերքերը, հաւաքում ջրաղացների եկամուտը և այլն:

Արսէնը կողմնակի ծանօթացաւ դործերի դրութեանը և տեսաւ, որ հօր ձեռքը հազիւ անցնում է այն եկամտի կէսը, որ պէտք է նրա հաշւով ստացէր: Մնացեալը ճանապարհին աղի պէս հալւում էր Սարիբէկի խոնավ ձեռներում:

Դիւղացիները աղի արցունք էին թափում այդ մարդու անունը յիշելիս: Երբեմն խմբերով գալիս էին գաղտնի կերպով Արսէնի մօտ և զանգատուում: Երիտասարդը լսում էր նրանց աղերսանքը և վրդովւում: Երբէք նա չէր երեւակայել, թէ իւր հայրը անգիտակցաբար հարստահարիչի դեր է կատարում:

Նա կամենում էր ամեն բան յայտնել ծերունուն, համոզել նրան խիստ հաշիւ պահանջել կառավարչից: Բայց զրա համար հարկաւոր էր, որ առաջ ինքը գրաւէր նրա հաւատարմութիւնը: Ահա ինչու նա տատանւում էր, վախենալով մի գուցէ իւր միջամտութիւնը աւելի վատ հետեւանք ունենայ զիւղացիների համար: Իսկ ծերունին շարունակում էր նրա հետ վարւել առաջւայ պէս ցուրտ և անհաշտ: Թւում էր, որ ոչինչ չէ կարող հօր և որդու մէջ բացւած վիճը լեցնել:

Արդէն նա առողջացել էր, ոտքի էր կանգնել և հետեւում էր անձամբ իւր գործերին: Առաւօտից մինչև երեկոյ նա պատում էր իւր տան առջև ձգւած ընդարձակ պարտիզում: Սովորաբար նա հաղնում էր կաշէ պաճկոն մորթեալ աստառով, ձեռին կրում էր երկաթի սուր ծայրով մի ձեռափայտ, ծիշդ ացնպխին, որ գործ են ածում ժամհարները գաւառներում: Այգեպանը հետեւում էր նրան քայլ առ քայլ և համբերութեամբ լսում նրա կոպիտ ջանդիմանութիւնները, բարձրաձայն դուռները և բազմատեսակ օրիգինալ յիշոցները: Երբեմն նա ռւսերի վրայ ընդունում էր ծիրանու ուժեղ ձեռով տւած փայտեայ հարւածները: Եւ լռում էր, չէր բողբոջում, և ունէր բողբոջէր:

Արսէնը հեռւից դիտում էր հօրը և ականջները փակում նրա ծայրայեղ հայհոյանքները չը լսելու համար:

Առաւօտ երեկոյ ներկայանում էր Սարիբէկը: Մարդւոր ազան, թէյի բաժակը առջևը դրած, պատշգամբի վրայ թիկն տւած մեծ աթոռի մէջքին, լսում էր նրա զեկուցումները: Նա Սարիբէկի վրայ ևս գոռում էր ծիշդ ացնպխ, ինչպէս այգեպան-սպասաւոր-խոհարարի վրայ, նոյն անգուսպ յիշոցներով զարդարելով նրան ոտից մինչև գլուխ, նախահայրերից սկսած մինչև ապագայ սերունդները: Հլու կառավարիչը մի խօսք անգամ չէր արտասանում, դժկամակութեան մի թոյլ նշան անգամ չէր ցոյց տալիս: Ընդհակառակը նրա երեսին նայողը կը կարծէր, թէ ծերունու հայհոյանքները և գոռոցները նա հաճոյքով է ընդունում, ինչպէս իւր զանցառութիւնների արժանի վարձ:

Վերջանում էր զեկուցումը, և ծերունին խիստ եղանակով, անընդիմադրելի ձևով տալիս էր Սարիբէկին իւր հրամանները:

Այս ինչ խանութպանի ժամանակը լրանում է, պէտք է վարձը աւելացնել. այն միւսը վարձը ուշ է բերում, պէտք է դատաստան քաշել. ցորենը չը պիտի ծախել, անձրև չը կայ, ձմեռը հացի գինը կը բարձրանայ, և այլն և այլն:

Եւ երբ Սարիբէկը, «Ծառայ եմ հրամանիդ» ասելով, խոնարհ պիտի էր տալիս և յետ ու յետ գնում, ծերունին նրա ետևից մըթմըթում էր.

«Շան ծնունդ ես, հացի տէր կը լինես, իմ որդու պէս փիլիսոփայ չես»:

Որդին լսում էր և ոչինչ չէր ասում: Նա միայն մտածում էր, ինչպէս անէ, որ Սարիբէկի զեղծումները պարզի:

Մի անգամ, վերջապէս, այլ ևս նա չը կարողացաւ զսպել իրան, ասաց.

— Հայր (երբէք նա «հայրիկ» չէր ասում), Սարիբէկին ի՞նչ-քան ռոճիկ էք վճարում:

— Շատ ես ուզում իմանալ, — արտասանեց հայրը, խոշոր ջօնքերի տակից բարկացող աչքերը բարձրացնելով նրա վրայ:

— Այո, շատ հետաքրքրական է:

— Տարեկան հարիւր երեսուն բուբլի և մի սոմար ցորեն:

— Տարեկան հարիւր երեսուն բուբլի...

— Եւ մի սոմար ցորեն, ասացի քեզ, — շեշտեց ծերունին:

— Նա կարողանում է այդ չնչին ռոճիկով ապրել:

Ծերունին զարմացած նայեց որդու երեսին: Պարզ էր, որ նրա համար աւելի յիմար հարց չէր կարող լինել:

— Ինչու չէ կարող, խօսմ շահագողէ չի, ապրում էլ է ու հինգ երեխայ ու կնիկ էլ է պահում:

— Հինգ երեխայ, այդ անկարելի է:

— Երբ-որ Մարգար աղա Դիմաքսունովը ասում է կարելի է — հրամանքդ թող չը զարմանայ:

Որդին մի քանի վայրկեան լռեց, յետոյ դարձեալ վստահացաւ շարունակել իւր հարցերը.

— Այդ Սարիբէկը մեր ի՞նչն է:

— Մօրդ եղբօր կնկայ եղբօր տղան:

— Նա ձեզ ուղիղ հաշիւ տալիս է:

—Ասելդ ի՞նչ է:

—Ասելս ա՛յն է, հայր, որ այդ մարդը աչքիս մաքուր չէ երևում:

Ծերունին մի ձեռը կռթնեց կողքին, նայեց հեզնաբար որդու փոքրիկ հասակին կօշիկների ծայրից սկսած մինչև ճակատը, և, քնթի տակ ծիծաղելով, երեսը յետ դարձրեց:

—Այո, այդ մարդը ինձ կասկածելի է թւում,—շարունակեց որդին,—գիւղացիներն էլ շատ են զանգատում:

—Գիւղացիները շատ են դանգաառում, գիւղղացիներն...

Հեզնելով որդու բառերը, ծերունին աթոռը ուղղեց և, երկու ձեռները յենլով ձեռափայտի կռթին, աւելացրեց.

—Ձեր հրամանքը ճանաչում է այդ աւանականներին:

—Ձը գիտեմ, միայն այսքանն եմ իմանում, որ Սարիբէկը ձեր անունը արատաւորում է:

—Լեզուդ փորդ քաշիր հայվարա,—գոռաց յամառ ծերունին, ձեռափայտը այնպէս ուժգին զարկելով, որ նրա սուր ծայրը մի մատնաչափ անցաւ յատակի մէջ,—իմ անունը աշխարհիս երեսին մէկ մարդ է խոյտառակ անում, դո՛ւ, դու, իմ հարազատ որդի: Սարիբէկը ազնիւ մարդ է, նա իմ հրամանով քնում է, իմ հրամանով զարթնում:

Նա մի փոքր լռեց, հղանակը փոխեց և, ձայնին ծաղրական տօն տալով, աւելացրեց.

—Ամօթ չը լինի հարցնելը, հրամանքդ ինչո՞ւ ես խառնում պառաւ Մարգարի գործերին: Նա հին մարդ է, գիւղացի է, անուս, դու խօսմ փիլիսոփայ ես, քինթ ու պռունգիցդ իմաստութիւն է թափւում:

—Ես ինձ համար չեմ հոգում, այլ ձեր անւան և ձեր շահերի համար:

—Գնա բանիդ, չեմ ուզում... հառա՛յ—բիզնոս, ջանք, չեմ ուզում էլի, խօսմ գլխիս քեզ սուղիա չը սարքեցին, փիէ...

Նա վերկացաւ տեղից և բարկացած մտաւ իւր սենեակը, դռները ուժգին զարկելով:

Այնուհետև Արսէնը այլ ևս չէր խօսում նրա հետ գործերի մասին և առհասարակ հօր ու որդու մէջ մի առանձին խօսակցու-

Թիւն տեղի չէր ունենում: Սակայն մի օր նա վերջին անգամ՝ փորձեց իմանալ, արդեօք հայրը իսկապէս ճիշդն է կամ ոչ: Իսկ ինչու չէր կալածներից: Ծերունին նոյն անփոփոխ կոպտութեամբ և հակիրճ պատասխանեց.

«Նա դեռ չեմ մեռնելու, տանջւիր»:

Հարկաւ, այլ ևս ամեն մի նոր փորձ պէտք է անաջող անցնէր: Մնում էր բոլորովին լռել, և Արսէնը բոլորովին լռեց:

Այժմ նրա համար ձանձրալի էր ապրել սառնասիրտ հօրցուրտ, անհիւրընկալ տանը: Նա ձգտում էր հեռանալ հայրական յարկի տակից, ուր մի ժամանակ այնքան փայփայել ու շոյշոյել էր սիրող մօր ձեռքում: Բարի կին, երբէք դու քո որդուն չը վիրաւորեցիր մի դառն խօսքով: Քո մայրական զգայուն սիրտը մորմոքում էր, երբ տեսնում էիր, թէ ինչպէս ծաղրւում է քո միակ արու զաւակը նոյն իսկ իւր հարազատ հօրից: Դժբաղդ էիր դու այդ մարդու հետ և քո հրեշտակային լուռ ու համբերատար բնավորութիւնը միայն դիմանում էր այդ ինքնակամի կենակցութեանը: Դու անմոռնչ հանդուրժում էիր նրա յամառ կամքին և միայն քո երկնային անզուգական հեզութիւնով կարողանում էիր յաղթել մարմարեայ սիրտը: Ահա ինչու հարազատ զաւակների համար սառած մարդու ժանտ հոգին ջերմութիւն է զգում քեզ յիշելիս, քո ուրուականը մոաբերելիս: Բայց արդեօք այդ անյաղթելի կամքի ցրտութիւնը չէր, որ այնքան վաղ քեզ իջեցրեց գերեզման...

Արսէնը տխրում էր անգործութեան մէջ: Քոյրերի սէրը միայն փարատում էր նրա թախիժը: Եւ օրւայ մեծ մասը նա նրանց մօտ էր անցկացնում, շատ անգամ էլ այնտեղ էր ձաշում և ընթրում:

Քաղաքում մեծ հետաքրքրութիւն էր շարժել նրա զաւրճասարակութիւնը խօսում էր ժառանգութեան մասին, ամենքը նախանձում էին նրան: Մարգար աղայի հարստութեան մասին զրեթէ առասպելական լուրեր էին պոտում: Պատմում էին, թէ նա իւր տան ներքնաշարկում դիզած ունէ պտպերի հաւաքած ոսկիները խաների ժամանակից: Ոմանք պնդում էին մինչև անգամ, թէ ծերունին գիշերները այդ ոսկիների տոպրակների վրայ է քնում, չը խնայելով իւր ոսկորները:

Իսկ տեղական երիտասարդները, մանաւանդ ուսուցիչները, աւելի հետաքրքրւած էին Արսէնի անձնաւորութիւնով: Շատերը զալիս էին նրա հետ ծանօթանալու: Նա ընդունում էր նրանց իւր քոյրերի տանը, չը կամենալով զայրացնել հօրը, որ թշնամի էր ամեն մի այցելութեան, ևս առաւել երիտասարդներին:

Նրա քարոզած գաղափարները կազմել էին մի որոշ բանակ: Ունէր նաև հակառակորդներ, որոնք սակայն չէին մօտենում նրան: Կային և այնպիսիները, որ պարծենում էին իրանց հայրենակցի անունով:

Դա մի ակտրոսիկի և անսպասելի նորութիւն էր Դիմաքսեանի համար: Նրա կեանքի մէջ մտաւ մի տեսակ թարմ հոսանք: Նրա տաղտկութիւնը անցաւ, սիրտը զւարթացաւ և լցւեց նոր եռանդով: Ուրեմն նրա խօսքը իզուր չէ անցնում, նրա ցանած սերմերը աւազոտ հողի վրայ չեն ընկնում: Այնտեղ, ընկերների, գաղափարակիցների շրջանում նրան հալածում են, ծաղրում, վիրաւորում: Այստեղ յարգում են, պատուում և ուշադիր են նրա ամեն մի խօսքին:

Ինչեւ ուրեմն յուսահատուել: Թող հալածեն, որքան կամենում են, թող թշնամանան, որքան կարող են: Մաղի չափ նա չի շեղւիլ իւր բռնած ընթացքից: Նա հաւատարիմ կը մնայ իւր արմատական գաղափարին—քարոզել ճշմարտութիւնը ինչ բանի մասին էլ լինի, ուր և լինի, աներկմիտ, անշեղ, աներկիւղ, և մնալ անդրդւելի, ինչպէս սեպացած ժայռ ծովի յարատեւ ալիքների առաջ: Ժողովուրդը կարօտ է անկեղծ քարոզչի, բաւական է, որքան նա խարխալեց տգիտութեան խաւարի մէջ:

Իսկ այդ կամակոր ծերունին թող մնայ նոյնպէս անյողողող իւր քարացած աշխարհում: Կենդանին մեռելների հետ գործ չունէ: Թող յամառը, եթէ կամենում է, բոլորովին մինչև անգամ զրկէ նրան ժառանգութիւնից: Նա կարող է առանց փողի, առանց հասարակական դիրքի, քաղցած փորով, դատարկ զրպանով էլ գործել և օգտաւէտ լինել:

«Ձէ՞ որ վեց տարի ուսանող եմ եղել, դարձեալ կ'ապրեմ ինչպէս ուսանող»:

Մի քանի անգամ նրան հրաւիրեցին այս ու այնտեղ երիտասարդների ժողովներին: Նա հանդիպեց մի քանի առողջամիտ ան-

ձանց, խորհուրդ տւեց նրանց կազմել մի շրջան, որի նպատակը լինէր հասարակ ժողովրդի մէջ տարածել գրադիտութիւն, կարգալու սէր և ժամանակակից գաղափարներ:

Առաջարկութիւնը ընդունւեց հրճւանքով, կազմեց մի խումբ զործը զլուխ բերելու համար: Նշան և՛ հակառակորդներ, մանաւանդ Վապեան անունով մէկը: Դա չոր կազմաւորով, սեւ երկար մազերով, բարակ ձաշնով, կապոյտ ակնոցներով մի հակակրելի մարդ էր, որ Ռիմաքսեանի զգւանքն էր յարուցանում: Յետոյ նա իմացաւ, որ այդ Վապեանը առաջ ուսուցիչ է եղել, իսկ այժմ խանութպան է և գիւղացիներին հարստահարում է: Նա բացարձակ յայտնեց, թէ պէտք է այդպիսիներին հալածել, և ինքը զգւանքով երես դարձրեց նրանից:

Շուտով նա դարձեալ սկսեց ձանձրանալ և մտադրւեց վերադառնալ Թիֆլիզ: Գաւառական կեանքը թւում էր նրան միակերպ, տաղտալի: Այստեղ նրա խօսքը ընդունում էին անպայման, առանց քննելու և հակաճառելու: Իսկ նա արդէն կարօտել էր հակառակորդների հետ մրցելուն: Նրա հոգին զգում էր խոչնդոտների հետ անընդհատ մաքառելու սլահանջ: Հարւածել, հարւած ստանալ և այնպէս յաղթանակ վաստակել — ահա նրա ցանկացածը, նրա սրտի և մտքի կերակուրը: Առանց կուրի նա զգում էր իրան առանց թեւերի: Նրա սիրտը կրում էր էլէկտրական զօրութեան միացն մի տարրը իւր մէջ: Հարկաւոր էր երկրորդը, արտաքուստ եկած հակառակորդ տարրը, որ չփութելով միմեանց՝ նրա հոգու մէջ առաջացնէին լոյս և ջերմութիւն:

Նա ուղևորւեց Թիֆլիզ: Հայրը չը տւեց նրան իւր օրհնանքը, որովհետեւ նա չը խոնարհւեց նրա առջև, չը թեքեց իւր զլուխը կամակոր ծնողի դիմաց: Իսկ ծերունին այդ սպասում էր նրանից: Նա պատրաստ էր ներել որդուն, եթէ միացն վերջինը խոստովանէր, որ սխալւած է և միանգամ ընդ միշտ ընդունէր նրա հեղինակութիւնը: Նա յուսով էր, որ վերջը այդպէս էլ կը լինի: Բայց չարդարացաւ այդ յոյսը: Հայրը բաժանւեց որդուց այնքան սառնասիրտ, որքան սառնասիրտ և անբարեհամբոյց ընդունել էր նրան վեց ու կէս տարի նրան չը տեսնելուց յետոյ:

XIV

Ամառայ ամենաշոք օրերն էին, երբ Դիմաքսեանը հասաւ Թիֆլիզ: Նախ և առաջ նա ուզեց տեսնել Մսերեանին, որին կարօտել էր աւելի, քան մի ուրիշ ընկերոջ:

Իդէալիստը իւր փոքրիկ սենեակի բաց լուսամուտի առջև գիշերալին շաբկով նստած թէյ էր խմում, երբ Դիմաքսեանը ներս մտաւ: Նա ոտքի թռաւ և ուրախ բացականչութիւնով իւր խոշոր թւերի մէջ առաւ ընկերոջը:

— Իսկ ես առանց քեզ տխուր էր: Նստի՛ր ու պատմի՛ր: Ծերունին կենդանի է, առողջացաւ, փառք Աստուծոյ: Բայց ինչո՞ւ այդպէս նիհարել ես, երեւի, հայրական հացը քեզ չէ զալիս: Ասա՛, եղբայր, ասա՛, ի՞նչ է անում մեր սիրելի դաւառը, չէ՞ որ մեր յոյսերը նրա վրայ են: Ոչ, ոչ, նախ և առաջ օձի մասին: Ի՞նչ է անում, հանգիստ էր:

— Հանգիստ էր, որովհետեւ այնտեղ նրան գրգռող չը կար:

— Եւ ուրախ էիր:

— Ո՞չ:

— Ո՞չ:

— Ինձ թւում է այդ օձը որքան էլ տանջէ, դարձեալ ինձ կենդանութիւն տուողը նա է: Մի ամսից աւելի է նա չէ կժու՞մ իմ սիրտը, և ես, կարծես, թմրած եմ:

— Կը գայ ժամանակ, զու հակառակը կ'ասես: Բայց պատմի՛ր, պատմի՛ր:

Դիմաքսեանը հաղորդեց իւր տպաւորութիւնները: Մսերեանը լսում էր և մերթ ոգևորւում, մերթ տխրում, մերթ ուրախանում, նայելով, թէ ընկերը ինչ է պատմում:

— Ուրեմն այնտեղ մարդիկ շատ էլ մեռած չեն, ինչպէս կարծում էինք, — գոչեց նա յափշտակելով, — ուրեմն դարերով թմրած մարմինը կենդանութեան նշաններ է ցոյց տալիս: Տեսնում ես, ասում էի, որ ոչ մի աշխատանք իզուր չէ անցնում: Գործիւր, եղբայր, գործիւր ու՛քան եռանդ և ոյժ ունես: Ինձ մի՛ նայիլ, ես ուրիշ եմ, իմ աշխարհը ահա սրանց մէջ է:

Նա ցոյց տւեց սենեակի անկիւնում դրած պահարանը, որի տախտակեայ յարկերը տքնում էին մեծահատոր գրքերի ծանրութեան տակ:

Նա պատմեց, որ Դիմաքսեանը գնալուց յետոյ ինքը տնից շատ չէ դուրս եկել: Տեսնում է, որ մարդիկ նրան չեն հասկանում, շատերը մինչև անգամ ծաղրում են նրան, համարելով դատարկ Փրադեօն: Ե՛հ, երբ և է նա ասել է, թէ օգտակար մարդ է: Միայն չէ կարող, չէ կարող հաշուել նիւթապաշտութեան հետ: Իսկ ով չէ նիւթապաշտ: Ո՞վ կարող է խելօք համարել մի մարդու, որ իրան բաղդաւոր է զգում, երբ ունէ գրքեր, ծխախոտ և մի բաժակ թէյ: Բայց մի՞թէ գրքերը վնաս ընկերներ են: Ոչ, ոչ, աւելի հաւատարիմ, աւելի ուրախալի հասարակութիւն հաշուար է գտնել: Աինեւ միշտ բարձր խելքերի, հանճարների, հոգեբան-փիլիսոփաների, սրամիտ սրտագէտների ընտիր ընկերութեան մէջ, մի՞թէ այդ երջանկութիւն չէ: Իսկ Արսէնը չէ կարող բաւականանալ այդ հասարակութիւնով: Նա Մսերեան չէ և չը պիտի լինի: Նա գործի մարդ է, ծնւած է մի սզէտ ժողովրդի խաւար միտքը լուսաւորելու, ծնւած է կռւելու, յաղթելու և յաղթւելու համար: Թող գնայ իւր ընտրած ճանապարհով, տեսնում է որքան արձաղանք է գտնում իւր խօսքը մարդկանց սրտում:

—Օ՛հ առաջ, քաջ եղիր,—աւարտեց Մսերեանը ուրախ տոնով,—դումոքի զինւոր ես, ես գրքերի կենդանի պահարան:

Թէյ խմելուց յետոյ նրանք դուրս եկան զբօսնելու: Մսերեանը տեղեկութիւններ հաղորդեց ընկերների մասին: Բժիշկ Սալամբէկեանը մեղամաղձոտ դէմքով ման է գալիս, միշտ կրկնելով, թէ աշխարհը դատարկ բան է: Վէքիլեանը և Բարաթեանը մտադիր են քաղաքին Դումայի առաջին ընտրութիւններին իրանց քւէտովը դնել և այժմեանից ձայներ են զրաւում: Պետր Սոլոմոնիչ Բախտամովը նրանց համար աշխատում է:

—Եւ կ'ընտրւեն, կը տեսնես, այդ մարդկանց ամեն բան յաջողում է:

Յանկարծ Մսերեանը ճակատին խփելով գոչեց.

—Այ յիմար յիշողութիւն:

—Ի՞նչ կայ:

—Ամենաշլիսաւորը մոռացայ ասել: Քեզ ուզում են Ներսիսեան գպրոցի տեսուչ նշանակել:

—Ի՞նչ:

—Այո՛, քեզ:

—Այդ անհաւատալի է:

—Իսկ ես մեր լրագիրներին լեզուով կ'ասեմ «ստոյգ աղբիւրներից տեղեկացանք», որ...

—Որ հոգաբարձութիւնը Արսէն Դիմաքսեանին ատելով ատում է:

—Սխալուում ես, քո գնալուց յետոյ քամին ուրիշ կողմից է փչում:

Նա պատմեց, թէ դպրոցի շինութեան խնդիրը կռածաղիկ է դարձել: Աւելի առաջագիտները պահանջում են, որ դպրոցը փոխւի մի ուրիշ տուն, իսկ հնամոլները վախենում են աւելորդ ծախսից: Կռիւր աշտեղից է սկսել, բայց նա ուրիշ պատճառներ ունէ: Մի առևտրական-հոգաբարձուի մուրհակը չեն զեղջել բանկում, նա թշնամացել է բանկիր-հոգաբարձուի հետ: Մի փաստաբան-հոգաբարձու դատարանում պաշտպանում է մի կալածատէր-հոգաբարձուի հակառակորդին, նրանք թշնամացել են:

Դպրոցը դարձել է մի հասարակական բաղնիք, մարդիկ իրանց կեղատոտ շորերը ացնոեղ են լանում: Բանից դուրս է գալիս, որ այդ տեսուչ Համբարեանը եզուխ է: Դպրոցի շինութեան խնդիրը ինքը չէ զարթեցրել, աշխատում է գործը քանդել: Նրա դէմ կազմւել է մի կուսակցութիւն, որ ուզում է հեռացնել նրան դպրոցից:

—Շատ ուրախ եմ, նա ի՞նչ մանկավարժ է, որ վաշխառութիւնով է պարապում, — հարցրեց Դիմաքսեանը զարմացած:

—Համբարեանը, մի՞թէ:

—Այո՛, դու այդ չը գիտէիր. երևակայիր, քսանուհինգ հազար թուրքի դրամագլուխ ունէ, տասնուհինգ տոկոսով տալիս է սրան ու նրան, նոյն իսկ ուսուցիչներին: Այս էլ «ստոյգ աղբիւրներից տեղեկացանք»:

Երկու օր անցած Դիմաքսեանը հրաւիրւեց այն հոգաբարձուի մօտ, որ սկզբում աշխատել էր նրա համար դպրոցում տեղ բանալ: Նա յայտնեց հոգաբարձութեան նախընթաց երեկոյ կայացրած վճիռը և աւելացրեց, թէ իսկապէս ինքն է Համբարեանին «փռն-դելու» սկզբնապատճառը:

—Եղբայր, քանի տարի էր չէինք կարողանում այդ մարդուց ազատուել: Սիւլիւկի պէս կպել էր դպրոցին ու ծծում էր, էլ ի՞նչ

ախտ ասես մոցրել է այնտեղ, ի՞նչ ինտրիգներ ասես, հնարում էր: Ճշմարիտն ասեմ, եթէ մենք մի քիչ ձեզ հետ վառ էինք, պատճառը նա էր, հազար ու մի տեսակ բաներ էր պատմում: Ի՞նչ է է, յուսով եմ, որ մենք համերաշխ կը գործենք, այնպէս չէ:

— Կ'աշխատեմ միշտ դպրոցի շահերին ծառայել:

Նա մի պայման միայն դրեց, որ հոգաբարձութիւնը երբէք չը խառնուի դպրոցի բարոյական և ուսումնական գործերի մէջ:

— Արէք, ի՞նչ-որ կամենում էք, բայց զգոյշ, որ շատ էլ չը գրգռէք մեր հակառակորդներին:

Ամբողջ օգոստոս ամիսը Դիմաքսեանը տենդային գործունէութեան մէջ էր: Ամեն օր գնում էր դպրոց, չը նայելով, որ այնտեղ դեռ գործ չունէր: Նա ղիտում էր բակը, սենեակները, խոհանոցը, հարց ու փորձ էր անում գիշերօթիկներին նրանց դրութեան մասին, քննում էր նրանց կերակուրները:

Նա լսեց զանգասանի վերակացունների դէմ: Նա տեսաւ, որ կերակուրները վառ են պատրաստուում, սննդարար չեն: Գիշերօթիկները թոյլ են, հիւանդոտ, ղեղնած, ամենքի մէջ նկատուում է արեան սակաւութիւն:

Այս բոլորը տեսնելով, նա կազմեց արտաքին փոփոխութիւնների մի ցուցակ, որ պէտք է շուտով ներկայացնէր հոգաբարձութեանը:

Հասաւ սեպտեմբերը: Դասերը սկսեցին: Ուսուցչական խումբը նրան շնորհաւորեց: Ոմանց կողմից նա տեսաւ անկեղծ ուրախութիւն: Իսկ շատերի սիրալիր խօսքերի և բարեկամական ցոյցերի տակ նկատեց չկամութիւն:

Նա գիտէր, որ այլ կերպ չէր կարող լինել. ամենքին սիրելի լինել, կը նշանակէ ամենքի քմքին հաճոյանալ: Նրա անշեղ բնաւորութիւնը չէր սիրում երկդիմի վարմունք: Նա չը գիտէր արտաքուստ խլտալ, ներքուստ հայհոյել:

Ահա ինչու նա չէր կարողանում մոռանալ Վէքիլեանի, այդ կարծեցեալ բարեկամի, թշնամական վարմունքը: Ահա ինչու քանի գնում այնքան նրա սրտում ատելութիւն էր աւելանում դէպի Բարաթեանը: Այդ մարդը նրան դեռ բացարձակ թշնամութիւն չէր անում, բայց թէ նա բարեկամ չէր — այդ էլ պարզ էր նրա համար:

Մի քանի անգամ Դիմաքսեանը պատահեց փողոցում թէ մէկին և թէ միւսին: Վէքիլեանի հետ նա չէր խօսում, զադարել էր մինչև անգամ նրան բարեկիւրց: Իսկ Բարաթեանը մօտեցաւ նրան, ձեռք սեղմեց և շնորհաւորեց, զոչելով.

—Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ:

—Շնորհակալ եմ: Իսկ զու, ասում են, մոռալիր ես քաղաքային իրաւասու ընտրել:

—Ե՛ս: Ոչ, բարեկամ, ժամանակ չունեմ: Ես զբաղւած եմ ամուսնութեանս հոգսերով. չէ՞ որ սեպտեմբերին պսակւում եմ Գայիանէի հետ:

Եւ միթէ Դիմաքսեանը մոռացել էր չարաբաստիկ հանգամանքը և միթէ նա չէր զգում, որ իւր առջև կանգնած է այն մարդը, որ անհուն վիշտ էր պատճառել նրան թէ կամայ թէ ակամայ: Ինչո՞ւ ուրեմն Բարաթեանը կրկին մաս է խփում նրա սրտի խոցին: Այո՛, անշուշտ նրա համար, որ զգալ տայ նրան իւր գերազանցութիւնը, իւր տարած յաղթութիւնը:

—Յուսով եմ, որ հարսանիքիս հրաւերը ստանալով, կը բարեհաճես ներկայանալ ինչպէս ընկեր-բարեկամ:

Այդ արդէն չափազանցութիւն էր: Դիմաքսեանը ապշած նայեց նրա երեսին: Նա ոչինչ չ'ասաց, և ի՛նչ կարող էր ասել: Օձը արդէն զարթնել էր և պաշարած թոյնը տարածում էր նրա ամբողջ մարմնի մէջ:

Առանց մի բառ արտասանելու, առանց մինչև անգամ ձեռտալու, նա գունատւած երեսը շուռ տւեց և հեռացաւ:

Բարաթեանը չարախնդութեամբ նայեց նրա ետեւից և մըտքում ասաց.

«Դու ինձ պատերազմ ես յայտնում, շատ գեղեցիկ, տեսնենք ո՞վ կը տանի յաղթութիւնը»...

Եւ թոյլ շւացնելով, հանդարտ և հպարտ շարունակեց իւր ճանապարհը:

XV

Պսակադրութեան պայմանաւորւած ժամանակը մօտենում էր, Բարաթեանի անհանգստութիւնը աւելանում: Սթիաի խնդիրը դեռ

չէր պարզւել: Իսկ Պետր Սոլոմոնիչը հանգստանում էր սեպհական ամարանոցում: Օրւայ մեծ մասը նա, մի երկար ճիւղաւոր փայտ ձեռին, զբօսնում էր իւր բնակարանի առջև ձգւած հասարակական պարտիզում: Նա իրանից ձեռացնում էր քաղաքական գործերից յողնած մի եւրոպական բուրժուա, որ նոր ոյժեր է ժողովում հայրենիքին նոր ծառայութիւններ անելու:

Հարսանիքի հոգսերը նա լիովին ձգել էր իւր կնոջ և քրոջ աղջկայ վրայ: Շաբաթը մի անգամ տիկինը և օրիորդը զալիս էին քաղաք հագուստներ պատւիրելու:

Բարաթեանը գիտէր նրանց զալու ժամանակը: Որոշեալ ժամին նա միշտ երկաթուղու կայարանումն էր լինում նրանց դիմաւորելու համար: Գայիանէն ուզում էր ամեն բան նրա ճաշակով գնել և կարել տալ. ռեստի ուր գնում էր, նրան էլ հետը տանում էր: Հարսանիքի պատրաստութիւնները օրիորդին կլանել էր լիովին: Ամբողջ օրը նա չափում էր, կտրում, փորձում և անհամբեր սպասում երջանիկ օրին: Եւ նա ժամանակ չունէր քննելու, թէ ինչու տիկին Բախտամեանը այնքան հաշտ է իւր հետ, որ, կարծես, նախկին նախանձի նշոյլն անգամ չէր մնացել:

Մի օր Բարաթեանը, վերջապէս, վճռեց կողմնակի կերպով խօսք բաց անել Գայիանէի հետ օժիտի մասին: Գայիանէն այնքան համոզւած էր նրա սիրոյն, որ ինքը առ այժմ աւելորդ էր համարում փողի մասին խօսելը: Արժէր միթէ սիրոյ բանաստեղծական հրապոյրը համեմել նիւթականով և փոխադարձ զգացման երկնային հմայքը պրոզա դարձնել: Փոխադարձ, այո, որովհետեւ Բարաթեանն էլ սիրում էր նրան և սիրում էր անկեղծ: Միայն նրա զգացումը այնքան կուրացուցիչ չէր, որ միանգամայն մոռացնել տար ապագայի խնդիրը: Չէ որ կանցնի բանաստեղծականը, և կեանքի իրականութիւնը մի օր կը մերկանայ ապագայ ամուսինների առաջ իւր բոլոր անողոք պահանջներով:

— Ուրեմն զու և Ուսաննան ունէք տարեկան հինգ հազար բուբլի եկամուտ, — կրկնել տւեց Բարաթեանը Գայիանէին, — կը նշանակէ քո մասը տարեկան երկու հազար հինգ հարիւր է:

— Այո, ինչ կայ, ինչու լռեցիր:

— Պետր Սոլոմոնիչը ասում էր, թէ քո ծնողները ոչինչ չեն թողել:

—Ի՞նչպէս, դու ուրեմն նրա հետ խօսե՞լ ես այդ մասին:

—Ես չէի հետաքրքրուում, նա ինքը ասաց հէնց այն օրը, երբ ես գնացել էի ձեռք խնդրելու:

—Նա չէ կարող այդպէս ասել, այդ անկարելի է:

—Հաւատացնում եմ, որ ասաց:

Գալիանէն լռեց: Այդ լուրը նրա համար զգալի և տխուր լուր էր, բայց աւելի անտանելի էր, որ Բարաթեանը խօսում էր օժիտի մասին:

—Լսւ, — ասաց նա, — ես նրանից բացատրութիւն կը խնդրեմ:

—Այո՛, սիրելիս, խնդրիր: Դու ուրիշ բան չը կարծես, ես փողասէր չեմ, բայց եթէ կայ, ինչո՞ւ ուրիշների մօտ մնայ, այնպէս չէ:

—Ի հարկէ...

—Վերջապէս, տարեկան երեք հազարը մեզ համար մեծ բան է, դու կարող ես շիկով ապրել:

—Ինձ շիկ հարկաւոր չէ, բաւական է, որ դու ինձ միշտ սիրես:

—Ախ, սիրելիս, ի հարկէ, պէտք է միշտ սիրեմ, բայց Պետր Սոլոմոնիչի հետ խօսիր: Իմ սէրը դէպի քեզ անհուն է, միթէ դու չը զիտես: Այո՛, շուտով խօսիր, հէնց այսօր կամ վաղը: Միւս անգամ գալիս ինձ համար զրական պատասխան բեր: Միայն իմ անունը չը յիշես, այսինքն չ'ասես, թէ ես եմ քեզ սովորեցրել կամ ինձ հետ այդ մասին խօսել ես: Ախ, սիրելիս, երբ պէտք է հասնի երջանիկ օրը...

Երկու շաբաթ էր մնում հարսանիքին, երբ Գալիանէն, վերջապէս, յարմար ժամանակ գտաւ իւր քեռիի հետ խօսելու: Պետր Սոլոմոնիչը սկզբում անորոշ պատասխաններ էր տալիս: Բայց, երբ տեսաւ օրիորդի թախանձանքը, հարցրեց.

—Փեսացո՞ւ է սովորեցրել այդպէս համարձակ խօսել:

—Նա օժիտի մասին մի խօսք անգամ չէ խօսել, նա ինձ այնքան սիրում է:

—Սիրում է:

—Ինչ էք ուզում ասել, քեռի:

—Ուզում եմ հաստատ իմանալ, նա քեզ սիրո՞ւմ է:

—Այո՛, շատ:

—Այնքան, որ եթէ դու աղքատ լինես, էլի քեզանից չի հեռանալ:

—Եթէ ես բոլորովին աղքատ լինէի, էլի ինձանից չէր հրաժարւիլ նա:

Պետր Սողոմոնիչը մի զննողական հայեացք ձգեց նրա վրայ: Յետոյ նա բացաղբեց, թէ Գայիանէն աղքատ չէ, նրա հօրից մնացել են մի շարք խանութներ: Բայց նա փորձում էր թէ Բարաթեանին և թէ Գայիանէին: Իսկ այժմ թող Գայիանէին յայտնի լինի, որ նա ունէ տարեկան երեք հազար հարիւր յիսուն բուբլի զուտ եկամուտ: Երբ որ ուզենայ, կարող է կալածները իւր անունով հաստատել տալ: Եւ Պետր Սողոմոնիչը Գայիանէին խորհուրդ էր տալիս իւր անունով հաստատել և ոչ ամուսնու:

—Այդ միւսնոյն է, քեռի,—ասաց օրիորդը սիրտը շնորհակալութեան զգացումներով լի դէպի ազնիւ ազգականը:

—Ի հարկէ, միւսնոյն է, բայց դու լսիր փորձած քեռիիդ խորհուրդը: Բացի դրանից, բանկում ունես եօթ հազար բուբլի զուտ փող, այդ էլ կարող ես հէնց այսօր ստանալ: Հայրդ մի քանի պարտքեր էր թողել, բոլորը վճարւած են քո եկամտից, այդ եօթ հազարը մնացորդն է:

—Մի՛թէ, ես այդ չը գիտէի,—գոչեց Գայիանէն ոգևորւած:

—Ունես, ունես, որդի, ես զրկող ազգականներից չեմ, փառք Աստուծոյ, ինքս այնքան ունեմ, որ որդոց որդի հերիք է իմ երեխաներին:

Հէնց միւս օրը Գայիանէն շտապեց քաղաք և ուրախալի լուրը հաղորդեց Բարաթեանին:

—Երեւակայի, քեռին քեզ և ինձ փորձելու համար էր թաղբերել իմ ունեցածի մասին,—գոչեց նա զւարթ ձայնով և պատմեց Պետր Սողոմոնիչի ասածը:

Բարաթեանը մի փոքր շփոթւեց, ամաչելով իւր վարմունքից: Նա զգաց իւր փոքրոգութիւնը և շտապեց մի կերպ սխալը ուղղել:

—Իսկ դու էլ երեւակայի, որ ես էլ քեզ էի փորձում: Օժիտի մասին խօսելով, կամենում էի իմանալ, արդեօք կարծիքդ

կը փոխէս իմ մասին: Այժմ տեսնում եմ, որ դու հաւատում ես իմ անկեղծ սիրոյն, ուրեմն երջանիկ ենք...

Տաս օր անցած կատարեց հարսանիքը, մի փառաւոր հարսանիք Պետր Սոլովոնիչի շնորհով: Հրաւիրւած էին թեմական առաջնորդը, նահանգապետը, գեներալներ, հիւպատոսներ, քաղաքապետը, բոլոր առաջնակարգ իրաւասուների հետ: Վերջապէս, երեւան եկաւ այդ Ամբակում Աթանասիեւիչ կոչւած իրաւասուն, որի ասածներէն Պետր Սոլովոնիչը միշտ ցիտատներ էր բերում: Դա տեղական յայտնի տուգներից մէկն էր, յայտնի, բացի իւր դիրքից, երեք արշին շրջապատ ունեցող փորով և ձմերուկի չափ երեսով: Բարաթեանը իւր կողմից հրաւիրել էր ընկերներից միայն մի քանիսին: Անգործ Մսերեանը մոռացել էր, խաչեղբայրը Վեքիլեանն էր:

Դիմաքսեանը հրաւիրատունը պատուեց և ձգեց մի կողմ: Այդ հրաւերը նա համարում էր մի նոր ծաղր և վիրաւորանք Բարաթեանի կողմից:

Նոր պաշտօնը նրան գրաւել էր բոլորովին: Օգոստոսի շնթացքում ցուցակագրած թերութիւնները նա ասպարէզ էր հանել: Կողմնակից հոգաբարձուները, հակառակ դիմադրող կուսակցութեան, վճռեցին կատարել նրա պահանջները:

Իսկ ինտրիգները շարունակւում էին, մանաւանդ ուսուցիչների մէջ: Գերմանական մանկավարժ Խիաթեանը, այդ դեղնազոյն աչքերով և սառն դէմքով երիտասարդը, վիրաւորել էր, որ տեսչական պաշտօնը իրան չեն յանձնել: Օգնութեան կանչելով իւր մանկավարժական պաշարը, նա կատաղի կերպով բողբոքում էր Դիմաքսեանի դէմ: Նրա կարծիքով, նոր տեսուչը ոչինչ և ոչինչ չէր հասկանում, որովհետեւ մանկավարժութեան մէջ մասնագէտ չէր: Յանուն Հերբերտ-Յիլլեր-Պետալոցիի ուրւականների նա պարզել էր իւր դրօշակը մի լրագրում և անստորագիր յօդւածներով հարւածում էր Դիմաքսեանի սխտեմը:

Իսկ Դիմաքսեանը ընդունում էր այդ յարձակումները: Ծծում էր նրանց թոյնը իւր սրտի մէջ և յաճախ իւր մենութեան մէջ վրդովւում, որովհետեւ նրա ուղղութիւնը բացաւրւում էր սխալ, վայր ի վերոյ, անբարեխիղճ կերպով: Հարկաւ, նա բոլորին պատասխանում էր: Բայց երբեմն հակառակորդները այնպիսի վտան-

գաւոր ակնարկութիւններ էին անում, որոնց դէմ նա դժարանում էր պատասխանել: Դա վերաբերում էր նրա քաղաքական հայեացքներին...

Մի առաւօտ նա, սովորութեան համեմատ, կանուխ զարթնելով, կամեցաւ պարապել մինչև դարոց գնալը: Բայց զգաց մի թեթեւ տկարութիւն և թոյլ գլխացաւ: Նա չը կարողացաւ պարապել: Առհասարակ վերջին օրերը նա առողջ էր զգում իրան, բայց ուշադրութիւն չէր դարձնում: Նա հազուապէս պառկեց անկողին հանգստանալու, թէև նոր էր վերկացել:

Սիրականը սամօւարի և կօշիկների հետ ներս բերեց այն օրաց լրագիրները: Այժմ հակառակորդները Դիմաքսեանի դէմ զրում էին գրեթէ ամեն օր:

Այս անգամ նրա աչքին ընկաւ մի ֆելիէտօն: Նա սկսեց կարդալ: Դեռ մինչև այժմ նա իւր մասին չէր հանդիպել մի այդպիսի կծու, ծաղրական գրութի: Ֆելիտօնի վերնագիրն էր «Ոգնին Լիւտերի քղամիդով»: Երգիծական ոճով պատկերացրած էր մի «հերոս», սնափառութեան զգացումներով լի: Նրա կերպարանքը նկարագրւած էր ճիշդ աչնպէս, ինչպէս էր Դիմաքսեանը, ֆոտոգրաֆիական բոլոր մանրամասներով:

Որքան ծաղր և հեգնութիւն կար այդ նկարագրի մէջ, որքան օճալին սողոսկումներ դէպի «հերոսին» հոգեկան աշխարհը: «Ոգնին» մտնում է դարոց, ողնին մտնում է ընտանիքների, հասարակական բոլոր հիմնարկութիւնների, բոլոր խաւերի մէջ: Ամեն տեղ նա ոգևորւած նոր մտքեր է քարոզում: «Մկները դուրս ետ գալիս բներից ականջ դնելու և իրանց պոչերը շարժում են նրա առջև»: Մի օր ողնին Ֆրակ է հագնում, սպիտակ փողկապ կապում, գնում է մի գեղեցիկ և հարուստ օրիորդի ձեռք խնդրելու: Նա արտասուքը աչքերին թաւալում է բազկաթուղի օրիորդի ոտների տակ, անշնորհ կերպով իւր փշերով ծակոտում է ձեռները, նրա հօրեղբայրը գալիս է և կօշիկ ծալրով «ողնին» դուրս շարժում:

«Կանայք և օրիորդներ, ծերեր և երիտասարդներ, զգոյշ կացէք ողնից, նա ձեր մէջ է պտտում»:

Նա շարունակ լրագիրը մի կողմ և ուրիշ կանգնեց: Նա կամեցաւ ծիծաղել, արհամարհել, բայց օճը կատաղել էր: Ո՛չ, թող

Մսերեանը անտարբեր մնալ իւր փիլիսոփայական հայեացքների մէջ, իսկ նա չէ կարող սառնարիւն կրել այդ ստոր հարածները: Ի՞նչ պատասխանել, հարւածը որ կողմից ուղղել, որ խոցոտի, վիրաւորի, թաւալազլոր անէ հակառակորդին:

«Հալածել մարդուն նրա համար, որ նա յանդղնում է իւր գլուխը ձեր ստոր մակերևոյթից բարձրացնել, հալածել նրան տղամարդի զէնքով: Այդպէս, ուրեմն, դուք ինքներդ ձեր ձեռքով հանում էք այն խցանը, որ հազիւ զսպում էր իմ մէջ կուտած թոյնը: Ան, սպասեցէք և կը տեսնէք որքան խորը կը ցցւեն ողնիի ասեղները հասարակութեան խոցերի մէջ, որ նրանց միջից դուրս հանեն վարակիչ թարախը»:

Նա արագ արագ անց ու դարձ էր անում սենեակում: Նրա երեսին գոյն չը կար, նա դողում էր ամբողջ մարմնով: Նա փորձեց հարւածին պատասխանել իսկոյն, սակայն ձեռը չը հնազանդեց կամքին: Նա շտապով դուրս եկաւ տնից: Նա ցանկանում էր հանդիպել մէկին, բերանացի արտայայտել սրտի մաղձը: Նա քայլերը ուղղեց դէպի Մսերեանի բնակարանը:

Առաւօտեան դեռ ութ ժամն էր: Փողոցներով անցնում էին միայն խոհարարներ, բանւորներ և սայլեր: Նրկինքը ամպումած էր, գիշերը մինչև լոյս անձրևել էր: Թեթև աշնանային քամին թօթափում էր ծառերի դեղնած տերևները և զարդարում ցեխոտ մայթերը:

Նա այնքան յուզւած դուրս եկաւ տնից, որ մոռացաւ վերադառնալ և կալոյնները հաղնել: Նա զգաց ոտների վրայ խոնաւութեան ազդեցութիւնը: Բայց չը կամեցաւ տուն վերադառնալ: Նա կառք փնտռեց, չը գտաւ: Այն ինչ Մսերեանը ապրում էր Քոռա զետի միւս ափում, մի խուլ փողոցի անկիւնում:

Դիմաքսեանը անցնում էր կամրջով: Յանկարծ հեռւից նա տեսաւ մի կառք, ապա երկրորդը, երրորդը և մի շարք միմեանց ետևից, որ դուրս էին գալիս փողոցի ծայրից:

Նա կանգ առաւ: Նրկի, կառքերից մէկը դատարկ կը լինի, պէտք է սպասել: Մի րոպէում առաջին կառքը հաւասարեց նրան: Դա մի ծածկած կարեթ էր: Նրկու սպիտակ նժոյգներ ամպի արագութեամբ թռչնում էին նրան առաջ:

Մի վայրկեան Դիմաքսեանի աչքերը փակ լուսամտով թափանցեցին կառքի ներսը: Մի թարմ, առողջ և ուրախ երիտասարդ ժպտաց, գլուխը շարժելով: Ժպտաց և՛ մի կանացի վարվուռն և երջանիկ դէմք: Նրա կապտագոյն աչքերը պսպղացին սև ու երկար թերթերունքների միջից:

Կասկած չը կար, որ նրանք էին:

Ձոյգի ետեւից երևեցան Վէքիլեանը տիկին Բախտամեանի հետ, Պետար Սոլոմոնիւնը Ովսաննայի հետ և մի շարք ծանօթ ու անծանօթ մարդիկ ու կանայք, զոյգ-զոյգ նստած առանձին-առանձին կառքերում:

Նա կանգնած էր և նայում էր լուռ, սակայն շատ բան արտայայտող, երջանիկ հանդիսի ետեւից: Կամրջի ծայրում կարէթը ծռւեց դէպի ձախ: Նա սլանում էր դէպի երկաթուղու կայարանը: Երջանիկ զոյգը գնում էր ծանապարհորդելու:

Նա ամբողջ մարմնի մէջ զգաց մի տարօրինակ սառնութիւն: Կարծես, արիւնը նրա երակների մէջ դադարեց վազելուց: Անցան, ուրեմն, նրա աչքի առջև այն երանութիւնը, որին նա յանդգնել էր մի ժամանակ իւր համար երազել: Գնաց հակառակորդը իւր յաղթութեան պտուղը վայելելու: Իսկ նա ընկճւած, ոչնչացած, հրապարակական ծաղրի ենթարկւած, կանգնել է և նայում չքացող բազդի ետեւից:

Նա ձեռը յենեց կամրջի լապտերի թուջեաց սիւնին և անզգայաբար ցած նայեց: Այնտեղ, հսկայական կամարների տակ մռնչալով անցնում էր պղտոր, յորդացած, դեղնագոյն գեաւը: Մի վայրկեան նրա աչքերը մթագնեցին, գլուխը պտտեց, ծանրացաւ: Թւաց նրան, որ մի աներևոյթ ձեռք մղում է նրան դէպի ցած: Դա ընթացող ջրի ձգեղական ոյժն էր: Նրա մարմնով անցաւ մի սուր սարսուռ: Նա երեսը յետ դարձրեց և վերադարձաւ տուն:

Սիրականը պատշգամբի վրայ նստած, լսելի ձայնով կարդում էր «Ողնին Լիւտերի քղամիդով»: Նրա շիլ աչքերի մէջ նշմարւում էր զւարճութեան փայլը. երևի, նա զրւածքը շատ էր հաւանել:

—Ներս եկ,—հրամայեց Դիմաքսեանը խեղդւած ձայնով:

Նա գրեց երկու նամակ և տւեց ծառային, ասելով.

—Տար այս մէկը դպրոց, իսկ միւսը Մսերեանին:

XVI

Բժիշկ Սալամբէկեանը հիւանդանոցից նոր էր վերադարձել և մէջքի վրայ պառկած նայում էր առաստաղին:

«Արդեօք աւելի լաւ չէր լինիլ, մոածում էր նա, մի որ և է վանքում նստած Սաղմոս կարգացի մարդկանց մեղքերի թողութեան: Համար, քան թէ նրանց բժշկէի մարմնաւոր ցաւերից»:

Ասում էին և ինքն էլ տեսնում էր, որ բժիշկները առհասարակ ձարպիկ մարդիկ են, դէս ու դէն են վազում, միմեանցից հիւանդներ խլում կամ առողջներին հիւանդացնում: Իսկ ինքը ինչ է անում: Ամսական ստանում է յիսուն, վաթսուն ռուբլի և, կարծես, արդէն հասել է բազմի զենխոխն:

«Այս պէտք է ես էլ շառլատանութիւն սկսեմ, կամ թէ չէ՝ դա ինչ ցաւիս բժիշկն եմ: Գնում եմ ամեն օր հիւանդանոց և տեսնում եմ մի շարք գլուխներ: Փը՛ղի, ինչ գլուխներ ու դէմքեր: «Ձեռք տուր», «Լեզուդ հանիր», պրծաւ գնաց, յետոյ զալիս եմ, մէջքիս վրայ ահա այսպէս պառկում (նա ոտները բարձրացրեց և դրեց անկողնակալի կողի վրայ) ու ինքս ինձ ասում «աշխարհս դադարի բան է»: Ասենք, զահրումարը դադարի բան է, բայց մարդս մի քիչ էլ հռանդ պէտք է ունենայ, չէ՞...»:

«Այ տղայ, արի պսակենք, — զոչեց նա յանկարծ և գլուխը մի քիչ բարձրացրեց, — բայց ո՛չ, ամուսնութիւնն էլ խաթաբալա շատ ունի: Մէկ էլ տեսար ծնեց: Սատանան զիտէ ծնունդն էլ ինչպէս կը լինի, պլաց են տա պրեվէ, էպիզիօտօմիա, լիպօթիկեմիա, իսկ երեխաները, հօհօճ, դիֆտերիա, սկարլատինա, ֆօլիկուլէարնայնա ժանբա, թիւս, թիւս, թիւս»:

«Ձեմ ուզում, չեմ ուզում», կրկնեց նա, ձեռները այնպէս շարժելով, որ, կարծես, նոյն ըոպէին դռները բացւեցին և կէս զիւժին երեխաներ ճըւճըւալով նեքս թափուեցին:

— Ի՛նչ է պատահել, բժիշկ, — զոչեց Սահեանը, շատաւով ներս մտնելով իւր հաստ ձեռափայտը և լայնեզր գլխարկը ձեռին:

Բժիշկը մէջքի վրայ շուռ եկաւ ընկերոջ ձայնին:

— Այդ դու ես: Հը՛մ, ինչ է ասում իդէալիստի վարդազոյն երեւակացութիւնը ինքուզորիաների մասին:

— Ժամանակ չէ, եղբայր, պատերի հետ մասլահաթ անելու։ Այն ինչ հօրս ցան էին տալիս, չէիր ուզում։ Վերկաց ոտքի։

— Այսպէս աւելի բանաստեղծական է, պառկիր, զրոյց անենք։

— Վերկաց, ասում եմ, Արսէնը հիւանդ է։

— Հոգեպէս, թէ մարմնապէս։

— Երեսնութ ու վեց տասներորդական աստիճանի տաքութիւն ունի, խկոյն չափեցի։

— Ասենք դա նրա նորմալ դրութիւնն է, տեմպերատուրան շատ բարձր է։

Մտերեանը բռնելով նրա թւից, ուժով ոտքի կանգնեցրեց և ստիպեց հաղնեկ։

Երբ նրանք ներս մտան, Դիմաքսեանը անկողնի մէջ նստած ծնկների վրայ ինչ-որ գրում էր։ Մտերեանը խլեց նրա ձեռից թուղթը ու գրիչը, գոչելով.

— Երևակայում եմ, այդ դրութեան մէջ ինչ խելօք բան կը գրես։ Բժիշկ, դերդ կատարիր, հրահաններիդ եմ սպասում։

Սալամբէկեանը տնքոնքալով, ծուլաբար քննեց ընկերոջը, քնթի տակ մրմրեալով.

— Հիմա մեռնենք, թէ երեսուն տարի յետոյ՝ միւսնոյնն է։ Դադարկ բան է, մրսեկ ես...

Նա գրեց մի քանի դեղեր, և Մտերեանը անձամբ շտապեց վաղել դեղատուն։ Առհասարակ նա շատ էր վախենում ընկերոջ մասին և հոգում էր, ինչպէս աւագ եղբայր։

Ամբողջ օրը ընկերները քնացին հիւանդի մօտ։ Մտերեանը չէր թողնում Սիրականին ներս մտնել։ Մի ժամանակ նա հիւանդանոցներում շատ է հիւանդապահի պաշտօն կատարել իւր ընկերների համար, այժմ էլ կը կատարի։ Եւ նա պատմում էր իւր կեանքի այդ շրջանից զանազան էպիզոդներ։

Իրիկնապէմին Դիմաքսեանը ասաց, թէ թեթևութիւն է զգում և գրեթէ ուժով Մտերեանին ստիպեց թողնել նրան մենակ։

Գիշեր էր։ Սեղանի վրայ վառւում էր կանթեղը։ Մերթ ընդ մերթ Սիրականը ներս էր մտնում իմանալու արդեօք հիւանդը մի բան չէ՞ պահանջում։ Պարոնի հիւանդութիւնը ծառային շատ էր

անհանգստացնում, որովհետեւ Սիրականը նրան սիրում էր անկեղծ սիրով:

Այդ սիրոյ շարժառիթը՝ Դիմաքսեանի ստէպ ստէպ նւիրած փողերը, հազուստը չէին կամ ձրի դասառուութիւնը, այլ աւելի խոր պատճառ կար: Մինչ ամենքը ծաղրում և հալածում էին Սիրականին նրա տղեղ և ծիծաղելի կերպարանքի համար, մինչ ամենքը մի մի կոպիտ ածական էին տալիս նրան, մինչ երեխաներն անգամ փողոցներում վազում էին նրա ետեւից և «մալմուն, մալմուն» կանչելով, քարեր էին արձակում նրա վրայ—Դիմաքսեանը, այդ «ուսումնական աղան», այդ «մեծ օջաղի որդին», այդ «ինսպեկտորը», նրա հետ վարւում էր մեղմ, մարդասիրաբար, ինչպէս իւր հաւասարի, իւր ընկերոջ և լաւ ընկերոջ հետ: Դա մի հազւագիւտ, մի անգնահատելի բան էր Սիրականի համար: Եւ նա չը գիտէր ինչպէս արտայայտէր իւր սրտի երախտագիտութիւնը:

Վերջին անգամ ներս մտնելով, նա կանգնեց հիւանդի զլխի կողմում և, շունչը զսպելով, կամեցաւ իմանալ քնած է նա, թէ արթուն:

Լսւում էր հիւանդի ծանր և ընդհատուող շնչառութիւնը: Մի վայրկեան նա աչքերը բաց արեց, տեսաւ ծառային և հառաչեց:

—Դու ախտե՞ղ ես:

—Հրամե՛րէք, աղա:

—Քանի՞ ժամն է:

—Տասից կէս է անցել:

—Ի՞նչ ուշ է անցկենում գիշերը: Լաւ, գնա՛ գործիդ, Սիրական, յոգնած ես, պառկիր քնիր:

—Ես յոգնած չեմ, աղա, գործ էլ չունեմ, խանութին կերակուր տւեցի, պրծայ:

—Այն շիշերը և ժամացոյցը դիր այս սեղանի վրայ:

Սիրականը իսկոյն կատարեց նրա հրամանը և, ձեռները փորի վրայ դարսած, մնաց կանգնած:

—Ուզում ես ինձ մօտ մնալ, որ ծառայեմ:

—Հրամե՛րէք, աղա:

—Հարկաւոր չես, ես ուզում եմ մենակ մնալ: Գնա՛, բայց դռները ամուր կողպիր, որ քամին չը բաց անի:

Սիրականը ականաց զուրս գնաց: Հիւանդը մնաց մենակ:

Արդարեւ, այժմ նա աւելի հանդիստ էր: Իսկապէս նա իւր տկարութեանը ոչինչ նշանակութիւն չէր տալիս: Զարմանում էր անդամ Մսերեանի անհանգստանալու վրայ: Մարմնին տիրած տաքութիւնը մի առանձին ակորժութիւն էր պատճառում նրան: Թւում էր նրան, թէ կաշւի տակ մի թմրեցուցիչ և հաճոյական հեղուկ են սրսկել:

Նրա քունը չէր տանում, միայն աչքերը փակած անձնատուր էր եղել: Ֆիզիքական զուրեկան անդորրութեանը, որ նմանում էր հաշիշի կամ ափիոնի ազդեցութեանը:

Նրա մտքով անցնում էին օրւայ գէպքերը: Առաւօտեան նա զարթնեց ճշմարիտ է մի թեթեւ զլխացաւով, բայց հանդիստ և խաղաղ հոգով: Այդ ժամանակ նա մոռացել էր իւր թշնամիներին, ուզում էր պարապել, թէև տկար էր: Եւ չանկարճ դարձեալ զարթեցրին նրա սրտում թունաւոր օձը, դարձեալ տակն ու վրայ արեցին նրա արիւնը:

Բայց արժէր այդքան վրդովւել մարդկանց տմարդի վարմունքով, հարցնում էր նա ինքն իրան, միթէ չէր կարելի սառնասիրտ արհամարհանքով վերաբերւել ստոր լուսանքներին: Ինչո՞ւ նա այնպէս պռնկեց, ինչպէս մի դիւրաբորբոք հեղանիւթ:

«Արդեօք, երբ, վերջապէս, կը չափաւորւի իմ զգայնութիւնը»:

«Երբէք, երբէք», պատասխանեց նրան մի ուրիշ ներքին ձայն:

«Ինչո՞ւ»:

«Որովհետեւ դու անորմալ մարդ ես, Բարաթեանը ճիշդ է ասել և ճիշդ են ասում միւսները»:

Ան, այդ Բարաթեանը, այս օրւայ այն չարագուշակ հանդէսը, նրա յաղթական ժպիտը, գէմքի երջանիկ արտայայտութիւնը:

Ուր է նա այժմ: Երկաթուղու գնացքը ամբողջ օրը բաղդաւոր զոյգին սլացրել է կայարանից կայարան: Անն նրանք, ահա նա մի ձեռով Գալիանէին գրկած, միւսով շոշոյում է նրա դանդուր բաց զոյնի մազերը: Իսկ Գալիանէն գլուխը մեղմիկ թեքած է նրա ուսին և իւր կապուտակ կրակոտ աչքերով ցածից վեր նայում է նրա երեսին:

«Յաճիրց վեր, այո՛, եթէ ես լինեի, պէտք է վերելից ցած նայէր ինձ»:

Նրանք կանգնած են վազօնի փողբիկ պատուհանի առջև, ի հարկէ, առանձին կուպէում, և դիտում են աշնանային բնութեան հրաշալիքները: Տեսարանները փոխւում են դեղեցիկ կալէնդօսկոպի արագութեամբ: Նրա աչքի առաջով անցնում են գիւղական աղքատիկ լսրճիթները այս ու այն տեղ ցրւած, դեղնած դաշտերը, սիրուն ձորերը և շքեղ հովիտները:

Պղտոր Գուրը այնտեղ պարզ է, փայլուն և զրաւիչ: Նա ժըպտում է բազդաւորների երեսին և սիրով ողջունում նրանց միութիւնը: Այն ինչ՝ նոյն գետը այնքան մռայլ, այնքան թշնամաբար էր նայում նրան այսօր առաւօտեան: Նա, կարծես, աշխատում էր գրաւել դժբաղդին դէպի իւր ցուրտ ծոցը, ուր թաղնւած է ժանդ մահը: Ի՞նչ կը լինէր, եթէ նա զգէր իրան այնտեղ: Ոչ, ո՛չ, ի՞նչո՞ւ համար, ո՞ւմ համար, արժէր...

Այստեղ հիւանդը զգաց մի նոր սառնութիւն իւր ոսկորների մէջ: Երջանիկ զոյգը համբուրւում է: Ա՛խ, այդ սիրային համբոյժները, արդեօք ի՞նչ զգացմունք են պատճառում համբուրւոյններին: Արդեօք կարժանանայ նա երբ և է, գէթ մի անգամ իւր ամբողջ կեանքի ընթացքում այդպիսի ջերմ համբոյժի մի այնպիսի արարածի հետ... Ի՞նչ ասել է փոխադարձ սէր: Նա ուզում է զգալ, նա կարօտ է, նրա սիրտը պահանջում է մի այդպիսի սէր, վերջապէս, իրաւունք ունէ պահանջելու:

Նրա ատամները դողդողում էին և ուժղին ու արագ արագ զարկւում միմեանց: Ա՛հ, ցուրտ է, սաստիկ ցուրտ: Ինչո՞ւ նրա ողնաշարը այնպէս ցաւում է, կարծես նա, ուզում է բաժան բաժան լինել, կարծես, ոսկորները ուտում են միմեանց:

Նրա ամբողջ մարմինն օրեց կապարային ծանրութիւն: Այդ ի՞նչ է նշանակում. ցուրտ է, պէտք է ծածկւել:

Եւ նա վերմակը քաշեց գլխին, ոտները հաւաքեց, կծկեց, կուչ եկաւ ամբողջ մարմնով և դարձաւ մի փոքրիկ կծիկ:

Լսւում էին նրա ծանր անքունքոցը ու հառաչանքները:

Տասը րոպէից յետոյ ցուրտը անցաւ: Սկսեց մի նոր տաքութիւն, և այս անգամ՝ աւելի սաստիկ:

Նա դէն շարտեց վերմակը, կուրծքը բաց արեց և ձեռները տարածեց աջ ու ձախ: Նրա պղտոր և կարմրած աչքերը թափառում էին առաստաղի վրայ, պատից պատ, անկիւնից անկիւն: Իսկ մթնած միտքը կայծակի արագութեամբ վերաստեղծում էր անցեալի տպաւորութիւնները անբնական կերպով, չափազանցաբար, անկապ, անորոշ, հատ ու կտոր...

XVII

Յանկարծ նրան թւաց, թէ ինքը դպրոցումն է: Ահա և՛ աշակերտները, շարէ շար նստած, պատասխանում են նրա հարցերին: Մի չար պատանի, ընկերներին աջ ու ձախ բռնելով, ստէպ ստէպ մատը բարձրացնում է և ոտքի կանգնում:

«Արաբեան, հանդիստ նստիր», զուեց նա բարձրաձայն:

Բայց ո՛չ, դա ուսումնարան չէ: Նա կանգնած է մի ընդարձակ դահլիճում: Նրա առջև հաւաքւած է անթիւ բազմութիւն, գիւղացիների և քաղաքացիների մի խառնիճաղանձ ամբոխ:

Նա քարոզում է ամբոխին լոյս և զիտութիւն: Նրա ձայնը դիւթական զօրութիւնով ամենքին գրաւել է, լսում են լուռ, ուշադիր, անշարժ: Սո՛, որքան լաւ է տիրել ընդհանուրի մտքին:

Յանկարծ մի շշուկ է բարձրանում: Նա զգում է, որ մէկը ետեւից բռնեց նրա հագուստի փեշերը: Նրան ուզում են ցած գլորել: Նա յետ է նայում, ան, դանրա հակառակորդներն են—մէկը գերմանական Խնիաթեանը, միւսը փաստաբան Վէքիլեանը: Չարամիտներ, դուք նախանձում էք, որ խաւար բազմութիւնը մի՞տ է դնում նրա լուսաւոր գաղափարներին:

«Ի՞նչ էք ուզում ինձանից», զոռաց նա բարձրաձայն, ձեռը խփելով բարձին:

Ոչինչ չը կայ, ոչ ամբոխ, ոչ թշնամիներ, ոչինչ: Նա մենակ է և գտնւում է դատարկ տարածութեան մէջ, օդի վրայ քաշ ընկած: Նա ոչ մի յենարան չունէ, վախենում է անհուն բարձրութիւնից ընկնել և անհետանալ այն խաւար անդունդի մէջ, որ բացւած է ներքեւում, ուղիղ նրա ոտների տակ...

Մի ինչ-որ սպիտակահեր ծերունի տալիս է նրան մի բազկաթոռ: Նա նստում է: Այժմ նա ծանօթ ընտանիքի հիւրասենեա-

կումն է: Ինչքան հիւրեր կան: Մեծ մասը կանայք են և ինչ սիրուն, ինչ գեղեցիկ, ինչ երիտասարդ կանայք: Նստած են խումբ-խումբ ուրախ դէմքերով: Ա՛հ, հարսանիք է, հումը: Սենեակը աղմկում է հիւրերի զարթ և բարձրաձայն խօսակցութիւններով և քրքինջներով:

Մի երիտասարդ ջութակ է ածում, մի օրիորդ երգում է, միւսը դաշնամուր է նւագում: Իսկ այնտեղ սպիտակ հագուստով, գլուխը գեղեցիկ պսակով զարդարած, դէմքը մի նօր և նուրբ շղարշով ծածկած, կանգնած է նա, Գայիւնէն...

«Բարեւ ձեզ», ասաց հիւանդը խաղոտ ձայնով:

Ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում Դիմաքսեանի վրայ: Նա նստած է սենեակի մի անկիւնում, աննշմարելի այդ ուրախ հանդիսում, այդ զարթ հասարակութեան մէջ: Ի՛նչ լաւ նւագում է այն օրիորդը, ինչ գեղեցիկ է Գայիւնէն, ինչ ուրախ է Բարաթեանը:

«Բրաւօ, բրաւօ», գոչեց դարձեալ հիւանդը:

Մթութիւն, խաւար, ոչինչ չը կայ, ձայներ են լսում, տարօրինակ, սարսափելի ձայներ: Բայց ահա դարձեալ հիւրասենեակը լուսաւորեց, և ոչ ոք չէ տեսնում Դիմաքսեանին: Այդպէս չէ կարելի, կամ պէտք է այստեղից դուրս գալ կամ պէտք է ուշադրութիւն գրաւել: Նա կահ-կարասի չէ, նա մի կոտրած աթոռ չէ, կամ մի անպէտք լաթի կտոր,—նա Արսէն Դիմաքսեանն է...

«Տիկիներ, օրիորդներ», նորից գոռաց հիւանդը, աւելի խաղոտ ձայնով:

Հիւրասենեակում տիրում է միանուագ լռութիւն: Բոլոր հանդիսականները երեսները դարձնում են դէպի նրա կողմ: Վերջապէս, նշմարեցիք Դիմաքսեանին:

«Ո՛վ է խրեւ աչն բազկաթռուի մէջ», ասում է մի գոռոզ տիկին, մօնօկլը պահելով աչքին:

Դիմաքսեանը ոտքի է կանգնում:

Հիւանդը նստեց անկողնի մէջ:

Ամենքը զարմացած են: Սպասեցէք, սպասեցէք, իսկոյն նա ցոյց կը տայ, թէ ով է ինքը: Բոլորը անշարժ են, բերանները կիսաբաց, գլուխները վեր բարձրացրած: Դիւթական ձայնը նրանց

մի ականթարթում արձանացրել է նոյն զիրքում, ինչ զիրքում որ էին: Կառքերի ձայնը խլացնում է նրան, օօօ, ամբողջ քաղաքը, կարծես, զլարձանում է նրանց երջանկութիւնով: Իսկ ինքը մե-
նակ, արհամարհւած, ընկճւած: Այս ինչ ձայներ է լսում նա, ինչո՞ւ են յարձակւում նրա վրայ:

«Ինչո՞ւ, ինչո՞ւ»...

Հիւանդը ձեռք զարկեց անկողնակալի կողքին:

Լսւում է մի բարձր ծիծաղ: Նա թափոռնումն է, Վէքիլեանի առաջ կանգնած: Գայիանէն մօտենում է նրան և նայում: Նա յանկարծ բռնում է օրիորդին ամուր ձեռներով, խելագարի պէս: Վայրկեաբար օրիորդի կրծքից դուրս է թռչում մի բարձր ծիծ: «Դա հրէշ է», գոչում է նա և սարսափած փախչում: «Հրէշ է, հրէշ է», կրկնում են բոլոր կանայք և վազում այս ու այն կողմ: Տղամարդիկ ծիծաղելով հեռւում են նրանց:

Ամենից յետոյ դուրս է գալիս Բարաթեանը և դուրս գալուց առաջ զգւանքով նայում է Դիմաքսեանի վրայ: Նա համբուրում է Գայիանէին, օօօ, համբուրում է իւր հարսնացունին, իւր ամուսնուն:

Հիւանդը, ատամները կրճտելով, ձեռներով ամուր բռնեց գլխի մազերը:

Նա միայնակ է և դարձեալ նոյն հիւրասենեակում:

Նրա հայեացքը ընկնում է դիմացի հայելու մէջ: Այնտեղ նա տեսնում է իւր ամբողջ կերպարանքը նկարւած ոտից մինչև գլուխ:

Տէր Ասուած, ինչ բանի է նմանում նա: Այտերի ոսկորները դուրս ընկած, ահռելի բերանը լայն բացւած, շրթունքները լնդեր-
քին կպած: Աչքերի փոխարէն մթին խորշեր, ականջները սևա-
ցած, պարանոցը ոսկորացած: Իսկ մարմինը: Ի՞նչ պտիկ, զազրելի կերպարանք: Այո՛, իրաւունք ունէ Գայիանէն նրան ատելու, նա մարդկային պատկեր չունէ, նա հրէշ է, ծիւաղ է...

«Ես հրէշ եմ, հրէշ եմ, բոլորը ասում են», լսեց դարձեալ հիւանդի ձայնը:

Եւ նա անկողնից վեր թռաւ անբնական արագութեամբ, կանգնեց յատակի վրայ:

Սեղանի վրայ շարունակ վառւում էր կանթեղը: Դրսում քամի էր, աշնանային սարսափելի քամի, որ ամենի և սոված զա-

զանի պէս լիզում էր դաշտերը: Դռների և լուսամուտների արտնքից նա ներս էր թափանցում, սուլելով ինչպէս օձ, բառանշելով որպէս մորթւող չորքոտանի:

Հիւանդը կանգնած էր սենեակի մէջ տեղում բարակ գիշերային շապիով, կուրծքը կիսով չափ բաց: Նրա աչքերի շրջանակները արիւնով լի պնակների էին նմանում, լայնացած բիբերը, կարծես, ձգտում էին դուրս գալ իրանց բնից:

Նա առամները կրճտում էր կառաղի կերպով, գլխի մագերը խճճել էին և հաւաքւել գազաթում: Նա մի բռնեցքի մէջ սեղմած էր վերմակի ծայրը, միւսի մէջ շապի եզերքը: Կարծես, նա պատրաստւում էր յարձակւել մի աներեւոյթ թշնամու վրայ:

Նա ոտները ուժգին զարկեց յատակին և գոռաց.

«Վայրենի՛ ժողովուրդ»:

Դա մի տարսափելի, մի խուլ գոռոց էր, արձակած սաստիկ տենդի մէջ զանազ ճիւղանդի տանջւող և տառապող կրծքից:

Այդ գիշերային մենաւոր լուռթեան մէջ, այդ դատարկ սենեակում նա յիշեցնում էր իւր որջի մէջ բռնւած մի վայրի գազանի, որին դրսից պաշարել էին և կամենում էին կենդանի կենդանի աչելէ: Ղեմքը կորցրել էր ամեն ինչ, որ մարդկային էր, որ արտայայտում է գիտակցութիւն և բանականութիւն, և երևան էր հանել, ինչ-որ գազանային է:

Դրան արանքից ներս սլացող քամին կպչում էր նրա այլուղ մարմինը: Դա էր, որ մի ակնթարթ մեղմացրեց նրա տենդային ցնորքները, թոյլ շատ թոյլ կերպով լուսաւորեց նրա մթնած գիտակցութիւնը:

Նա նայեց իւր շուրջը, բռնեցքները բաց արեց, հառաչեց ծանր և երկարատև: Նա մօտեցաւ զրասեղանին, ձեռները յենեց նրա ծայրին և նորից հառաչեց:

Կանթեղի մօտ դրած էին մի մեծ թանաքաման, մի քանի զրքեր և լրագիրներ: Նա անմիտ հայեացքով նայեց նրանց, յետոյ պատերին, յետոյ առաստաղին, յետոյ յատակին, յետոյ ինքն իրան ոտից մինչև գլուխ: Եւ երբ գլուխը կրկին բարձրացրեց, նրա հայեացքը ընկաւ կանթեղի միւս կողմում դրած մի փոքրիկ քառանկիւնի հայելիին: Նրան թւաց, որ այդ մի մեծ գաւաթ է

ջրով լի: Նա վերցրեց երկու ձեռներով և մոտեցրեց շրթունքներին: Յետոյ ցած բերեց, նայեց նրան, նայեց երկար ժամանակ: Դրան արանքից սուշող քամին մի նոր ցրտութիւն տարածեց նրա մարմնի վրայ: Ահա նա, այն կերպարանքը, որին ամենքը ծաղրում են: Ահա այն խորը թաղւած աչքերը, երեսի թուխ և կոշտ կաշին, նօսր միրուքը, ագեղ բերանը, լայն սևացած առամները: Իսկ հասակը, Նա հայելին պահեց զլիւի վայր, կիսահորիզոնական ձևով և նայեց իրան ոտից մինչև գլուխ: Ա՛խ, որքան նա փոքրիկ է, որքան չնչին: Ինչո՞ւ նա այդպէս է ծնւել, ինչո՞ւ նրա ահագին գլուխը տեղաւորւած է այդ մի քանի թզաւափ ագեղ մարմնի վրայ: Ինչո՞ւ նա և ոչ ուրիշը: Անէծք բնութեանը, անէծք նրա օրէնքներին, անէծք ամբողջ տիեզերքին, անէծք նրա աներևոյթ զօրութեանը: Կամ գուցէ այդ նրա ծնողների, նրա պապերի և նախահայրերի մեղքն է: Բայց ինչո՞ւ բնութիւնը նրան և միմիայն նրան է ընտրել այդ մեղքերի պատիժը կրելու, ինչո՞ւ, ինչո՞ւ...

Նա անթարթ աչքերով շարունակ նայում էր հայելու մէջ: Եւ նրա կուրծքը ուժգին բաբախում էր, երեսի բոլոր մկանունքները ցնցւում էին: Սակայն նա դարձեալ նայում էր ինքն իրան: Կարծես, առաջին անգամն էր տեսնում կամ գուցէ ուզում էր վերջին անգամ սիրտը տանջել կամաւոր փորձով:

Նա հայելի՛ն դրել էր սեղանի վրայ: Նա կատաղութիւնից եղունգներով ճանկւտում էր սեղանի ծածկոցը, բայց էլի նայում էր: Նա գտնւում էր կիսատենդային և կիսաարթուն դրութեան մէջ:

Յանկարծ նա դողդոջուն ձեռներով խլեց հայելին սեղանի վրայից, աւելի ու աւելի մոտեցրեց աչքերին: Նրա շրթունքները բացւեցին և առամները դուրս ցցւեցին: Նա հայելին բարձրացրեց զլիւից վեր և բոլոր ուժերով զարկեց սենեակի յատակին:

Ապակին շրջանակից բաժանւեց, փշրուեց: Նրա առանեակ բեկորները ցիր ու ցան եղան այս ու այն կողմ: Նոյն միջոցին հիւսանդի կուրծքը արձակեց մի դառն, երկարատև և կատաղի ծիծաղ:

Բորբոքւած աչքերով նա նայում էր հայելու կտորներին, որոնց հնչիւնների մէջ զգաց ջախջախւած թշնամու վերջին յուսակտուր

հառաչանքները: Կարծես, նա իւր վրէժը լուծեց, տալով բնու-
թեանը արժանի վարձ նրա անարդարութեան համար:

Իրաւ, այժմ նա աւելի հանդիստ էր երևում, թէև տենդը
տակաւին չէր անցել: Յոգնած, շնչասպառ, ծանր հառաչելով նա
յետ ու յետ քայլեց և թուլացած նստեց անկողնակալի վրայ: Նրա
գլուխը ծանրացել էր, թեքւել կրծքին: Միտքը դեռ պղտորւած
էր, նա չէր գործում, այլ վերաստեղծում էր անցեալի տպաւորու-
թիւնները: Փոքր առ փոքր նա սկսեց սթափւել, բայց դեռ
չը գիտէր արթուն է, թէ երազում: Գիտէր միայն, որ ինչ-որ բան
է պատահում իրան, մի տարօրինակ, մի չը տեսնւած բան:

Մի անգամ նա աչքերը վեր բարձրացրեց, և նրա պղտոր հայեացքը
ընկաւ զիմացի դռների ապակու վրայ, բայց չը նշմարեց մի զարմանալի
երևոյթ: Դա երկու ձեռնաչափ դեղնագոյն մի բան էր ամուր կպած
ապակուն, ինչպէս չորացած, գունատւած մեծ տերև:

Երբեմն այդ բանը շարժում էր, քսւելով ապակուն: Նոյն
միջոցին դռների ետևից լսում էր ինչ-որ շշուկ: Կարծես, այդ
շշուկը հասաւ նրա ականջին: Նա ձեռով շփեց տաքութիւնից
այլուղ ճակատը, որորեց ցամաքած աչքերը...

Դեղնագոյն բանը չբացաւ, ապակին մթնեց: Մէկը զրսից
դռները շարժում էր:

«Կորէք, կորէք», դռեց հիւանդը խուլ ձայնով:

Դռները հանդարտ և կամացուկ բացւեցին: Ներս մտաւ կա-
պոյտ շապիով, կուրծքը բաց, ոտաբոբիկ մի արարած, ինչպէս գի-
շերային ոգի, որ գալիս է վհուկի ձայնին: Բայց ոգին կամ ուրա-
կանը սաստիկ վախեցած էր: Նա դողում էր ոտքի վրայ, նա
չը գիտէր առաջ գար, թէ դռների մօտ մնար:

Այնքան պղտորւած էր հիւանդի միտքը, այնքան մթաղնած
էին նրա աչքերը, որ նա չը ճանաչեց ուրախանին:

«Կորիր», կրկնեց նա, ոտքի կանգնելով:

Սիրականը, ձեռները փորի վրայ դարսած, մի քանի քայլ
առաջ եկաւ:

«Ձուր ջուր», սիրտս այլուում է:

Մառան բորձրացրեց կանթեղի լոյսը, տւեց հիւանդին մի
բաժակ ջուր:

Յետոյ նա ասաց.

—Աղա, կը մրսես, պառկիր:

Հիւանդի թուլացած գլուխը թեքւեց բարձին: Սիրականը ուղղեց նրա մարմինը և վերմակով ծածկեց:

Անցաւ մօտ քառորդ ժամ, և հիւանդը, կարծես, քնեց: Սիրականը կանգնած էր նրա գլխի մօտ, ինչպէս մի խնամող մայր: Խեղճ մարդ, նա կարծում էր, որ երիտասարդ պարոնը խելագարւել է:

Նա զիտմամբ իւր անկողինը բերել էր սենեակի դռների մօտ և այնտեղ պառկել, որ հիւանդին մօտիկ լինէ, հարկաւոր եղած ժամանակ նրան օգնութիւն հասցնելու:

Հազիւ նա նիրհել էր, երբ Գիմաքսեանի տարօրինակ գոռոցները զարթեցրին նրան: Նա ամբողջ ժամանակ դռների ետեւից հետեւել էր նրա արածներին, չը համարձակւելով ներս մտնել:

Այժմ նա ապշած նայում էր հայելու կտորներին, գլուխը շարժում և հիւանդին ձեռով խաչակնքում:

Արդէն լուսաբացին մօտ էր, երբ Սիրականը աթոռի վրայ նստած նիրհեց: Նա սթափւեց այն ժամանակ, երբ ուսի վրայ զգաց մի ծանրութիւն:

Դա Մսերեանի ձեռն էր:

—Գիշերը հանգիստ է քնել:

—Ձարչարւել է խեղճը մինչև լոյս:

Սիրականը նրան կանչեց մի կողմ և շշնչելով պատմեց գիշերւայ եղելութիւնը: Մսերեանը վախեցած մօտեցաւ հիւանդին և զգուշութեամբ ձեռը շփեց նրա ճակատին: Հիւանդը քրտնած էր: Մսերեանը ծառային պատուիրեց հայելու բեկորները հաւաքել և դուրս գնալ: Իսկ ինքը նստեց իւր ընկերոջ անկողնակալի մօտ:

Մի ժամ անցած եկաւ բժիշկ Սալամբէկեանը: Հիւանդը զեռ քնած էր: Մսերեանը հաղորդեց նրան ծառայի պատմածը:

—Կը նշանակէ սաստիկ տաքութեան մէջ է եղել: Ոչինչ, ոչինչ, մի՛ վախենալ, սովորական ցնորք է...

Վերջապէս, Գիմաքսեանը շարժւեց վերմակի տակ: Ծանր հառաչելով, նա երեսը դարձրեց ընկերներին և արտասանեց.

—Ես հիւանդ եմ, բժշկեցէք ինձ...

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՋՐ:

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՆԵՐԿԱՅԻՑ ԵՒ ԱՆՑԵԱԼԻՑ

ԱՐՇԱԼՈՅՈՒ ՄԻԻԹԱՐԵԱՆԻ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱՒՈՏ

Գեղեցիկ ես դու, զարնան առաւօտ,
Երբ հեռու հեռու լեռների ծայրից
Նայում է արև դէմքով ծիծաղկոտ,
Երբ բարձրանում է մէզը դաշտերից,
Երբ տխրած լուսին, իբր աքսորական,
Իջնում է հանդարտ իւր բարձրր գահից,
Ուր շողշողում են ամպեր կուսական,
Որպէս կարապներ մաքուր և անբիծ,
Երբ ծերուկ գազաթն հըսկայ լեռների
Վառւում է առաջդ, իբրև ադամանդ,
Երբ թևաւորներ անհուն եթերի
Անվերջ շարքերով անցնում են ազատ,
Ծառեր, ծաղիկներ՝ մարգարտեայ ցօղով
Ջարդարւած հանդերձ դեռ կէս-գիշերին,
Պըճնում են այգի ոսկեվառ շողով
Արարչի կազմած ուրախ խընճոյքին,
Ու մօտիկ սարի ծերպերում պահւած
Գիւղից բարձրանում է ծուխ ոլորուն,
Իբրև ջերմ աղօթք երկինք առաքւած,
Իբր առաւօտի կանուխ գոհութիւն:

*
* *

Թ', այդ ժամանակ ինչպէս ջերմագին
 Բըղխում է աղերս սըրտի խորքերից,
 Որ միշտ հաշտ հայեր իւր ձեռագործին
 Նա, որ այս ամենն արաւ ոչընչից.
 Ի՞նչպէս շար 'ի շար փայլում են աչքիդ՝
 Առաջին յոյսեր վաղուց խորտակած,
 Ի՞նչպէս հըրճւում է զօրացած հոգիդ՝
 Տառապանք ու վիշտ ծանակ համարած.
 Եւ ըզգում ես զու, որ կը գան օրեր,
 Երբ այդ գեղեցիկ աշխարհում մարդիկ
 Կը գըզեն իրար, որպէս եղբայրն/ր,
 Սիրոյ ըսուերում անանց երջանիկ...

1890 թ.

ՔԵՐՈՐՈՂԼԻՆ ԿԱԼԱՆԱԻՈՐ

(Մի արկած Քերօրօղլու կեանքից)

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՅԻ

Քերօրօղլին զող չէր և ոչ աւազակ, այլ մի ինքնագլուխ իշխան, իսկ այդ անկախութեանը հասել էր նա իր անվեհերութեամբը և քաջագործութիւններովը: Նա չէր յափշտակուած և կողոպտուած, այլ հարկ ու մաքս էր առնում և չքուողներին անխնայ պատժում: Բայց Իրանի թագաւորը նրան համարում էր աւազակ. այսպէս էին ճանաչում նրան և սուլթաններն ու խալիֆաները, որոնց կարծիքը Քերօրօղլու համար նշանակութիւն չունէր. նա այսպէս էր դատում —

— Եթէ հարկ առնելը մեղք է, ինչո՞ւ իրանք առնում են: Եթէ հնազանդւելը լաւ բան է, ինչո՞ւ իրանք ինձ չեն հնազանդւում: Իրանք զօռով ու բռնութեամբ են տիրում աշխարհին, ես էլ իրանց պէս կը վարեմ: Այդ բարբարոս աւազակները իրանց աչքի գերանը չեն տեսնում, բայց համարձակում են իմ աչքումը շիւղ դնել: Իրանք իրանց աւազակ չեն համարում, չը նայած, որ նոյն իսկ Աստուծոյ փառքն են յափշտակում, իսկ ինձ՝ Աստուծոյ ամենախոնարհ ծառայիս՝ համարում են աւազակ:

Այսպէս էր դատում Քերօրօղլին, իբրեւ բնութեան պարզ որդի, որի գլուխը լցւած չէր զանազան կանխակալ կարծիքներով:

Բայց ամենայն օր զանգատ ու բողոք էր, որ անընդհատ հասնում էր Իրանի թագաւորին, որին յանդիմանում էլ էին, թէ՛ եթէ դու ես մեր թագաւորը, ազատիր մեզ Քերօրօղլու ձեռից, որ քեզ ծառայենք, իսկ եթէ ոչ՝ մենք կամայ աւամայ պիտի Քերօրօղլուն

հպատակենք, նրան ծառայենք: Եւ ահա ինչ էին ասում իրանց զանգատներում Քեօրօղլու մասին —

Նա, ասում էին, թալանում է քարանները, դերի է տանում հարուստ վաճառականներին և մինչև մեծ փրկանք չի առնում, բաց չի թողում:

Գիւղացիներին ոտքի է կանգնեցնում իրանց խաների ու բեգերի դէմ, կոտորում և կոտորիլ է տալիս կալածատէրերին ու տէրութեան կապալառուներին, և այսպէսով իր կողմն է գրաւում երկրագործ ժողովրդին: Այսօրում է հարկահաններին և հաւաքած հարկերը բաժանում չքաւոր գիւղացիներին:

Շատ անգամ կարում է գիւղացոց չարաբերութիւնը քաղաքացոց հետ, ուսեստի պաշարը թանգացնում, և մինչև քաղաքներից մեծ վճար չի առնում, չարաբերութեան կապը չի արձակում:

Քրիստոնեաներին առանձին պաշտպանութիւն է ցոյց տալիս և նրանց պաշտպանութիւնը գտնում ամեն տեղ:

Որտեղ մի կարգէ դուրս քաջ տղամարդ կայ, գնում է Քեօրօղլու զրոշակի տակ մտնում: Որտեղ մի փախստական և մահապարտ կայ, նրա հովանաւորութեանն ու պաշտպանութեանն է դիմում: Այսպէսով նա կազմակերպած խումբեր ունի երկրի բոլոր ամուր տեղերում: Բոլոր անմատչելի բերդերին տիրելով՝ ամենի վրայ իր անունն է դրօշմել: Բոլոր խումբերն իրար հետ սերտ կապ ունին, և հարկաւոր դէպքերում միմեանց օգնութեան են հասնում:

Ամեն հաւատի ու ցեղի մարդ կայ նրա խմբի մէջ, բաց միանգամ այդ խմբի մէջ մտնելով՝ ոչ մի հաւատի չեն ծառայում, ամենքն էլ միասին դառնում են անհաւատ և ծաղրում ամեն հաւատ: Չեն ընդունւում միայն այն մարդիկը, որոնք որ և է քաջութեամբ իրանց յայտնի չեն կացուցել, կամ որ և է զժլար յանձնարարութիւն և փորձ չեն կատարել: Ինքը պաշտելու չափ սիրում է ամեն մէկին և ամենի չիմար քիմքը կատարում, նոյն խակ իր կեանքը վտանգի տակ դնելով: Բոլոր սիրահարներին իրանց մուրազին է հասցնում, բերելով նրանց սիրոյ առարկան: Ինքն էլ ամեն մի բերդում մի առանձին սիրունի ունի: Իրանց սիրունիներին փակած չեն պահում, նրանք պարտաւոր են զինավարժութեամբ պարապել, ձիավարութիւն գիտենալ և հարկաւոր դէպքերում քա-

ջութեամբ կուել: Այս կերպով ահա նա հաւաքել է երկրի ամենագեղեցիկներին և ամենաքաջերին, որոնք հմայւածի պէս անձնւորութիւն են ցոյց տալիս նրան, և անհաւատ լինելով՝ նրան միայն հաւատում ու սիրում:

Քեօրօղլին ամենից շատ փնաս էր հասցնում Իրան աշխարհին: Այդ ատելութիւնը ժառանգական էր, հօրից որդուն անցնելով, որի պատճառն ուրիշ անգամ կը պատմենք, որովհետև շատ երկար է: Բայց Քեօրօղլուն ժամանակակից Իրանի թագաւորը մի վեհանձն մարդ էր: Նա երբ որ լսում էր Քեօրօղլու քաջութիւնը, մտքովն ասում էր. «Եթէ ես թագաւոր չը լինէի, ամենայն ուրախութեամբ Քեօրօղլու քաջերից մէկը կը դառնայի, նրա պէս ազատ կեանք կը վարէի»: Այս պատճառով նա ահագին զօրքով, (մօտ երեսուն հազար հոգուց բաղկացած) ուղարկեց իր ամենից փորձառու զօրապետին—Բօլի բէգ անունով և պատուիրեց նրան, որ Քեօրօղլուն կալանաւորէ, պաշարելով այն բերդը, ուր որ նա կը լինի: Սպանելու հրաման չը տւաւ, ընդհակառակը, ասաց, որ եթէ Քեօրօղլուն սպանես, քեզ կախաղան կը բարձրացնեմ. եթէ քաջ ես, նրան պէտք է բերես ինձ մօտ ողջ առողջ:

Իրանի թագաւորը չէր ուզում զրկւիլ Քեօրօղլու պէս մի անւանի հերոսից, և ուզում էր նրան իր մօտ տանել և նրանով յաղթել իր արտաքին թշնամիներին: Բօլի-բէգը նախ պիտի աշխատէր, զանազան խոստումներով Քեօրօղլուն հրաւիրել շահի մօտ, իսկ եթէ այդ չը յաջողէր, միայն այն ժամանակ պիտի դորձ դնէր իր ահագին բանակի ուժը:

Քեօրօղլին այդ ժամանակ գտնւում էր մեր երկրումը, որ Իրանի իշխանութեան տակն էր: Երբ էր այդ ժամանակը, յայտնի չէ, և ոչ տեղն է յայտնի որոշակի: Աւանդութեան մէջ յիշուում են Թօնա դետ, Չամլի-բէլ սար, որոնք մեզ այսօր անցալո են, բայց Քեօրօղլու իրան խաղերից երևում է, որ այդ անցքը պատահել է այժմեան Մուշի մօտերքումը:

Թագաւորի մտադրութիւնը Քեօրօղլու մասին թեպէտ անկեղծ էր, նա անշուշտ մեծ պատւի կը հասցնէր Քեօրօղլուն, աւելի քան

ներկայ շահը մեր Քեարամին, բայց Քեօրօղլին իր բոլոր յատկութեամբ բնածին լինելով՝ աւելի լաւ էր համարում Հայաստանի հովասուն լեռներում ազատ աւազակ համարելի, քան թէ շահնշահի եռասարիսպ պալատում նոյն իսկ շահ լինել, ուր մնաց, որ ինչքան էլ մեծ իշխան լինէր, դարձեալ շահի ստրուկը պիտի համարէր։ Լինել հպատակ, թէև հազար ու մէկ շքանշանով զարդարւած՝ ատելի էր բնութեան ազատ զաւակին։

Քեօրօղլին սովորութիւն ունէր շատ անգամ ծպտած ման գալու։ Նստում էր մի իշի կամ ջորու վրայ, աշըղի հագուստով (աշըղները ջոկ հագուստ ունէին հնումը), սազը մէջքից կախած, առանց որ և է գէնքի և գիւղէգիւղ թափառելով, զանազան տեղիկութիւններ էր հաւաքում, և ըստ այնմ իր զգուշութիւնը գործ դնում և անելիքն անում։ Մէկ անգամ էլ հէնց այսպէս ծպտած ժամանակ լսում է, որ Բօլի-բէգը եկել է մեծ զօրքով և բանակ է դրել Թօնա գետի մօտ։ Եկել է ոչ իբրև զօրքով պատերազմ, այլ իբրև մի ցեղապետ իր ժողովրդով ամարանոց, իր հետ բերել է և իր կանանցը։ Բոլոր հարիւրապետներն ևս բերել են իրանց գերդաստանը, որով կազմել են մի թաթարական օրդու։ Իրանց հետ ունին նաև ոչխար, տաւար, ուղտեր և ամենայն ինչ։ Ի հարկէ այս աւելորդ բաներն այնքան շատ չէին, որ իսկոյն չիմացէր, թէ սա մի խաշնարած ժողովրդի չուսմն չէ մի տեղից միւս տեղ, այլ պատերազմական նպատակ ունեցող մի բանակ է։

Քեօրօղլին, առանց երկար մտածելու, իր ջորին քշում է ուղիղ գէպի այդ բանակը, որ կշռէ նրա որպիսութիւնը։ Հէնց որ նրան տեսնում են, իբրև աշըղի, ամեն մէկն իր կողմն է քաշում և հրաւիրում, բայց Քեօրօղլին ոչ մէկին չի լսում, քշում է ջորին և իջնում զօրապետի վրանի առջև։ Բօլի-բէգը շատ ուրախանում է և հրամայում է նրան ցոյց տալ իր շնորհքը, զարձացնել իր խաղերով, և եթէ գիտէ, Քեօրօղլու խաղերիցն ասէ։ Այս առաջարկութիւնից օգուտ քաղելով՝ Քեօրօղլին ասում է հետևեալ խաղը մեղմացնելով իր անեղ ձայնը, որ չը ճանաչէ։

Ով կաք այս բանակում իմ ծանօթներից,

Շուտով իմ քաջերին մի լուր հասցրէք։

Թող յարձակին ամեն կողմից խմբերով՝

Ինչ էլ մէկ վահան ու մի թուր հասցրէք.

Հասէք, շուտով հասէք,

Մի լուր հասցրէք:

Ասացէք՝ եկել են զեղնած բօստանչիք,

Արխաջրով փորերն ուռած թուլուղչիք,

Սուր չը տեսած, բանից փախած փինաչիք,

Եկէք այս խեղճերին առողջացրէք.

Հասէք, շուտով հասէք,

Մի լուր հասցրէք:

Ձեն ճանաչում արծիւն աղուաւի շորում,

Ձորս կողմից ծաղրում են ու կացահարում,

Քեօրօղլուն բռնելու թակարդ են լարում,

Եկէք սրանց պլխում մի խելք մոցրէք.

Հասէք, շուտով հասէք,

Մի լուր հասցրէք:

Քեօրօղլու խաղի միտքը լաւ հասկացան նրա բարեկամ լրտեսները և շտապեցին լուր տանելու նրա քաջերին: Բայց Բօլի-բէզն ևս կասկածի եկաւ, թէ սա ինքը չէ արդեօք Քեօրօղլին, և հարցրեց.

—Աչըդ, այդ խաղը երբ է ասել Քեօրօղլին:

Քեօրօղլին պատասխանեց.

—Միթէ քեզ յայտնի չէ, խան, որ փաղիշահը քանիցս անգամ ուղեցել է կալանաւորել Քեօրօղլուն. մէկ անգամ էլ Բօլի-բէզին է ուղարկում մեծ զօրքով: Քեօրօղլին աչըդի հագուստով պատահմամբ ընկնում է նրա բանակը, ուր և ասում է այս խաղը, որով իմաց է տալիս իր քաջերին, թէ ուր է ընկել ինքը, և նրանք էլ գալիս են ազատում:

—Այդ Բօլի-բէզը չի լինում, աչըդ, այլ գուցէ Վէլի-բէզը լինի եղած: Բայց դու այս ասա, ինչո՞վ ես հաստատում, որ դու ինքըդ չես Քեօրօղլին, որովհետեւ ինքըդ քեզ մատնում ես, խոստովանւելով, որ Քեօրօղլին երբեմն ծախելով՝ աչըդու թիւն էր անում:

—Խան, հէնց այդպէս էլ հարցրել է Բօլին, և տեսէք՝ Քեօրօղլին ինչ է պատասխանել—

Ինչով ուղեւ, Բօլի, ես երգում կուտեմ,

Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղլին,

Երկինք, գետինք, Ասուած վկայ կը կանչեմ,
Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղլին.

Հայ եմ, հայ, հարայ,

Հայ եմ, ուղիղ հայ:

Հայի ձեռին դու չես տեսնիլ սուր ու թուր,
Այդ բանն արգելել է մեր մեծն Այսմուուր,
Թէկուզ զլիսի թափես հազար թուր ու մուր,
Ես մի անբախտ հայ եմ և ոչ Քեօրօղլին.

Հայ եմ, հայ, հարայ,

Հայ եմ, ուղիղ հայ.

Եթէ թուրը ձեռին Քեօրօղլուն տեսնես,
Հաւատա ինձ, Բօլի, դու կը սարսափես,
Թէպէտ սազ էլ ունի, երգում է ինձ պէս,
Բայց ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղլին,

Հայ եմ, հայ, հարայ,

Հայ եմ, ուղիղ հայ:

—Սպասիր, աշըղ, ասում է Բօլին, այդ իմ հարցի պատասխանը
չէր: Ես իսկական Բօլի-բէգն եմ և ոչ Ալին կամ Վէլին, և հիմա ուղղակի
հարցնում եմ քեզ. ինչո՞վ ես ապացուցանում, որ դու Քեօրօղլին չես:

—Խան, ես այդպէս չը հասկացայ, պատասխանեց Քեօրօղլին,—
ես հէնց իմացայ, թէ դու Բօլի-բէգի հարցումը տըւիր, ես էլ
Քեօրօղլու պատասխանն ասեցի: Եթէ ինձ վրայ կասկած ունիս, որ
մտքովս անցնել չէր կարող, ուրեմն լսիր իմ պատասխանը:

Քեօրօղլին ուզում էր միայն զբաղեցնել Բօլի-բէգին, մինչև
կը հասնեն իր քաջերը, բայց և այնպէս, նա այլ ևս չի ուզում
իրան նւաստացնել և յայտնում է, թէ և մութ կերպով, որ ինքն է
Քեօրօղլին և ունի հայկական ծագումն:

Ես մի Զալալի եմ, անուշա է Ռուշան,

Հօրս անունն Խոռ. ¹⁾, մօրս Խորիշան.

¹⁾ Աւանդութիւն կայ, որ Ռուշանի հայրը քեօր չի եղել, որ
կը նշանակէ կոյր, այլ Խոր կամ Խոռ, որ մի հայ է եղել Խորխոռունեաց
ցեղից, բայց աւազակ դառնալով՝ խառնել է Զալալի ասուած քրդական
ցեղի հետ և համարել չուրդ կամ թուրքովն: Այդ ժամանակ ահա նրա
Խոռ անունը ազաւազելը դառել է քեօր և փոփոխ էլ կարծւել է, թէ նա
կոյր է եղել..

Արհեստով աշըղ եմ, ինչպէս տեսնում էք,
 Որ ես Քերօղլին չեմ, ահա ձեզ նշան:
 Կանչում եմ նշան նշան,
 Պատմում եմ նշան նշան,
 Մարդն ունի մարդու պատկեր,
 Շունն էլ ունի շան նշան:
 Եթէ իրաւ ես լինէի Քերօղլին,
 Իմըս լինէր նրա թուրը, նրա ձին,
 Այն ժամանակ կը տեսնէիր, Բօլի-բէզ,
 Որ Քերօղլուց պակաս քաջ չէ Խօրօղլին:
 Ձեմ թաքցընում, խոր եմ խոր,
 Իմ թշնամուն խորեմ խոր,
 Աղբիւրի պէս բարակ եմ,
 Ծովի նման խոր եմ, խոր:
 Քերօղլին է իմ սիրելին, իմ խանը,
 Ես նրա երգիչն եմ, նա իմ պաշտպանը,
 Նրա ահեղ ձայնը միայն լսելով՝
 Դողում, զարհուրում է ողջ Պարսկաստանը:
 Վախ չունիմ մահ ու ահից,
 Ազատ եմ մահու ահից,
 Մարդիկ մահով չեն մեռնում,
 Այլ միայն մահու ահից:
 Խօրօղլին եմ, ոչ մի բանից ահ չունիմ,
 Ինքս մեծ իշխան եմ, թէև գահ չունիմ,
 Թող ողջ լինի միայն իմ զօչ Քերօղլին,
 Սուլթան ու խաներից ոչ մի շահ չունիմ:
 Ձեմ սիրիլ խան ու սուլթան,
 Կատեմ իշխան ու սուլթան,
 Խան կայ մի խան չարժէ,
 Սուլթան կայ՝ անուս—ուլ—թան:

Այս երգից յետոյ Բօլի-բէզն ասում է.

—Աշըղ, իրաւ որ դու քուրդ ես ու քրդավարի էլ խաբում ես ինձ: Եթէ դու Քերօղլին չես, այլ Խօրօղլին, այդ ինձ համար միևնոյն է, երկուսդ էլ վտանգաւոր էք: Ես Խօրօղլուն կը բռնեմ, թող Քերօղլին զայ նրան ազատէ:

Այս ասելուց յետոյ՝ Քեօրօղլու ոտները կապել է տալիս, ուղում է կապել տալ և կռները, բայց Քեօրօղլին խնդրում է, որ կռներն աղաւ թողնեն ու սազը ձեռքիցը չառնեն, ասելով —

— Խան, այս շատ մեծ պատիւ է, որ ինձ տալիս էք, ասած է՝ «մէկ օրւայ խանութիւնն էլ է խանութիւն»։ Դուք մէկ օրով ինձ Քեօրօղլի էք շինում, թոյլ տւէք ուրեմն Քեօրօղլու խաղերիցն ասեմ ձեզ համար, մինչև կը լսնէք իսկական Քեօրօղլուն և խեղճ աշըղիս կաղատէք։

Եւ Քեօրօղլին սկսեց բուն Քեօրօղլու ահեղ ձայնով հետևեալ խաղը.

Բօլի, նամազդ արա, մեղքերդ քաւիր,
Հրէս որտեղ որ է՝ քաջերըս կը գան,
Դագաղըդ շինել տուր, պատանըդ կարիր,
Հրէս հոգիդ առնող դեւերըս կը գան.

Եկէք, քաջեր, եկէք,

Ել մի ուշանաք։

Մէկ կայ հազար արժէ, հազար կայ ոչ մին,
Ամբողջ բանակովդ չարժես իմ մէկին,
Գերանդիով, թոփուզներով ահագին,
Հրէս կացնով ջարդող դիժերըս կը գան.

Եկէք, քաջեր, եկէք,

Ել մի՛ ուշանաք։

Քեօրօղլուս աթուն է անառիկ Սասուն,
Հսկաներիս թիւն է մինչև քառասուն.
Լացէք գլուխներդ, ով դուք անասուն,
Հրէս ձեզ պատառող վագրերըս կը գան.

Եկէք, քաջեր, եկէք,

Ել մի ուշանաք։

Քեօրօղլու ահեղ ձայնից ոչ միայն մարդիկ սարսափեցին, այլ և բոլոր անասունները, որոնք կարծեցին թէ առիւծ է մոնչում։ Սասուի վախեցաւ և ինքը Բօլի-բէզը, բայց ինքն իրան անհոգ ձեւացրեց, չուզենալով հաւատալ, թէ նա ինքն է Քեօրօղլին։ Այս միջոցին Քեօրօղլու աչքը պատահմամբ ընկաւ դէպի վարագոյրը, (որի ետեւը ծածկւած էին Բօլի-բէզի կանաչքը և ծակուծուկերից

նայում էին Քերօղլուն ու հիանում) և մէկի սիրունիկ աչքերը տեսնելով, մոռացաւ իր քաջերին, և սկսեց իր երգը դէպի նոյն զեղեցկուհին դարձնել.

Ամպերում թաքնւած, իմ սիրուն արեւ,
Մէկ վայրում ես, մէկ էլ ծածկւում խաւարում.
Վանդակի մէջ դրած սոխակի նման,
Մէկ երգում ես, մէկ էլ լռում ու տխրում.

Ինչո՞ւ, հոգիս, ինչո՞ւ,
Ինչո՞ւ ես տխրում:

Արեւազուրկ ծաղիկ, անջուր, թալկահար,
Վարդ, դու կուգես քեզ մի բիւլբիւլ սիրահար.
Ազուաւ մարդըդ քեզ անում է կոցահար,
Գիտէ որ դու իրան սրտով չես սիրում:

Ինչո՞ւ, հոգիս, ինչո՞ւ,
Ինչո՞ւ չես սիրում:

Քերօղլուն պէս մի քաջի ես դու արժան,
Որ դրախտ դարձնեմ այդ կեանքըդ դաժան,
Դու կը լինիս իմ սիրունիս անբաժան,
Այժմէն իսկ իմ հոգին քեզ եմ նըւիրում,

Հաւատա ինձ, հոգիս
Քեզ եմ նըւիրում:

—Լռիր, յանդուգն, բղաւեց Բօլի-բէզը խանդոտութիւնից կատաղած և հրամայեց կապտոտիլ Քերօղլու կոները: Քերօղլին ոչ մի ընդդիմութիւն ցոյց չը տուաւ: Նա այդ բոլորը մի կատակ էր համարում, իսկ նրանց թոկերն իր համար մի սարդի ոստացն:

Քերօղլու ձեռք ու ոտը կապտեղուց յետոյ, մի թոկ էլ վզիցը կապեցին և Բօլի-բէզի հրամանով աարան Քօնա գետի սփը, որ նրան ընկղմեն գետի մէջ առանց խեղդելու, այլ այնքան ընկղմեն և հանեն, մինչև ուժից ընկնի իսպառ. և ուղիղը խոստովանի, եթէ ինքը ճշմարիտ Քերօղլին է:

Գետափին ձիաներ կային օրուդ տւած: Հէնց որ մօտեցաւ այդ ձիաներին, թոկերը կտրատեց, իր տանողներին քարերի պէս շարտեց գետի մէջ, իսկ ինքը մի ոստիւնով թռաւ մի լաւ ձիու վրայ և անթամբ ու անսանձ ձիու գլուխը երկու ձեռքով իր ուղած:

կողմն ուղղելով, զուրս պրծաւ բանակից: Այս անակնկալ դէպքի վրայ ամենքն էլ շփոթւեցին ու շշկւեցին, բայց մէկ էլ որ տեսան հեռւից մի թանձր փոշի բարձրացած վազում է դէպի իրանց այնպէս արագ, որ կարծես նրան մղում էր մի անհղ փոթորիկ, բոլորովին սարսափի մէջ ընկան:

Այդ թողն ու դումանը բարձրացրել էին Քեօրօղլու քաջերի ձիաները, որոնք զալիս էին սրարշաւ և նրանց տրոփիւնի ձայնը արդէն մինչև բանակն էր հասնում: Բօլի-բէզը, որ Քեօրօղլու կողմից յարձակւելու յոյս չունէր բոլորովին, և ով կը համարձակէր մի փոքրիկ խմբով ամբողջ բանակի վրայ յարձակւել, շուտով պատրաստուեց դիմադրելու: Բայց ինչ օգուտ: Եկողները հազարներից ընտրած մի մի դիւցազն էին, և իրանց քաջութեան համեմատ մի-մի սարսափելի մականուն ունէին շքանշանի աեղ ստացած, ինչպէս՝ վարազաթուր, գայլաբերան, փղակնճիթ, վադրաճանգ, աւիւծաթաթ, անասան, զարհուրելի, Ասլանբալա (առիւծի ձագ), Քեարքեադան (միեղջերու), Ազրայիլ (չար հրեշտակ), Ղրխազան կամ Ղրղղուան (քառասունին ջարդող): Քեօրօղլին չունէր ոչ մի մականուն, բայց երբեմն անւանւում էր հաստընչացք և անհղաձայն:

Քեօրօղլին արդէն նստել էր Ղուաթի վրայ և ձեռքն առել իր վահանն ու թուրը: Նա գալիս էր ամենի առջև: Բանակին մօտեցան թէ չէ՝ այնպէս յարձակւեցան, ինչպէս ժիր հնձողները հասած արտի վրայ և սկսեցին հնձել անխնայ: Զիաւորները հնձում էին, իսկ ձիաները ոտնատակ տալիս, կասում: Հնար չը կար դիմադրելու, զօրքը երեսը շրջեց և փախուստ տուաւ: Փախաւ և Բօլի բէզը, բայց նրան շրջապատեցին և կալանաւորեցին: Քեօրօղլին ազատեց նրան, միայն կանաչքն առաւ ձեռիցը և բաժանեց իր քաջերի մէջ վիճակով. ինքը չառաւ ոչ մէկին, որ իր Նիզարի սիրտը չը սպկսեցնէ: Բացի Նիզեարից, որին սիրում էր բոլոր սրտով, ուրիշ կին չունէր, թէպէտ կարծում էին, որ նա շատ կանաչք է պահում:

Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ երբ որ վերադարձաւ տուն, Քեօրօղլին մի փառաւոր խնջոյք տուաւ, երգերով պատմեց Նիզեարին բոլոր անցքը և անուն անուն գովեց իր քաջերին, մէկ մէկ թւելով ամեն մէկի արածը: Նիզեարն էլ ինչան շնորհակալու-

Թեան մի ահագին թաս լցնում էր զինով և իր ձեռքով տալիս ամեն մէկին: Գերի ընկած սիրուն տիկիներն էլ շատ ուրախ էին, որ գերւելով, ազատւել են իսկական պերուլթիւնից, և փոխանակ ամենքը միասին մի վատոյժ մարդ ունենալու, հիմա ամեն մէկը միայնակ կունենայ մի հերոս:

Մեր քաջերն իրանց խնջոյքը վերջացրին հետեւեալ պարզ երգով, որ երգեցին ամենքը միատեղ մի ուրախ եղանակով—

Հայրը պատերազմ գնաց,

Որդին ծածուկ հետեց,

Հօր գլխին սուր սլքսպըղաց,

Որդին նրան ազատեց:

Այ բախտ, դրախտ,

Դրա — րա — րա — րախտ:

Հայրը որդուն գիրկն առաւ,

Նրա ճակտից համբուրեց,

Որդին թուրը ձեռքն առաւ,

Հօր թշնամուն խորտակեց.

Այ բախտ, դրախտ,

Դրա — րա — րա — րախտ:

Մայրը շատ անգոստում էր,

(Որդին էր դեռ պատանեակ)

Նրա համար հիւսում էր

Թարմ ոտերից մի պտակ:

Այ բախտ, դրախտ,

Դրա — րա — րա — րախտ:

Որդին եկաւ յաղթական,

Հետն էլ բերաւ դեռահաս

(Իր մօր համար օգնական)

Մի գեղեցիկ նորահարս:

Այ բախտ, դրախտ,

Դրա — րա — րա — րախտ,

Մայրը եփեց ձրւածեղ,

Ուտեցրեց երկուսին,

Յետոյ շինեց փափուկ տեղ,

Պառկեցրեց միասին:

Այ բախտ, դրախտ,

Դրա—րա—րա—րախտ:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Աշըղները երբ որ պատմում են այս արկածը և վերջացնում,
սովորաբար մի խրատական կամ ծիծաղաշարժ խաղ էլ իրանցից
են ասում կամ նոյն իսկ ֆեթթողու ասածներից ուրիշ գէպքում:
Իբրև օրինակ բերենք հետևեալ խաղը:

Ով որ ձուկ բռնել չը գիտէ,

Կարթի պատին ի՞նչ կիմանայ,

Խըխունջներից գոհ եղողը

Թարթի պատին ի՞նչ կիմանայ.

Ով է տեսել փայտից մաշա,

Կամ բօշաչից դառած փաշա ¹⁾:

Ով սիրում է փթած հինը,

Զի հասկանալ նորի գինը,

Քուէքն ընկած թեթև կինը

Մարդի պատին ի՞նչ կիմանայ:

Քուրդը չի սովորիլ փեշակ,

Պղպեղը չի դառնալ մեխակ,

Ագռաւը որ դառնայ սոխակ,

Վարդի պատին ի՞նչ կիմանայ:

Սուտ չէ ֆեթթողու ասածը,

Նրա երգածն ու խօսածը,

Փալաններում մեծացածը

Զարդի պատին ինչ կիմանայ:

Աքաղաղը չէր հաւանում սոխակին

— Կուղնս, ասաց, հարցնենք աւանակին,

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեց սոխակը,

Ես աւելի զաբուլ եմ քո ճաշակին...

¹⁾ Ամեն տնավերջում, ըստ կամի, աւելացնում են այսպիսի ասածներ:

ՕՐՕՐՈՑԱԳՈՂ ¹⁾

(Ժողովրդական առասպել)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Կէս զիշերին մութ խորճիթում
Մայրը լսեց մի խորդին,
Եւ վեր թռաւ ահը սըրտում,
Նայեց քնած իւր որդուն:

Մի արարած սև ու խաւար
Նա նըկատեց սրտադող,
Եւ ճանաչեց սարսափահար
Օրորոցի մի չար գող:

Որ զաւակի բուզը բռնած
Խեղտում էր սև ճանկերում,
Եւ երեսան աչքերը բաց
Չարչարում էր ու հեռում:

Խելակորոյս խկոյն և եթ
Վրայ թռաւ կատաղի,

¹⁾ Հայոց գիւղերում ընդունւած է գոլութիւնը մի չար ոգու, որի պաշտօնն է—գիշերը, մեծերի քնած ժամանակ խեղդել տղալ երեխաներին օրորոցում կամ փոխել տեղը մի դև դնելով: Չանազան գաւառներում այլ և այլ անուններ ունի այս դեր: Լօւր կոչւում է օրորոցագող:

Եւ բռնեցան իրարու հետ
 Յորանի մօտ երեխի:

Կէս զիշերին մոլթ խրճիթում
 Կիսակենդան մանուկին
 Իրարից խլել են աշխատում
 Ծնող մայրն ու չար ոգին:

Կռիւ են տալիս. — նախատում են,
 Եւ կըծում են և թըքում,
 Իրար սեղմում և խեղդում են,
 Ճանկում, ծեծում, ապտակում:

Եւ մայրական անհուն սէրը
 Ոյժ էր տալիս գերբնական...
 Եւ ուժասպառ, յաղթւած չարը
 Թողեց օրրանը մանկան:

1893 թւ փետրարի 1.

ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն ¹)

8 ԳՐԱԴԱՐԱՆ.

Կոկետ կինը վաշխառու է. քիչ յոյս է տալիս, բայց ահագին շահ է պահանջում: Այսօր երբ ես մի քիչ աւելի հանգիստ եմ ու կարողանում եմ մի քիչ կարգին մտածել, պէտք է խոստովանեմ, որ դոնէ այդ կողմից Անեկային ոչ մի յանդիմանութիւն անելու իրաւունք չունեմ: Նա ինձ ոչ մի յոյս չէր տալիս և ոչինչ չէր պահանջում: Այն, ինչ որ ես Վարչաւայում նրա կողմից կօկետութեան նշոյլ էի համարում, միմիայն բողոքական ուրախ ու զւարթ տրամադրութեան արտայայտութիւն է եղել: Ինչ որ կատարել է, բոլորի պատճառը ես եմ եղել, ես եմ մի շարք սխալներ արել և ամեն բանում մեղաւորը ես եմ:

Մի բան տեսնել և ինկատի առնել—երկու իրարից տարբեր բաներ են: Մենք կարող ենք շատ լաւ հասկանալ այս կամ այն մարդու հոգու վրայ ներգործող այնպիսի զործօններ, որոնց մենք ինքներս չենք ենթարկուում, սակայն վարւելիս առհասարակ մենք

¹) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1—12, 1893 թ. № 1:

մեզ ենք ընդունում իբրև սկզբնակետ: Նոյնն եմ արել և ես: Ես տեսնում էի կամ զոնէ զգում էի, որ ես ու Անելկան երկու այնպէս իրար հակառակ էակներ ենք, որպէս եթէ երկու տարբեր մոլորակների բնակիչներ լինէինք, բայց չէի կարողանում միշտ այդ միտքս պահել. ես առհասարակ ակամայից ենթադրում էի, թէ նա այս կամ այն դէպքում այնպէս կը վարւի, ինչպէս ես ինքս կը վարւէի:

Ասենք այժմ էլ, թէ և զգում եմ, որ մենք իրարից չափից վեր տարբեր մարդիկ ենք, միմեանց վերաբերմամբ երկու բևեռ ենք, այնու ամենայնիւ այդ զգացածս զրի եմ անցնում մի տեսակ զարմացմամբ. դեռ չեմ կարողանում հաշուել այդ մտքի հետ: Եւ սակայն այդ ճիշտ է: Ես հազարապատիկ աւելի նման եմ Լաուրա Դևիսին քան Անելկային:

Այժմ հասկանում եմ թէ ինչը ինձ խորտակեց:

Այն բանը, որի ոչնչացումը ես վաղուց զգում եմ իմ մէջ, այն, որի բացակայութիւնը մի կողմից արդարեւ կապանքներից արձակեց ու ազատեց իմ մտքերը, բայց միւս կողմից իմ մէջ մահացու հիւանդութեան սաղմ ներմուծեց և զարձաւ իմ տրագեդիան:

Նրա հոգու քրիստոնէական պարզութիւնը:

Այժմ այդ հասկանում եմ բացայայտ, թէ և ոչ բաւականաչափ լայն կերպով, որովհետեւ այնքան խրթին մարդ եմ, որ պարզութիւնը հասկանալու ընդունակութիւնը կորցրել եմ... «Ձայնդ լսում եմ, բայց քեզ չեմ տեսնում»... Իմ հոգեկան տեսողութիւնը ենթարկւած է մի տեսակ դալտոնականութեան ¹⁾ և յայտնի գոյներ չի կարողանում որոշել:

Իմ գլուխս ամենեւին չի մտնում, թէ ինչպէս կարելի է ամեն մի, թէկուզ չեմ իմանում ինչ դարերից նւիրագործւած, սկզբունքի վրայ չ'նայել նրա երկու կողմերից, չը վերլուծել նրան զանազան

¹⁾ Դալտոնականութիւն կը նշանակի որոշեալ գոյներ ջոկելու անընդունակութիւն: Վերցրած է անգլիացի Դալտոն ֆիզիկոսի անունից, որ միայն երեք գոյն էր կարողանում որոշել:

մասերի, հիւլէների, մի խօսքով այնքան մաս-մաս անել, մինչև որ փոշի դառնայ ու այլ ևս անհնար լինի նորից ամբողջութեան վերածել:

Անեկալի գլուխը չի մտնում, թէ ինչպէս կարելի է այն սկզբունքը, որ լաւ են համարում ու նւիրագործել են թէ կրօնը և թէ ամբողջ հասարակութիւնը, չը համարել պարտադիր օրէնք:

Ինձ համար միևնոյնն է, թէ արդեօք գիտակցական բան է այդ նրանում, թէ բնազդական, ինքն է իւր խելքով դրան հասել, թէ ժառանգել է կամ փոխ առել, բաւական է որ այդ այժմ նրա մարմին ու արիւնն է կազմում:

Ինձ նախագգուշացնելու նման մի բան էր նրա կողմից այն, որ առանց պանի Կրօնիցիայի աւթիւ, — «Ամեն բան կարելի է ապացուցանել, բայց երբ մարդ վատ բան է անում, խղճմանքը միշտ ասում է, — վատ բան է, վատ բան է, ու անհնարին է լինում համոզել, որ լաւ բան է»:

Այն ժամանակ ես այդ խօսքերին այնքան նշանակութիւն չը տւեցի որքան պէտք էր: Անեկան չը գիտի ինչ բան է վարանմունքը, կասկածը: Նրա հոգին որոմը սերմից այնքան լաւ է որոշում, որ իրար հետ խառնել երբէք չի կարող: Նա չի աշխատում գտնել իւր համար սեփական կանոններ, այլ պատրաստի փոխ է առնում կրօնից ու ընդհանուր բարոյական գաղափարներից, բայց այնպէս սաստիկ է տոգորւում նրանցով, որ նրանք նրա սեփական կանոններն են դառնում, որովհետև մոտում են նրա արիւնի մէջ:

Որքան աւելի պարզ է չարի ու բարու այդ որոշումը, այնքան աւելի հաւատով է ու անողոր: Այդ բարոյական կողեքսում մեղմացնող հանգամանքներ չկան: Այդ կողեքսի համաձայն պսակւած կին իւր մարդուն պէտք է պատկանի, կը նշանակի այն կինը, որ տրւում է ուրիշին, վատ բան է անում: Այդ կողեքսը չի ընդունում ոչ բացառութիւններ, ոչ յարգելի պատճառներ, այլ միմիայն աջակողմ՝ արդարների համար, ձախ — մեղաւորների համար, նրանց, վրայ՝ Աստուծո ղորմաճութիւնը, իսկ նրանց մէջ — ոչինչ, ոչ մի միջին աստիճան:

Այդ ազնւամիտ Բարդողիմիոսի ու բարբաբոյ Մագդալի կողեքսն է, և այնքան պարզ, որ ինձ նման մարդիկ

անընդունակ ենք այդ կողեքսը հասկանալ: Մեզ թւում է թէ կեանքն ու մարդկանց հոգիները այնքան բարդ են, որ դժւար թէ կարողանան այդ օրէնսդրութեան մէջ զետեղել: Եւ իրաւ, զուցէ մեզ անհնար է զետեղել նրանում: Դժբախտաբար մենք ոչ մի ուրիշ բան չենք գտել մեզ համար և այդ պատճառով մոլորւած թռչունների նման ճախրում ենք դառարկութեան և ահ ու դողի մէջ:

Բայց կանանց, մանաւանդ մեր կանանց մեծ մասը ընդունում է այդ կողեքսը: Մինչև անգամ նրանք, որոնք կեանքում շեղւում են այդ կողեքսի պատւիրաններից, իրանց թոյլ չեն տալիս մի րոպէ անգամ կասկածով վերաբերել նրա արդար ու սուրբ լինելուն: Ուր որ սկսւում է նա, այնտեղ վերջանում են դատողութիւնները:

Բանաստեղծները սխալ են կարծում, թէ կանայք հանելուկ են, կենդանի ափինքս են: Տղամարդը հազարապատիկ աւելի հանելուկ է, հազարապատիկ աւելի ափինքս է: Առողջ, հիստերիկա չունեցող կինը կարող է բարի լինել կամ չար, զօրեղ կամ թոյլ, բայց հոգեպէս անշուշտ աւելի պարզ է քան տղամարդը: Նրան բոլոր դարերում ու ամեն ժամանակ բաւարարութիւն են տալիս այս կամ այն տախտակների վրայ դրոշմած պատւիրանները, անկախ այն բանից, թէ մարդկային թուլութեան պատճառով մեղանշում է նրանց դէմ:

Կանացի հոգին այն աստիճան զօգմատիկական է, որ շատ կանանց մէջ, նոյն իսկ իմ ծանօթ կանանցից ոմանց մէջ անասունածութիւնն անգամ ընդունում է կրօնի բոլոր յատկութիւնները:

Եւ որ զարմանալին է, այդ «բարեբարոյ Մագդալի կողեքսը» չի զրկում կանանց ոչ սուր խելքից, ոչ մտքերի նրբութիւնից և ոչ մտաւոր բարձր թռիչքներ անելու ընդունակութիւնից:

Կանացի հոգին մի քիչ նման է կոլիբրի թռչունին, որ կարողանում է ազատ ճախրել խիտ թփերի մէջ և չը դիպչել ոչ մի ճիւղքի, չը քսւել ոչ մի տերևի:

Բոլոր ասածս ամենամեծ չափով նկատւում է Անելիայի մէջ: Զգացմունքների ու մտքերի վերին աստիճանի նրբութիւնը միանում է նրանում բարոյական գաղափարների վերին աստիճանի պարզութեան հետ: Նրա «պատւիրանները» նոյնն են, ինչ որ Մագդա-

չինը, այն տարբերութեամբ միայն, որ Մազդայի պատւիրանները կարւած են կոպիտ քաթանի վրայ, իսկ Անեկլայինը — շղարշի պէս նուրբ գործւածքի վրայ:

Բայց ինչու եմ դրա մասին երկար ու բարակ դատողութիւններ տալիս: Այն պատճառով, որ այդ ինձ համար մի վերացական հարց չէ, այլ գրեթէ կեանքի ու մահւան խնդիր. խօսում եմ դրա մասին որովհետեւ այդ իմ ցաւս է ու անբախտութիւնս է, որովհետեւ զգում եմ, որ ես այդ պարզ «տասը պատւիրաններին» յաղթել չեմ կարող սիրոյ խրթին ու բարդ փիլիսոփայութեամբ»: Եւ ինչպէս պէտք է կարողանայի յաղթել, քանի որ հէնց առաջինը ես ինքս անպայման չեմ հաւատում այդ փիլիսոփայութեանը, իսկ յաճախ մինչեւ անգամ կասկածով եմ վերաբերւում նրան, մինչդեռ Անեկլան հանգիստ ու անվրդով հաւատում է իւր պատւիրաններին:

Միայն այն շրթունքները կարելի է համոզել, թէ արգելւած համբոյրը մեղք չէ, որոնք արդէն ճաշակել են կասկածների աղբիւրից: Կրօնապաշտ կիներ կարող է ընկճել սիրոյ ոյժից, այնպէս ինչպէս ծառը տապալւում է փոթորկից, բայց երբեք չի հպատակւիլ նրան յօժարակամ:

Արդեօք կը կարողանամ ես երբ և իցէ ընկճել Անեկլային: Գուցէ այս խորին, յուսահատ անզգայութիւնը, որ այժմ տիրում է սրտիս, բուրբական է: Գուցէ վաղը աւելի յուսալից սրտով սկսեմ նայել ապագային, սակայն այսօր այդ ինձ գրեթէ անհնար է թւում:

Ես ինքս իմ ձեռքով մի ժամանակ այս չիշատակարանում գրել եմ, թէ մեզնում մի քանի ընտանիքներում դատաւարակութիւնը՝ համեստութիւնը ծաղկի պէս պատւաստւում է կանանց: Ուրեմն ես պէտք է ինկատի առնեմ և այն հանգամանքը, որ այն կանոնը, թէ «կիներ պէտք է մարդուն պատկանի», խստիւ պահպանւում է ոչ միայն այն պատճառով, որ Անեկլան սրբութեամբ հաւատում է նրան, այլ և շնորհիւ նրա ամօթխածութեան, որ այն աստիճան զօրեղ է նրանում, այնքան խոր է արմատացել նրա մէջ, այն աստիճան մարմին ու արիւն դարձել, որ բառի բուն նշանակութեամբ կը մեռնի ու կուրծքը իմ առաջ բաց չի անիլ:

Եւ ես դեռ ևս կարողանում եմ սնոտի յոյսեր տածել, այդ

տեսակ կնոջից որ և է բան սպասել: Այդ կատարեալ անմոռութիւն է իմ կողմից:

Հասկա ի՞նչ անեմ: Թողնեմ գնամ:

Չէ, չեմ գնալ,— չեմ ուզում և չեմ կարող:

Կը մնամ և քանի որ սէրս զժի սէր է, վարմունքս էլ թող այսուհետև անմիտ վարժունք լինի: Բաւական էր որքան սխտեմաբար, ամեն բան հաշուելով, ամեն բան նախադասելով վարեցի: Թող ինչ ուզում է և ինչպէս ուզում է լինի: Առաջւան բռնած ճանապարհս ոչ մի նպատակի չէր կարող հասցնել:

9 չունիսի.

Անեկան ինձնից բախտաւոր չէ: Այսօրւան տեսածս համոզեց ինձ, որ նրա մէջ էլ սաստիկ կռիւ է կատարւում, և որ նա այդ կռուում պէտք միայն իւր ոյժերի վրայ դնի յոյսը: Մտքերս այնպէս իրար են խառնւել, որ չեմ կարողանում հանգստանալ:

Երբ պան Զաւիլովսկու գնալուց յետոյ (նա այսօր աղջկայ հետ Պոշով էր եկել), հօրաքոյրս սկսեց անյայտնի դիտաւորութեամբ դովաբանել պաննա Հելենայի արժանաւորութիւնները, բարկութիւնս եկաւ. սաստիկ ջարդւած էի, գիշերը անքուն էի մնացել, ջղերս քայքայւած էին և ես սասացի.

— Շատ լաւ: Եթէ ձեզ համար իմ պսակւելը աւելի նշանակութիւն ունի քան բախտաւոր լինել, հէնց վաղը առաւօտ կերթամ օրիորդ Զաւիլովսկայի ձեռքը կը խնդրեմ,— ինձ համար էլ միւսնոյնն է:

Պարզ էր ի հարկէ, որ բարկութիւնիցս էի այդպէս խօսում և երբեք ասածս չէի կատարիլ, բայց Անեկան յանկարծ պատի պէս սպրտնեց և յետոյ յանկարծակի առանց մի հիմնաւոր պատճառի տեղիցը վեր կենալով սկսեց կոճի թելերն արձակել: Արձակելիս էլ ձեռները այնպէս զողոզողում էին, կարծես տենդի մէջ լինէր: Բարեբախտաբար հօրաքոյրս էլ երևի կեանքում երբեք այնքան շփոթւած չէր եղել, ինչպէս այդ րոպէին, այնպէս որ ոչինչ չը նկատեց: Նա ինչ որ պատասխանեց ինձ, բայց չեմ յիշում թէ ինչ, որովհետև այդ րոպէին ինձ համար Անեկայից դուրս ոչինչ գոյութիւն չունէր: Ճիշտ է, առաջ դատողութիւններ տալով ես գալիս էի այն

եզրակացութեանը թէ նրա սրտումը մի տեղ բռնում եմ, բայց այլ բան է դատողութիւն տալ, այլ բան — տեսնել: Մինչև կեանքիս վերջը չեմ մոռանալ Անեկայի գունաթափութիւնն ու ձեռների զոզոզալը: Այժմ անհերքելի ապացոյց ունէի, որովհետև եթէ տպաւորութեան սաստկութեան մի մասը նոյն իսկ պատասխանիս անակնկալութեանը վերադրելու լինեմ, այնուամենայնիւ դեռ բաւական բան կը մնայ: Զը սիրած մարդու՝ ինչ թէ պսակելու, այլ և մահւան յեղակարծ լուրը գունաթափութեամբ չի ընդունուում:

Մէկ-երկու օր առաջ մտածում էի, — ինձ ինչ թէ նա ինձ սիրում է, քանի որ այդ զգացմունքը նրա մէջ ծածուկ է մնալու, և սակայն այժմ, երբ աչքովս տեսայ ու համոզեցի, որ նա ինձ սիրում է, բոլոր յոյսերս միանգամից յարութիւն առան սրտումս, բոլոր կասկածներս փարատեցին... Նորից առաջիս պատկերացաւ ապագայ յաղթութիւնս, նորից սկսեցի հաւատալ, թէ անպատճառ կը դայ մի ժամանակ, երբ նրա զգացած սէրը նրանից զօրեղ կը հանդիսանայ, երբ ես կընկճեմ ու կը տիրանամ նրան:

Աւանդ, գրեթէ նոյն բոլեքին համոզեցի, որ այդ պատրանք է: Հօրաքոյրս մի ինչ որ բան էլ ասաց ու դուրս եկաւ սենեակից, թերևս մի որ և է անկիւնում սրբելու համար ինձ վրայ խղճալուց թափուղ արտասուքը, իսկ ես շտապով մօտեցայ Անեկային ու ասացի:

— Անեկա, ամբողջ աշխարհքն էլ որ տան ինձ, օրիորդ Զաւիլովսկայի վրայ չեմ պսակւիլ, բայց հասկացիր իմ դրութիւնը: Բաւական չեմ ուրիշ վշտերս, այդ կողմից էլ հանգիստ չունեմ: Սակայն անշուշտ դու ինքդ շատ լաւ գիտես, որ այդ լինելու բան չէ:

— Ընդհակառակը... Ես ուրախ կը լինէի, որ այդ գլուխ գար, — պատասխանեց նա ճիգ գործ դնելով:

— Սուտ է, ես տեսայ, որ գունաթափեցիր, — տեսայ:

— Թող գնամ...

— Անեկա ջան, դու սիրում ես ինձ: Զուր մի՛ խաբիլ ոչ քեզ, ոչ ինձ, — սիրում ես ինձ:

Նրա շրթունքները նորից սպրտնեցին:

— Զէ, պատասխանեց նա արագութեամբ, — բայց վախենում եմ սկսեմ ատել քեզ:

Ու հեռացաւ զնաց մօր մօտ: Ես գիտեմ, որ ինքն իրան հետ կուող կնոջը յաճախ պէտք է թւայ, թէ սկսելու է ատել սիրած մարդին. գիտեմ, որ դառն ու արգելաւծ սէրը անշուշտ այդպիսի գոցն կը ստանայ, այնուամենայնիւ Անելկայի խօսքերը որ լսեցի, ուրախութիւնս անցաւ, ինչպէս թէ մէկը փէր ու հանգցնէր մի վառուղ ճրագ: Ահանքում շատ այնպիսի բոլորովին բնական բաներ կան, որ ոչ մարդուս ջղերն են կարողանում տանել, ոչ ոյժերը: Այժմ եմ, ինչպէս հարկն է, հասկանում այն ճշմարտութիւնը, որ մինչև այժմ էլ յայտնի էր ինձ և ամբողջ աշխարհքին, թէ ուրիշի կնոջ սիրելը սաստիկ լրբութիւն է, եթէ կեղծ է, և սաստիկ թըշառութիւն, եթէ անկեղծ է, ու այնքան սաստիկ, որքան լաւ կին է սիրած կինը: Տանջւում եմ դառն հետաքրքրութիւնից, թէ արդեօք ինչ կը լինէր, եթէ Անելկային ասէի, — «կամ վզովս ընկիր ու խոստովանւիր, որ սիրում ես ինձ, կամ թէ չէ քո առջև զնտախորով կանեմ ինքս ինձ»: Գիտեմ որ այդ ստոր վարմունք կը լինէր և ես երբէք չեմ կարողանալ ստիպել ինձ այդպիսի բռնութեան ու շանտաժի դիմել, ոչ, չեմ կարողանալ... Ինչ էլ լինի, ես այնքան կարգին մարդ եմ, որ այդ չեմ անիլ... Բայց էլի չեմ կարողանում ինքս ինձ զսպել ու չը հարցնել, թէ արդեօք ինչ կը լինէր այդ դէպքում: Ես գրելիք հաւատացած եմ, որ Անելկան զուցէ վշտին և միւսնոցն ժամանակ արհամարհանքին չը դիմանար ու մեռնէր, բայց չէր ընկճւիլ: Այդ որ մտածում եմ, միաժամանակ անիծում եմ նրան և աւելի ևս յարգում, ատում եմ նրան և միւսնոցն ժամանակ աւելի ևս սիրում: Պէտք է պարզ ասեմ ինքս ինձ, — մեծ անբախտութիւն է պատահել ինձ: Եւ որ աւելի վատն է, ոչ մի ճար չեմ գտնում զրա դէմ, որովհետև մէջս բաւականաչափ ոյժ չեմ զգում այդ ցանցից դուրս պրծնելու համար: Բուռն կրքիս, որ միշտ և ամենայն սաստիկութեամբ զարթեցնում էր իմ մէջ այդ կինը, այժմ աւելացել է և մի տեսակ հաւատարիմ շան սէր: Մտքով ու հայեացքով զրկում եմ նրան, նայում եմ ու չեմ կարողանում կշտանալ նրա աչքերից, մազերից, շրթունքներից, կռներից, սակայն միւսնոցն ժամանակը զգում եմ, որ նա ոչ միայն ամենատենչալի կինն է ինձ համար, այլ և ամենաազիզ էակը: Ոչ մի կին ինձ չի ազդել ոչ այդպէս կրկնակի,

ոչ այդպէս բացարձակ սէր: Երբեմն նրա ազդեցութիւնը ինձ միանգամայն անհասկանալի է թւում, երբեմն էլ մի կերպ բացատրում եմ ինձ ու ինձ և ըստ սովորականին բացատրում եմ ինձ համար ամենավատ մաքով:

Ահա ինչպէս: Իմ կեանքը արագ է անցկացել և ես արդէն զաղաթնակէտիս հասել ու անցել եմ: Այժմ դիմում եմ դէպի այն վիճը, որտեղից ցուրտ է փչում և խաւար է սփռւում: Չգուժ եմ սակայն, որ այդ կնոջ և միմիայն այդ կնոջ շնորհիւ ես կարող էի նորից ձեռք բերել և՛ երիտասարդութիւնս, և՛ խանութս, և՛ ապրելու փափագ: Երբոր նա ինձ համար չքանայ, կը չքանայ և կեանքս ու կը մնայ միմիայն բուսական զոյուլթիւն, վերին աստիճանի մռայլ՝ որպէս նախաճաշակումս մահւան: Այդ է պատճառը, որ ես Անեկային սիրում եմ նոյնպէս և ինքնապահպանութեան բնազդման շնորհիւ և այն սաստկութեամբ, որ ընդունակ է յառաջ բերել մարդու բնազդումը: Ես Անեկային սիրում եմ ոչ միայն նրա համար, որ նա զգայական տենչանք է զարթեցնում մէջս, ոչ էլ միայն նրա համար, որ հոգիս զբաււում է նրանով, այլ և չքանալու ահիցս:

Անեկան այդ չը գիտէ, բայց կարծում եմ, որ նա սաստիկ խղճում է ինձ: Այդ ես եզրակացնում եմ նրանից, որ ես, որ անգթաբար եմ վարւում նրա հետ, հոգիս կը ծախէի նրան սփոփելու համար: Եւ ինչպէս չասեմ, թէ ուրիշի կնոջը սիրելը անբախտութիւն է, երբ որ այդ սէրը մարդուս այնտեղ է հասցնում օրինակ, որ նա պէտք է տանջի այն էակին, որի անդորրութեան համար պատրաստ է կեանքը զոհել: Եւ ամեն քայլում հազար ու մի այդպիսի կախարդւած շրջաններ: Այո, երկուսս էլ անչափ դժբախտ ենք: Բայց դու, Անեկա, գոնէ մի նեցուկ ունես կեանքումդ, դաւանանք ունես, իսկ ես նման եմ անդեկ ու անթի նաւակի:

Մի քիչ տկար եմ: Շատ վատ եմ քնում, կամ աւելի ճիշդ ասած ամենեւին չեմ քնում, և այլապէս չէր էլ կարող լինել: Խնայ, կուզէի հիւանդանալ, բայց կարգին հիւանդանալ. այնպէս որ մի քանի շաբաթ պառկէի, ոչինչ չը զիտակցէի, ոչինչ չը յիշէի, ու հանդստանալի վերջին ժամանակը քաշած տանջանքներիցս: Այդ իմ արձակուրդը կը լինէր: Խաւարովսին երէկ զննեց ինձ. փիլի-

սովաշութիւն էր անում իմ ղլխին. ասում էր, որ իմ ջղերը անհետացած ցեղի (ջինս) ջղեր են, բայց մկանային ոյժերի շատ մեծ պաշար ունեւմ ժառանգած: Կարծում եմ, որ նրա ասածը իրաւացի է. եթէ այդպէս չը լինէր, գլխար թէ կարողանայի ղիմանալ իմ ջղերին: Ով ղիտէ, արդեօք չը պէտք է այդ հանգամանքին վերագրել իմ այժմեան բացառիկ ղրութիւնը,—չէ որ այդ ոյժերը պէտք է մի եւք գտնէին, և քանի որ եւք չեն գտել ոչ ղիտութեան մէջ, ոչ ղործունէութեան, սկսել են հեղեղաաի նման հոսել մի ղետատաշաով,—կնոջ սիրոյ ղետատաշաով:

Բայց ջղերիս շնորհիւ՝ պղաոր, յորձանուտ ու ծուռ հոսանք են ստացել. այժ, նախ և ուաջ ծուռ:

Որքան տպաւորութիւն եմ կրում ամեն օր: Նրեկոյեան ղէմ եկաւ ինձ մօտ սիրելի հօրաքոյրս ու սկսեց ներողութիւն խնդրել օրիորդ Զաւեյովսկային ղովելու համար: Ես համբուրեցի ձեռներն ու փոխադարձաբար ներողութիւն խնդրեցի բարկութեանս համար:

—Խոստանում եմ քեզ, ասաց նա, որ էլ նրա անունը չեմ տալ: Ինչ թաղցնեմ քեզնից, Լէօն ջան, հոգով-սրտով կուղէի, որ ղու պսակէիր, որովհետեւ մեր տոհմի վերջին շառաւիղն ես, բայց Աստծուն է յայտնի, որ ինձ համար քո բախտաւորութիւնը ամեն բանից վեր է, աղիղ ղաւակս:

Ես որքան կարող էի հանգստացրեցի նրան ու ի վերջոյ ասացի.

—Հօրաքոյր, իմացիր, որ ես մի քիչ կինարմատ եմ, ջղային կինարմատ:

Բայց հօրաքոյրս իսկոյն ղայրացաւ վրաս:

—Դձւ ես կինարմատ: Ամեն մարդ կարող է սխալել, բայց եթէ ամենքը քո խելքի ու կամքի տէրը լինէին, աշխարհքը բոլորովին կը փոխէր:

Դէ արի ու հասկացրու որ սխալում է Նրբեմն յուսահատութիւն է գալիս վրաս ու ես ինքս ինձ ասում եմ,—ինչ բան ունեւմ ես այս տանն ու այս կանանց մէջ, որոնք կարծես հրեշտակութիւնը կապալով են վերցրել: Ինձ համար արդէն շատ ուշ է նրանց հաւատը ընդունել, իսկ որքան վիշտ, հիասթափութիւն ու ղժբախտութիւն կարող եմ պատճառել ես նրանց:

10 լուսիսի.

Այսօր երկու նամակ ստացայ, մէկը Հռոմից՝ Նոտարիցս, միւսը՝ Մնեատինսկուց։ Նոտարս գրում է, թէ այն խոչնդոտները, որ սովորաբար դնում է խոնարհական կառավարութիւնը Խոալիայից հինաւուրց բեկորներ ու թանկագին գեղարւեստական իրեր արտահանելու դէմ, կարելի է հեռացնել կամ գոնէ նրանցից խոյս տալ։ Հօրս հաւաքածոները միանգամայն մասնաւոր բնաւորութիւն են ունեցել և ոչ մի ժամանակ չեն ենթարկել վարչական որ և է հսկողութեան, ուստի կուղարկեն ինձ իբրեւ հասարակ կարասիք։

Այժմ պէտք է զբաղւեմ տունս դրա համար սարքի բերելով, որ դժկամակութեամբ կանեմ, որովհետեւ այդ հաւաքածոները հայրենիք փոխադրելս արդէն կորցրել է իմ աչքում իւր հրապոյրը։ Ինչ փոյթս է այդ և ինչիս է պէտք զալու։ Եթէ մտադրութիւնս չեմ փոխում, այդ միայն այն պատճառով, որ այնչափ խօսալուցս ու լրագիրներում այնքան գրելուց յետոյ, այդ շատ անշարմար է։

Դարձեալ հոգեկան այդ դրութեան մէջ եմ ընկել, որ ինձ այնչափ տանջում էր Անեկիայի պսակւելուց յետոյ ձեռնարկած ճանապարհորդութեանս ժամանակ։ Այժմ դարձեալ այլապէս չեմ կարողանում մի բան անել, մի բանի հայել կամ մի որ և է բան հասկանալ քան եթէ մտքումս կապելով այդ բոլորը Անեկիայի հետ, — դարձեալ ոչ մի անմիջական տպաւորութիւն չեմ ստանում։ Այն մտածմունքներս, որոնց խորքում վերջ ի վերջոյ Անեկիային չեմ տեսնում, ինձ միանգամայն դաւորակ ու աննշան բան են երևում։ Այդ վերին աստիճանի զարմանալի է իբրեւ ապացոյց, թէ որքան խորը կարող է մարդ անդնդակորոյս լինել։ Այսօր առաւօտեան կարդում էի Բուենգէի դասախօսութիւնը «Վիտայիզմ և մեխանիզմ» վերնագրով ու կարդում էի վերին աստիճանի հետաքրքրութեամբ։ Նա գիտնականօրէն ապացուցանում է այն, որ վաղուց կար իմ գլխումս, բաց աւելի անորոշ զգացմունքների, քան որոշեալ համոզմունքների ձևով։ Այդտեղ գիտութիւնը խոստովանում է, որ ինքն իրան սկեսարիկաբար է վերաբերում, և բացի այդ հաստատում է ոչ միայն իւր անգօրութիւնը, այլ և այնպիսի մի աշխարհի դրական գոյութեան, որ աւելի է քան նիւթն ու շարժումը և որ չի բացատրւում ոչ ֆիզիկապէս,

ոչ քիմիապէս: Ինձ համար բոլորովին նոյնն է, թէ արդեօք-
այդ աշխարհը նիւթի վերաբերմամբ գերակայ բան է թէ ստորա-
դրուող: Այդ կատարեալ բառախաղ է: Նս գիտնական չեմ, ես պար-
տաւոր չեմ տաս անգամ չափել-ձեւել ու յետոյ մի եզրակացութիւն
անել, ուստի գլխապատառ ներս եմ վազում այդ բաց դռնով և
թող գիտութիւնը ինչքան ուզում է ասի, թէ այնտեղ մոլթն է,
ես զգում եմ, որ ինձ համար այնտեղ աւելի լոյս կը լինի քան այս
կողմում: Նս կարգում էի գրեթէ տենդային ազահութեամբ և մեծ
սփոփանք էի զգում: Միայն յետամնաց յիմարներն են, որ չեն հաս-
կանում, թէ որքան ճնշում է մեզ ու ուժասպառ անում մատե-
րիալիզմը, ինչպիսի թագուցեալ ահ է տիրում մարդկանց մտքե-
րին, թէ յանկարծ ճիշտ դուրս կը գայ մատերիալիստական գիտու-
թիւնը, ինչպէս սպասում են մարդիկ նոր էւոլիւցիայի գիտու-
թեան մէջ և որքան ուրախանում են բանտարկեալները, երբ որ
բացւում է մի որ և է դռնակ, որով կարելի է լինում դուրս
պրծնել ու ազատ օդ ծծել: Բանը նրանումն է որ մարդկային ոգին
այնքան ճնշւած է, որ չի համարձակւում ոչ ազատ շունչ քաշել,
ոչ էլ հաւատալ իւր երջանկութեանը: Բայց ես համարձակեցի և
այդպէս էի զգում ինձ, կարծես խեղճուկ նկուղից դուրս պրծած
լինէի: Գուցէ այդ էլ րոպէական զգացմունք էր. — ես շատ լա-
հասկանում եմ, որ Նէօ-վիտալիզմը գիտութեան մէջ դարագլուխ
չի կազմելու. շատ կարելի է վաղը յօժարակամ վերադառնամ
բանոս... Զը գիտեմ: Առժամանակ որ՝ ինձ լաւ էի զգում: Անդա-
դար ասում էի ինքս ինձ, — եթէ այդպէս է, եթէ մինչև անգամ
սկեպտիկականութեան միջոցով մարդս հասնում է աներկբայ հա-
ւաստիութեան, թէ կայ գերջգայական (сверхъестественный) աշխարհ,
որի վերաբերմամբ ծիծաղելի են բոլոր «մեքենայական մեկնութիւն-
ները», որ բացարձակապէս գտնւում է արտաքոյ «Ֆիզիկական-քի-
միական բացատրութիւնների», այն ժամանակ հնարաւոր է ամեն
բան, — ամեն տեսակ հաւատ, ամեն տեսակ դաւանանք, ամեն տե-
սակ միատիկականութիւն: Կը նշանակի իրաւունք ունենք կարծելու,
որ ինչպէս կայ անվախճան տարածութիւն, այնպէս էլ կայ ան-
վախճան բանականութիւն, անվախճան բարութիւն: Իրաւունք
ունենք յուսալ, որ կայ մի մեծ պարեգոտ, որ պատում է ամբողջ

տիեզերքը և որին կարելի է ապրելնել, և մի խնամակալութիւն, որի ներքոյ վերջանում են մարդու բոլոր տանջանքները: Իսկ եթէ այդպէս է, շատ լաւ է,—այն ժամանակ գիտեմ գոնէ թէ ինչու եմ ապրում և ինչու եմ տանջւում: Ի՞նչ ահագին մխիթարութիւն է այդ:

Մէկ էլ եմ կրկնում,—ես պարտաւոր չեմ եզրակացութիւնները զգուշութեամբ ու անհամարձակ անել, իսկ առաջ էլ արդէն գրել եմ, որ ոչ ոք այնքան լծու միստիկականութեան, որքան սկեպտիկը: Այդ այժմ ինձ վրայ ստուգեցի, որովհետեւ սկսեցի հոգով սաւառնել այնպէս, ինչպէս երկար ժամանակ վանդակում փակւած թռչունը ազատութիւն ստանալով ճախրում է, հրճւում է ազատ տարածութեան մէջ ու մարմինը հովին է տալիս: Տեսնում էի նոր դաշտեր ծածկւած նոր կեանքով: Ձը գիտեմ արդեօք մի որ և է ուրիշ մոլորակի վրայ էր այդ, թէ հեռու-հեռու միջամոլորակային տարածութեան մէջ. այնքանը գիտեմ, որ թէ այդ կեանքը և թէ այդ դաշտերը մերոնցից տարբեր էին. այնտեղի լոյսը պայծառ էր ու մեղմ, օդում զգացւում էր քաղցր զովութիւն, իսկ գլխաւոր տարբերութիւնը նրանում էր կայանում, որ այնտեղ անհատական հոգու և հանրութեան հոգու կապը աւելի սերտ էր, այնքան սերտ, որ անհնար էր որոշել, որտեղ է վերջանում անհատը ու սկսում հանրութիւնը: Զգում էի բացի այդ, որ հէնց այդ սահմանի անորոշութեան վրայ է հիմնւած այնտեղի երջանկութիւնը, որովհետեւ մարդիկ այնտեղ իրանց չեն բացառում ուրիշներից, չեն հակադրում ուրիշներին, այլ ապրում են ներդաշնակ իրանց շրջապատողների հետ և այդպիսով ապրում են ընդհանուր կեանքի ամբողջ զօրութեամբ:

Ձեմ կարող ասել, թէ այդ տեսիլք էր. այնքան էր, որ անցել էի այն սահմանագիծը, որից դէնը վերջանում են սոոյզ դատողութիւնները ու սկսում են զգացմունքները, որոնք սակայն դեռ ևս մասամբ եզրակացութիւններ են նախընթաց նախադրութիւններից, բայց այնքան հեռու տարած՝ հասցրած, որ գրեթէ անհկատելի է նրանց եզրակացութիւն լինելը, այնպէս՝ ինչպէս կարող է գրեթէ աննշմարելի լինել անվերջ երկարացրած ոսկէ թելը: Ասեմք ես դեռ ևս չէի կարողանում տողորել այդ նոր դաշտերի

կեանքով, կատարելապէս ձուլւել, չքանալ նրա մէջ: Ես որոշեալ չափով պահպանել էի իմ առանձնութիւնս. ինձ ինչ որ պակասում էր և թւում էր ինձ, թէ ինչ որ որոնում եմ շուրջս: Յանկարծ զգացի որ Անեկալին եմ որոնում: Այո, անշուշտ, միշտ նրան և միմիայն նրան: Ինչին պէտք էր այդ նոր կեանքը առանց նրան: Վերջապէս գտայ նրան ու մենք սկսեցինք միասին թափառել, ինչպէս Պաօլօյի սուերը Ֆրանչեսկօ դի Ռիմինիի սուերի հետ...

Գրի եմ անցնում այդ, որովհետև այդ ինձ գրեթէ զարհուրելի ապացոյց է թւում, թէ ինչ աստիճան գրաւած է իմ էութիւնը այդ կնոջ սիրով: Ո՞ր ջհաննամից ու ի՞նչ կապ կարող է լինել Բուենդէի ու նրա նէօ-վիտալիզմի և Անեկալի մէջ: Եւ սակայն ես, այդպիսի բաների մասին մտածելիս անգամ, ի վերջոյ զալիս կանգ եմ առնում Անեկալի վրայ: Գիտութիւնը, գեղարւեստը, բնութիւնը, կեանքը այժմ ես այդ մի միակ յայտարարին եմ վերածում: Այդ ինձ համար այն առանցքն է, որի շուրջը պտտւում է երկիրը:

Այդ վերին աստիճանի մեծ նշանակութիւն ունի, որովհետև այդ այդպէս լինելուց յետոյ մնում է արդեօք հաւանականութեան գէթ մի նշոյլ, թէ ես երբ և իցէ կը հետեւեմ բանականութեան խորհրդին, որ դեռ ևս ժամանակ առ ժամանակ կրկնում է ինձ թոյլ, խեղդւած ձայնով, — հեռացիր, փախիր:

Գիտեմ, որ այդ լաւ չի վերջանալու, զիտեմ, որ այդ լաւ վերջանալ չի կարող, բայց որտեղից պէտք է ոյժ, կամք, եռանդ գտնեմ, երբ որ այդ բոլորից զուրկ եմ: Այդ միւլտիպլէն է թէ մի անոտ մարդու ասէին, — վեր կաց, դնա: Ինչով գնաց: Իսկ ես բացի այդ կաւելցնեմ, — ուր, ինչու: Այստեղ է իմ կեանքը:

Երբեմն սիրոս ասում է յիշատակարանս տամ Անեկալին կարգայ, բայց չեմ անիլ այդ: Նրա կարեկցութիւնը դէպի ինձ գուցէ կարդալուց յետոյ աւելանար, բայց սէրը կը նւազէր: Եթէ Անեկան իմս դառնար, կը փնտռէր իմ մէջ նեցուկ, հանգստութիւն և անյողդողդ հաւատ, թէ այդ այդպէս պէտք է լինի և թէ այդ լաւ բան է, իսկ եթէ յիշատակարանս կարդար, կը տեսնէր, որ ես մինչև անգամ այդ հարցին էլ կասկածով եմ վերաբերւում: Ասեմք կարծում եմ, որ թէկուզ նա խելքով հասկանար էլ այն բոլորը, որ

կատարել ու կատարում է իմ մէջ, դարձեալ շատ բան զգացմունքով ըմբռնել չէր կարող: Մենք չափազանց տարբեր էակներ ենք: Այ օրինակ հէնց այս: Ես մինչև անդամ այն ժամանակ, երբ միատրիականութիւն է զայլիս վրաս, երբ ինքս ինձ ասում եմ, թէ ամեն ինչ հնարաւոր է, այն աշխարհի կեանքը երեւակայում եմ ոչ այնպէս, ինչպէս առհասարակ բոլոր մարդիկ, հետեւաբար (ինչ չափով որ ընդհանրութեան հայեացքները կարելի է նորմալ համարել) աննորմալ կերպով: Ինչո՞ւ: Եթէ ամեն ինչ հնարաւոր է, կը նշանակի նոյնքան հնարաւոր են դժոխքը, քաւարանն ու արքայութիւնը, որքան իմ տժգոյն և միւսնոյն ժամանակ պայծառ դաշտերը: Եւ բացի այդ Դանտէի տեսիլքները իմոնցից անշուշտ աւելի վեհ են ու սքանչելի: Հապա ինչո՞ւ ես այդպէս չեմ երեւակայում: Երկու պատճառով: Նախ այն պատճառով, որ իմ սկեպտիկականութիւնը, որ խորտակում է իւր սեփական կասկածներից, այնպէս ինչպէս կարիճը թունաւորում է իւր սեփական թոյնից, այնքան ոյժ ունի այնու ամենայնիւ, որ կարող է պարզ ու ընդհանրապէս ընդունեալ զաղափարները դուրս դնել զանազան հաւանական ենթադրութիւնների շարքից, և երկրորդը... Երկրորդը, որ Դանտէի այդ ստորաբաժանմունքներում չեմ կարողանում ինձ ու Անելկային միատեղ երեւակայել... Այդպիսի կեանք չեմ ուզում... Ինչ որ այժմ գրում ու մտածում եմ, իմ մտածող էութեան մի մասովն եմ միայն անում. մնացեալ մասը Անելկայի մօտ է: Դեռ մինչև այժմ նրա սենեակից լոյս է ընկնում նրա պատուհանների տակ բռննող կոծոխուրի թփերի վրայ: Խեղճիկս, նա էլ քուն չունի: Այսօր տեսայ, որ ձեռագործը ձեռքին ննջում էր: Ահագին բազկաթուռի մէջ նա շատ փոքրիկ էր երեւում աչքիս և յոգնածութիւնից՝ խորը շունչ էր քաշում: Այնպիսի բան էի զգում դէպի նա, որպէս թէ իմ երեխան լինէր:

11 Կոնիսի.

Վերջապէս ստացայ Սաստօֆերատոյի Մադօննայի գլուխը և հօրաքործս ու պանի Յելինայի ներկայութեամբ տւեցի Անելկային, իբրև նրան կտակաւ ու նրան պատկանող բան: Նա ոչ մի կերպ չէր կարող հրաժարուել: Յետոյ ինքս իմ ձեռքով քաշ արեցի այդ

պատկերը նրա բուդուարում: Այնտեղ նա հիանալի է երևում: Ես Սասսօֆերատոյի Մադօնաների սաստիկ սիրողներին չեմ, բայց այդ Մադօնան շատ պարզ ու հիանալի է խոր բաց երանգներով: Մտածում եմ ու ուրախանում, որ Անեկան, քանի նայելու լինի այդ պատկերին, պէտք է յիշի, որ ես եմ նրան տուել այդ սրբութիւնը և նրա համար եմ տուել, որ սիրում եմ նրան: Այդպիսով այն սէրը որ նա մեղսացին է համարում, պէտք է կապւի նրա մոքում սրբութեան զաղափարի հետ: Երեխայական մխիթարութիւն. բայց ով որ ոչ մի մխիթարութիւն չունի, նրան այդ էլ կարող է գոհացնել:

Այսօր մի ուրախ բոպէ ունեցայ: Երբ որ պատկերը քաշ արեցի՝ պրծայ, Անեկան մօտեցաւ ինձ՝ շնորհակալութիւն անելու: Պանի Յելինայի բազկաթուը շատ հեռու էր դուռը, ուստի երբ որ Անեկան ուզում էր ձեռքը ձեռքիցս դուրս քաշել, մի վայրկեանաւոր բռնած պահեցի ու կիսաձայն հարցրեցի.

— Մի՞թէ յիրաւի ատում ես ինձ, Անեկա:

Նայ, կարծես տխրութեամբ, թափ տուեց գլուխը:

— Զէ, չէ, — պատասխանեց նա քաղցրութեամբ:

Որքան բան էր պարունակում այդ քաղցր պատասխանի մէջ:

Լոկ խօսքեր են թէ, եթէ սիրած կնոջ զգացմունքը երբէք չի արտայայտուել, այն ժամանակ միւսնոյն բանն է, սիրում է նա թէ ոչ: Զէ, միեւնոյնը չէ: Թող գոնէ այդքանը ունենամ. որ մեռնելու էլ լինէի, դրանից յօժարակամ չէի զրկւիլ: Եթէ զրկւէի, այն ժամանակ իսկ որ ոչինչ չէր մնալ, որի համար արժենար ապրել:

12 տնիսի.

Վարչաւայումն եմ: Անցեալ օրւայ նամակովը Մեատինսկին ինձ հրաւիրել էր, որ երէկ գալի Կլարայի պատուին տրուող հրաժեշտի ճաշին: Ճաշին չեկայ, բայց այսօր երկաթուղու կայարանում ճանապարհ գցեցի նրան: Հէնց նոր այնտեղից վերադարձայ: Ազնւահոգի Կլարան անշուշտ ինձնից նեղացած ու հիասթափւած էր հեռանում այստեղից, բայց հէնց որ ինձ տեսաւ, ամեն բան ներեց ինձ և մենք ամենագորովայից կերպով մնաս բարեւ արեցինք իրար հետ: Ես էլ զգում էի, որ նրա բացակայութիւնը զգալի կը լինի ինձ համար, որ ինձ շրջապատող ամայութիւնը տուելի ևս

կը սաստկանայ: Ի՞մ միտովական դաշտերում՝ անջատում՝ ասած բանը չի լինիլ: Այսօրւան անջատումը յերաւի շատ տխուր էր, մանաւանդ որ մի կողմից էլ եղանակը մռայլ ու անձրեւային էր. երեւի դեռ մէկ-երկու էլ վատ եղանակ կ'անի:

Բայց չը նայած եղանակի վատութեանը Կլարային ճանապարհ գցողներ շատ կային: Նրա կուռէն աջնքան պսակներ ու ծաղիկներ էին լցրել, կարծես դիակառք լինէր: Ճանապարհին ստիպւած կը լինի բոլորը դէն գցել, թէ չէ կը խեղդէի: Կլարան այդ բոպէին, երբ արդէն այստեղից հեռանում էր, այլ ևս ամենեւին ուշք չէր դարձնում նրա վրայ, թէ ինչ կարող են կարծել ուրիշները, և որքան այդպիսի պայմաններում հնարաւոր էր միայն ինձնով էր զբաղուէ: Մտայ նրա բաժանմունքը և սկսեցինք խօսել իբրեւ մտերիմ բարեկամներ ուշք չը դարձնելով ոչ նրա մշտալուռ պառաւ ազգականի, ոչ էլ ուրիշ ներկայ եղողների վրայ, որոնք ի վերջոյ քիչ-քիչ սկսեցին համեստութեամբ դուրս գալ կուպէից:

Նս բռնել էի Կլարայի երկու ձեռքը, իսկ նա նայում էր ինձ իւր խաժ աչքերով ու ասում յուզւած ձայնով.

— Աւմից ծածկեմ, ձեզնից չեմ ծածկիլ, որ երբէք մի որ և է տեղից հեռանալու այսքան ափսոսալիս չեմ եղել... Այսպիսի բոպէներում մարդու գլուխը այնքան խառն է լինում, որ ժամանակ չի լինում կարգին խօսելու, բայց ճիշտ եմ ասում, որ ափսոսս սաստիկ գալիս է... Ֆրանկֆուրտում թէ գիտնական թէ արտիստ ծանօթներ շատ ունեմ, բայց... ինքս էլ չը գիտեմ... Ինչ որ տարբերութիւն կայ... Դուք, կարծես, աւելի նուրբ նազարաններ լինէք: Իսկ անձամբ ձեր մասին հօ խօսելն անդամ աւելորդ է:

— Թոյլ կ'տաք ինձ նամակ դրել ձեզ:

— Նս էլ կը գրեմ ձեզ և ուզում էի ձեզ խնդրել, որ դուք էլ գրէք: Նրաժշտութիւնը ինձ համար էլի առաջնայ պէս կայ ու կայ, բայց այժմ լինում են բոպէներ, երբ երաժշտութիւնը լիապէս բաւարարութիւն չի տալիս ինձ: Կարծում եմ, որ դուք էլ երբեմն պահանջ կը զգաք ինձ հետ նախակազրութիւն ունենալու. թերեւս դուք շատ բարեկամներ ունէք, բայց ինձ չափ անձնուէր ու բարեացակամ դժւար թէ ունենաք: Նս այնքան չիմար եմ, որ ամեն ինչ ինձ յուզում է, իսկ այժմ մի քանի բոպէից յետոյ պէտք է հեռանամ գնամ այստեղից:

— Մենք երկուսս էլ շարունակ թափառում ենք աշխարհիս երեսին, զուք իբրև արտիստուհի, ես իբրև բօշա, աֆսպէս որ այս մնաս բարև չէ, այլ միայն ցտեսութիւն:

— Յոսեսութիւն, ց'շուտ տեսութիւն: Դուք էլ արտիստ էք: Մարդ կարող է ոչ նւագել, ոչ գրել, ոչ էլ նկարել, բայց հոգով աշնուամենայնիւ արտիստ լինել: Ես ձեզ հետ ծանօթանալուս առաջին ընդունից այդ նկատեցի և զրա հետ միասին նաև այն, որ զուք թէև բախտաւոր էք երևում, բայց իսկապէս երևի սաստիկ վշտահար էք: Մի մոռանաք, որ կայ մի գերմանուհի, որը իրան ձեր քոյրն է համարում:

Ձեռքը մօտեցրի շրթունքներին, իսկ նա կարծելով թէ արդէն ուզում եմ զուրս զալ կուպէից, շտապով ասաց.

— Դեռ ժամանակ կայ, երկրորդ զանգը դեռ չեն խփել:

Ես արդարև ուզում էի արդէն մնաս բարև ասել նրան: Ի՛նչ են դնում իմ գլխիս ջղերս: Կլարայի ազգական պառաւր անձրևի պատճառով ուետինէ վերարկու էր հագել, որ նրա իրար գալիս սարսափելի խշխշում էր, — և ահա այդ ուետինի խշխշոցը կամ աւելի ճիշտ ասած խզխզոցը ինձ կատաղեցնում էր: Ասե՛ք առանց այն էլ մէկ երկու ընդունի էր մնում մինչև երկրորդ զանգը: Բայց էլի չը սպասեցի, ու երբ որ վազէվազ ներս մտաւ պանի Մնետոինսկան, ես զուրս եկայ:

— Գրէ՛ք՝ Ֆրանկֆուրտ, Հիլտին, — ձայն տուեց յետևիցս Կլարան, — ուր որ էլ լինեմ տանից կուղարկեն ինձ:

Մի վայրկեան անցած ես արդէն վագօնի պատուհանի մօտ էի: Կլարային ճանապարհ գցողների աղմուկը խառնւում էր շոգու Ֆշշոցի, շոգեկառք ֆուֆութոցի ու երկաթուղու սպասաւորների աղաղակների հետ: Կուպէի պատուհանը բացւեց ու ես մի անգամ էլ տեսայ այդ ազնիւ, քաղցր դէմքը:

— Որտեղ էք անկացնելու ամառը, — հարցրեց ինձ Կլարան:

— Չը գիտեմ. կը գրեմ, — պատասխանեցի ես:

Այդ ընդունի շոգեկառքը սկսեց աւելի արագ շունչ քաշել, հնչեց վերջին սուլոցը և զնացքը առաջ խաղաց: Բարիերթ աղաղակեցինք Կլարային. նա ձեռքերը բերնին տանելով հրաժեշտի ողջոյն էր ուղարկում մեզ, մինչև որ վերջապէս անցյալացաւ աչքներիցս հեռաւորութեան ու մթութեան մէջ:

— Շատ կը քաշէք կարօտը, — յանկարծ հարցրեց ինձնից պանի Սնեատրիսական։

— Շատ, — պատասխանեցի ես ու գլուխ տալով յետ դարձաց զէպի տուն։

Յիրաւի այնպիսի բան էի զգում, կարծես թէ այնպիսի մարդու էի ճանապարհ գցել, որ կարող էր ինձ օգնութիւն հասցնել։ Չափազանց զրգուած էի։ Գուցէ դրա պատճառը մռայլ երեկոն էր իւր անձրևով ու այն աստիճան թանձր մառախուղով, որ լապտերները հեռուից ծխածանազոյն շրջանակների նմանութիւն էին տալիս։ Յոյսի վերջին կայծն էլ հանգել էր սրտումս։ Պեսսիմիզմը ոչ միայն հոգուս մէջն էր, այլ և կարծես մթնոլորտի պէս պատում էր ամբողջ աշխարհը, ծանրանում էր մարդկանց և անշունչ առարկաների վրայ, թափանցում էր բոլոր ձևերի ու բոլոր էակների ներքը։

Տուն էի վերադառնում ճմլած ու սաստիկ անհանգիստ սրտով, կարծես ահ զգալիս լինէի մի անյայտ ու անորոշ վտանգից։ Մի րոպէ բռնուն կարօտ զարթնեց սրտումս զէպի արեգակն ու պայծառ եղանակը, զէպի այն երկիրները, ուր չեն լինում այսպիսի անձրևներ, այսպիսի մթութիւն ու մառախուղներ։ Թուում էր ինձ, թէ եթէ փախչեմ զնամ աւելի լուսաւոր երկիր, հէնց միայն այնտեղի լոյսը ինչ որ մի բանի զէմը կառնի ու ինձ ինչ որ մի բանից կը պաշտպանի։ Մտածելուս ընդունակութիւնը ամբողջապէս ամփոփւել էր մի հատիկ խօսքի մէջ, որ արձագանքի պէս անդադար կրկնում էի, — «Գնամ, զնամ»։ Յանկարծ սարսափ տիրեց ինձ, երբ միտքս եկաւ, որ եթէ զնամ, Անելկային այստեղ մենակ կը թողնեմ ու կը մատնեմ այն անորոշ վտանգին, որից ես ուզում եմ փախչել։ Գիտեմ, որ այդ սխալ է, գիտեմ, որ իմ զնալս նրան օգուտ կը բերէր, բայց չեմ կարողանում ազատուել այն զգացմունքից, թէ այդ իմ կողմից երկչոտ ու ստոր վարմունք կը լինէր... Այդ զգացմունքը բոլոր դատողութիւններիցս զօրեղ է... Ասենք, զնալս դատարկ խօսք է։ Կարող եմ ինձ ու ինձ կրկնել այդ խօսքը, կարող եմ երևակայել, բայց հէնց որ պէտք լինի խօսքը դործ դարձնելու, խնդոյն կը համոզւեմ, որ ուժիցս վեր չեղող գործերից այդ ամենաքիչ հնարաւորն է։ Այնքան ջղային ոյժ եմ գործ դրել, այնքան կեանք եմ մաշել սիրոյ զգացմունքիս վրայ, որ այժմ ինձ

համար աւելի հեշտ կը լինէր մէջիցս հազար կոոր լինել, քան .յոկ գալ նրանից:

Ես այն աստիճան պահպանել եմ մոքերիս վերահսկելու և ինքնագիտակցելու ընդունակութիւնս, որ ինձ բոլորովին անհաւանական է թւում, թէ կարող եմ ցնորւել: Երեւակայել անդամ չեմ կարողանում այդ, սակայն երբեմն-երբեմն թւում է ինձ, թէ ջղերս այնտեղ են հասել արդէն, որ էլ աւելի լարւել չեն կարողանալ:

Խեղճ Վլարա: Վերջին ժամանակները նրան շատ ուշ-ուշ էի տեսնում, բայց զիտէի որ նա ինձնից հեռու չէ և այդ ինձ ուրախութիւն էր պատճառում, — այժմ Անելկան լիովին կը գրաւի ինձ, որովհետեւ նրան կը նւիրեմ և՛ այն կարողութիւններս, որոնց միջոցով մարդիկ մեղմ սէր են տածում, որոնց միջոցով մարդիկ բարեկամութիւն են զգում:

Տուն որ վերադառնայ, սենեակումս նստած սպասում էր ինձ բժիշկ Խւաստովսկին. եկել էր գրավաճառ եղբօր հետ խորհրդակցելու: Գրքեր ծախելու վերաբերեալ ինչ որ նոր ձեռնարկութիւն են ուզում սկսել: Նրանք միշտ մի բան անում են, մի բանով զբաղւած են լինում, և դրա շնորհիւ նրանց կեանքը վերին աստիճանի լի է լինում: Այնտեղ է հասել բանը, որ ուրախացայ նրան տեսնելով, բոլորովին այնպէս, ինչպէս սատանաներից վախեցող երեխան ուրախանում է, երբ որ սենեակը մարդ է մտնում: Նրա հոգեկան աշխոյժը կազդուրում է ինձ: Ասում էր, որ պանի Յելլինան քանի գնում լաւանում է, այնպէս որ մի վեց-եօթ օրից յետոյ կը կարողանայ գնալ Գաշտէն: Այդպէս, այդպէս: Տեղներս էլ է կը փոխենք: Բոլոր ոյժերս կը լարեմ գործը շուտով գլուխ բերելու համար: Հօրաքրոջս կը համոզեմ, որ նա էլ հետները գնայ Գաշտէն: Նա իմ խաթեր կը գնայ և այն ժամանակ ոչ ոք չի զարմանալ, եթէ ես էլ գնամ: Այժմ գոնէ մի բան ցանկանում եմ և շատ եմ ցանկանում: Որքան առիթ կը լինի Անելկայի վրայ հոգս տանելու: Այնտեղ մենք իրարից աւելի մօտ կը լինենք քան Պրոշովում: Սիրտս մի քիչ սփոփւեց: Այսօր անտանելի օր էր, իսկ ինձ ոչինչ այնքան չի ճնշում, որքան վատ եղանակը: Դեռ լսում եմ տանիքի ջրորդաններով թափւող անձրևի շշուոցը, բայց ամպերի արանքներին արդէն հառ-հառ ասողներ են երևում:

12 լուսիսի.

Կրոմիցին այսօր եկաւ...

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍԻ

ԼՈՒԻ ՊԱՍՏԵՐԻ

(նրա 70-ամեակի առթիւ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՆՐԱ ԱՐԱԾ ԳԻՒՏԵՐԻ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

III

Պաստեօրի հետազօտութիւնները կամաց կամաց նրան հասցրին տարափոխիկ հիւանդութիւններին: Վաղուց ի վեր նրան գրաւում էր այդ նիւթը: Ի՞նչ է այդ տարօրինակ հիւանդութիւնների պատճառը:

Պաստեօրը իր նոր հետազօտութիւնները սկսեց «սիբիրական ախտ» և «հաւերի խոլերա» հիւանդութիւններից:

Սիբիրական ախտը (сибирская язва) ամենավտանգաւոր հիւանդութիւններից մէկն է, որ տարածւում է ընտանի կենդանիների մէջ: Եթէ ամբողջ հոռի մէջ ընկնի սիբիրական ախտով հիւանդ մի կենդանի, նա իսկոյն կը վարակի բոլոր հոտը և այդ բանի հետեանքը այն կը լինի, որ կենդանիները կը սկսեն ահագին քանակութեամբ կոտորուել:

Միմիայն ֆրանսիացում սիբիրական ախտը տարեկան մօտ 20 միլիօն ֆրանկի վնաս է տալի անասնապահութեանը: Նոյնպէս մեծ

¹⁾ Տես «Մուրճ» № 1:

Քնասներ են կրում սիբիրական ախտից Սպանիան, Իտալիան, Աւստրո-Ունգարիան, Ռուսաստանը...

Այս վերջին երկրում սիբիրական ախտը վաղուց բուն է դրել, մի քանի նահանգներում համարեա ամեն տարի լինում է այդ հիւանդութիւնը և կոտորում է ընտանի կենդանիների 15-ից մինչև 20 տոկոսը և եթէ հնար էր եղել հաշուել այն զոամարը, որը Ռուսաստանը ամեն տարի կորցնում է, այն ժամանակ մենք կը համոզէինք, որ իրաւ բաւական խոշոր զոամար է զոհւում ամեն տարի սիբիրական ախտին:

Դեռ 1850 թւինն էր, երբ Ֆրանսիայի զինական Ռաւենը՝ հետազօտելով սիբիրական ախտից մեռած կենդանու արիւնը միկրոսկոպի տակ՝ գտաւ, որ նա (արիւնը) լցած է անթիւ, մանր միկրոսկոպական օրգանիզմներով: Սակայն Ռաւենը չը կարողացաւ օգտուել իր գիտով, նա չը կարողացաւ բացատրել թէ ինչ դեր են կատարում այն միկրոբները, որոնցով լցած է սիբիրական ախտով հիւանդ կենդանու մարմինը:

1874 թւին Պաստօրը զեկուցում կարգաց Պարիզի գիտութեանց ճեմարանում և այդ զեկուցման մէջ ապացուցեց, որ սիբիրական ախտի պատճառը Ռաւենի գտած միկրոբներն են, և իրաւ անկարելի է գտնել այդ հիւանդութիւնից մեռած մի կենդանի, որի մարմնի մէջ չը լինէին վերոյիշեալ միկրոբները:

Երբ Պաստօրը վերցնում էր մի կաթիլ այդ միկրոբները պարունակող հեղուկից և սրսկում բոլորովին առողջ կենդանու կաշւի տակ, առողջ կենդանին մի քանի օրից յետոյ հիւանդանում էր սիբիրական ախտով:

Ուրեմն հիւանդութեան պատճառը գտնւած էր, մնում էր լաւ ուսումնասիրել հիւանդութիւնը պատճառող միկրոբների կեանքը, որպէս զի հնար էր եղել յաջողաբար կուլել նրանց դէմ:

Պաստօրը վերցնելով հիւանդ կենդանու արիւնից մի փոքր այդ միկրոբներից, զարգացրեց նրանց առանձին անօթում. հաւի մնից պատրաստած բուլիոնի մէջ: Սիբիրական ախտի միկրոբը լաւ զարգացաւ այդ բուլիոնում, 24 ժամից յետոյ արդէն բուլիոնը լցած էր անթիւ միկրոբներով: Պաստօրը վերցրեց մի կաթիլ այդ բուլիոնից և գցեց մի ուրիշ անօթի մէջ, որը նոյնպէս պարունակում

էր իւր մէջ իստակ հաւի բուլիոն. 2-րդ անօթն էլ 24 ժամից յետոյ լցւեց սիբիրական ախտի միկրոբներով: Յետոյ 2-րդ անօթից վերցրեց էլի մի կաթիլ և զցեց 3-դ անօթը, որի մէջ նոյնպէս զեղեցիկ կերպով զարգացան միկրոբները և այդպէս շարունակաբար զարգացրեց միկրոբներին մի քանի տասնեակ անօթներում: Յետոյ երբ վերցնում էր նոյն իսկ ամենավերջին անօթների բուլիոնից մի կաթիլ (որը, յայտնի բան է, պարունակում էր իւր մէջ սիբիրական ախտի միկրոբներից) և սրսկում այդ հեղուկը բոլորովին առողջ կենդանու կաշւի տակ, կենդանին անպատճառ հիւանդանում էր սիբիրական ախտով:

Անելով այդ տեսակ փորձեր Պաստերը շուտով նկատեց մի զարմանալի փակտ, որը անասելի մեծ նշանակութիւն ունի բոլոր տարափոխիկ հիւանդութեանց ուռումնասիրութեան համար: Ահա այդ փակտը: Մենք արդէն զիտենք, որ եթէ սիբիրական ախտով հիւանդ կենդանու արիւնից վերցնենք մի կաթիլ և սրսկենք առողջ կենդանու մարմնի մէջ, առողջն էլ կը հիւանդանայ:

Այդ գէպքում հիւանդութիւնը լինում է սաստիկ և ըստ մեծի մասին մահով է վերջանում: Նոյնպէս սաստիկ էր լինում հիւանդութիւնը և այն ժամանակ, երբ առողջ կենդանու մարմնի մէջ սրսկում էին վերոյիշեալ անօթների բուլիոնից:

Սակայն Պաստերը նկատեց, որ յայտնի պայմաններում այդ վտանգաւոր միկրոբների ոյժը թուլանում է: Հետեւալ կերպով Պաստերը թուլացրեց սիբիրական ախտի թոյնի ¹⁾ ոյժը:

Նա վերցրեց հիւանդ կենդանու արիւնից մի կաթիլ և զցեց մի անօթից բուլիոնի մէջ, որտեղ միկրոբները սաստիկ զարգացան, յետոյ այդ անօթի հեղուկը պահեց երեք օր: Միւս անօթի մէջ զցելով նոյնպէս մի կաթիլ հիւանդ կենդանու արիւնից, պահեց հեղուկը 5 օր, երրորդ անօթը նոյն տեսակ պատրաստելուց յետոյ պահեց 7 օր և այլն:

Յետոյ վերցրեց մի կաթիլ 7 օր պահած բուլիոնից և սրսկեց առողջ կենդանու մարմնի մէջ, այն ժամանակ նա տեսաւ, որ թէև

¹⁾ Կամ աւելի լաւ է ասել սիբիրական ախտի միկրոբների ոյժը:

այդ հեղուկը հիւանդացնում է կենդանուն սիբիրական ախտով, բայց հիւանդութիւնը լինում է շատ թեթեւ և շուտով կենդանին առողջանում է:

Իսկ երբ նա սրսկում էր առողջ կենդանու մարմնի մէջ 5 օր պահած բուլիոնից, այն ժամանակ հիւանդութիւնը լինում էր մի փոքր աւելի սաստիկ: Երեք օր պահած բուլիոնը աւելի ևս սաստիկ հիւանդութիւն էր արտադրում, վերջապէս մի օր պահած բուլիոնի միկրոբները ամենասաստիկ հիւանդութիւն էին արտադրում և ըստ մեծի մասին սպանում էին կենդանուն:

Այդպիսով Պաստեօրը գտաւ, որ քանի աւելի երկար պահենք բուլիոնը, որի մէջ զարգանում են սիբիրական ախտի միկրոբները, այնքան աւելի կը թուլանայ այդ միկրոբների ոյժը:

Աւրեմն այժմ գիտնականները կարող են վերցնել սիբիրական ախտի ամենասաստիկը և թուլացնել նրա ոյժը այնքան ինչքան որ ցանկանում են:

Շուտով Պաստեօրը օգտուեց իր երևելի գիտով: Նա նկատեց, որ այն կենդանիները, որոնց կաշւի տակ սրսկել են թոյլ թոյն, առողջանալուց յետոյ էլ չեն վնասւում նոյն իսկ ամենասաստիկ սիբիրական ախտի տարածման ժամանակ: Եթէ այդ կենդանիների կաշւի տակ սրսկենք երկրորդ անգամ ամենասաստիկ թոյն, նրանք կամ չեն հիւանդանալ, կամ հիւանդանալուց յետոյ հեշտութեամբ կ'առողջանան:

Աւրեմն այստեղ նոյն բանն է նկատուում, ինչ որ «ծաղիկ» ասւած տարափոխիկ հիւանդութեան վերաբերմամբ. երբ մարդկանց կաշու տակ սրսկում են ծաղիկի թոյլ թոյնը (այդ անանում է «ծաղիկը պատւաստել»), այդ թոյլ թոյնը պահպանում է աւելի սաստիկ հիւանդութիւնից:

Պաստեօրի մեծ գիտը նրանում է կայանում, որ նա ցոյց տուաւ թէ սիբիրական ախտը «ծաղիկի» նման կարելի է պատւաստել:

Երբ այդ բանը յայտնեց Մելենի երկրագործական ընկերութեանը՝ նախադահը առաջարկեց Պաստեօրին՝ գնալ Մելեն և ժողովրդի առաջ պատւաստել սիբիրական ախտը: Պաստեօրը ուրախու-

Թեամբ ընդունեց այդ առաջարկը: 1881 թւին նա զնաց Մելեն, ուր նրան տւին փորձերի համար 60 ոչխար և կովեր: Դոցանից 30-ին Պաստեօրը պատւաստեց սիբիրական ախտը ¹⁾, իսկ 30 թողեց առանց պատւաստելու: Պատւաստած կենդանիները թթթե կերպով հիւանդացան սիբիրական ախտով, յետոյ շուտով առողջացան:

Մի քանի օրից յետոյ Պաստեօրը սրկեց թէ պատւաստած և թէ չը պատւաստած կենդանիների կաշու տակ սիբիրական ախտի ամենատարիկ թոյնը: Երկու օրից յետոյ յայտնեց, որ համարեա բոլոր չը պատւաստւածները կոտորւել են, մինչդեռ բոլոր պատւաստւածները ողջ և առողջ էին:

Այդ փորձը մեծ տպաւորութիւն արաւ բոլոր ներկայ եղող ժողովրդի վերայ:

Այդ ժամանակից սկսած սաստիկ տարածեց սիբիրական ախտի պատւաստելու միջոցը: Այժմ Գրանսիացում և միւս երկրներում ամեն տարի պատւաստում են սիբիրական ախտը ամբողջ հոտերին: Նոյն իսկ Ռուսաստանում կան արդէն մի քանի հիմնարկութիւններ ²⁾, որոնք պատւաստում են սիբիրական ախտը:

Այդ հիմնարկութիւնների հաշիւները ցոյց են տալիս, որ սիբիրական ախտը էլ ոչինչ վնաս չի կարողանում տալ այն հոտերին, որոնք արդէն պատւաստւած են, մինչդեռ նոյն հիւանդութիւնը սարսափելի կերպով կոտորում է չը պատւաստւած հոտերը:

Անկարելի է գնահատել այն մեծ օգուտը, որը տւել է ամբողջ աշխարհին Պաստեօրի զիւտը վերաբերեալ սիբիրական ախտին:

*
* *

1880 թւին Պաստեօրը սկսեց ջրվախութեան ³⁾ ուսումնասիրութիւնը: Թէև Պաստեօրը բժիշկ չէ, այլ նստուրալիստ, բայց նա ձեռնարկեց այդ հիւանդութեան հետազօտութեանը, որովհետև նա էնթադրում էր, որ այդ հիւանդութիւնն էլ արտադրութիւն է միկրոբների, որոնց կեանքը նրան միշտ սաստիկ հետաքրքրում էր:

¹⁾ Այսինքն՝ սրկեց նրանց կաշու տակ թուլ թոյն:

²⁾ Օրինակ խարկովի և Օդեսայի բակտերիօլոգիական կապրանները:

³⁾ Водоболзнь, бешенство.

Ջրվախութիւնը պատկանում է վարակիչ հիւանդութիւնների թւին և տարածւում է զլխաւորապէս շնորհիւ հիւանդ շների ¹⁾ երբ այս վերջինները կծում են առողջ շներին կամ մարդկանցը՝ Ջրվախութեան թոցնը ընկնում է առողջների մարմնի մէջ և արտադրում Ջրվախութիւն:

Այդ հիւանդութեանը ենթարկւում են բացի մարդուց և շանից նաև կովերը, ճագարները, կապիկները, զալերը...

Հասկանալի բան է, որ սկզբից անկարելի էր Ջրվախութեան փորձերը անել մարդու վերայ:

Պատեօրը սկսեց իւր հետազոտութիւնները Ջրվախութեամբ հիւանդ շներից: Արդէն վաղուց յայտնի էր, որ Ջրվախութեան թոցնը զանում է հիւանդ կենդանու թուքի մէջ: Սակայն Պատեօրը շուտով նկատեց, որ բացի թուքից թոցնը գտնւում է նաև գլխի ու մէջքի ուղեղում, ջղերում և մասններում (желѣза):

Իսկ ամբողջ ջղային սխառմից ամենասիրած տեղը Ջրվախութեան միկրոբների համար երկայնաձև ուղեղն է (продолговатый мозг). Ջրվախութիւնից մեռած բոլոր կենդանիների և մարդկանց երկայնաձև ուղեղը միշտ պարունակում է իւր մէջ Ջրվախութեան թոցնը: Այդ պատճառով ամեն անգամ երբ Պատեօրը վերցնում էր Ջրվախութիւնից մեռած կենդանու երկայնաձև ուղեղը և արորելով նրան ջրի մէջ՝ սրտիւմ էր առողջ կենդանու մարմնի մէջ, առողջ կենդանին նոյնպէս հիւանդանում էր Ջրվախութեամբ:

Ահաք է ասեմ, որ երբ հիւանդ շունը կծում է առողջ կենդանիներին, այս վերջինները թէև արդէն կծած օրից պարունակում են իրանց մարմնի մէջ Ջրվախութեան թոցնը, սակայն շուտով չեն հիւանդանում, կծած օրից մինչև հիւանդանալը առհասարակ անցնում է մօտաւորապէս մի ամիս կամ 6 շաբաթ:

Արնշանակի, որ ամբողջ մի ամսւայ ընթացքում թոցնը մնում է մարմնի մէջ անյայտ, վարակւած կենդանին այդ ժամանակամիջոցում լինում է բոլորովին առողջ և ուրախ, այնպէս որ անկարելի է ենթադրել, թէ նա իւր մէջ պարունակում է զարհուրելի թոցնը:

¹⁾ Ռուսաստանում հիւանդութեան տարածմանը նպաստում են նաև զալերը:

Այդ ժամանակամիջոցը անւանւում է ծածկւած ժամանակամիջոց (скрытый периодъ կամ թէ инкубационный периодъ):

Զրվախուլթեան ուսումնասիրելու ժամանակ Պաստերը մի գըլխաւոր նպատակ էր դրել իրան համար, այն է գտնել հնար պատւաստելու ջրվախուլթիւնը այնպէս, ինչպէս նա գտել էր արդէն սիբիրական ախտի պատուաստելու միջոցը:

Բայց մենք գիտենք, որ նրան յաջողւեց գտնել սիբիրական ախտի պատուաստելու միջոցը այն ժամանակ, երբ նա կարողացաւ թուլացնել ախտի թոյնի (կամ միկրոբների) ոյժը և այդ հասկանալի է, որովհետև պատուաստել կարելի է մի թույլ թոյն, ուժեղ թոյնը խկոյն կը սպանէր:

Ունենալով այդ բոլորը ի նկատի, Պաստերը ձեռնարկեց բազմաթիւ փորձերի, որոնց նպատակն էր թուլացնել ջրվախուլթեան թոյնի ոյժը: Պատուաստել առողջ կենդանիներին ջրվախուլթիւնից մեռած կենդանու երկայնաձև ուղեղը միտք չունէր, որովհետև հիւանդութիւնից մեռած կենդանու ուղեղը պարունակում է իւր մէջ վերին աստիճանի ուժեղ թոյն, որը արտադրում է մահացու հիւանդութիւն:

Շատ փորձեր անելուց յետոյ Պաստերը վերջապէս արաւ ջրվախուլթեան թոյնի ոյժի թուլացնելու մեծ գիւտը: Նա նկատեց, որ մեռած կենդանու ուղեղում զանազակ թոյնը թուլանում է, եթէ ուղեղը մի քանի ժամանակ պահենք մաքուր օդում: Եւ քանի աւելի է հնանալ երկայնաձև ուղեղը, այնքան աւելի է թուլանում նրա մէջի թոյնը:

Երբ Պաստերը գտաւ թոյնի թուլացնելու հնարը, նա փորձեց պատուաստել ջրվախուլթիւնը: Վերցրեց ջրվախուլթիւնից մեռած ճագարի երկայնաձև ուղեղը, մի քանի ժամանակ պահեց այդ ուղեղը մաքուր օդում նրա թոյնի ոյժը թուլացնելու համար, յետոյ ուղեղը արորեց բուլիոնի մէջ և սրսկեց առողջ շան մարմնի մէջ: Թոյնը այնքան թույլ էր, որ շունը մնաց անվնաս, յետոյ Պաստերը սրսկեց նրա մարմնի մէջ բուլիոն, որի մէջ արորել էր մի փոքր աւելի թարմ ուղեղը, որ պարունակում էր իւր մէջ աւելի ուժեղ թոյն: Շունը այդ թոյնին էլ զիմացաւ: Կրանից յետոյ նրա մարմինը սովորեց ջրվախուլթեան թոյնին, այնպէս որ երբ նրան կծեց մի կատաղած շուն, նա էլ չը հիւանդացաւ ջրվախուլթեամբ:

Այդպիսի փորձեր Պատեօրը շատ արաւ: Երբ նա պատւաստում էր առողջ կենդանիներին թոյլ թոյն, այդ կենդանիները էլ չէին հիւանդանում ջրվախութեամբ նոյն իսկ այն ժամանակ, երբ նրանց կծում էր կատաղած շուն կամ գայլ:

Այդ դեռ բաւական չէ. Պատեօրը շուտով մի մեծ դիտողութիւն էլ արաւ: Նա գտաւ, որ ջրվախութեան թոյնի պատւաստելը պաշտպանում է և այն ժամանակ, երբ պատւաստող կենդանուն արդէն կծել է կատաղած շունը: Սրինակ ենթադրեմք, որ կատաղած շունը կծել է մի բոլորովին առողջ ճագարին: Մենք գիտենք, որ մինչև այդ ճագարի ջրվախութեամբ հիւանդանալը պէտք է անցնի մի ամիս: Պատեօրը ասում է, որ եթէ այդ ճագարին կատաղած շան կծելուց յետոյ շուտով պատւաստենք ջրվախութեան թոյլ թոյնը, ճագարը կը փրկւի մահից—նա էլ չի հիւանդանալ ջրվախութեամբ: Պատեօրը բազմաթիւ փորձերով ապացուցեց այդ:

Մի քանի ժամանակից յետոյ Պատեօրը փորձեր արաւ և մարդու վերայ: Պատեօրի մօտ բերին մի երեխայ, որին կատաղած շունը սաստիկ կծել էր: Բոլորն էլ գիտէին որ եթէ նրան չը դարմանեն ջրվախութիւնից, կը մեռնի, այդ պատճառով նրա ծնողները խնդրեցին Պատեօրին պատւաստել ջրվախութեան թոյնը երեխային: Պատեօրը կատարեց նրանց ցանկութիւնը:

Երեխայի պատւաստելուց յետոյ անցան շատ ամիսներ և նա չը հիւանդացաւ ջրվախութեամբ:

Այդ որ յայտնեց, աշխարհիս ամեն ծայրերից սկսեցին թափւել Պարիզ Պատեօրի մօտ բազմաթիւ մարդիկ, որոնց կծել էին կատաղած կենդանիներ: Պատեօրը նրանց պատւաստելով ջրվախութեան թոյնը, փրկում էր ու փրկում է մինչև այժմ էլ սարսափելի մահից:

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

ՍԵՂՐԱԿ ԹՍՌԱՅԵԱՆՅԻ

Քանի որ մեր ազգի մէջ տարածւել է խղճի և կրօնի ազատութեան սկզբունքը, քանի որ մենք հայերս ընդունել ենք այն միտքը, թէ բողոքական և կաթոլիկ համայնքները օտարներ չեն, այլ ազգին պատկանող հասարակութիւններ են, ուստի և ազգը իրաւունք ունի պահանջելու, որ ինչպէս լուսաւորչական հայը, նոյնպէս և կաթոլիկը և բողոքականը յառաջադիմեն մտաւոր և հասարակական կեանքի ասպարիզում: Կրօնի ազատութիւնը նորա համար չէ քարոզւում, որ բողոքական կամ կաթոլիկ հայը մի կողմից ազատ պաշտելով իւր դաւանած կրօնական սկզբունքները, միւս կողմից իրաւունք ունենայ իրան մտաւորապէս, բարոյապէս և կուլտուրապէս օրէցօր աւելի և աւելի հեռու պահելու հանրաազգային և հանրամարդկային յառաջադիմութեանը մասնակից լինելուց: Ո՛չ... որտեղ իրաւունք կայ, այնտեղ կայ և պարտաւորութիւն... Եթէ այլապէս հայը իւր իրաւունքն է համարում իւր ուղածի պէս աղօթել, Աստուծոյն պաշտել, ապա նա պիտի իւր պարտաւորութիւնը համարէ ոչ միայն մարդկային ու ազգային յառաջադիմութեանը արդելքներ չը դնել, այլ և նպաստել մասնակից լինել նորան: Մի խօսքով այլապէս հայը իրաւունք չունի տգիտութեան մէջ թաղւելու, քանի որ ազգի և մարդկութեան մէկ անդամն է, ուստի և վերջինս իրաւունք ունի հաշիւ պահանջելու առաջինից...

Բայց պէտք է նախ պարզել ընթերցողի համար, թէ ինչպիսի յառաջադիմութիւն ենք պահանջում մենք այլապէս հայ համայնքներից:

Նախ պիտի նկատենք, որ մեր խօսքը չի վերաբերում մի այլակրօն համայնքին պատկանող անդամների թւի աճելուն կամ պակասելուն: Եթէ մի շարք լուսաւորչականներ բողոքական են դառնում, սորանից մենք չենք եզրակացնում թէ ուրեմն բողոքական համայնքը յառաջադիմեց: Նոյնպէս եթէ մի շարք բողոքականներ լուսաւորչական եկեղեցոյ կողմն են վերադառնում, այդ էլ բողոքական համայնքի համար յետադիմութիւն չենք համարում... Առնասարակ մենք շատ նշանակութիւն չենք տալիս այս ու այն կողմն դառնալուն... Ազգը շատ չէ շահուում նրանով, որ մէկը աղօթելուց երեսը խաչահանում է թէ չէ խաչահանում... Բայց ազգի օգուտն է, երբ իւրաքանչիւր բողոքական և կաթոլիկ կը սկսէ աւելի ու աւելի հետաքրքրել, գրաւել ու ոգևորել ազգի ընդհանուր մտաւոր, բարոյական և կուլտուրական յառաջադիմութեամբ, որովհետեւ հետաքրքրութիւնից ու ոգևորութիւնից կարող է բնականաբար յառաջանալ և գործնական մասնակցութիւնը: Միւս կողմից ազգը շատ անգամ ունենում է և ցաւալի կողմեր, հոգսեր, որին պիտի մասնակցեն ամենքը: Այդպէս օրինակ թիւրքահայի վիճակի անտանելի լինելը միայն լուսաւորչական հային չէ վերաբերում, այլ սա մի ազգային հոգս է, որը պիտի իրանց սրտին առնեն և բողոքական և կաթոլիկ հայերը և ոչ միայն սրտին առնեն, այլ հարկաւոր ժամանակ և գործնականապէս մասնակցեն... Պարզ է, թէ ինչ ենք հասկանում մենք ազգային յառաջադիմութիւն ասելով: Ահա այդ յառաջադիմութիւնը պահանջում ենք և այլակրօն համայնքներից...

Բայց զանք այն խնդրին, թէ ինչպիսի հանրամարդկային յառաջադիմութիւն ենք պահանջում մենք յիշեալ համայնքներից...

Յայտնի է, որ գիտութիւնները օրէցօր ծաղկում են, զարգանում են: Մի ժամանակ ամենահասարակ բնական երևոյթները մարդկանց աչքին հրաշքներ էին համարւում: Բայց մեր ժամանակում մարդկութիւնը բաւական նշանաւոր քայլեր է արել բնութիւնը, կեանքը և ճշմարտութիւնը հասկանալու մէջ: Միայն թէ գիտութիւնը այն ժամանակ է իւր վերջնական նպատակին հասնում, երբնա մոտում է, տարածւում է ժողովրդի մէջ: Այդպէս ամենաբարձր առողջապահական և այլ գիւտերը բոլորովին անօգուտ կը լինին, եթէ նրանց ըմբռ-

նում են և օգտուում են նրանցից միայն քանի մի կաբլնետական զիտնականներ: Իսկ երբ նոքա տարածւում են ժողովուրդի մէջ, ահազին օգուտներ են յառաջացնում... Գիտնական ճշմարտութիւնները մի կողմից մեծամեծ յարմարութիւններ յառաջացնելով կեանքի մէջ, միւս կողմից այն օգուտը ունին, որ նրանցով զբաղւելով մարդիկ սովորում են լաւ մտածել, բացւում են նոցա հոգեկան աչքերը, նրանք սկսում են թողնել իրանց աւանդական նախապաշարմունքները և հասկանալ կեանքը, տիեզերքը, բնութիւնը աւելի ուղիղ, աւելի պարզ... Այդ է ահա մարդի խիական բարձրանալը, այստեղ է մարդկային հոգին դադարում անասնական լինելուց: Այդպէս ենք մենք հասկանում հանրամարդկային մտաւոր յառաջագիմութիւնը, որը և պահանջում ենք ամեն մի հայից ինչ դաւանութեան էլ պատկանէ նա:

Երկու խօսք էլ հասարակալարչական յառաջագիմութեան մասին: Մի վայրենի ժողովրդի մէջ հասարակական կազմակերպութիւն չը կայ, այլ մի Ֆիդիկայէս աւելի ուժեղ և բնաւորապէս աւելի խորամանկ անհատ իշխում է ամբողջ ամբոխի վերայ, համարում է նորա անդամներին իւր ստրուկները, նրանց կեանքի նշանակութիւնը մեծ մասամբ իւր սեփական կեանքի քմահաճութիւններին ծառայելու մէջն է տեսնում... Դեպոտը չէ կարողանում հասկանալ անհատի զարգացումն, որը նա ոչ միայն հարկաւոր, այլ և փաստակար է համարում իւր անձնաւորութեան տեսակէտից... Ձէ որ զարգացած մարդը չէ կարողանում ստրկութեան դիմանալ, և շատ անգամ անեկանելի դրութեան մէջ եթէ հնար չէ ունենում իւր ազատութիւնը ձեռք բերելու, վերջ է տալիս իւր անմարդավայել դոչութեանը ինքնասպանութեան դիմելով... Այդպէս է լինում վայրենի ժողովուրդի դրութիւնը... Իսկ մի ժողովուրդ, որ քան պարզա՛նում է մտաւորապէս, այնքան աւելի ու աւելի ամենքի համար ցանկալի կազմակերպութիւն է ստանում. իւրաքանչիւր անհատ շատ թէ քիչ սկսում է իւր վիճակի տէրը լինել, մարդիկ մի կողմից պարտաւորութիւններ ունենալով, միւս կողմից համապատասխան իրաւունքներ են ունենում: Անհատի ձայնը յարգանք և արժէք է ստանում և կարողանում է օգտաւէտ լինել թէ իւր և թէ ուրիշների համար: Մի խօսքով անհատն էլ զգում է, որ

ինքը հասարակութեան մի անշունչ հիմնաքարը չէ, որ իւր անզգայ մարմնի վերայ պիտի կրէ ամբողջ շէնքսի ծանրութիւնը, այլ որ ինքը ամբողջութեան մի գործօն (активный) մասնիկն է, որ ինչպէս ինքը կախած է հասարակութիւնից, նոյնպէս հասարակութիւնն էլ որոշ չափով իրանից (անհատից) է կախած: Ահա սա է միայն մի հասարակութեան արդարացի կազմակերպութիւնը: Եւ եթէ մի հասարակութիւն օրէցօր աւելի ու աւելի մօտենում է մեր նկարագրած կազմակերպութեանը, կը նշանակէ նա յառաջադիմում է հասարակ-վարչական տեսակէտից: Բայց եթէ որ և է հասարակութիւն աւելի ու աւելի վերացնում է իւր ընդհանրական գործերի միջից անհատի ձայնը, իրաւունքը, կամքի նշանակութիւնը և հասարակաց գործերը դարձնում է փոքր առ փոքր մէկի, կամ մի քանիսի կապրիզներին ծառայող միջոցներ, ասել է թէ այն անբաղդ հասարակութիւնը արագ քայլերով յետադիմում է վերոյիշեալ տեսակէտից:

Պարզ է թէ ինչպիսի հասարակ-վարչական յառաջադիմութիւն ենք պահանջում մենք այլակրօն համայնքներից:

Այժմ թողնելով ընդհանուր դատողութիւնները, պիտի գնանք նայելու թէ մեր պարզած տեսակէտներից հայ-բողոքական համայնքը ներկայումս ինչ դրութեան մէջ է գտնուում: Բայց նախ քան յօլաւածի այդ գլխաւոր նիւթին անցնելը, գուցէ ընթերցողը կը հետաքրքրէ իմանալ, թէ մենք ինչ աղբիւրներից պիտի օգտուենք բողոքականների ներկայ դրութիւնը նկարագրելու համար, ուստի աւելորդ չենք համարում այդ մասին երկու խօսք ասել:

Եւ ինքս բողոքական եմ և ծնւել եմ այն ժամանակ, երբ Շամախու հայերի մի մասը, որոնց մէջ նշանաւոր էր իմ հայրը և առհասարակ մեր ցեղը (Թաւադեանցները), Մաթէոս կաթողիկոսի հրամանի զօրութեամբ ազգային եկեղեցուց արտաքսւած էին, ըստ որում քահանաները իրաւունք չունէին նոցա մէջ որ և է կրօնական արարողութիւն կատարելու: Այս արդէն 4—5 տարեկան էի, երբ Մոսկուայից եկաւ Շամախի գեներալ սուպեր-ինտենդենտ Վարդ Բլումը և ի միջի այլ երեխաների ինձ ևս մկրտեց: Աս իմ սկզբնական դաստիարակութիւնը ստացել եմ բողոքականների դպրոցում, ուր մտել եմ 5 տարեկան ժամանակ և թողել եմ 12 տարեց:

Իմ ամբողջ անցուցած կեանքումս ապրել եմ բողոքականների մէջ, լսել եմ հազարաւոր քարոզներ, մասնակցել եմ հարիւրաւոր խորհուրդների, համաձայնել եմ, հակառակել եմ, հալածել եմ, հալածուել եմ... Նրեք տարի շարունակ ուսուցիչ եմ եղել բողոքականների դպրոցում, շատ տարիներ գրադարան եմ կառավարել, հարցեր եմ զարթացրել, Մշակ լրագրում շատ անգամ գրել եմ բողոքականների կեանքի այս ու այն երևոյթների վերայ և այլն... Ինչպէս ուրեմն ընթերցողը տեսնում է, բողոքականների մասին դատելու համար, կարիք չկայ ինձ դիմելու որ և է կողմնակի աղբիւրի, քանի որ ինքս ամեն ինչ աչքով տեսել եմ, ականջով լսել և ամեն ծանրութիւն սեփական ուսերիս վերայ զդացել և դեռ շարունակում եմ զգալ... Անցնենք հիմայ մեր յօդածի զլիսաւոր նպատակին։

Նախ և առաջ մենք չենք ուրանում, որ բողոքական համայնքի մէջ կան զարդացած երիտասարդներ, լուսաւորւած անհատներ, նոյն իսկ կանանց և օրիորդների մէջ։ Մի կաթովիկ երիտասարդ Ա. Սարգիսեանց իւր մի յօդածում խօսելով Ալիշանի մասին, ասում է հետեւեալ ոսկեղէն տառերով գրելու արժանի խօսքերը. «Եթէ այլակրօն հայը հայրենասէր է լինում, հաւատացէք որ նրա նմանը լուսաւորչական հայերի մէջ չէք կարող գտնել... Որքան ճշմարտութիւն այդ խօսքերի մէջ և սա շատ պարզ է։ Մի փթած կրօնամոլ հասարակութեան մէջ ծնւել, դաստիարակւել, ապրել և վերջ ի վերջոյ յայտնել որպէս մի հայրենասէր, յառաջադէմ բնաւորութիւն, — համաձայնեցէք, որ սա ամեն մի մարդու գործը չէ... Զէ որ կրակի ազդեցութիւնից բոլոր մետաղները ժանգոտում են և միայն ոսկին է պահպանում իւր փայլը... Ուրեմն ժանգոտւած ամբոխի մէջ չը ժանգոտուելու համար պէտք է ոսկեղէն բնաւորութիւն ունենալ... Այդպիսի աչքի ընկնող անձնաւորութիւններ պատահում են բողոքականների մէջ։ Նւ առհասարակ կան բաւական թւով բողոքական երիտասարդներ, որոնք նոյնպէս հետաքրքրւում և զբաղւում են ընդհանուր-ազգային խնդիրներով, նոյնպէս նախանձախնդիր են իրանց ազգակիցների յառաջադիմութեանը, որպէս և լուսաւորչական երիտասարդութեան կրթւած ու աղնիւ մասը։ Միայն թէ միւս կողմից նկատւում է այն ցաւալի երևոյթը

որ այդպիսի երիտասարդները առհասարակ համայնքի մէջ օտար են համարւում՝ ու սոցա վերայ հին սերունդի մեծ մասը ծուռ աչքով է նայում: Մի ժամանակ այդպիսի փոքր ի շատ, գործունեաց երիտասարդներից մի տեսակ կռտակցութիւն, բանակ էր կազմւած, որի մասին աւելորդ չի լինել մի քանի նկատողութիւններ անել:

1872 թւի, յունւարի 16-ին տեղի ունեցած սարսափելի երկրաշարժը մեծ փնտներ հասցրեց Շամախու ժողովուրդին, բայց առանձնապէս բողոքականներին: Երկրաշարժը տեղի ունեցաւ կիրակի առաւօտեան ժամի 10-ին, երբ համարեաւ բոլոր հասակաւոր բողոքականները հաւաքւած էին ժողովարան, ուր շուռով պիտի քարոզը սկսէր: Երկրաշարժը կործանեց աղաժարդկանց դահլիճը, որի աւերակների տակից նոյն օրը հանեցին 22 անշնչացած դիակներ (որոնց մէին էլ տողերս գրողի հայրն էր) և շատ վիրաւորւածներ, վախեցածներ և այլն, որոնցից յետոյ բաւական մեռնողներ եղան: Այդ անբաղդ գէպքից յետոյ շատ բողոքական ընտանիքներ կամ անհատներ գաղթեցին Բաղու, որը այն ժամանակները ժամ առ ժամ ծաղկող զրութեան մէջ գտնւելով, առանց երկրաշարժի էլ շատերին զրաւում էր, բայց երկրաշարժը առանձնապէս շատացրեց գաղթողների թիւը:

Գաղթականութիւնը այս գէպքում իւր մի լաւ կողմն ունեցաւ բողոքական համայնքի համար: Հայրենիքից հեռանալով շատ բողոքական երիտասարդներ ենթարկւում էին զանազան նոր ազդեցութիւնների և թուլացնում էին իրանց վերին աստիճանի կրօնամոլութեան եռանդը: Սոքա, որ մինչև այն օր ազօթելուց և քարոզ լսելուց բաց, ուրիշ ոչինչ չէին արել, այժմ սկսում էին մտածել, հետաքրքրւել կեանքի և ոչ-կրօնական երևոյթներով և խնդիրներով: Այդպիսիք Շամախի վերադառնալով ազգում էին շատ թէ քիչ և միւսների վերայ... Այդ ժամանակները մի քանի երիտասարդ բողոքականներ սկսել էին «Մշակ»-ի և «Մեղուի» համարները ձեռք բերել և ծածուկ կարդալ: Սակայն համայնքի մէջ դիրք ունեցող հին սերունդը, տեղեկանալով սոցա ծածուկ ընթերցանութեան մասին, «սիրով յանդիմանում էր» նոցա ասելով. «սուրբ գիրքը զլիններից զահալթ է եղել, որ պընդըրների վերայ էք փչացնում ձեր թանգագին ժամանակը»: Երբ յանդիմանւած երիտա-

սարդները պատասխանում էին թէ անդադար միւսնոյն կերակուրը ուտել չէ կարելի, համը կորչում է, պատասխան էին տալով՝ «ոչ, եթէ Յիսուսի սիրոյ մէջ թուլացած չը լինէք, այդպէս չէք ասիլ... Աւետարանից կշտանալ չէ կարելի, սուրբ զիւքը պիտի լինի մեր հոգիների միակ միութարիչը, նորա մէջ ամեն գիտութիւն էլ կայ... իսկ նորանից դուրս եղած գիտութիւնը «մարմնի» գործ է և անհաւատների գիտութիւն է»։ Այդպիսի զատողութիւնների վերայ մեր զարթնած երիտասարդները քթի սոսկին ծիծաղում էին, բայց չէին հակառակում և շարունակում էին իրանց միտքը թարմացնել...

Բողոքականների մէջ ընթերցանութեան տարածման մեծ զարկ տւեց «Մշակ»-ը, երբ ասպարէզ հանեց կրօնի ազատութեան խնդիրը։ Մեր խօսքը ոչ-կրօնական ընթերցանութիւն մասին է, որովհետեւ կրօնական գրեթէների ընթերցանութիւնը ոչ մի տեղ այնքան զարդացած չէ, որքան հայ-բողոքականների մէջ։ «Մշակ»-ի զարթնեցրած հարցով բողոքականները, ծեր թէ երիտասարդ, միանգամից հետաքրքրւեցան և այդ հետաքրքրութիւնը անդադար ածում էր։ Շատերը նոյն իսկ բաժանորդ գրեցին «Մշակ»-ին։ Կանոնաւոր կարգալ չիմացողները Շամախում հաւաքւում էին իւրաքանչիւր կիրակի երեկոյ ժողովարանի գահլիճում, որ երիտասարդ Ա. Համբարձումեանը ոտքի կանգնած բարձրաձայն կարդում էր «Մշակ»-ի և «Մեղու»-ի յօդաւանդները, որոնք վերաբերում էին վերոյիշեալ խնդրին... Ի միջի այլոց կարդացւում էին և այլ խնդիրներին վերաբերեալ յօդաւանդներ, մանաւանդ հետաքրքրւում էին թիւրքահայոց մէջ կատարւած երևոյթներով և Արծրունու ընդհանուր առաջնորդողներով... Իսկ շատերը առանձնապէս գրաւած էին Բաֆֆի վէպերով և աշխատում էին ձեռք բերել նորա առանձին գրեքով հրատարակւած աշխատութիւնները։ Այդպէս էր ժողովուրդը։

Իսկ մի խումբ երիտասարդներ աւելի լաւ էին ըմբռնել «Մշակ»-ի սկզբունքները, աւելի ճիշտ էին հասկանում, թէ ինչ է կամենում ասած լինել «Մշակ»-ը, զարթնեցնելով կրօնի ազատութեան խնդիրը։ Սոցանից ոմանք յարաբերութիւններ սկսեցին լուսաւորչական երիտասարդական շրջանների հետ, մասնակցեցին ընդհանուր ազգային ձգտումներին, անդամակցեցին բարեգործական բաժանորդութեան, սկսեցին Շամախում և Բագուում լուսա-

ւորչականների ընթերցարանները յաճախել, չը խորհեցին թափա-
րասէրների հետ միասին բէմ՝ դուրս գալուց, սկսեցին «Մշակ»-ին
թղթակցել և այլն և այլն...

Միւս կողմից լուսաւորութեան և հայրենասիրութեան եռան-
դով վառւած երիտասարդ բողոքականները սկսեցին ներքին գոր-
ծունէութիւն զարթնեցնել համայնքի մէջ... Նւ իրքան տարբեր էր
այդ գործունէութիւնը համայնքի սովորական գործունէութիւնից...
Սոքա նախ և առաջ սկսեցին անհամակրութեամբ վերաբերել
դէպի կրօնական պրոպագանդան: Յառաջադէմ երիտասարդները ոչ
միայն չէին աշխատում այս ու այն լուսաւորչականին գրաւել դէպի
լուծերական եկեղեցին, այլ և քննադատում ու ծաղրում էին հին
սերունդին, երբ նա կամենում էր ուրիշներին «փրկութեան լուսա-
ւոր ճանապարհը ցոյց տալ», ըստ որում երիտասարդները աշխա-
տում էին համայնքի ուշադրութիւնը իւր ներքին խաւարի վերայ
դարձնել... Նարժել համայնքի թմրած միտքը, մոցնել նորա մէջ
ինքնաքննական ուղղութիւն, զարթնեցնել սէր դէպի մտաւոր, բա-
րոյական և կուլտուրական յառաջադիմութիւն, ոգևորել նորան
ազգի ընդհանուր յառաջադիմութեան յոյսերով, ցրել նորա աւան-
դական նախադաշարմունքները, — ահա թէ ինչ ուղղութեամբ էր
գործում բողոքական նոր յառաջացած երիտասարդութիւնը, որոնց
մէջ աւելորդ չենք համարում յայտնել, որ գլխաւոր զեր խաղացող-
ներն էին Ե. Փիրբուզադեանց, Ն. Ղուկեանց, Սեդրակ, Աղէք-
սանդր և Պատուական Թառաջեանցներ, Ի. Մարկոսեան, Ս. Իււ-
նեանց և այլն...

Ի՞նչ արին սոքա... Նախ Բաղում մեր և Ն. Ղ. — ի. աշխա-
տութեամբ սկսեցին ժողովարանում գրական երեկոներ: Կիրակի
երեկոները ժողովում էին՝ ժողովարանի սենեակներից մէկում և
և մեզանից մէկը կարդում էր Բաֆֆիի գրաւածքներից կամ Հիւ-
սիսափալի հին համարներից և այլն և յետոյ խօսակցում էին: Այդ
երեկոյթները շատ դանդաղ էին յառաջանում և օրէցօր մասնակ-
ցողների թիւը պակասում էր: Սորա պատճառը այն էր, որ Ն. Ղ.
հիւանդ լինելով չէր կարողանում հարկաւոր եռանդը գործ դնել,
իսկ ես, որպէս յանկարծ ոգի առած մի ուսանող, տակոտ չէի պահ-
պանում գործի մէջ, օրինակ երբեմն այնպիսի գրաւածքներ էի մէջ

բերում, որ հին սերունդից շատերը դայթակղւում էին: Աւելի լաւ գործող դեռ չկար բողոքականների մէջ: Այդ երեկոներէ անուշով սկսեցինք փողեր հաւաքել և գրքեր ձեռք բերել և ահա այսօրից յառաջացաւ մի փոքրիկ դրաղարան, որը մի քանի տարւայ մէջ մի քանի հարիւր ընտիր հայերէն գրքեր ունեցաւ.— Յիշեալ երեկոները չը շարունակեցին, բայց գրադարանը շարունակեց քիչ քիչ հարստանալ և դիրք վերցնողներ ունենալ:

Սրանից յետ, երբ մենք արձակուրդների պատճառով ամառը Շամախում էինք, ընկերանալով երիտասարդների, Մարկոսեանցի և Թառաջեանցի հետ, համոզեցինք Սարգիս Վարպետին դրադարան-ընթերցարան հիմնելու: Սարգիս Վարպետը Շամախու հայ բողոքականութեան հիմնադիրն է, որը մնաց առանց ամուսնանալու և իւր ամբողջ կեանքը և ժամանակը նւիրեց հայ-բողոքական համայնքի աճելուն և խորին ծերութեան հասնելով՝ մեռաւ երկու տարի սրանից առաջ: Երբ մենք հարկաւոր նիւթերը ձեռք բերենք, գուցէ կը կարողանանք լոյս սփռել այդ անսովորական մարդու փոքր իշտոէ մանրամասն կենսագրութեան վերայ: Նորա ազգանունն էր Համբարձումեանց, բայց թէ բողոքականները և թէ լուսաւորչականները (որոնց մէջ նա բազմաթիւ յարգողներ ունէր) անւանում էին նորան Սարգիս Վարպետ: Եւ ահա դորան է որ համոզեցինք ժողովուրդի ծերերից համաձայնութիւն ստանալ, որ ժողովարանի սենեակներից մէկում դրադարան-ընթերցարան հիմնենք: Վարպետը ուրախութիւն յայտնեց և ոչ միայն խոստացաւ «ծերակոյտներին» համոզել, այլ և իւր սեփական գրքերից մի քանի հարիւր հատոր ընծայեց գրադարանին որպէս հիմք: Այդ գրքերի մեծ մասը թէև հոգւոր գրքեր էին, ի միջի այլոց մի շարք զանազան տեսակի և լեզուների աստուածաշունչներ, այնուամենայնիւ կային նոցա մէջ և կարեւոր ընթերցանութեան գրքեր, օրինակ Հիւսիսամիացի բոլոր տարիները, բաւարաններ և այլն... Բացի այդ, կիրակի օրը քարոզից յետոյ ամբիոնից յայտնեց ժողովուրդին մեր սկսած գործը և յորդորեց որ ամենքը իրանց տներում եղած գրքերից նւերներ տան գրադարանին... Վարպետի այդպիսի քաղցր վարմունքը գործել աշխատող երիտասարդների հետ, որ միշտ նորա յատկանիշն էր, բացատրւում

էր նորա այն զաղափարով, թէ երիտասարդների գործերին արգելքներ զնելով, նոքա աւելի կը սառչեն եկեղեցուց, աւելի կը հեռանան հին սերունդից, որ Վարպետին բողոքովին ցանկալի չէր: Այդպէս թէ այնպէս, նա իւր քաղաքականութիւնը ունէր, մենք էլ մերը... Նա աշխատում էր մեզ կապած սլահել եկեղեցու հետ, մենք էլ աշխատում էինք մեր գործը առաջ տանել...

Իւրաքանչիւր ամառ, երբ տողերիս զրոյը և մի քանի ուրիշ բողոքական ուսանողներ Բագից Շամախի էինք գալիս, ամբողջ ժամանակը գործ էինք զնում, կամ գոնեա աշխատում էինք գործ զնել բողոքական երիտասարդութեան մէջ նոր լուսաւոր ձգտումներ մտցնելու և տարածելու համար: Այդ նպատակով ոչ միայն մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ աշխատում էինք բանալ երիտասարդների կաշկանդւած միտքը, այլ և շաբաթը մի քանի անգամ ժողովներ էինք ունենում ուսումնարանի, կամ գրադարանի սենեակում, ուր կարգում էինք հայոց գրականութեան մէջ լոյս տեսնող նշանաւոր նոր գրքերը, կամ ինքնուրոյն յօդածներ զանազան խնդիրների վերաբերեալ, որոնք որքան էլ աշակերտական գրչի ծնունդ լինէին, որքան էլ անփորձ և զեռ լաւ չը հասունացած զաղափարներից բղխէին, այնուամենայնիւ ունենում էին այն օգուտը, որ կրօնական կրկնութիւններով ելուած, թմրած մտքերը սկսում էին շարժել, սկսում էին մտածել... Շատ երիտասարդներ մի տեսակ սթափուում էին քնից, Բաֆֆի «Գաւթի թէկը» այնտեղ, ուր մնաք բարեւ ասելով իւր ծնողաց գերեզմանի վերայ, երդւում է, շատերի աչքից արտասուք էր վայր բերում: Ամենատղէտ բողոքական երիտասարդների մէջ հայրենասիրութիւնը և լուսաւորութեան սէրը սկիզբ էր առնում և այդպիսի յաջողութիւնը տեսնելով մենք, փոքր ի շատէ կըթւած երիտասարդներս, ամեն ամառ մի նոր միջոց էինք գտնում երիտասարդութիւնը զբաղեցնելու համար, կամ ինչպէս հին-սերունդի ներկայացուցիչներից ոմանք ասում էին՝ «մի նոր հողկայ (օյին, նորութիւն) էինք չաղ անում երիտասարդներին տիրօջ ճանապարհից հեռացնելու (?) և մարդկային ուսման մօտեցնելու համար»:

Աւելորդ չեմ համարում ակնարկեալ «հողկաններից» մի քանիսի հետ ընթերցողին ծանօթացնել:

1. Տեսնելով որ բողոքական դպրոցում պատահում են երեխաներ, որոնք կամ որբեր և կամ չքաւոր ծնողների որդիք լինելով հաղուստի և այլ պարագաների համար նեղութիւն են քաշում, մինչև անգամ կային այնպիսի բողոքական երեխաներ, որոնք նիւթական պակասութիւններ ունենալով նոյն իսկ դպրոցական կրթութիւնից զուրկ են մնում, երիտասարդների մէջ միտք չղացաւ հիմնել մի կասսա, որին իւրաքանչիւր մասնակցել ցանկացող պիտի վճարէր օրական մէկ կոպէկ (վճարելով ի հարկէ ոչ ամեն օր, այլ որոշ ժամանակներում): Բոլոր երիտասարդները ուրախութեամբ մասնակցեցին այդ կասսային, և գործը զլուծւեալ եկաւ: Մտադիր էինք այդ կասսայի համար նպաստ ստանալ նաեւ հասակաւորներից և սորա համար Վարպետը համաձայնեւ էր մի կիւրակի ժողովրդի ուշադրութիւնը կոպէկանոց կասսայի վերայ հրաւիրել: Բայց մէկ միջանկեալ դէպք վիրաւորեց Վարպետին և նա իւր խօսքը յետ առաւ: Ահա թէ ինչ դէպք էր այդ: Շաբաթ երեկոները Շառնիսու բողոքականները ունենում են «աղօթքի ժողով», որտեղ նախ հաւարակութեան անդամներից մէկը (հերթով) կարճաօտ քարոզ է խօսում և յետոյ հրապարակաւ աղօթում է, որից յետոյ աղօթում են և ուրիշ մի քանի պարոններ ի հարկէ նոյնպէս բարձր ձայնով, որ ամենքին լսելի լինի: Այդ ժամերին յաճախում էին և շատ երիտասարդներ, թէև ոչ աղօթելու մօտ: Մի այդպիսի երեկոյեւր քարոզիչը իւր քարոզը ու աղօթքը վերջացրեց, Վարպետը դարձաւ դէպի երիտասարդները և ասաց. «Թէ եղբայրք և թէ մանաւանդ ես շատ ցանկանում եմք, որ վերջապէս մեր երիտասարդ եղբայրների սրտից բղխած փառաբանութիւնն էլ լսենք և ուրախանանք, ուստի այս գիշեր կը խնդրենք որ աղօթողները լինեն Աւարակ, Իսրայէլ և Պատուական եղբայրները...» Ուրեմն աղօթելը առաջարկում էր այն երիտասարդներին, որոնք մտադիր էին միւս օրը Վարպետի միջոցով հասակաւորներից նպաստ ստանալ իրանց հիմնած կասսայի համար: Բայց չիշեալ երիտասարդ եղբայրներից և ոչ մէկը ձայն չը բարձրացրեց, և ծերակոյտները (այսպէս են անւանում համայնքի հասակաւորները) ստիպած եղան դարձեալ իրանք կատարել աղօթողների դերը: Այդ դէպքից Վարպետը խիստ վիրաւորեալ էր, ուստի և միւս օրը նրան խօսացնել չէր լինում...

Մուռացաց ասել, որ մենք աշխատում էինք և կանանց միջից մեր կասսային մասնակցողներ ունենալ, բայց վերոյիշեալ աղօթքի գիշերից յետոյ մեզ հակառակօրէ հասակաւորներից ոմանք մեր առաջը կտրեցին ու, մինչև որ մենք շունչ կառնէինք, հիմնեցին կանանց մէջ մի նոյնպիսի կողեկանոց կապա «Ճշմարտասիրաց ընկերութիւն» անուեով, որը պիտի նպաստէր «Ճշմարտութիւնը տարածելու» գործին: Մի բոլորովին համանման միութիւն էլ հիմնեցինք նոյն տարին Քաղւի մէջ:

2) Երկրորդ «հողիւն» որ նամակում մի ուրիշ ամառ «չաղ արինք», այդ հոգաբարձական հարցի լուծումն էր:

Գեո եօթանասնական թւականներից առաջ բողոքականները ընտրել էին իրանց միջից (առանց որ և է քահարկութեան) 12 հոգաբարձուներ, որոնք առանց որ և է և երբ և իցէ հաշիւ ներկայացնելու ժողովրդին, կառավարում էին եկեղեցու տնտեսական և այլ գործերը, որպէս իրանց խելքը կարում էր: Այդ 12 հոգաբարձուներից մի քանիսը երկրաշարժի ժամանակ ժողովարանի աւերակների տակ մեռել էին, միւսները ժամանակի ընթացքում էին մեռել, ոմանք էլ վերջնականապէս Քաղւ էին գաղթել, այնպէս որ վերջին ժամանակները մնացել էին միայն երկու ծերունի հոգաբարձուներ, որոնք արդէն տասնութ տարի շարունակ իրանց համարում էին հոգաբարձուներ, ու համայնքի մէջ ոչոքի միտքը չէր դալիս, թէ ըստ «սրլոթենիացի» բողոքական եկեղեցին «պարտաւոր է երեք տարէնը մէկ անգամ հոգաբարձական ընտրութիւններ անել»: Այդ 18 տարիներում տասնեակ հազարների հաշիւներ էին միմեանց խառնւել, կորածը կորել էր, փչացածը փչացել, բայց ոչ հաշիւ կար, ոչ էլ հաշիւ պահանջող և ոչ էլ հաշիւ տուող... Բայց վերջապէս ժամանակը մօտեցել էր, որ այդ մասին պիտի խնդիր զարթնէր: Եւ ահա մի ամառ Քաղւից եկած մի քանի երիտասարդներ, ընկերանալով նամակում եղած մի քանիսին, որոնց մէջ մանաւանդ դեր էր խաղում քաղաքական զգրոցի տեսուչ Է. Փիլբուդաղեանցը, կազմեցին մի փոքրիկ խումբ, որը սկսեց տարածել ժողովրդի մէջ նոր հոգաբարձութիւն ընտրելու միտքը: Երիտասարդները գնում էին խանութները և մասնաւոր խօսակցութիւններով համոզում էին ժողովրդին թէ պէտք էր նոր ընտրութիւն անել: Ժողովրդի մէջ

էլ արդէն գոյութիւն ունէր մի խուլ գանգաւ վերաբերեալ ինչ որ խառնեաժ հաշիւներէ: Եւ ահա դործը սկսեց գլուխ վալ: Սկսեցին նախապատրաստական ժողովներ անել: Երկու հոգաբարձուներից մէկը արդարացի գտաւ ժողովրդի պահանջը և ինքն էլ մասնակցեց խորհուրդներին, իսկ միւսի քէֆին շատ զիպել էր «Բագւից կրկին եկած չար սատանաների» արարքը, ուստի և խորհուրդներից հետու կանգնեց և ոչինչ նոր ընտրութեան մասին լսել չէր ուզում: Այնուամենայնիւ երիտասարդները իրանց նպատակը իրագործեցին: Երկու կիրակի երեկոներ նախապատրաստական ժողովներ արին և երրորդ կիրակի երեկոյեան ընտրութեան ժողովը կայացաւ, ուր առաջին անգամ Շամախու բողոքականները ըմբռնեցին, թէ ինչ է նշանակում կանոնաւոր քւէարկութիւն: Այդ ժողովում հին հոգաբարձուներից ոչ մէկը չընտրւեց, իսկ ընտրւած 12 հոգաբարձուներից կէսը երիտասարդներ էին: Նախագահ հոգաբարձութեան ընտրւեց միաձայն է. Փիրբուղանց:

Նոր ընտրութեան հետեանքն այն եղաւ, որ թէև հին խառնշտորած հաշիւները նորոգելու հնար չկար, բայց գէթ այժմ կանոնաւոր հաշւապահութիւն սկսեց: Հին հոգաբարձութեան դործունէութեան մասին զազափար տալու համար բաւական է յիշել, որ, ինչպէս նոր հոգաբարձութիւնը երեան հանեց, եկեղեցու գումարները և խաղարկական տոմսակները դրւած էին քիթը կախող հոգաբարձուի եղբօր անունով Բագուի բանկերից մինում, իսկ օրինակ՝ տոմսակների կտրոնների մասին ոչինչ յայտնի չեղաւ... Ինչ էլ լինէր, գոնէ այժմ այդ անկանոնութիւններին վերջ տրւեցան:

Ինչպէս մեր պատմաճներից ընթերցողը տեսնում է, բողոքական համայնքը սկսել էր սթափել իւր կրօնամոլ թմրածութիւնից, սկսել էր ճշմարիտ յառաջադիմութեան քայլեր անել: Մենք բոլորը չը պատմեցինք, այլ մի քանի օրինակներ բերինք ցոյց տալու համար, թէ ինչպիսի ուղղութեամբ էր գործում երիտասարդութիւնը: Սակայն հին սերնդի կողմից նոյնպէս ընդգիմութիւն էր յայտնւում... Տարաբաղդաբար հէնց այդ ժամանակներում յայտնւեց բողոքական համայնքի մէջ նոր քարոզիչ սալմաստեցի Գրիգոր Գէորգեանցը, որը ազդեցութիւն ձեռք բերելուց յետո՛ւ մեծ արգելք դարձաւ բողոքականների մէջ լուսւորութիւնը տարածելու գործին: Ուստի այդ զօրեղ մարդու վերայ արժէ մի լուրջ կանգ առնել:

(Կը չարունակւի)

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՅՆէ, ժօրժ.—Գոխոր Ռամօ, «Գոյութեան կռիւներ»: Ֆրանսերէնից թարգմանեց Մ. Խանդավերեան. Մոսկւա, տպարան Մկրտիչ Բարխուդարեանի. 1891 թ., գինն է 80 կոպէկ:

Նրկար տարիներին ընթացքում մարդկային միտքը կաթողիկ եկեղեցու ճնշող ազդեցութեան տակ գրեթէ անշարժ մնալուց լիտ, միջին դարերում, կեանքի նպաստաւոր հանգամանքների ներքոյ, նորից սկսում է արթնանալ, սկսում է իւր իրաւունքները պահանջել: Բեֆորմացիան մի ուժեղ հարւածով տատանեց, տեղից շարժեց կաթողիկ եկեղեցու հիմքը: Գարեբով ճշմարտութիւն համարւած սկզբունքները սկսեցին հարց դառնալ ու քննութեան ենթարկւել: Մարդիկ չը կամեցան ալիւս աւանդութիւններին կուրօրէն հաւատալ, ալ կամեցան ըմբռնել, հասկոնալ աչն ամենը, ինչ որ մինչև աչն ժամանակ երկխաւական պարզաորտութեամբ ընդունել էին... Մարդկային միտքը սկսեց աճել, զօրեղանալ փոքր առ փոքր և ահաւաճել եկաւ վերջապէս աղղղէս անւանւած անդլիական դրական ժիլիստիակութիւնը, որը չը բռնականա-

ցաւ ընթերմացիալի ձեռք բերած չաղթութեամբ, ալ կատկած չալտնեց ոչ միայն դէպի եկեղեցու ալ ու աչն վարդապետութիւնը, ալ և հարց դարձրեց առհասարակ եկեղեցու և կրօնքի մինչև աչն ժամանակ ամենազլխաւոր ճանաչւած հիմունքների մասին: Նոր ժիլիստիակութիւնը Ֆրանսիական էնցիկլոպեդիստների միջոցով աւելի և աւելի տարածւեց ժողովրդի մէջ ու չառաջ բերաւ թէ գիտական ասպարէզներում և թէ հէնց առօրեալ կեանքի մէջ երկու հակառակ ուղղութիւններ, որոնց մէկի նպատակն էր մարդու բոլոր գաղափարները բլթեցնել մտքից, որամաբանութիւնից, իսկ միւսը կամենում էր կրօնը ու եկեղեցին զերծ պահել մտքի աղղեցութիւնից, պեղելով թէ կրօնական և եկեղեցական ճշմարտութիւնները չէ կարելի մտքով ըմբռնել, չէ կարելի հետազօտել, քննել, ասպարեցանել, ալ միայն պէտք է հա-

ւատալ... Երկու ուղղութիւնների մէջ էլ չափոնւեցան ծայրահեղութիւններ: Րէալական ուղղութիւնը համոնելով ծայրահեղ մտտերիւղիւղմին սկսեց պնդել, թէ տիեզերքը պատահական ուժերից պատահմամբ չառաջ եկած աննպատակ կազմութիւն է, թէ մարդը ուրիշ բան չէ, բայց եթէ մի քմիական բաղադրութիւն է ալլն... Սուրահակառակ դոգմատիկական ուղղութիւնը ի դիմաց տեղեւորգիւղի բնդունում էր, թէ ոչ միայն տիեզերքը ստեղծւած է նախախնամութեան ձեռքով, ալ որ առհասարակ բնական օրէնքները ու դօրութիւնները ոչինչ նշանակութիւն չունին, քանի որ իւրաքանչիւր երեւոթի մէջ դործողը միակ նախախնամութեան մասն է, որը և ամեն բան լաւ ու խելացի է կատարում... Հետևապէս մարդու միակ նպատակը պիտի լինի հաւատալ և համաձայնել միայն ալն քոյրի հետ, ինչ որ կատարւում է և ոչ թէ աշխատել բնական երեւոթները ըմբռնել իւր մտքով և ծառայեցնել նոցա իւր կամքին:

Հաւանական է, որ չեչեւ երկու չկոյաներն էլ մասամբ իրաւունք ունին, երկուսի բերած հիմունքներն էլ իրանց մէջ որոշ ճշմարտութիւններ պարունակում են: Բայց զուտ ճշմարտութիւնը կը չափոնւի միայն ապապալում, երբ բաւականաչափ ֆոկտեր հաւաքւած կը լինեն, երբ օժանդակիչ շատ գիտութիւններ, որոնք դեռ կամ նոր են ծնւած, կամ շատ քիչ են ծաղկած, կամ նոյն իսկ դեռ ծնւած էլ չեն, պարզւած ու մշակւած կը լինեն... Երբ դալ ժամա-

նակ երբ բաւմաթիւ գիտութիւնները ալնքան նիւթ կունենան, ալնքան հարստացած կը լինեն, որ ալթմիան ամենամութ խնդիրները իրանք իրանց կ'որոշեն... Ճշմարտութեան լոյսը կը թափանցէ նոյն իսկ ամենակոյր աչքերի մէջ և մարդիկ կը տեսնեն իսկապէս... Միայն ալք երջանիկ ժամանակին համոնելու համար հարկաւոր է համբուրութեամբ հետազօտել, ուսումնասիրել, ճշմարտութիւնը համաստութեամբ որոնել: Ալք ճշմարտութեանը դոնելուն նըպատում են վերոյիշեալ երկու հակառակ չկօլաները, որովհետև նոքա մրցութեան մէջ գտնւելով, իւրաքանչիւրը իւր սիրած առարկաները աւելի ևւանդով է քննում, աւելի մեծ ուշադրութեամբ է հետազօտում խնդիրները: Ֆրանցիկ նոր և տաղանդաւոր գրողներից մէկը՝ Ժորժ Օնէն իւր ներկալ վէպով շոշափում է ալք խնդիրը, բայց ինչպէս է նա դնում խնդիրը, որքան է պահպանւած նորանում հոգեբանական ճըշդութիւնը, ալք կը տեսնենք ներքև:

Տաղանդաւոր վիպասանը վերին աստիճանի պալծառ դոններով և շատ հրապուրիչ լեզուով նկարագրում է մեղ մի բնտանեկան կեանք, որը ունի բաղաւոր և հանգիստ լինելու շատ նպատաւոր հանգամանքներ: Սակալն ալք կեանքը պառնում է ծանր, աննորմալ և վերջերում կատարելապէս թշաւ միայն ալն պատճառով, որ տաղանդաւոր բժիշկ գոկտոր Ռամօն մի հաստատամիտ մատերիալիտ է, իսկ նորա սիրած կիւնը մի բարեկաշտ, աստուածաթախ, ստատիկ կրօնասէր կաթ ոլիկունի է, որը

հէնց ամուսնանալու օրերից սկսում է աշխատել իւր ամուսնուն «բարեփոխել», այսինքն դարձնել նորան ջերմեւանդ աստածապաշտ։ Գոկտորը ոչ մի առիթ չէ տալիս իւր կնոջը իրանից վշտ սնալու, սիրում է նորան բոլոր սրտով, ամենալն հարգանքով է նայում նորա կրօնասիրութեան և ազօթասիրութեան վերայ... Անուամենայնիւ ջերմեւանդ կինը չէ բաւականանում սորանով և ամեն կերպ աշխատում է ամուսնուն փոխել և երբ տեսնում է իւր ջանքերի անպտուղութիւնը, սկսում է արհամարել, ատել և վերջ ի վերջո՝ սիրահարել մի գերմանացի նկարչի վերայ, որը իւր գաղափարներով համապատասխան էր կաթոլիկուհու իղէաներին։ Այդ սիրահարութեան պտուղը լինում է մի աղջիկ, որը խաբւած դոկտորը իրանից չառաջացած է համարում և մինչև նորա չափահաս դառնալը ոչինչ չէ իմանում իւր կնոջ գործածի մասին։ Գերմանացի սիրահարը, որին դոկտորը շատ հարգում էր ու ազատել էր նորան մի մեծ տնտեսական նեղութիւնից իւր սեփական միջոցներից տասնեակ հազարներ զոհելով, թողնում է ամեն ինչ և հեռանում է Պարիզից։ Բայց այդ բոլորը չափնի է լինում դոկտորի բարեկամ Տալմանին, որը մի բարեսիրտ ու կրօնասէր գիտնական էր և կատարւած սխալը անողղելի համարելով, ամեն կերպ աշխատում էր դոկտորի և նորա ընտանիքի կեանքը չը խանգարել։

Այդ ժամանակներում տեղի է ունենում Թրանս-գերմանական պա-

տերազմը և գերմանացիք պաշարում են Պարիզը։ Մի օր պարիզցիների վերցրած գերլորերի մէջ գտնւում է և ծանր վիրաւորւած մեր գերմանացի նկարիչը, որին Ռամօն կամենում է բժշկել, բայց չէ չաջողւում, վերջինս մեռնում է։ Տիկին Ռամօն մայրն էլ փոքր առաջ մեռած է լինում։ Եւ ահա ջերմեւանդ կաթոլիկուհին հաւատացնում է Տալմանին, որ այդ բոլոր անբաղդութիւնների պատճառը Ռամօն անհաւատութիւնն է, թէ նորա բոլոր շրջապատողները անբաղանալու են և թէ մեռնելու հերթը այժմ հասել է իրան, աիկին Ռամօն։ Եւ իսկապէս շատ չ'անցած ևեր հերոսուհին մեռնում է։

Գոկտոր Ռամօն աչքքան վշտացած է լինում իւր պաշտած կնոջ մահով, որ փակւում է մի սեննակում և չէ կամենում ոչ մի հիւանդին ալ ևս օգնութեան հասնել, քանի որ իւր կինը չ'կար Բայց Տալմանին չաջողւում է հանել նորան ալդ դրութիւնից։

Անցնում են տարիներ և փոքրիկ աղջիկը մեծանում է և սիրահարւում մի արժանաւոր երիտասարդի հետ, որի մեծ հօր աշխատութեամբն էր դոկտոր Ռամօն իւր բաղբի սկիզբը դտել։ Ռամօն և Տալմանը նշանում են սիրահարւածներին և ուրախ են նոցանով։ Բայց մի դէպք ամեն ինչ խանգարում է։ Գոկտորը, իւր աղջկաչ նշանադրութեան միւս օրը, մտնում է իւր հանգուցեալ տիկնոջ սենեակը (ուր մտնում էր նա տարէնը մէկ անգամ) նորան վիշելու համար։ Այստեղ նա գտնում Միւնզելի (գերմանացու) թագաւորած մինիատիւր լու-

սանկարը, լետոյ էլ նորա գրած մի նամակը, որը և պարզում է զոկտոբրին իւր խաբւած լինելը: Ռամօն կատաղում է և սկսում է ոտի տակ փչել հանգուցեալ կնոջ երեւի պատկերը, որ Միւնզելի գործն էր: Աղմուկի ձայնից ներս է մտնում օրիորդը, որի վերաջ հայրը գոռում է և հրամայում է կորչել իւր աչքիցը: Խեղճ աղջիկը ուշաթափ գլորւում է դետին: Սորան տանում, պառկեցնում են և զոկտորն էլ գնում է իւր սենեակը և կամենում է թոյն քնդունել, բայց Տալմանը վրայ է հասնում և խանդարում է: Աղջկը անյուսալի պառկած է և իւր հօրն է ուզում տեսնել: Բայց Ռամօն մերժելով Տալմանի աղերսանքը չէ գնում հիւանդի մօտ «բաւական համարելով 18 տարի խաբւած լինելը»: Վերջապէս զոկտորը ինքն իրան խղճահարւում է և գնում է հիւանդի մօտ, որին համբուրելով սաստիկ արտասուք է թափում: Այս բոլորից սկսում է Ռամօն սրտում մի նոր լոյս... Նա սկսում է արհամարել իւր համոզմունքը, անբաւականութիւն զգալ բոլոր գիտութիւններից և զգալ որ իւր մէջ կա մի ուժ, որը գործում է հակառակ նորա կամքին: Ռամօն կամենում է ատել իւր կնոջ աղջիկը, բայց աներևութ ուժը ստիպում է սիրել... Սորանից զոկտորը գալիս է աչն եղբակացութեան, թէ աչ աներևութ ուժը նախախնամութիւնն է, արարիչն է, Աստուծ է... Ուրեմն նա դառնում է հաւատացեալ...

Աղջկը առողջանում է: Նրկու ամսից լետոյ կատարում են պսակադրութիւնը և կեղեցու մէջ: Ռամօն

ուրախ է, հանգիստ է և մի նոր մարդ է դարձել: Աղբիւնի (աղջկա) մէջ նա տեսաւ մի հրեշտակ — հաւատացնում է հեղինակը — որ ուղարկւած էր իրեն մխիթարելու և արփելու համար ամեն տանջանքներից: Նրա մէջ մնացած ամեն դառնութիւնները և վշտերը հալեցան բերկրական հիացմունքից և լցւած խորին երախտագիտութեամբ՝ նա ծունկ չոքեց: Տալմանը լսելով Ռամօնի ցածրածափ շնորհը, թեքեց գէպի նա և որոշեց աչ սրտաբուլիս խօսքերը — Աստուծ իմ, Աստուծ իմ... Աչ անատուածն էր, որ աղօթում էր աղպէս»:

Ուրեմն մեր հերոսը ապաշխարեց, նա մատերիալիստ էր և ալժմ դարձաւ հաւատացեալ ատուածապաշտ: Ինչ որ հարկաւոր էր ապացուցել, ապացուցեց, բայց շատ անտրամաբանօրէն... Մի տաղանդաւոր և հաստատամիտ գիտնական փոխեց միայն աչն պատճառով, որ զգաց թէ ինքը հակառակ իւր կամքին սիրում է աչն արարածին, որին պիտի խօսկապէս ատէր... Մենք չենք հասկանում թէ աչտեղ ինչ առանձին հրաշք էր տեսնում մեր զոկտորը, որը չը նախելով իւր մատերիալիստական գաղափարներին, իւր ամբողջ կեանքում եղած էր ժրաջան, ճշմարտութիւն սիրող և մարդասէր մի մարդ: Յանկարծակի անելով իւր երկար տարիներ խաբւած լինելու գիւտը, նա բնականաբար զարհուրեց, կատաղեց և ատեց ոչ միայն Միւնզելին (կնոջ սիրահարի) ժառանգին, աչ և ամբողջ աշխարհքը... Բայց երբ կատաղութեան սարսափելի ժա-

մանակամիջոցը անցաւ և Ռամոն սկսեց հանդարտել, նա, որպէս իւրաքանչիւր փրկսովազ-դիտնական, սկսեց սառն կերպով դատել և եկաւ ալն եզրակացութեան որ ինքը իրաւացի չէ լիբարերում զէպի մի անմեղ աղջիկ, որը ինքն ըստ ինքեան բոլորովին մեղաւոր չէր... Եւ ահա մարդասէր դիտնականը նորից սկսեց սիրել անմեղ արարածին, որին նա ծնւելու օրից սկսեալ փաշտօնէն էր Վլատկ ամեն ինչ կատարեց ըստ իրավունքն անկանաւոր և խորթ Ոնէն իզուր է կարծում, թէ ալը երեսութը կարող էր ուրացնել տալ մի գիտնական մատերիալիստին իւր համոզմունքը:

Մի քանի խօսք էլ թարգմանչին «Երեւում է մեր դարի նիւթականութեան մէջ կալ մի զաղտնի գորութիւն — ասում է թարգմանիչը իւր երեսի լաւաջարանի մէջ — որ ճիշդ է թափում արմատախիւ անել բոլորի սրտիցը ալն լստակ և անզրդւելի հաւատը, որն ունէին մեր նախնիքը և որով միայն մարդ կարող է երջանիկ ապրել մեր աշխարհում (լաւ լսէք) այս մեղսաւից և ապակաւանած ժամանակներում: Այլու էք, պ. թարգմանիչ, ապացուցել մեզ թէ մեր նախնիքը երջանիկ էին, կամ թէ արդեօք թնչի մէջն էք գտնում մեր ժամանակների աւելի միղսաւից և ապականւած լինելը... Եւ միթէ դուք կարծում

էք, թէ կեանքը երջանիկ կը դառնայ, չէնց որ մարդիկ կը սկսեն մի կողմն թողնել դործը, աշխատանքը, դիտնական հետազոտութիւնները, կուտուրական քաղերը, և ալն և կը պարագեն Ձեր կամեցածի պէս, աղօթելով, անդադար եկեղեցի լսեալներով և մանաւանդ Ձեր թարգմանութեան նման կեղծ-կրօնասիրական գրքեր կարդալով... Հաւատացնում ենք Ձեզ, որ չէնց ուղիղ ալը պէս են անում կաթոլիկ և բողոքական հաւերը, որտեղ իւրաքանչիւր ընտանիքի մէջ Ձեր թարգմանութեան նման տասնեակ գրքեր են գտնուում... Բայց չը նախելով սորան, նոքա, ալնքն ալակրօն հաւերը, ոչ աւելի երջանիկ են, ոչ էլ նոյն խակ աւելի բարձր են կանոնած բարոյապէս, քան լուսաւորչական հաւերը... Կեանքը եթէ ոչ երջանիկ, գոնեալ փոքր ի շատէ մարդավայել դարձնելու համար, մեղ անհրաժեշտ է ճշմարիտ մտաւոր զարգացում, կուտուրա, անդադար աշխատութիւն զէպի լաւաջ և ոչ զէպի (նախնիքը), ինչպէս ալը դուք կամենում էք: Բայց մանաւանդ մեզ հարկաւոր է լաւ-ըմբռնել տնցած «երեսի ժամանակի» զարհուրելի մտաւոր խաւարի տաւած վեհաները և փախչելով նորանից մօտենալ ապագա լուսաւոր ժամանակին...

Ս. Թ.

NORAYR DE BUZANCE, Néandre. — De l'urgence d'une édition critique des textes arméniens. Roma, 1892. (ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՅԻ. — «Հայոց բնագիրների մի քննադատական հրատարակութեան անհրաժեշտութեան մասին»): Արտատպւածք „Reale Accademia dei Lincei“ ակադեմիայի նիստերի հաշից. նիստ առ 18 զեկտեմբերի 1892 թ.:

Իւր այս բրոշիւրում պ. Նորայր Բիւզանդացին պնդում է որ անհրաժեշտ է հայոց հին մատենագիրները հրատարակելուց և նոցա քննադատելուց առաջ՝ ձեռագիրները նախ բազմաթիւ և աղբյւրով վերականգնել իսկական բնագիրները, և որ միայն իսկական բնագիրները հրատարակելուց վտոյ կարելի է կադմէլ հայոց գրաբառի քերականութիւնը և բառարանը: Այդ կողմից, ասում է հեղինակը, ամեն ինչ նոր պիտի սկսել՝ Հայոց պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ժամանակագրութիւնը, քերականութիւնը և բառարանը, որպէս նաև հին գրականութեան պատմութիւնը: «Եթէ Չամչեանի, Խնճիճեանի, Աւգերեանի և Բադրատունու աշխատութիւնները, որ շատ գնահատելի են իրանց ժամանակի համար, ալ ևս չեն կարող միւլ լիովին ծանօթացնել մեր ազգի հին պատմութեան, մեկ երկրի աշխարհագրութեան: և մեր հին բառարանի հետ, միւս կողմից աւելիսի գրքեր ինչպէս հայր Զարբանակեանի Մատենագրութիւն Հայոց և նորա աշխատութիւնը հին հայոց թարգմանչական գրականութեան մասին կարող են չփոթեցնել որոնողներին իրանց անլիակատար կամ անճիշդ

տեղեկութիւններով»:

«Իմ հաշիւներս զրգելու համար, որ ձեռնարկի հայոց մատենագիրների քննական հրատարակութեանը, ես Կ. Պոլսում, 1880 թւին, հայոց լեզուագիտութեան մի փորձ հրատարակեցի՝ Հալկական բառաքննութիւն վերնագրով: Եթ տարի վտոյ ևս սկսեցի հրատարակել Ստոկհոլմում, մի համեստ հանդէս «Բննատէր» անունով, որը ես նշանակել էի հայոց լեզուն և գրականութեան վերաբերեալ խնդիրների համար: Առաջին տետրը լոյս տեսաւ 15 մայիսի 1887 թ., և երկրորդն ու վերջինը՝ 3 դեկտ. նոյն 1887 թ.»:

Բայց հեղինակը լաւանում է թէ իւր գիտաւորութեան իրագործումը ձեռամենից առաջ կախած է նրանից, թէ որքան ազատ մուտք կ'ունենալ ինքը բոլոր մասնաւոր գրադարանների մէջ:

«Ես կարծում էի թէ թերեւս որ և է ծառայութիւն մատուցած կը լինէի օտար հայկաբաններին, եթէ մի հատորում ամփոփէի այն բոլոր սրբագրութիւնները, որ ես ունեմ արած մեր հին մատենագիրների մասին: Աւտորիտաւ Թրիգրիս Միւլլէրն է, որ կը ցանկար Կորիւնի «Ալարք Սրբոյն Մաշաոցի» և Թոմաս

Արժրունու Պատմութեան ձեռագիր-
ները բաղդատել, խտրելու պրոֆ.
Տէլա՛ն է որ կ'ուզէր Ղազար Փար-
պեցու Պատմութեան և Ստոյն Կա-
լէսթինէսի նոր հրատարակութիւնը.
Ֆրանսիայում պրոֆ. Ա. Կարրիէրը
և Անդրիպուս Գ. Ա. Շրումֆը դո՛-
չէն Սերէոսի Պատմութեան երկու
հրատարակութիւններով:

«Արդ, ես ուսումնասիրել եմ ալդ
և շատ ուրիշ հեղինակներին» («Նախ-
նիք» խորագրով մի գրքում, որի
համար ես աշխատում եմ ամեն եռան-
դով և ուժով: Իմ աշխատութիւնը
ընդգրկում է 13 դար, սկսած Նզ-
նիկի («Նզձ Ազանդոց» գրքից (Մ լոյ
դար) մինչև Զաքարիա սարկաւազի
«Պատմութիւնը» (XVII-րդ դար):
Առանց չափանութիւն ունենալու
բոլոր միութիւնները լուսաբանած
լինելու, ես, սակայն, լոյս ունեմ, որ
թւով 10.000 սրբագրութիւններ կ'օգ-
նեն որ աչն մատենագիրներին աւելի
լաւ հասկանա՞նք և ուղղենք բաղմա-
թիւ սխալ կարծիքներ, որ ունեցել
են ցաղմեան կրկնակոտները:

Պր. Նորայրը ապա թւում է աչն
բոլոր 20 եղանակները, որոնց մի-
ջոցով նա ուղղագրում է սխալները
և բերում է մի քանի օրինակներ

իրը նմուշ: Այսպէս Մովսէս Խորե-
նացու տպագրութեան մէջ Արդա-
մոզան անունը պ. Նորայրը ուղղում
է Արդամուհան, իրր աղաւաղումն Ադ-
րամէլի կամ Ազրամէլէքի:

Նունպէս Խորենացու այս խօսքը՝
Ասի թէ Արտաշէս Որոյ մասն ինչ
ի Հռոմալեցոցն և ի Հրէից առեալ
ընակեցոյց վրան օք առ. Կասթից,
պ. Նորայրը լղղում է այսպէս՝
Ասի թէ Արտաշէս Որոյ մասն ինչ
ի Հռոմալեցոց և ի Հրէից առեալ
ընակեցոյց առ Վրկան աւք Կաս-
թից»:

Անանիայ Շիրակեցու այս տողը՝
Արիստիդէս Մերրի փիլիսոփայ Աթե-
նացի...», պ. Նորայրը ուղղում է՝
«Արիստիդէս՝ մեր իրի (ալսինքն
մեր հաւատի) փիլիսոփայ Աթենացի»:

Եւ ամեն մի սրբագրութեան հա-
մար պ. Նորայրը բերում է արդա-
րացնող հիմունքներ:

Հիմնաւոր են արդեօք բոլոր
10.000-ի չափ սրբագրութիւնները
թէ ոչ, լալց պ. Նորայրի «Նախնիք»
աշխատութեանը մեծ հետաքրքրու-
թեամբ պիտի սպասեն հաւագէտ-
ները:

Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(ԱՄՍԻՍՅ ՔՐՈՆԻԿ)

Մեր հասարակական կեանքը բաւականին յաճախ առիթներ է տալիս ընտրողական գործողութեան: Միական դպրոցները կառավարւում են հոգաբարձուներով, որոնք ընտրւում են ժողովրդից. թեմական դպրանոցները ընտրւում են ժողովրդից ընտրւած պատգամաւորների ձեռքով. եկեղեցական երեցփոխները ընտրւում են ժողովրդից. քաղաքացին խորհուրդը ընտրողական է. բոլոր բարեգործական ընկերութիւնները կազմւում են անգամ զրեւու ցանկացող անձերից և նոցա խորհրդի անդամները և այլ պաշտօնեաները ընտրողական են: Ընտրողական սկզբունքի վերայ են հիմնւած նաև շատ ուրիշ հաստատութիւններ, ուր մուտքը շատ թէ քիչ ազատ է և կապւած չէ մեծ խոչնդոտների հետ: Ընտրողական սկզբունքի այդքան ընդարձակ ծաւալի պատճառով շատ բնական է որ հասարակութեան մէջ եղած տարբեր ուղղութիւնները ամենից շատ արտայայտւում են պարբերական հրատարակութիւնների պոլեմիկաների և ընտրութիւնների մէջ: Եւ նոյն իսկ այն պոլեմիկաներն էլ մեծ մասամբ դրդւած են լինում ընտրութիւններով:

Բայց կուսակցական շարժումը ընտրողական գործերում միշտ միևնոյն ուժը չի ունեցել մեր մտաւոր կենտրոնում, Թիֆլիսում, որտեղից նա, այդ շարժումը, հաղորդւել է նաև զաւառներին: Կուսակցական համախմբումները հեռեապէս ունեն իրանց պատմութիւնը, իրանց զարգացման աստիճանները:

Ես լիակատար պատմութիւն չեմ գրում, բայց միայն կը նշանակեմ կուսակցական կռիւների բնաւորութեան և նոցա ծաւալւելու մի քանի դժերը, որքանով որ նոքա ընտրութիւնների հետ կապ ունեն, ցոյց տալու համար այն ուղղութիւնը, որ նոքա պէտք է ընդունեն, որպէս զի առողջ զարգացման շաւղից չը շեղւեն:

«Մշակ» լրագրի հիմնադրութեան օրից սկսեց մի չեղած սաստկութեամբ իրարանցումն հսերի և նորերի մէջ: Նորերը դառան «Մշակ»-ի կուսակից, հսերը «Մեղու»-ի: Ահա և երկու կուսակցութիւններ՝ «ազատամիտներին» և «պահպանողականներին»: Բայց ազատամիտների կուսակցութիւնը դեռ ևս այն շրջանումն էր, երբ բաւականաչափ ոչ ծաւալ և ոչ պատրաստականութիւն ունէր ժողովրդական ընտրութիւններին մասնակցելու համար. իւր շարքերում նա 70-ական թւականներին չունէր բաւականաչափ հասուն ներկայացուցիչներ յաջող կռիւ մղելու համար ռուսինային կպած և այդ պատճառով էլ աւելի զօրեղ կազմակերպւած պահպանողական կուսակցութեան պէմ:

Որքան ես յիշում եմ, առաջին ընտրողական մեծ պայքարը, որ եղաւ նորերի և հսերի մէջ, առթեցին կաթողիկոսական ընտրութիւնները 1884 և 1886 թւականներին: Այդտեղ առանձին դիրքեր բռնեցին «Մեղու»-ն, որպէս զլիսաւոր և հին օրդան յետադիմականների և «Նոր-Պար» դեռ ևս այն ժամանակ աւելի նւազ շեշտւած quasi-պահպանողական թերթի մէջ մի կողմից, և յառաջդիմականների զլիսաւոր օրդան «Մշակ»-ի և «Արձագանք» շարաթաթերթի մէջ միւս կողմից: Դա առաջին մեծ դէպքն էր, ուր փորձւում էին բանակների բարոյական ոյժերը: Այդ կռիւը տարաւ փոփոխակի յաղթութիւնների, նախ Մեքքիսեղէկի և ապա Ներսէս Վարժապետեանի ընտրութիւններին, իբր առաջին թեկնածուներ կաթողիկոսութեան:

Այդ ժամանակից ի վեր սկսւում է մասնակցութիւնը ընտրութիւնների մէջ կուսակցական ոգով: 1884 և 1886 թւականների կաթողիկոսական ընտրութիւններին յաջորդեցին շատ շուտով Ներսիսեան դպրանոցի հոգաբարձական ընտրութիւնները, մօտաւորապէս նոյն ոյժերով, ինչ ոյժեր որ զործել էին նախկին կաթողիկոսական ընտրութիւններին:

Իսկ այդ ոյժերը ինչ էին: Գլխավորապէս տեղական թերթերի ներկայացուցիչները և սոցա աշխատակիցները: Հետեւապէս թուով բաւականին սահմանափակ անձինք, այն էլ դեռ ևս խառն էլիմենտներ ձեռք ձեռքի տւած, միայն դէպքի համար, ինչպէս մշակականները արձագանքեանների հետ:

Այնուհետև աարիներ շարունակ ընտրողական պաշտարների առանձին առիթներ չը ներկայացան, հետեւապէս և կուսակցական համախմբումների շարժում առանձնապէս աչքի չընկաւ:

Խաղաղութեան այդ տարիները սակայն շատ նշանաւոր պերիոդ կազմեցին մի ուրիշ կողմից: Կարւած չը լինելով կարեւորութիւն ներկայացնող ընտրութիւններով և դոցա մասին լրագրական կարեւոր բանակութիւններով, ընթերցող հասարակութիւնը կարող էր աւելի հանգիստ նայել ու քննել լրագիրների բովանդակութիւնը, քարոզած մտքերը, մշակած խնդիրները, նոցա ներքին արժանաւորութիւնը, իբր լուսաւորութիւն սերմանողներ: Նւ տպաւորութիւնը այնպէս էր, որ թերթերը զուրկ են լուրջ բովանդակութիւնից և չեն կանգնած այն բարձրութեան վերայ, ինչ բարձրութեան վերայ նոքա իրանց կանգնած են հռչակում: Իւր զուտ հրապարակաստութեան բաժնում միակ յառաջադիմական օրդան «Մշակ»-ը արդէն վաղուց սկսել էր կրկնել, քայլեր չանելով դէպի առաջ ոչ խնդիրների արծարծելու մէջ և ոչ էլ արծարծած խնդիրների մշակելու մէջ:

Անբաւարարութեան այդ ներքին զգացմունքի արտայայտութիւնն էր «Մուրճ» ամսագրի հիմնադրութիւնը, որից յետոյ մի քանի դէպքեր նոր կեանք տւին կուսակցական համախմբումներին հասարակական ասպարիզում: Այդ դէպքերից առաջինն էր Գրիգոր Արծրունու 25-ամեայ զործունէութեան յօբելեանը, որը գրեթէ համազգային մի ցոյցի կերպարանք ստացաւ, ի մի խմբելով այն ամենքին, ովքեր որ և է կերպով կապւած էին յառաջադիմական հոսանքի հետ սկսած դեռ ևս Նազարեանի օրերից: Այդ յօբելեանը յետագայ ժամանակների կուսակցական պաշտարների համար մի կարեւոր բույժ է ներկայացնում: Յօբելեանը առիթ տւեց համախմբելու մի մարմնի, որ ընդհանրապէս յայտնի է երիտասարդութիւն անունով: Նա արդէն ասացի թէ 80-ական թւա-

կաններին կէսին ինչ գործիչներ կային ընտրութիւնների համար. սահմանափակ թւով անձինք, մեծ մասամբ թերթերի աշխատակիցներ, որոնց վերայ աւելացրէք դպրոցների այս ու այն ուսուցիչներին: Այժմ, ներկայ 90-ական թւականների սկզբից ընտրական-կուսակցական շրջանը լայնացաւ, ընդգրկելով բազմաթիւ այլ անձեր, շատ տարբեր պարապմունքների և ցենզի տէր մարդկանց, բայց և շատ թէ քիչ իրար հետ կապւած որոշ համակրութիւններով և հակակրութիւններով դէպի մամուլի այս ու այն օրգանները և հասարակական այլ գործիչները:

Առաջին անգամ այդ նոր ծաւալ ստացած յառաջդիմական խումբը, որ արդէն իւր ծաւալի պատճառով իրաւամբ կուսակցութիւն կարող է անւանւել, ընտրողական գործերում հանդէս եկաւ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան մէջ, ղեւ ևս 1890 թւականին, ապա Հայոց Բարեգործական Ընկերութեան մէջ և թատրոնական ժողովներում: Բայց այն, ինչ կարևոր հասարակական փակաոր դարձրեց նրան, այդ այն տոկուն մասնակցութիւնն է, որ նա ունեցաւ 1892 թւականի Թիֆլիսի կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան գործում: Արծրունու յօբելեանից յետոյ դա երկրորդ, բայց և աւելի մեծ առիթն էր կուսակցական համախմբումների համար առհասարակ, համախմբումներ, որոնց օտար չը մնաց նոյն իսկ հասարակ ժողովուրդը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ քսան տարի առաջ սկսած նորերի կսիւը հների դէմ, թարմ մտքերի հոսանքը յառաջացրեց ընդարմացած հայ հասարակութեան մէջ մի կուսակցութիւն, որը ներքին մղումով մոնոսում է իրական կեանքը և աստիճանաբար զրաւում՝ հասարակական տեղերը՝ դպրոցներ, հայկական ընկերութիւններ և այլն:

Գաղափարները նախ քարոզւում են, և երբ նոցա հետևողները զօրեղ ոյժ են կազմում՝ վերջիններս բնականաբար ձգտում են հասարակական հիմնարկութիւններում իրանց տեղն ունենալ, այդ հիմնարկութիւններին ցանկալի ուղղութիւն տալու համար:

Ներկայումս, 90-ական թւականներին, կարելի է ասել որ 70-ական թւականների շկոյան հասունացրել է մի ամբողջ սերունդ, որը բաւականաչափ ոյժ ունի հասարակական այլ և այլ կարգի

գործերը գործնականապէս ըմբռնելու և նոցա կառավարելուն մաս.
նակցելու կա՛ն նոցա աջողջապէս վարելու համար:

Զեռք բերածը առաջժամ աչքսնով է գնահատելի, որ հին
մտածողութեան տէր մարդիկ այլ ևս այն ոյժը չեն կազմում, ինչ
նոքա կազմում էին առաջ. նոր մարդկանց սերնդի ուժեղանալովը
անկասկած մի քայլ առաջ կը լինի արեւած, քան ինչ կարելի էր
անել հին սերնդի մարդկանցով: Մեր բոլոր հաստատութիւնները
պէտք է շահեն հոսանքի այդ զարգացումից, որովհետեւ միան-
գամայն անկասկած է նոր սերնդի աւելի մեծ կենսունակութիւնը,
եւանը և ուղղութեան ու գործելու եղանակի աւելի մեծ պարզու-
թիւնը: Բայց որ գլխաւորն է, այդ սերունդը ընդունակ է վերա-
կրթւելու. այդ սերունդն է, որ կարող է տալ էլեմենտներ նոր
յառաջադիմութիւն իրագործելու համար, մինչդեռ հին շիղակի
մարդիկ զատապարտւած են անշարժութեան, անպտղութեան,
ամուլութեան:

Ես խօսեցի յառաջդիմութեան նոր քայլերի մասին: Այդ պէտք
է կայանայ խնդիրների աւելի լաճն և աւելի խոր ըմբռման մէջ,
այլապէս այդ սերունդն էլ անշարժութեան և յետադիմութեան
կը մատնէ իրան, եթէ այդ խօսքը նրան անմատչելի մնայ:

Իսկ մինչև այդ, կամ աւելի լաւն ասած՝ դորա հետ միասին
պէտք է միայն ուրախանալ, որ նորակազմ երիտասարդութիւնը
հարթում է իւր ճանապարհը դէպի հասարակական հիմնարկու-
թիւնները, առանց մի րոպէ շփոթւելու այն աղմուկներից, որ
սարքում են հակաուակորդները, կեանքի մէջ ամեն մի նոր ու թարմ
հոսանքին թշնամացողները:

Լաւագոյն պատասխանը, որ կարելի է տալ նրանց, — նորանոր
յաղթութիւններ կատարելն է՝ գրականութեան մէջ, մի կողմից,
հասարակական յաջող պաշտօնավարութեան մէջ միւս կողմից:

Եւ ցանկալի է, որ երիտասարդութեան գործելու ասպարէզ-
ները ընդլայնեն: Ես կարծում եմ որ ժամանակ է զբաղւել
նաև քաղաքային շահերով և պատրաստել քաղաքային դոմանների
ընտրութիւնների համար, որ պէտք է մի քանի ամսից յետոյ կա-
տարեն թէ Թիֆլիսում և թէ Կովկասի ուրիշ քաղաքներում:

Ներկայ փետրւարի ամսի 19-ին նշանաւոր տօն էր ամբողջ Կովկասեան երկրի համար. այդ օրը լրացաւ 25 տարին այն օրից, երբ Կովկասում բացւեց նոր դատարանը, այն է 1868 թ. փետրւարի 19-ին:

Սա ասացի թէ այդ օրը նշանաւոր տօն էր ամբողջ Կովկասի համար. աւելի ճիշդ կը լինի ասել թէ այդ օրը պէտք է ամբողջ Կովկասի համար նշանաւոր տօն լինէր. որովհետեւ դատարանական ընթերցմի խորը կուլտուրական և բարոյական նշանակութիւնը ցաօք սրտի դեռ ըմբռնւած չի թւում ինձ մեր երկրի այլացեղ բնակիչների կողմից: Այդ օրը տօնեցին դատարանական գործին հետ դասակարգային շահերով կապւած անձերը. բայց տարաբաղդաբար ժողովուրդը մեզանում դեռ չի հասկացել կրօնական տօներից դուրս՝ այլ տօներ տօնել, մոքի յաղթութեան գաղափարներով ոգևորել: Բայց եւրոպական մոքի փառաւոր յաղթութիւններից մէկն է նաև դատաստանական այն ընթերցմը, որը Արևմտեան Եւրոպայի սահմանները պատուելով՝ անցաւ Ռուսաց կայսերութեան սահմանները, անթափանցելի համարւած խաւարի մէջ արդարադատութեան մեծ հիմունքները հաստատելու համար:

1864 թ. նոյեմբերի 20-ին հրատարակեցին նոր դատարանների կանոնադրութիւնները Եւրոպական Ռուսաստանի համար, որից յետոյ միայն աստիճանաբար քայլեր եղան նոր կարգեր մտցնելու Կովկասեան երկիրը: 11 հոկտ. 1865 թ. բարձրագոյն հաստատուեցին հեշտացնող կանոնները այն դատավարութեան և գործավարութեան, որ կատարւում էին Կովկասեան փոխարքայութեան նախկին դատարանական ատեաններում. այդ կանոնները սկսեցին գործադրւել 1-ն օգոստոսի 1866 թ.: Բայց արդէն 7-ն նոյ. նոյն 1866 թւականի հաստատուեցին հիմնական կանոնները Կովկասում մտցնելիք դատարանական ընթերցմի: 9 դեկտ. 1867 թ. եղաւ բարձրագոյն հրաման Կովկասի դատարանական և սահմանաչափական (մեթեվօյ) հիմնարկութիւնները վերանորոգելու մասին, իսկ 19 փետր. 1868 թ. բացւեցին նոր դատարանական ատեանները Կովկասում, որի ամենահանդիսաւոր ակտի՝ դատարանական պալատի բացումը Թիֆլիսում, պատուել էր իւր ներկայութեամբ, իբր պատւաւոր հիւր՝ հանգուցեալ Գէորգ IV Կաթողիկոսը:

«Գաղափարն արդար, արագ, ողորմած և ամենքի համար հաւասար»,— ահա նոր դատարանի նպատակը: Մի նպատակ, սակայն, զէպի որը կարելի է ձգտել, ինչպէս մի իդէալի, առանց երբեք կատարելապէս հասնելու յաւակնութեան:

Կովկասեան երկրում դատարանական կանոնադրութիւնը մի քանի կէտերում տարբերում է 1864 թւականի նոյեմբերի 20-ին Ռուսաստանի համար հրատարակած կանոնադրութիւնից: Մենք չունենք երզնակների դատարանը և ոչ էլ ընտրողական սկզբունքը, որոնց փոխարէն առելիք ընդարձակացրած են դատարանական առաջին խնտանցիւղի, այն է հաշտարար դատաւորների իրաւունքները, նոցա կոմպետենցիան:

Այդ մասին կարելի է խօսել. բայց այդ սահմանափակումները չը պէտք է բոլորովին նսեմացնեն կատարած սեփորմի կարեւորութիւնը նաև մեր երկրի համար: Բոլորովին անկասկած է, որ նոր դատաստանի և նոր դատարանի հիմունքները և սկզբունքները, իբրև ծնունդ բարձր քաղաքակրթութեան և մարդկայնութեան, կատարեալ բարերարութիւն էին ասիականութեան և սուսական հին փռած, կեղծ, հարստահարող ու կամայականութեան մատնած դատական կարգերին ենթարկւած ազգերի համար:

Գաղափարական սեփորմը մեզ մօտ բերւած է զրսից, առանց որ Կովկասեան ազգերը իրանց քաղաքակրթութիւնով կարողացած լինեն իրանք անմիջապէս մասնակցել այդ սեփորմի սկզբունքների մշակմանը: Եւ այդ տարիներին, 60-ական թւականներին, մենք չենք ունեցել մի մեծ ինտելիգէնտ դասակարգ և ոչ էլ իւր կոչմանը արժանի հայկական մասնու, որ զոնէ զոցանով կարողանար ժողովուրդը ըմբռնել կատարուող իրողութեան մեծ պատմական նշանակութիւնը: Եւ նոյն իսկ կատարւած իրողութիւնների մեծ քաղաքակրթական և դատաւարակիչ նշանակութիւնը չեղողւայ մասնովին մնայ զրեթէ միանգամայն օտար:

Այդ հանգամանքը ի նկատի առնելով, «Մուրճ» ամսագիրը իւր գոյութեան առաջին իսկ տարւայ սկզբից հարկ համարեց մի ընդարձակ յօդւածով ծանօթացնել իւր ընթերցողներին դատաստանական վերանորոգութեան հետ թէ Ռուսաստանում և թէ մասնաւորապէս

Կովկասում¹⁾։ Իսկ իբրև մի նիւթ, որ կարող է ի նկատի առնել դատաստանական դրականութեան մէջ Կովկասեան առանձնացատկութիւնները ճանաչելու տեսակէտից, «Մուրճ»-ը նպաստել է մի հետազօտութիւնով՝ Ոճիրները Երևանեան նահանգում²⁾։

Գատարանական վերանորոգութիւնը ուսաց մամուլի համար մի առատ նիւթ է եղած տաք բանտկութիւններէ։ Այդ բանտկութիւնները սկսեցին ռեֆորմից հաղիւ մի քանի տարի անցած և շարունակւում են մինչ այժմ էլ։ մի կողմից կանգնած են նոքա, ովքեր կամենում են որ 1864 թւականի կանոնադրութիւնները (ուստուս) մնան անփոփոխ, միւս կողմում կանգնած են նոքա, ովքեր կամենում են այդ կանոնադրութիւններից դուրս մղել այն ամենը, ինչ ամենաթափանչ է առաջինների համար։ Եւ արդէն իսկ շատ բան մինչ այժմ փոխւած է Ռուսաստանում։ այսպէս՝ փոխանակ ընտրովի հաշտարար դատաւորների, այժմ կարգւած են այսպէս կոչւած զեմսկի նաչալչնիկներ, փոփոխւած են խուզարկութեան կարգերը մի քանի ոճիրների համար։ մի քանի տեսակ գործեր դուրս են հանւած երդեալների դատարանից, և նոյն իսկ երդեալների դատարանի վերայ այնքան սաստիկ են յարձակումները պահպանողական և յետադէմ բանակների կողմից, որ սոքա պահանջում են նոցա կատարեալ վերացումը։

Բայց ինչպէս ասացի վերը, ոչ երդեալների դատարանը և ոչ ընտրողական սկզբունքը Կովկասեան երկրում երբէք մուտք չը գործեցին։ այդ պատճառով էլ նոցա մասին բանտկութիւնները մնացել են օտար մեր կեանքին։ Բայց այն դատը, որ պաշտպանւում է Ռուսաստանի լուսամիտ շրջաններում դատաստանական ռեֆորմի մաքուր պահպանութեան համար, այնուամենայնիւ ունի ընդհանուր նշանակութիւն։ զա՛ մի ընդհանուր քաղաքակրթական և առհասարակ լուսաւորութեան դատ է ընդդէմ խաւարամտութեան։ Եւ դատարանական ռեֆորմի ջատագովները Ռուսաստանում նոյնանիշին լուսաւորութեան համար մարտնչողների հետ ընդհանրապէս Ահա

¹⁾ Գատաստանական վերանորոգութիւն, «Մուրճ» 1889 թ., № 1, 3, չորեաթ և. Նաղուբեանի։

²⁾ Գ. Մնացականեանցի, «Մուրճ» 1889 թ. № 11, 12։

ինչու այս յօբելեանի առիթով, չի կարելի ջերմ երախտագիտական զգացմունքով չը ողջունել նաև այն անձերին, որոնք խմբւել են «Вѣстникъ Европы» ամսագրի և մասնաւորապէս մեր երկրացի Գրիգոր Չանշեանի շուրջը, մարդիկ, որոնք քաջառքաջ հետևում են նոր դատարանների հակառակորդների բոլոր ստույթիւններին, ֆակտերի յեղաշրջումներին ու զրպարտութիւններին:

Լ ՈՒՍՒՆԻ:

ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ռուսաստանում հրատարակած մի գիրք թարգմանելու համար հարկաւոր է արդեօք ստանալ հեղինակի թույլտւութիւնը: Մինչև վերջին տարիներս մենք թարգմանում էինք գրքեր, առանց մեզ հարց ապրու, ունենք մենք այդ իրաւունքը, թէ ոչ: Բայց այս քանի տարիներս պատահեցան դէպքեր, որոնք արդարացնում են վերև դրած հարցը: Յիշենք մի քանիսը մեր գիտեցածներից: Մի երկու տարի առաջ Թիֆլիզի Հրատարակչական Ընկերութիւնը, ստանալով Պոտապենկոյի «На дѣйствительной службѣ» (Գաղափարական քահանայ) գրքի թարգմանութիւնը, առաջարկել էր Թիֆլիսի գրաքննական ատեանին: Գրաքննական ատեանը, որի իրաւունքներից մէկն է հսկել գրականական սեփականութեան վերաբերեալ օրէնքների ճշտիւ գործադրութեանը, չէր համաձայնել թույլ տալ այդ թարգմանութեան տպագրութիւնը, մինչև որ ձեռք չը բերւի հեղինակի թույլտւութիւնը: Եւ Հրատ. Ընկ. վարչութիւնը ստիպւած էր զիմեւ հեղինակին: Ընթերցողներից շատերը չիշում կը լինեն, որ անցեալ տարի «Տարագ»-ում սկսւել էր տպագրւել Տուրգենևի «Рудинъ» վէպի թարգմանութիւնը, որը կիսատ մնաց էլի նոյն պատճառով: Խմբագրութիւնը ստիպւած էր զիմեւ ժառանգներին թույլտւութիւն ստանալու համար: Վերջապէս նորերս խմբանք, որ նոյն պատճառով կանգ է առած Պակրովսկու «Объ уходящ за малями дѣтми» գրքի թարգմանութեան տպագրութիւնը: Մենք գիտենք և մի քանի այլ օրինակներ, բաց գոքա ի հարկէ շատ ու շատ կը լինեն: Հետաքրքիր է այն, որ մեր գիտեցած բոլոր դէպքերում հրատարակողները զիմեւ են հեղինակներին կամ նրանց ժառանգներին և հարց չեն բարձրացրել, թէ ինչ է ասում օրէնսդրութիւնը այդ մասին: Վան մարդիկ, որ համոզւած են եղել, որ այդ այդպէս էլ պէտք է լինի: Այսպէս «Մշակ»-ի անցեալ տարւաւ Յ 127, խօսելով գրականական սեփականութեան մասին, հեղինակը ասում է «այժմ մենք կատարեալ իրաւունք ունենք տպագրել «Մշակ»-ի մէջ հանդուցեալ Շչեգրինի բոլոր գրածները, քանի որ հանդուցեալի որդուց, ժառանգից, մենք ստացած ունենք մի գրաւոր թույլտւութիւն, որով նա իրաւունք է տալիս մեզ իր հօր բոլոր գրածները թարգմանել հայերէն լեզուով և տպագրել «Մշակ»-ի մէջ»:

Այսպէս ուրեմն թէ Ռիֆլիսի գրաքննական ատեանում (պէտք է նկատել որ այդ ատեանում վերեւիչած հալեացքը հետեողաբար չէ գործադրում, երբեմն պահանջում է հեղինակի թույլտուութիւնը, երբեմն ոչ) և թէ մեր հրատարակողներէից մի քանիսի մէջ գոյութիւն ունի աչն համոզմունքը, որ առանց հեղինակի թույլտուութեան թարգմանութիւնը կոնտրաֆակցիա է: Վաղով ժամանակին, որից չետոյ կարելի է ազատ թարգմանել ինչպէս երևում է, ընդունւում է նոյնը, որը սահմանւած է հեղինակութիւնների արատապուծութիւնների համար, այսինքն, լիտուն տարի հեղինակի մահից չետոյ: «РУДИН» վէպը տպւած է 1856 թ., մօտ 10 տարի է մնուել է հեղինակը, աշխատանքայն պահանջում են ժառանգի թույլտուութիւնը, այդ հաշով «РУДИН»-ը կարելի է առանց թույլտուութեան թարգմանել միայն 1933 թ., հեղինակութեան տպագրութիւնից 77 տարի չետոյ, երբ գուցէ այլ ևս նա նշանակութիւն չունենալ: Դա զեռ. նշանաւոր գրողի հեղինակութիւն է, ուր մնաց երկրորդականներին, որոնք իրանց նշանակութիւնը պահպանում են միայն մի քանի տարւալ ընթացքում: Մինչդեռ Հիւսիսային գերմանական դաշնակցութեան 1870 թ. լունիսի 11-ը օրէնքը, որ, պէտք է ասել, կազմւել է հրատարակիչների և գրողների մեծ մասնակցութեամբ, և որը նոյնպէս թարգմանութիւնը կոնտրաֆակցիա է համարում, որոշում է, որ հեղինակը առաջի թերթի վրալ նշանակէ, որ նա իրան է պահում թարգմանելը թույլ տալու իրաւունքը և որ այդ թարգմանութիւնը սկսւի հրատարակւել բնագրի հրատարակութիւնից ոչ ուշ քան մի տարի և վերջանալ երեք տարւանից ոչ ուշ: Գրամատիքական զբրւածքների թարգմանութեան հրատարակելու ժամանակամիջոցը աւելի կարճ է—վեց ամիս: Այսպիսի մեղմ սահմանափակումն է որոշւած գերմանական օրէնքով, բայց նոյն իսկ այդ չափով ալ օրէնքը ընդունելութիւն չէ գտնում շատ գիտնականների կողմից: Այսպէս Շեֆլէն, խօսելով Հիւսիսային գերմանական օրէնքի մասին, պահանջում է կատարեալ ազատութիւն թարգմանութիւնների համար: «Այդ ազատութիւնը—ասում է նա—հիմնւած է գաղափարների կոմմունիզմի վրալ, որ լուսաւորութեան արագ առաջադիմելու անհրաժեշտ պայմանն է... պէտք է ոչ թէ արգելել, ալ խրախուսել բնագրի ուրիշ լեզւի միջոցով արտալատելը, բնագրի ամեն մի չարմարացումը աջնպիսի ընթերցողների պահանջների ու ճաշակի համեմատ, որոնց համար օրիգինալը (բնագիրը) անմատչելի է, որը ալպիսով ոչ մի վնաս, ոչ մի մրցում չէ անում օրիգինալին: Ամենալաւ ապացոյց, թէ որքան աննշան է ինտելէսը, որը կապւած է հեղինակի՝ թարգմանութիւնները թույլ տալու, իրաւունքի հա, աչն մեծ մասամբ չնչին դներն են, որոնցով հեղինակները զիջում են իրանց ալ իրաւունքը»: (Спасовичъ т. III).

Եթէ ահագին ինքնուրոյն գրականութիւն ունեցող մի ազգի համար ծանր է համարւում ալ չնչին սահմանափակումը, ասլա որքան ծանր

պիտի համարել մի աշխարհի գրականութեան համար, ինչպէս ռուսաց ու հալոցն է, որի մէջ թարգմանութիւնները գերիշխող դեր են կատարում. առաւել ևս, եթէ ալդ սահմանափակման ժամանակը աշն չափերով ընդունենք, ինչպէս երբեմն պահանջում են: Ռուսաց գրականութիւնը ահագին պահանջ ունի թարգմանութիւնների և ամեն տարի մեծ քանակութեամբ գրքեր են թարգմանում թէ արտասահմանում և թէ Ռուսաստանում տպագրած ոչ-ռուս հեղինակութիւններից: Ռուսաստանում տպագրած գրածքների թարգմանութիւնը, բացի ընդհանուր նշանակութիւնից, ունի և մասնաւոր նշանակութիւն. Ռուսաստանի շահը պահանջում է մօտիկ ծանօթանալ աշն ազգերի կեանքի հետ, որոնք պատմական հանգամանքները շնորհիւ կապւած են իրա հետ և ընդհակառակն ծանօթացնել իրան ալդ ազգերի հետ, առաջ բերել մտաւոր, ոգեկան միութիւն. իսկ ալդ նպատակներին համեմատ համար ոչ վերջին միջոցն է գրականութիւնը և քանի որ հպատակ ազգերի ահագին մեծամասնութեան համար օրգինալները անմատչելի են, մնում է միակ միջոցը—թարգմանութիւնները: Թէ որքան ռուսաց գրականութիւնը օգտւում է Ռուսաստանում տպագրւած օտար լեզուներով գրւած հեղինակութիւններից, բաւական է բաց անել վերջին տարւալ ռուսաց ամսագիրները և տեսնել, որքան է թարգմանւած միմիաշն լեհերներից, Սենկևիչը, Սրժեչկօն, Պոլսը, և աշն իսկոն արտաւարութիւն են գտնում ռուսաց գրականութեան մէջ. թարգմանութիւններ լինում են վերջին ժամանակներս ֆիններէնից, հալերէնից, վրացերէնից և աշն:

Թարգմանութիւնների աշխարհի ահագին պահանջ ունենալով, հասկանալի է, թէ ինչու Ռուսաստանը միշտ մերժել է միանալ գրականական դաշնակցութեան կոնկենցիաներին: Այսպէս Ռուսաստանը չը միացաւ 1886 թ: Բերնում կապացած գրականական դաշնակցութեան կոնկենցիալին, որով հեղինակի իրաւունքների մէջ մտնում է և թարգմանելու իրաւունքը: Աշնպէս որ արտասահմանում տպագրւած ամեն մի գիրք կարելի է ազատ թարգմանել Ռուսաստանում, հարկաւորութիւն չունենալով թոյլտւութիւն ստանալ հեղինակից:

Գալով աշն գրքերին, որոնք տպագրւած են Ռուսաստանում, դոցա վերաբերեալ ևս գոչութիւն ունի նոն ազատութիւնը: Այս դէպքում ևս ռուսաց օրէնքներով հարկ չկալ դիմել հեղինակին, նրա համաձայնութիւնը ստանալու համար: Գրականական սեփականութեան մասին չօղւածներում, թեւով կոնտրաֆակցիալի դէպքերը, ռուսաց օրէնքը ոչ մի տեղ չի վիշում, որ աշխարհին է և թարգմանութիւնը: Կալ և առանձին չօղւած (X т. 1 ч. прилож. къ ст. 420, прим. 2 § 18), որով չապարարւում է, որ Ռուսաստանում տպագրւած ամեն մի գիրք կարելի է թարգմանել ուրիշ լեզուներով, միաշն չը պէտք է կցել ալդ թարգմանութիւններին բնագիրները: Ալդ չօղւածով բացառութիւն է արւած միաշն աշխարհի գրւածների համար, որոնց համար անհրաժեշտ են եղել առանձին գիտնա-

կան հետազոտութիւններ: Այս վերջին տեսակ հեղինակութիւնների թարգմանելու բացառիկ իրաւունքը պատկանում է հեղինակին: միայն հեղինակը, իր աչք իրաւունքից օգտւելու դիտաւորութեան մասին, պէտք է չափաւարէ բնագիրը հրատարակելիս և տալ իր թարգմանութիւնը լնագիր լոյս հանելու թույլտուութեան տոմսակը ստանալուց ոչ ուշ, քան երկու տարի: Նթէ աչս պալմանները չը կատարւեն, դրքի թարգմանութիւնը թողնում է ամեն մէկի կամքին:

Չը նախելով որ այս չօրւածը բաւականի պարզ է, աչսու ամենաշին փորձեր եղան չեղաչրջելու նորա իմաստը, բաց կառաւարիչ Սենատը իր հեղինակաւոր մեկնութիւնով տւել է աչք չօրւածին նոյն միտքը, որը մենք առաջ բերինք վերև: Ռուս գրող Կարաղինը մի վէպ էր գրել, «Толоче Крови» վերնագրով, որը տպագրւել էր «Нива» շաբաթթերթում: Աչք վէպը թարգմանեց գերմաներէն և տպագրւեց «St. Petersburger Zeitung» թերթում, առանց հեղինակի թույլտուութեան: Հեղինակը, Կարաղինը, դատ բացեց «St. Petersburger Zeitung» թերթի հրատարակչի դէմ. գործը հասաւ Սենատին, որը աչսալիսի որոշում տւեց. «գրականական սեփականութեան վերաբերեալ ռուսաց օրէնքները, Ռուսաստանում տպագրւած գրւածքների հեղինակներին, աչք գրւածքները թարգմանելու համար, չեն տալիս ոչ մի բացառիկ իրաւունք, ուստի աչք թարգմանութիւնը ամեն մէկը կարող է կատարել լոյրլովին ազատ և ոչ մի հարկ չկալ դրա համար ոչ խնդրել հեղինակի թույլտուութիւնը, ոչ էլ տալ աչս վերջինին դորա համար որ և է վարձատրութիւն»: (1891 г. № 13).

Ուրեմն թէ, օրէնքի իմաստը, թէ Սենատի մեկնութիւնը հաստատում են աչն միտքը, որ մի որ և է գիրք թարգմանելու համար (բացառութիւնը վերև ցոյց տւինք) հարկաւորութիւն չկալ հեղինակի թույլտուութիւնը ստանալու:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Ռուսաստանի ելումուտքը 1866—1890 թթ.։ Ռուսաստանի պետական պարտքը, երկաթուղիները, զվարճարարությունները, արտադրությունը և ներածությունը։ Պետական ելք ու մուտքի նախահաշիվը առ 1893 թ.։ Փոխատու-խնայողական ընկերությունները 25 տարալ գործունեությունը Ռուսաստանում։ Հրեական դադթական ընկերությունը։ Ապահարգանի խնդիրը։ Ժողովրդական գրականություն խնդիրը։ Նոր ուսու գրքերը։

Անցեալները պետական կոնտրոլի հաշվապահութեան բաժնի ձեռքով լրիւ ընծաւեց մի հրատարակութիւն, ուր ի մի են դումարած 1866 թւականից սկսած մինչև 1891 թ. քսան ու հինգ տարալ սովորական գումարները պետական ելք ու մուտքի։ Այդ գրկովկադիւտակի մէջ—առաջ չեն բերւած արտակարգ ծախքերը և դոցա թւում վերջին ուսու-տաճկական պատերազմի նստածքը, որ է 1.107.481.518 ուրբլի։

Մենք կը դնենք ալտեղ մի փոքրիկ աղիւտակ, որից ընթերցողը կը տեսնի թէ ինչպէս աստիճանաբար և զուգընթացաբար աւելացել են թէ մուտքի և թէ ելքի գումարները։

	Մուտք	Ելք	+	—
1866 թ.	356.426.166 ռ.	413.298.102 ռ.	—	56.871.846 ռ.
1869 »	457.496.342 »	468.797.909 »	—	11.301.567 »
1870 »	480.558.832 »	481.763.948 »	—	1.205.106 »
1871 »	508.187.576 »	499.734.633 »	8.452.943	—
1873 »	537.942.323 »	539.140.337 »	—	1.198.014 »
1874 »	560.819.380 »	543.317.034 »	17.502.346	—
1875 »	577.617.243 »	543.221.521 »	34.395.722	—
1876 »	560.985.254 »	574.166.018 »	—	13.120.764 »
1877 »	550.818.580 »	586.549.603 »	—	35.731.023 »
1878 »	625.972.735 »	601.291.521 »	24.681.214	—
1879 »	662.973.822 »	643.892.258 »	19.081.564	—
1883 »	710.645.962 »	723.673.259 »	—	13.027.297 »
1885 »	765.410.380 »	806.614.346 »	—	41.203.966 »
1888 »	900.829.333 »	840.419.494 »	60.409.839	—
1889 »	944.390.769 »	857.881.126 »	86.499.641	—
1890 »	950.819.240 »	877.779.550 »	73.039.690	—

Եւքի գումարները տարէց տարի աւելացել են պետական ծախքերի անընդհատ խոչորանալուց: Եւ իրաւ, ամեն տարի աւելացել է պետական պարտքերի վճարելիք տոկոսը՝ թէ զինւորական մինիստրութեան նորա-նոր ծախքերի շնորհիւ և թէ ալ ծախքերի աւելացումից վերաբերեալ բոլոր միւս ճիւղերին: Լուսաբանենք թւերով միմիայն երեք հետեւեալ տարիները՝

1867 թ. 1881 թ. 1890 թ.

միլ. ռ. միլ. ռ. միլ. ռ.

Պետական պարտքերի տոկոսը եղել է	83	195 ¹ / ₂	263 ¹ / ₂
Զինւորական մինիստրութ. ծախսերը	127	230	228
Նաւադնացաւին »	18	30 ¹ / ₂	40 ¹ / ₂
Ֆինանսների »	79	108	109
Պետական կալաւածների »	17	20	24
Ներքին գործերի »	37	69 ¹ / ₂	76
Ժողովրդական լուսաւորութեան .	8 ¹ / ₂	18 ¹ / ₂	22 ¹ / ₂
Ճանապարհների հաղորդակցութեան .	24 ¹ / ₂	12	56
Արդարադատութեան մինիստ. ծախք.	9	18	23

Անընդհատ աւելացող եւքի աչս գումարների հետ հաւասարակշիռ պահպանելու համար պետութիւնը տոբալած է եղել շարունակ մոռաքի կամ նոր աղբիւրներ գտնել կամ եղածները խոչորացնել: Այդ պարզ երեւում է աչն հանգամանքից, որ եկամուտի գումարը եղել է՝ 1867 թ. 398 միլ. ռ. իսկ 1890 թ. 832 միլ. ռուբլի:

Եթէ վերցնելու լինենք այդ գումարների կազմող թւերը կը տեսնենք որ դոքա ալսպէս են ներկայանում 1867 թւականի և 1890 թ. համար:

Խմիչկեղէնից եկամուտ եղել է	134	միլ. ռ.,	268	միլ. ռ.
Մաքսի »	37	» »	142	» »
Շաքարի ակցիզը »	1 ¹ / ₂	» »	21 ¹ / ₂	» »
Թամբաքւի »	7	» »	28	» »
Փոստի եկամուտը »	7 ¹ / ₂	» »	20	» »
Հեռագրական »	2 ¹ / ₂	» »	10 ¹ / ₂	» »
Մնացեալ եկամուտները »	208	» »	342	» »

Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու ասենք միայն որ ամեն մի տուրք, ամեն մի մաքս, աւելացրել է տարիների ընթացքում աւել կամ պակաս չափերու: Գրեթէ միշտ տէրութիւնը հասել է իւր նպատակին— աչն է—վտապալ տարիներում ստացել է աւելի եկամուտ, բայց անկասկած է և աչն որ մի քանի տուրքերը, օրինակի համար մաքսերը, վնասել են օտար ապրանքների ներմուծման: Ո ս կ ու հաշուով ներմուծած է եղել

1867 թւին մօտ 200 միլ. ռուբլու ապրանք,

իսկ 1890 » » 220 » ռուբլու, ասել է թէ միմիայն 10%.

մի աւելացում,—և այս հանգամանքը անշուշտ պէտք է վերագրել խոշորացրած մաքսերին: Ներմուծում է ալսպիտով միմիայն անխուսափելի անհրաժեշտը:

Եթէ վերցնելու լինենք թէլի ներմուծման օրինակը, մի ապրանքի որ անհրաժեշտ մի կարիք է Ռուսաստանի համար, մենք կը տեսնենք որ մաքսերի խոշորացումից պակասել է նաև ալդ անհրաժեշտ ապրանքի ներմուծումը: Թէլ է ներմուծւած:

	Որի արժէքն է	Մաքս է վերցրած
1887 թ. 2.062.937 փուլ	46.307.481 թղթ. ռ.	20.093.051 ռ.
1888 » 1.992.672 »	34.127.183 »	22.717.711 »
1889 » 1.919.564 »	32.098.633 »	22.328.665 »
1890 » 1.838.000 »	30.786.000 »	23.327.498 »

Նւ որովհետև վերջին սիւնակի ռուբլիները ոսկու ¹⁾ հաշով են, ասել է թէ՛ ոչ միայն խոշորացրած մաքսերը պակասցրել են ներմուծող թէլի քանակութիւնը, այլ թէ վերցող մաքսը նաև դեր ազանցում է թէլի արժէքից:

Գալով պետական պարտքերի կրած փոփոխութիւններին—դնենք նմանապէս մի համեմատական աղիւսակ:

Առ 1 յունւար 1870 թ. դոքա էին՝

Տոկոսաւոր պարտքեր 1.248.704.396 ռ. թղթ.

Անտոկոս » (թղթադր. փող) 567.972.166 » »

Փոխառութիւն, նախկին Լեհաստանի 37.799.231 » »

Գումար . 1.854.475.793 ռ. թղթ.

Առ 1 յունւար 1891 թւականը դոքա դառել էին.

1) պարտքեր համապետական կարիքների համար 3.543.768.870 ռ.

2) » երկաթուղային օբլիգացիաներով. . 1.516.645.900 »

3) » նախկին կալւածատէրերին գիւղացի-
ների ազատաւճարների համար . . 461.376.450 »

5.521.791.220 ռ.

Կարեւոր է ուշադրութիւն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ չը նախած ռուսաց պետական պարտքերի անընդհատ աւելանալուն—դոքա տոկոսը և պարքաչէջը վճարելու համար հարկաւոր են եղել պակաս գումարներ:

¹⁾ Աչքի առաջ ունենալով այն մեծ նշանակութիւնը, որ ունի Ռուսաստանի համար ոսկու կուրսը, դնենք աչտակող ռուբլի ոսկու արժէքը ըստ թղթադրամ ռուբլու վերջին մի քանի տարիներում եղածը. 1866—131¹/₂ կոպ., 1868—118 կ., 1869—126 կ., 1870—129 կ., 1871—75 թ.—120—116 կ., 1877—148 կ., 1878—157 կ., 1883—162 կ., 1886—164 կ., 1887—179 կ., 1888—170 կ., 1889—152 կ., 1890—140 կ.:

Վճարել է	մատակ. ուղարկող	թղթագր. ուղարկող
1889 թ.	73.117.093	147.865.272
1890 »	70.156.859	147.002.168
1891 »	65.034.580	150.669.207
1892 »	64.424.123	142.390.837

Մինչդեռ 1889 թվականից չորս տարի դէս—մետալ. փոխառութեան պարտքը խոչորացել է 135.489.650 ուղարկով, իսկ թղթագրամ պարտքը 21.449.397 ուղարկով—վճարած տոկոսների գումարները պակասել են և ա՛յն միմիայն չնորհիւ ֆինանսական մինիստր Վ. Ընկերադատու կոնվերսիայի դի. մեղուն, որով նա իւր նախորդների կողմից արած փոխառութիւնների թանգ առ հարկը իջեցրեց $4\frac{1}{2}\%$ -ից $3\frac{3}{4}\%$ և ալն:

Օգտուելով արաւալ վերջանալուցը անենք մի համառօտ տեսութիւն Ռուսաստանի—հիմնելով պետութեան կողմից մատակարարած վիճակագրած ստույգ թւերի վրա:

Ռուսաստանի երկաթուղիները: 1890 թ. երկաթուղաւին գծերի երկարութիւնը հաւասար էր 27.238 վերստի, որոնցից արքունապատկան էին 8.007, իսկ մնացեալ 19.231 վերստը պատկանում էին մասնաւոր ընկերութիւններին: Ընդհանուր թւով մուտք է եղել 284.407.704 ուղարկ, որից 51.426.353 ուղարկ—տէրութեան մասն էին կաղնում: Ընդհանուր ծախք եղել է 172.255.469 ուղարկ, որից 32.287.642 ու տէրութեան հաշւն էին ընկնում: Ընդհանուր զուտ արդիւնք է եղել 113.429.397 ու., որ ասել է թէ միջին թւով մի վերստի հասնում է 4241 ու.: իսկ մասնաւորապէս տէրութեան հասել է 19.185.609 ուղարկ կամ մի վերստին 2433 ուղարկ, իսկ ընկերութիւններին 94.243.688 ու կամ վերստին 4980 ուղարկ:

Քարածուխը, որը 1867 թ. արտադրում էր իբր 4.360.000 տոննա, 1888 թ. հասել էր 5.170.000 տոննայի:

Արտածութիւնը 1890 թ. եղել է 703.935.000 ուղարկ,

ներածութիւնը » » 416.065.000 »

Հացի արտահանութիւնը » 308.622.000 ու.

Բամբակ է ներմուծել ամեն տեղից 11.556.000 փուլ:

Նաւթի արտահանութիւնը հասաւ 1890 թւին 48.089.000 փուլի, լինելով 1885 թ.—10.829.000 փուլ, 1888 թւին—34.921.000 փուլ և 1889 թւին—44.800.000 փուլ:

Փաշտի արտահանութիւնը հասաւ 1890 թւին—53 միլ., մինչդեռ 1887 թւին միմիայն 27 $\frac{1}{3}$ միլ. էր արտահանել, 1888 թւին 38 $\frac{1}{5}$ միլ. և 1889 թւին 54 $\frac{9}{10}$ միլիոն:

Ոսկու արտադրութիւնը 1890 թ. հասաւ մօտ 1945 փուլի:

Անցնենք աչժմ պետական եւք ու մուտքի նախա. հաշւին առ 1893 թ.:

ՊԵՏԱԿԱՆ ԵԼՈՒՄՈՒՏՔԻ ՆԱԽԱՀԱՇԻԷ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

I

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՈՑՆԵՐ

1892 թ.

1893 թ.

Ուղղակի տուրքեր	94.950.680 ռ.
Անոնուղղակի »	474.621.323 »
Մարսեր	61.279.450 »
Պետական բեղալիաներ	38.537.114 »
Արքունի գույքեր և գրամագլուխներ	135.494.897 »
Պետական կալուածների վաճառումից	827.720 »
Ազատավճարներ	77.000.000 »
Պետական գանձարանի ծախսեր փոխարինումն	72.007.394 »
Ջանազան հասցիներ	6.413.565 »
886.544.325	Գումար սովորական հասցիներին . . . 961.222.143 ռ.

II

ԱՐՏԱԿԱՐԳ ՄԻՋՈՑՆԵՐ

Պատերազմական վարձատրու-թիւն	3.536.335 ռ.
Պահ տրուած գումարներ պետա-կան բանկին՝ կաւիտեանս	1.200.000 »
Յատուկ գրամագլուխներ, որոնք դարձնում են պետական գանձարանի ընդհանուր միջոցներին	5.937.574 »
Սպասելիք եկամուտ վարկիւն գործողութիւններէ	68.562.333 »
74.268.375	Գումար արտակարգ միջոցներին . . 79.236.242 »
965.303.066	Ընդհանուր գումար . . 1.040.478.385 ռ.

ԱՌ 1893 թ., ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ 1892 թԻԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ՊԵՏԱԿԱՆ ԺԱՒՔԵՐ

I

Ս Ո Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Խ Ք Ե Ր

1892 թ.

1893 թ.

247.824.688 ռ.	Պ ե տ ա կ ա ն պ ա ր տ ք ի վ ճ ա ր ի	
	հ ա շ լ ո ղ	264.325.647 ռ.
2.106.411 »	Պ ե տ ա կ ա ն բ ա ր ձ ր ա գ ո չ ն հ ա ս-	
	տ ա տ ու թ. հ ' ա շ լ ո ղ	2.115.165 »
11.405.154 »	Ս ի ն ո ղ ի հ ա շ լ ո ղ	11.887.004 »
10.560.000 »	Կ ա լ ու ե ր ա կ ա ն տ ա ն մ ի ն ի ս տ ր.	10.560.000 »
4.812.412 »	Ա ր տ ա ք ի ն գ ո Ր ծ . » »	5.289.909 »
228.907.132 »	Զ ի ն ու ե ր ա կ ա ն » »	232.937.030 »
47.882.232 »	Ծ ո ղ ա լ ի ն » »	49.892.803 »
119.008.304 »	Ֆ ի ն ա ն ս ն ե ր ի » »	122.572.579 »
24.539.715 »	Պ ե տ ա կ ա ն կ ա լ ա ծ ն ե ր ի »	25.458.305 »
80.972.998 »	Ն ե ր ք ի ն գ ո Ր ծ ե ր ի » »	82.352.659 »
21.868.914 »	Ժ ո ղ ո ղ ը ր զ. լ ու ո աւ ու թ ե ա ն »	22.411.434 »
63.653.051 »	Ճ ա ն ա պ ա ր հ ն. հ ա ղ ո Ր զ ա կ ց. »	70.800.814 »
24.571.192 »	Ա ր զ ա ր ա զ ա տ ու թ ե ա ն »	25.310.830 »
4.284.162 »	Պ ե տ ա կ ա ն կ ո ն տ Ր Ո Ղ ի »	4.466.043 »
1.268.695 »	» ձ ի ա պ ա հ ու թ ե ա ն	1.310.163 »

931.690.385 »

Պ ա՛շ ա Ր ի ե պ րո լի ա ն ա լ ի զ ն ե Ր ի

բ ա ր ձ ր ա ն ա լ ու գ է պ ը ի հ ա մ ա ր 6.000.000 »

Զ ն ա ի ո ա տ ե սւ ա ծ ծ ախ ս ե Ր 10.000.000 »

893.668.066 » Գ ու մ ա ր ս փ ո Ր ա կ ա ն ծ ախ ս ե Ր ի 947.690.285 »

II

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Դ Ծ Ա Խ Ք Ե Ր

Ե Ր Վ ա թ ու ղ ի ն ե Ր ի ե ն աւ ա հ ա ն-

գ իւ տ ն ե Ր ի հ ' ա մ ա ր 62.161.000 »

Վ ե բ ա ս պ ա ու ա զ ի ն մ ա ն հ ա մ ա ր 29.607.000 »

Յ ա տ ու կ մ ի ջ ոց ն ե Ր պ աշ ա Ր ի 1.000.000 »

71.635.000 ռ. Գ ու մ ա ր ա թ ա կ ա ր զ ծ ախ ս ե Ր ի 92.768.000 »

965.303.066 » Ը ն զ հ ա ն ու Ր գ ու մ ա ր ը 1.040.458.385 ռ.

Առ ղեկավարներ 20, 1892 թ. պետական զանձարանի կարգադրու-
թեան ներքոյ էին հետեւեալ կանխիկ գումարները.

Ոսկով	88.886.680	ռուբլի
Արծաթով (բանկային)	7.791.116	»
Թղթադրամով	37.893.468	»
Տոկոսաբեր թղթեր, ոսկու արժէքով	7.219.277	»
» » թղթադր. »	9.260.783	»

Հէնց առաջին հալեացքից աչքի է ընկնում 1892 և 93 թ. նախա-
հաշիւների գումարների մօտ 74 միլ. ռ. զանազանութիւնը, որ առաջ է եկել
ոչ լոկ եկամուտների աւելանալուց, այլ մասամբ այն հանգամանքից, որ
ներկայ 93 թ. նախահաշուում ոսկու և արծաթի հաշուով ստանալի արդիւնք-
ները հաշւած են՝ 1 ռ. 70 կ. թղթադրամ=1 ռ. ոսկի և 1 ռ. 19 կոպէկ
թղթադրամ=1 ռ. բանկային արծաթ,—մինչդեռ 1892 թ. նախահաշուով
դրանց տեղ ընդունւած են եղել՝ 1.60 կ. թղթադրամ=1 ռ. ոսկի և 1.12
կոպէկ թղթադրամ=1 ռ. արծաթ:

Մինչդեռ եւքի գումարները թէ 92 թ. և թէ 93 թ. դրած են իրար
համապատասխան ձևով, այնպէս որ բացատրութիւնների տեղիք չէ մնում,
թէ որ միևնույն գումար հաշուով ներկայ 93 թ. նախահաշուով աւելի մեծ
գումար է մտնելու համեմատաբար 92 թ. նախահաշւի հետ—նոյն ազդ-
պիսի համեմատութիւն անկարելի է անել մուտքի վերաբերեալ, քանի որ
93 թ. նախահաշւի ազդ բաժինը ալ սիտոսեմի է կենթարկւած քան 92 թ. ա-
կանինը: Մենք կօգտուենք ֆինանսների մինիստր Վիտտէի տւած բացա-
տրութիւններից ազդ բաժինը լուսաբանելու համար: Համեմատաբար 92 թ.
հետ աւելի է հասնում սպասւում 1893 թ.:

Հողաւին տուրքերից և անշարժ կաււած-

ներից.	339.067 ռ.
Քաղաքաւին անշարժ գուքերից	858.000 »
Առևտրական վկայաթղթերից և խոշո- րացրած առհարիւրական տուրքից	3.400.000 »
Պ/ւաբեր թղթերի վրա եղած տուրքից.	473.000 »
Խմրիչ կեղէնից՝ շնորհիւ աւելացրած $\frac{3}{4}$ կոպ. (մի գրադուար համար) ակցիզի սպիրտի վրա նաև գարեջրի մի վեդրովին 10 կոպէկ	10.000.000 »
Խմրիչ կեղէնի հասցւթն. սովորական աւելացումից	4.822.740 »
Թամբաքուց, շնորհիւ նոր աւելացումից հին ակ- ցիզի վրա 2 ռ. փութին և $\frac{50}{100}$ թամբաքւի առևտուր անողների վրա	2.300.000 »
Շաքարի հասցւթներից սովորական աւելացում է սպասւում.	2.081.000 »

Նաև շնորհիւ նոր աւելացած ակցիզի	5.400.000 »
Նաւթից, շնորհիւ աւելացրած ակցիզի	5.000.000 »
Եւ հասույթների սովորական աւելացումից . . .	1.014.000 »
Լուցկիից, շնորհիւ աւելցրած ակցիզի	2.798.000 »
Մաքսերից	24.070.000 »
Փոստից	940.050 »
Հեռագրից և հեռախօսից	1.100.000 »
Անտառաչին արդիւնքից համեմատաբար 92 թ. .	1.585.000 »
Արքունական երկաթուղիներից՝ շնորհիւ պետու- թեան ձեռքը անցած նոր երկաթուղիների . .	5.770.000 »
Երկաթ ուղաչին ընկերութիւնների վճարումներից	4.177.964 »
Եւ մի քանի այլ հաշիւներով՝ մօտ	7.000.000 »

Եթէ այս բոլոր սպասուող աւելացումներից ի մի գումարենք այն գումարները, որոնք արդիւնք են Ֆինանսների նոր մինիստրի նոր կարգադրութիւններին և բռնած զիրքին, աչն է աւելացնել անուղղակի տուրքերը կը ստանանք

Խմիչէկեղէնի նոր ակցիզը	10.000.000 ռ.
Թամբաքւի » »	2.300.000 »
Շաքարի » »	5.400.000 »
Նաւթի » »	5.000.000 »
Լուցկիի » »	2.500.000 »

Գումար . . . 25.200.000 ռ.

Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու թէ մինչ որ աստիճան կիրականաւ ներկայ տարւոյ նախահաշիւը իւր ամբողջութեան մէջ, — մենք կը շատանանք մէջ բերելու պ. մինիստրի հետեւալ խօսքերը վերաբերմամբ այդ 25 միլ. նոր ակցիզի:

«Աչքի առաջ ունենալով այդ տուրքերի վճարողների մեծ չրջանը — դժար ենթադրելի է աչն վախը թէ այդ տուրքերը զգալի բն կը կադմեն աղղարնակութեան՝ վճարելու ընդունակութեան» (платежная способность):

*
* *

Մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու թէ վարկի նոր առաջարկող եղանակների մասին և թէ եղածների մասին:

Փոխատուխնաչողական ընկերութիւնները, գերմանական Շուլցէ-Դելիլի՛ի ընկերութիւնների ձեռով, գոյութիւն ունին Ռուսաստանում մօտ 25 տարի: Եւ մինչդեռ ոմանք ռուս մամուլի մէջ աշխատում են նապիցնել այդ տեսակ ընկերութիւնների անկատարելիութիւնը և նոյն իսկ անօգտակարութիւնը, թւերի վրա հիմնած իրողութիւնը հակառակն

է ապացուցանում, 17-րդ տեղեկագիրը գիւղական փոխատու-խնայողական ընկերութիւնների մասնաժողովի—պարունակում է ալն թւերը, որոնց մասին խօսելուց առաջ երկու տողով բացատրենք ալզ ընկերութիւնների պալմանները, քանի որ դոցա նպատակը պարզ է:

1) Ընկերութիւնը կարող է փող ընդունել և փոխ տալ:

2) Ներկուսի գումարը մի ընկերութեան համար չը պէտք է աւել լինի քան ընկերակցական ու պահեստ գումարներից հինգ անգամ աւելի:

3) Ընկերութեան անդամակցում են առանց դասակարգերի խտրութեան և փոխադարձ պատասխանատուութեամբ բոլոր անդամների:

4) Ամեն մի անդամ փոխ կարող է վերցնել ընկերութիւնից $1\frac{1}{2}$ անգամ աւելի քան է իւր անդամավճարը, եթէ առանց երաշխաւորի է վերցնում, իսկ մէկի երաշխաւորութեան դէպքում—տւած անդամավճարից երեք անգամ աւելի է կարող փոխ ստանալ:

5) Փոխ է տրւում անհատի, առանց գրաւի և ոչ աւելի քան մի տարով:

6) Միջին թւով անդամակցական վճարը չէ աւելի քան 50 ռուբլի:

Այս հիմունքների վրա Ռուսաստանում վաթսուն թւականների վերջերքից առ 1 յունւար 1890 վաւերացրած են հղել 1463 ընկերութիւնների կանոնադրութիւններ՝ իրարից չնչին փոփոխութիւններով: Ալզ թւից շարունակում էին գործել առ 1890 թւականը 836 ընկերութիւններ, իսկ 424-ը փակւել էին չատ ու քիչ գործելուց չհտով:

Այս վերջին թիւը հետաքրքրական է քանի որ տեղեկութիւններ կան դոցանից 276 մասին, որոնցից 124-ը փակւել են անդամների գործը տանելու տգիտութիւնից, 53-ը պատահական սլաճառներից, 43-ը անկարող լինելով վճարել ընկերութեան սկզբնական փոխառութիւնը և միմիայն 56-ը անդամների չը վերադարձնելուց իրանց վերցրած փոխառութիւնների:

Առ 1 յուն. 1890 թիւը գոյութիւն ունեցող 836 ընկերութիւններից մասնաժողովին ուղարկել էին իրանց հաշիւները 730 ընկերութիւններ և ահա թէ ինչպէս է ձեակերպւում դոցա գործունէութիւնը 1867 թ. սկսած: 730 ընկերութիւններ՝ մասնակցութեամբ 202.749 անդամների, անդամավճար դրամագլուխ՝ (паевоѣ) 6.232.466 ռ., պահեստի դրամագլուխ՝ 1.279.447 ռ., զանազան դրամագլուխներ՝ 197.656 ռ., պահ տւած գումարներ (вкладѣ) 5.081.910 ռ., փոխառութիւններ 5.036.810 ռ., և փոխառութիւններ փոխառածների հաշիւն 16.288.523 ռ.: Ամբողջ ժամանակամիջոցում ընկերութիւնների ստացած շահն է $10\frac{1}{2}$ միլ. ռ., իսկ արած 53 միլ. ռ. փոխառութիւններից ընկերութիւնները ետ են վճարել 49 միլիոն ռ.: Այս ընկերութիւնները վաւելում էին վարկ սկսական բանկից և պարտ էին սրան փոխառաբար վերցրած 20 միլ. ռ. առ 1 յուն. 1887 թ. և միմիայն 25 ընկերութիւններ էին որ անճիշտ են հղել դէպի իրանց պարտքերի վճարը ընդամենը 88 հազար ռուբլիով, որից բանկը գուցէ կորցնի

միմիալն զրա կէսը, մինչդեռ ընկերութիւններէց իւր տոացած չահը հասնում է 665.000 ուս:

Ալժմ անհերքելի կը դառնալ նաև ալս տեսակ ընկերութիւններէ մատուցած մեծ ծառայութիւնը և օգուտը եթէ ասելու լինինք, որ անդամները փոխ էին առել 3 ամսից սկսած մինչև 1 տարի ժամանակամիջոցով 217 միլ. ռուբլոց առելի և տոկոս վճարել մօտ $17\frac{1}{2}$ միլ. ուս: Եւ եթէ ալս վերջին գումարից հանելու լինինք մօտ $5\frac{2}{4}$ միլ. ուս: որ ևս տրեցաւ անդամներին իբրև օգուտ, ասել է թէ որանք վճարել են վերցրած փոխառութիւններէ համար լսկ $11\frac{2}{3}$ միլ. ռուբլի, կամ 7,60%:

Որ ասեղից էին կարող դիւղացիք փող ձեռք բերել ալդ պիտի է ժանադին տոկոսով:

*
* *

1891 թ. սեպտեմբեր ամսից Լոնդոնում գոլութիւն ունեցող «Հրէական գաղթականական ընկերութիւնը» անցեալ տարւանից իրաւունք տուցաւ գործելու նաև Ռուսաստանում:

Ընկերութեան հիմնադիրն է հանրածանօթ բառոն Հիւշը, որ մենմեակ է լրացրել ընկերութեան գրամագլուխը աչն է 50 միլիոն Փրանկ, իւր իսկ սեփական միջոցներէց:

Ծրագրւած է 25 տարում Ռուսիայից գաղթացեալ Արդենտինա, Բրազիլիա, Կանադա, Մեկսիկա. և Միացեալ Նահանգները 3.250.000 ռուսահայատակ հրէաներ: Գաղթականական փորձը պիտի սկսէր 92 թականից 24.000 հրէաներ գաղթացեալով, իսկ աշուհետե տարեց տարի ալդ թիւը պիտի աւելացնէին:

Ընկերութեան նախագահն է ինքը բառոն Հիւշը, որի հաւատարմատար անգլիահայատակ Ուալտը եկել էր Պետերբուրգ վիշեալ բանակցութիւնները սկսելու ռուս կառավարութեան հետ: Ալդ ընկերութիւնը, ինչպէս վերը վիշեցինք, արդէն ճանաչած է Ռուսաստանի կողմից և արդէն բացած ունի Պետերբուրգում կենդրոնական գաղթական կոմիտեա նաև իրաւունք ըստ հարկին միւս քաղաքներում ևս տեղական կոմիտեաներ հաստատուելու:

Ժամանակաւոր և կեղծ գաղթականութեան առաջին առնելու համար (զինուորական ծառայութիւնից ազատուելու համար և առկա էլի ռուսահայատակ վերադառնալ) ռուսաց կառավարութիւնը ի թիւս ալ նախազգուշութիւններէ պահանջել և ստացել է 100.000 ռուբլու մի կանխավճար, որ և գտնուում է իբր գրաւական պետական բանկում:

*
* *

Ռուս Церковный Вѣстникъ կրօնական ամսագիրը նորերս մի չօղած է տպել, որով փարատում են այն կասկածները թէ իւր ռուս բարձր հոգևորականութիւնը ընդդէմ է գծրաղ ամուսնութիւնների լուծելու խնդրին: Ամսագրի ասելով—«Եթէ որ ամուսնական կապերի ներքին բովանդակութիւնը կորել անչալտացել է—ամուսնութիւնը նման օրինակ պալմաններում իւր ուժի մէջ թողնել—պահպանել—կը նշանակէր գիտակցօրէն թող տալ ամուսնական խորհուրդը ոտնակոխ անելու աշխարհներին, որոնք կամ չեն ըմբռնում ալի խորհուրդը, կամ ակնաչափն անընդունակ են նրան (блжостѣ) պահպանել բոլոր մաքրութեամբ և բոլոր անմատչելութեամբ... Երկու չարիքից պէտք է ընտրել փոքրագոյնը. հարկաւ ամուսնալուծութիւնը չէ ցանկալի, տիտուր և ակնաչափն մի չարիք է,—բաց արդեօք կրկնակի չարիք չէ անքակտելի թողնելը աշխարհի ամուսնութիւնների, որոնց համար ալի կապերը չեն պահպանել ոչինչ սրբութիւն և որոնց համար ամուսնական կապերի սրբութիւնը և մաքրութիւնը—լոկ մի դատարկ հնչիւն է»:

Ռուս մամուլի մի մասը առաջ բերելով այս կարծիքները այն միտքն է չալնում որ իրապէս, ռուս օրէնքները թողատրում են ամուսնալուծութիւնը միայն մի դէպքում՝ ամուսիններից մէկի անհատատարութեան ապացուցւած դէպքում (հաշի չ'առնելով ամուսիններից մէկի աքսորելու դէպքը և անչափ գտնւելունը)—մինչդեռ 1827 թ. Պետերբուրգում, Սինոդի ձեռքով հրատարակւած «Յանկ օրինաց արեւելեան լուսական եկեղեցւոյ» գրքի մէջ կան նաև հետեւալ կէտերը վերաբերեալ ամուսնալուծութեան:

- 1) Ամուսնալուծութիւններ կատարել չնացողութեան դէպքերում Աւետարանի հիման վրա:
- 2) Եպիսկոպոս ձեռնադրւած ռուս պրեսվիտէրներին բաժանել սոցա փոխադարձ համաձայնութեամբ:
- 3) Ամուսիններից մէկի կամ միւսի ապացուցւած չար մտադրութեան դէպքում դէպի իւր կողակցի կեանքը:
- 4) Եթէ մարդը անբուժելի է հիւանդ:
- 5) Բաժանել կնոջը, որը լողացում է բաղնիսում ուրիշ ամուսնացած մարդու հետ, կամ որը գիշերում է ուրիշի տանը առանց իւր մարդի թուղտութեան և որի չնանալը—ապացուցւած է:
- 6) Կնոջը—որը զրպարտւած կը լինի դատաստանի առաջ իւր մարդու ձեռքով և որի (կնոջը) չնանալը չէ ապացուցւած՝ բաժանել, եթէ ինքը (կինը) կը ցանկանալ և կը պահանջի:
- 7) Մարդուն, որը իւր կնոջ համար միջնորդութիւն է անում (своею своею жену):

8) Մարդուն, որը իւր կնօջը չի ճանաչել երեք տարուց չհտոյ (не познавшего) և այլն:

*
* *

1878 թվականին էր որ առաջին անգամ պ. Տոպորնինի ստորագրութեամբ մի լօղած երեաց «Ալուօ» (Алю) ռուս սոմազրում, որը և առաջին անգամ հրատարակով ուշադրութիւն դարձրեց ռամիկ ամբոխի զարգացման կարևոր հարցի վրա:

1884 թվականին լոյս տեսաւ Խարկովի վարժուհիներէ հրատարակած ժողովածուն. «Ինչ կարգաչ ժողովուրդը»՝ մի հրատարակութիւն, որը, ըստ Գլեք Ուսպենսկու, «երկնային մի մանանաչ էր հոգի ցամքեցնող մեր կենսական դատարկութեան մէջ»:

Նոյն 1884 թ. հիմնել է «Ընկերութիւն օգտակար գրքերի տարածման համար»: Ապա հիմնեցաւ Մարակուսի «Ժողովրդական գրադարանը», ապա 1885 գործի է կանգնում «Միջնորդ» հրատարակչական ձեռնարկութիւնը: Սոցա միակ նպատակն էր մրցել էթանագին բալլ միևնույն ժամանակ վնասակար, «լուրջնը» կոչած գրոշանոց հազարաւոր հրատարակութիւնների հետ—հրատարակութիւնների սթոք գրգռում են ռամիկի կրքերը, վատ բնազդումները, հաստատում նրա սնտիապաշտութիւնը և նախապաշարումները:

Բալլ միմիա՛ն բարի ցանկութիւնը քիչ էր ժողովրդի կրթութեան ծառաելու համար և հարկ եղան մի քանի տարաւ վորձեր իմանալու համար թէ իսկապէս ինչ ուղղութեամբ պիտի կազմէին ինտելլիգենտների ձեռքով պատրաստած ռամիկի համար ալ գրքերը:

1885 թվականից սկսած ռուս մամուլը իւր լուրջ ուշադրութիւնը դարձրեց ալ հարցի վրա որին և Նւիրնիյին զանազան լօղածներ՝ Русскія Вѣдомости, Русскій Начальный Учитель (1885 թ.), Русская Мысль (1887 թ.), Русское Богатство (1889) և վերջապէս Наблюдатель'ը (1892 № 7), որը դալիս է մօտաւորապէս հետեեալ հղրակացութեան. ռամիկական հրատարակութիւնը պիտի լինի էթանագին, պատկառելի ծաւալով, խոշոր տառերով և պատկերազարդ, մաքուր դրական լեզուով դրած՝ բալլ պարզ և ռամիկին հասկանալի մի լեզուով: Նախադասութիւնները կարճ, դարձածները՝ հնչող մըռնելի: Մեկնութիւնները պարզ, զուրկ վերացականութիւնից և լիրիկական աւելորդարանութիւններից: Պատմութեան բովանդակութիւնը պիտի լինի ոչ օտար ժողովրդական խաւերի համար և կենդանի աչքին քննարկով:

ժողովրդական—գիտական գրքերը աւելի ևս մեծ խնամքի են կարօտ ոճի պարզութեան և կարճութեան կողմից։

Առհասարակ ժողովրդական գիրքը պէտք է սիրոյ, ճշմարտասիրութեան և խաղաղասիրութեան մտքեր տարածել կարողանալ ժողովրդի ստոր խաւերի մէջ և օրինակներ տալ հասարակական կեանքի լուսաւոր և պողարեր ծառայութեան։

Պիտի կարողանալ լաւայնել ժողովրդական բարոյականութիւնը և արթնացնել սամկի թմբած ուղեղը։

Աւելայնինք որ ուսն ամսագրերից մի քանիսը պարբերաբար ուշադրութիւն են դարձնում և գրախօսում ժողովրդական ալս նոր օրինակի հրատարակութիւնները։

*
* *

Ռուս լեզուով լոյս տեսած նոր գրքերից արձանագրենք։

1) Итоги Экономическаго изслѣдованія Россіи по даннымъ земскоѣ статистики, Т. I. Крестьянская община. В. В. Москва, стр. 600, գինը 3.50 կ.։ Այս հետաքրքիր գիրքը, որի հեղինակը է պ. Վ. Վ. — ուսն հասարակութեանը իւր տնտեսագիտական բազմաթիւ աշխատութիւններով քաջ ծանօթ մի անձնատուութիւն, հիմնել է իւր ալս հետազօտութիւնը ճշգրիտ թւերի վրա, որ մատակարարել են նրան Ռուսաստանի գիւղական վարչութիւնների վիճակագրական թւերը։ Այս առաջին մասը, բաղկացած է 600 երեսին—նւիրում է ուսն համայնքի ուսումնասիրութեանը գլխաւոր ապէս՝ հողատիրական տեսակէտից, հողի արդիւնաբերութեան, արենդի, տուրքերի վճարելու ընդունակութեան տեսակէտներից և ալն։

2) Գեոթէի գրւած քննքը ուսն գրողներին թարգմանութեան մը, 3 հատոր, խմբագրութիւն Վաչնբերգի, հրատարակութեամբ Ն. Գերբելի, որը լաւանի է իւր նմանօրինակ հրատարակութիւններով Շեքսպիրի (4 հրատարակութիւն), Շիլլերի (6 հրատ.), Բալզընի (3 հրատ.), Ներկալ հրատարակութիւնը երկրորդ տպագրութեամբ է և բարեփոխած։

3) Մ. Պ. Պոգոբիւնի կեանքը և աշխատութիւնները։ Ն. Բարսուկովի աշխատասիրած ալս վեցերորդ հատորը, որը բաղկացած է 400 երեսից, — վերաբերում է ուսն նշանաւոր գրողի և դործիչի կեանքի միմիալն երկու տարիներին, ալն է 1840—1842։

4) Եւրոպալի պատմական աշխարհագրութիւնը, թարգմանութիւն Է. Ֆրիմանից, 2 հատոր։

5) Ռուսաստանի վիճակագրութիւնը՝ հացի բերքը 1891 թ. 60 նահանգներում։

6) Ընդհանուր թերապիա — հանդուցեալ պրոֆ. Ալիսվալդի, հրատարակութիւն Ն. րգ, բարեփոխած։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Պ. ԱՌԱՔԵԼ ԾԱՏՈՒՐԵԱՆ, որպէս հաղորդում է «Տարազ»-ը մտադրութիւն ունի մի գիւղատնտեսական ուսումնարան հիմնելու Զանգեզուր գաւառում (Գանձակի նահանգ, Շուշու գաւառի հարեան) և որ ալդ մասին ծրագիրը արդէն իսկ կազմել է աջակցութեամբ մասնագէտներին: «Մուրճ»-ը միշտ մի առանձին ջերմ վերաբերմունք է ունեցել դէպի գիւղական ժողովրդի խնդիրները և շահերը. իսկ գիւղատնտես ինտելիգենցիայի կազմութիւնը ալս ամսագրի արծարծած և փալիալած մտքերից մէկն է: Այս ինտելիգենցիան մինք սպասում ենք զլիսաւորապէս մեր երկրում գոյութիւն ունեցող և զեռ հիմնելիք գիւղատնտեսական ստորին և միջին ուսումնարաններից: Եթէ ստույգ է հաղորդւած լուրը և եթէ պ. Ծատուրեանը իրազործի ալդ մտադրութիւնը, Կովկասեան հայերիս մէջ նա կը լինի առաջին օրինակ աւողը ալդ շաւղում և վրացի պ. Ծինամզգւարովից լետով նա կը լինի երկրորդը Կովկասում մասնաւոր գիւղատնտեսական գպրոց հիմնողը:

† ՏԵՆ (Taine), Հիպոլիտ, Ժամանակիս ամենանշանաւոր կրիտիկոսը վախճանեց 21 փետրու. (նոր տոմարով մարտի 5):

«ՄԱՍԻՍ» Թերթը (պ. Պոլսի), որ հրատարակւում էր 3 շաբաթը մի անգամ, ալժմ, չունւարից, հրատարակւում է շաբաթը մի անգամ, դառնալով շաբաթաթերթ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ համար ընտրութիւններ: Մեր ընթերցողներին չալտնի է, որ օրէնքով 11 չունիսի 1892 թ. քաղաքալին ինքնավարութեան պոլիժենիսն ենթարկւեց կարևոր փոփոխութիւններին: Քաղաքալին ինքնավարութեան ալժ նոր պոլիժենիսն կը սկսի գործադրել ներկալ 1893 թ. ալկանից: Ալժ պատճառով ալժմեան խորհրդարանը (դումա) կը լուծի չուտով և կը կատարւեն ընտրութիւններ նոր օրէնքի համաձայն: Նոր օրէնքով զգալի կերպով սահմանափակւում է ընտ-

րողներին թիւը. կը մասնակցեն միայն նոքա, ովքեր քաղաքում կալածք ունեն 1500 ռ. աւելի արժողութեամբ և կամ ովքեր 1-ն կամ 2-դ կարգի գիլդիական վկայականներ ունեն: Փետրուարին քաղաքային վարչութիւնը վերջացրեց ընտրողներին ցուցակ կազմելը, որ և տրեց տպագրութեան: Այդ ցուցակում մտցրած են 2,412 հոգի, որոնցից 250 հոգի իբր գիլդիականներ, մնացածը՝ իբր անատէրեր: Առաջագորէնքի համաձայն՝ ընտրողներին թիւը մօտ 5000 էր, ալժամ ուրիմն նախկինի կէսն է:

Յուշակը բաժանւած է երեք մասի՝ 1) Յուշակ ալն անձերի, որոնք միայն իրանք ունեն անշարժ կալածք, անա. հարկի համար գնահատւած են 1500 ռուբլուց ոչ պակաս, ալք նոյն ցանկում չիշւած են նաե ալն անձերը և հիմնարկութիւնները, որոնք առևտրական ցենզ ունեն: 2) Յուշակ ալն անշարժ կալածաների, որոնք մի քանի անձերի անբաժան սեպհականութիւն են կազմում: 3) Հրէաներ, որոնք կարող են ձախաւոր ընտրել: Առաջ ընտրողները բաժանւած էին երեք կարգի, համաձայն տւած տուրքի մեծութեան. առաջին կարգին պատկանում էին ոսկաւաթիւ մարդիկ, երկրորդ կարգին աւելի քաղմաթիւ, երրորդ կարգին՝ ամենամեծ մասը ընտրողների. և ամեն մի կարգ ընտրում էր 24-ական ձախաւոր: Ալժամ ընտրողները ալ ևս կարգերի չեն բաժանուելու, ալ լինելու է ընդհանուր ընտրութիւն: Նախկին առաջին կարգի ընտրողներից նոր կազմւած ցուցակներում մտցրած են ընդամենը 71 հոգի, նախկին երկրորդ կարգից՝ 381 հոգի: Նոր պալատներէն ուրիմն, ընտրութիւնների ժամանակ, գլխաւոր ազդեցութիւնը դրած է միջակ կարողութեան տէր անձերին:

«ԱՂԲԻԻՐ» մանկական ամսագրի ներկալ տարւալ № 1-ից երևում է, որ ալք ամսագրի ներկալ խմբագրութիւնը լաւ հասկանում է ալք թերթի իսկական կոչումը՝ լինել մանկական ամսագիր: Դատելով մեզ ծանօթ երեխաների ստացած տպաւորութիւնից՝ տպւած չօղւածները թէ լեզւի և թէ նիւթի կողմից մատչելի են և գրաւիչ, մասամբ 7—10, մասամբ 10—13 տարեկան երեխաների համար:

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅՆԵՐԸ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՒ ԹՈՒՐԲԵՍՏԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ, Բարձրագոյն հրամանով չադտարարւած է հետևելը: Պետական խորհուրդը՝ քաղաքացիական և հոգևոր դործերի օրէնքների միացեալ զեպարտամենտներում և ընդհանուր ժողովում, քննե-

լով պատերազմական միջոցներով առաջադրութիւնը՝ Անդրկասպեան և Թուրքեստան երկիրներում հաջոց եկեղեցական-ծխական դպրոցների բացման կարգի վերաբերեալ — կարծիք չապտեց՝ լրացնել 995-րդ թղ. օտար զաւանութեան օրէնքի հատ. XI, մասն I օրէնքները համագումարի, հրատ. 1857, հետեւեալ ծանօթութիւնով.

«Այս լօղաձի մէջ նշանակած դպրոցները բացում են Թուրքեստան երկրում և Անդրկասպեան երկրի կառավարչի համաձայնութեամբ:—Այդ դպրոցներում բոլոր առարկաները, բացի կրօնից, աւանդում են ռուսաց լեզուով:»

Նորին Կապերական Մեծութիւնը պետական իւրհրդի առաջադրած կարծիքը դեկտ. 1-ին 1892 թ. բարեհաճեց հաստատել և հրամայեց գործադրել:

ԲԱՔԻԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԻՅ ստացանք Նորա տարեկան հաշիւը 1892 թ. համար: Հաշիւը երևում է հետեւեալը:

Մուտք եղել է՝

Մալր գումար	54.515 ռ. 95 կ.
Դարձաձական գումար	7.554 " 03 "
Գրադարանական գումարներ	2.687 " 59 "
Ուսումնական կիսարձանի գումար.	171 " 04 "
Որդեգրական գումարներ	4.655 " 51 "
Օժիտի գումարներ	1.294 " 66 "
Պահեստի գումարներ	21.125 " 64 "
Ուսումնարանի նորակառուց շինութեան համար.	14.500 " — "

Ծախք եղել է՝

Մալր գումար մնում է	54.515 " 95 "
Դարձաձական գումարներից մսխւած է	6.560 " 08 "
Գրադարանի համար.	1.077 " 60 "
Որդեգիրներին	135 " — "
Օժիտները գումարներից	0 " — "
Պահեստի գումարներից	2.200 " — "
Ուսումնարանների նոր շինութեան 12.500 " — "	
Հին շինութեան նորոգութեան համար	2.000 " — "

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԺՈՂՈՎՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որի մասին անցեալ ամիս հաղորդել էինք, բացեց փետրուարի 21-ին և փակեց 28-ին: Ժո-

դովը գումարեւել էր չատկապէս խոլերապի կրկնելու դէպքում գործադրելի միջոցների մասին խորհելու համար:

ԱՌԱՂՔԱՂԱՔԻՑ պ. Գ. Վահցեանի մի նամակից քաղում ենք այս կտորը «Մուրճ»-ի մասին: «Մուրճ»-ը կարգալու և հասկանալու համար հարկանոր է մի որոշ ատորճանի կրթութիւն և զարգացումն ունենալ, որից ըստ մեծի մասին զուրկ է մեր տնտեսապէս ապահով դասակարգը, ալիք պատճառով էլ «Մուրճ»-ը նոցան մէջ դժւար է տարածւում, որոնք իրանց ամբողջ մտաւոր պաշարը լրագրական թերթի լուրերով են միայն հարստացնում:

Սակայն, ըստ իս, «Մուրճ»-ի ապագան լիովին ապահով պէտք է համարել, քանի որ նորա կողմն են մեր բոլոր հասկացող և բանիբուն երիտասարդները, որոնց չօղն ու հաւատը օրաւոր անւանում է «Մուրճ»-ի վերաբերութեամբ:

ՓՈԽՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈՒՇԻՈՒՄ.—Շուշի քաղաքից պ. Ա. Բաբախանեան մեզ գրում է. «Այստեղ ես տեղեկութիւններ հաւաքեցի և խմացալ, որ (1886 թ.) ծրագրւած քաղաքալին փոխատու ընկերութեան կանոնադրութիւնը վաղուց հաստատւած է կառավարութեան կողմից և բացումը թույլատրւած: Ինչ չը կարողացան հաստատապէս բացատրել թէ ով է պատճառը, որ այսքան ժամանակ ալիք օգտակար հիմնարկութիւնը մնում թուղթ է մնացել: «Նախաձեռնող չը կալ», ասում են մեր քաղաքի նոյն խակ ինտելիգէնտ ներկայացուցիչները. և ալի տեղի է ունենում մեր քաղաքի պէս մի մեծ կենտրոնում: Եղբակացութիւնները Ձեզ եմ թողնում, բալց չեմ կարող լրբել մի շատ տխուր ֆակտ չ'ասել, որ այստեղ էլ հաստատուում է ալի, որ նախաձեռնութիւն ստանձնել կարողների (հարուստների) շահերին ընդդէմ է ալի հիմնարկութիւնը, որը զոնէ մասամբ պիտի վերացնէ վաշխառուների տոկոսալին քաջադործութիւնները. ալի պատճառով նրանք մեռցրել են էժան վարկի հնարաւորութիւնը, որպէս զի ժողովրդի ստորին խաւերը միշտ հարստահարւած մնալով, չը սպառեն ալի աղբիւրները, որոնք նրանց հարստութիւն են բերում:

Կառավարութեան կողմից մինչև այժմ ծոնուցում չի եղած թէ ալի հիմնարկութիւնը փակւած է համարւում, և ալի տեղ ամենքն են կարծում որպէս էլ զեռ ուլ չէ օգտւել ալիէն եղած հաստատութիւնից»:

ՄՈՂՆՈՒ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐ, որ վտաճգեց անցեալ ամիս, տեղի ունեցաւ փետր. 28-ին, հրաւերքով եկե-

ղեցու երեսփոխ պ. Ա. Վարդապետեանի և նախագահութեամբ կոնսիստորիայից նշանակած քահանայի ժողովը լսեց պ. երեցփոխի հաշիւը 1892 թ. համար և վճռեց նորա հաստատումը թողնել մինչև որ անցեալ տարի ընտրած հաշատեաները կը քննեն աչն: Կարդացած հաշիւից երևաց, որ 1892 թ. եկեղեցին ունեցել է մալը գումար 4703 ռուբլի, որից ստացել է տոկոս 275 ռուբլ: Եկեղեցու ամբողջ մուտքը եղել է 2444 ռ. 38 կոպ., որից մխսել է 2314 ռուբլի: Եկամտի ամենախոշոր մասը կազմել է մոմագինը (1036 ռ.): Ապա պ. Վարդապետեանը չափեց իւր դիտաւորութիւնը ներքին և արտաքին բարեկարգութիւն մտցնել իւր կառավարութեանը չանձնւած եկեղեցու մէջ, որի համար հարկաւոր է եկեղեցու բիւջէն հասցնել 3703 ռուբլու, աչոյնքն մուտքը աւելացնել մինչ 1300 ռուբլի գումարով: Ժողովականները ոչ մի վճիռ չը կաշացրին նոր ծախքերի վերաբերեալ առաջարկութիւններին մասին, բայց համաձայնեցին պ. երեցփոխի հետ, որ մի ալ անգամ նա ներկայացնի ժողովին մի մանրամասն ծրագիր մուտքը աւելացնելու նոր աղբիւրների և առհասարակ բարեկարգութիւնների մասին: Այդ ծրագիրը մշակելու համար պ. երեցփոխը առաջարկեց որ ժողովը ընտրի մարդիկ, իբր իւր օգնականներ և խորհրդատուներ և ինքը առաջարկեց դորա համար չարմար մարդկանց անուններ: Ժողովը սակաւն չէր կարող աչդպիսի մի խորհրդատու մարմին ընտրել, հետեալէս մնաց, որ պ. երեցփոխը կազմէ ապագայ ժողովին առաջարկելիք ծրագիրը աչն անձերի մասնակցութեամբ, որոնց նա ինքը գիմնու հարկ կը դատի:

ՊՐ. ՂԱԶԱՐԱՍ ԱՂԱՅԵԱՆՅԻ աշխատութիւնները հրատարակելու մտադրութեան համար, որի մասին հաղորդել էինք «Մուրճ»-ի 1892 թ. № 12, Ալեքսանդրապոլից ստացել ենք մի վերին աստիճանի համակրական նամակ, որով ստորագրողները ցանկութիւն են չափեում, որ մասնաժողովը չտապէր տեղեկութիւն տալ, որպէս զի երանք ևս մասնակցեն իրանց լուսաւով: Ստորագրել են՝ պպ. Յակոբ Խաչվանքեան, Վաղարշակ Գասպարեան, Սմբատ Վիրապեան, Գէորգ Միքաէլեան, Աւետիք Մալապեան, օր. Ե. Արաբաշեան, տիկին Հեղինէ Յովհաննէսեան, Արշակ Բրտեան, Յարութիւն Արաբաշեան, Մուշեղ Մամիկոնեան:

ԲՈՒԽԱՐԱՅԻ ԷՄԻՐԸ Միւր Սէիդ-Աբգու Ախագ-խան իւր մինիստրներով և բարձր աստիճաններով անցեալ 1892 թ. դեկտեմբերի վեր-

Ջին, մի քանի օր մնալով Թիֆլիս, ուղևորեց Պետերբուրգ, իբր հիւր թաղաւոր կապերու Նա թողեց Պետերբուրգում իւր մեծ որդուն՝ Բուխարիայի գահաժառանգին աջնեղ ուսանելու զինւորական դպրոցում: Վերադարձին փետրուարի 11-ից մինչ 17 մնաց Թիֆլիսում և Բաքւի վրայով ուղևորեց իւր երկիրը:

ԷԼԳՈՒՋԱ, վէպ Ալ. Մոչխուբարձէի (Կաղբէգ), թարգմանութ. պ. Մկրտիչ Նաւասարդեանի, որը անցեալ զեկտեմբերին 1892 թ. խոստացած էր «Մուրճ»-ի մէջ տպւելու համար, կը սկսի տպւել երբ Սենկերի «Առանց Դաւանանքին» կը վերջանայ:

«ԱՐԱՐԱՏ» ամսագրի սոյն տարւալ Ձե 1-ից (տես Գրախօսութիւն) երևում է, որ նորա խմբագրութիւնը տեղեկութիւն չունի աչն որոշման մասին, որ արեւց Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովում 12 մալիսի 1892 թ., հետեւեալ բովանդակութեամբ. «Պարտաւորական է Ընկերութեան բոլոր հրատարակութիւնները երկու-երկու օրինակ ուղարկել Էջմիածնի Մալր-Գրադարանին և Գէորգեան Ճեմարանի մատենադարանին»: (Տեսնել «Մուրճ» 1892 թ. Ձե 5, էջ 848):

ՎՐԻՊԱԿ «Մուրճ»-ի ներկալ 2-րդ համարում «Արտէն Գլմաքսեան» վէպի մէջ, աչն է 231-րդ էջում սպրդել է մի տպագրական սխալ:

21-րդ գոլթի «Կոծ գոծ է»

Պէտք է հարաւ:

— Շատ ուրախ եմ. նա թնչ ման. — Շատ ուրախ եմ. նա թնչ ման-կալարծ է, որ վաշխառութիւնով է կալարծ է, որ վաշխառութիւնով է պարապում, — հարցրեց Գլմաքսեան պարապում:

Նը զարմացած:

— Համբարեանը, միթէ, — հարց-

— Համբարեանը, միթէ:

րեց Գլմաքսեանը զարմացած:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» Ձե 1.

Պր. Շիրվանդադէի Արտէն Գլմաքսեան վէպում՝

գոծէ

աղջիկ է

էջ 53, տող 1 վերեւից Նա ուրախ էր, Նա տխուր էր

Պր. Բալաղեանի լօղածում՝

էջ 123 տող 2 ներք. մինչև մինչև անգամ

էջ 129 տող 3 վեր. հաւանենք հաւաքենք

Պր. Անադչեանի լօղածում

էջ 114 տող 17 վերեւից՝ արեմտեան արեմտեան և արեւելեան

Արտասահմանեան քրոնիկում

էջ 170 տող և ներքեւից՝ աչն կողմը աչն որմը

ՆՈՐ ՍՏԱՅԻԱՆ ԳՐԵՐ

- 1) NORAYR DE BYZANCE, Néandre.—De l'urgence d'une édition critique des textes arméniens. N^o ta.—Reale Accademia dei Lincei. Estratto dai Rendiconti.—Seduta del 18 dicembre 1892.—Roma, tipografia della R. Accademia dei Lincei, 1892. (Նորայր Բիզանդացի.—Հարց բնագիրների մի քննադատական հրատարակութեան անհրաժեշտութեան մասին։
- 2) ՓԵՐԻԱՆՕԳԼՈՒ, Ի., Թարգմանութեամբ Կոստ. Մարտիրոսեանցի.—«Անգրոնիկ Նոմինէն», (պատմական վէպ), Թիֆլիս, տպարան Յ. Մարտիրոսեանցի, 1893 թ., գինն է 50 կոպէկ։
- 3) ԱՍՔԱՆԱԶ—ՓԱՄԲԱԿԵՅԻ.—«Դաշափարական օրիորդ» (վէպ) մասն Ա. Թիֆլիս, տպ. Նազարեանի, 1893 թ., գինն է 10 կոպէկ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՅ

	Բ.	Կ.
«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1890 թվականի, երկու հատորով . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
3. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» (վէպ).	1	—
4. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղզարցի)՝ «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . .	—	05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵԽ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկ- ների կեանքից	1	—
6. ԼԵՅՈ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ).	—	50
7. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՅԻ ՍԵՒ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր).	—	40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» .	—	60
9. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԷ», վէպ	1	20
10. ՓԱՓԱԶԱՆՅ, Վ. — «ԺԱԹ-ՍԱՐԱ» (հայ բոշան. կեանքից —	15	
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը —	50	
12. » » » » բ. մասը —	75	
13. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵԽ-ԼԵՈՒՅԻՔ» (տոհմագ. պատկ.) —	15	
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵԻԱՆՆԵՐ»	—	03
15. » » » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	—	03
16. » » » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	—	05
17. » » » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
18. » » » » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
19. » » » » «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	—	03

20. ԳԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻՄԵԾԱՐԱՆՔԸ»	15
21. ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՐԵՆԵՐԸ»	10
22. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ».	10
23. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	15
24. ՎՐՈՅՐ, Մ. — «ՊԵՏՐՈՍ ԱԳԱՄԵԱՆ».	20
25. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ. — «ՀԻՊՆՈՏԻՍՄ»	50
26. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ՏԻԳՐԱՆՈՒՀԻ».	50

Դիմել՝ Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Արաւսիսեանիցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարգարած Հին եգիպտական, փիլնիկական և ասորական գրու-
թիւններով և Արեւելքի Հին պետութիւնների քարտէզով):

281 երես, յառաջարան և նիւթերի ցանկ

Դրամ է 800 օրէնի, փայլուն լիւրի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 ռուբլի

Պէտք է զիմել կամ Հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, և կամ՝ Въ центральный книжный магазинъ. Ուսումնարան-ներին անուամ է 20⁰/0 զիջում:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

և

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

Յովհաննես Թումանյանի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԴԻՆՆ Է 60 ԿՈՊԵԿ

Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная торговля, կամ հեղինակին՝
Норашенская ул. № 28. կամ «Մուրճ»-ի խմբագրատանը:

Միստեմ ԶԻՆԳԵՐԻ եւ ուրիշների

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

Ասեղներ, մակոցկներ, իւղ և մեքենաների ամեն մասերը ամենա-
աժանագրած գներով

Գ. ՄՈՒԼԵԱՐՍԿՈՒ

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀՆՍՈՒՄ

Քիֆլիս, Գոլովինսկից պրոսպ., մոտքը Բարեատինսկայա փողոցից,
„Тифлисский Листок“-ի խմբագրատան տակ, տուն Ռոտինովի:
Նոյն տեղում վաճառում են Վարչաւեան դորժարանների ամեն տե-
սակ ապրանքներ, մանուսանդ թուղթ, կորացրած կարասիք, եր-
կաթէ կարասիք, ապակի, հացեղիներ, լամպեր, պատրաստի կաշի-
ներ և այլն:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1893 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Յ Ի Ա Մ Ի

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար զիմէ՛

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ { Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական գրավաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյ, Սիօնի փողոց № 27:

» պ. Յովհ. Թումանեանցի մօտ, Հրատ. Հնկ. գրասենեակում,
Բարոնակոյա փողոց:

ԲԱՔՈՒ. — պ. Աւետիս Սուլիսեանց, աղենո «Надежда» ընկ.:

ՌՈՍՏՈՎ. — ՆՈՐ-ՆԱԽԻՋՆԻԱՆ. — Եղբ. Պ. և Դ. Ունանեաններ:

ԲԱԹՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Մովսէսներ):

ՄՈՍԿՒԱ. — պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тушинна

» պ. Ստեփան Վարդադարեան, Юшковъ переу., д. Адлеръ.

ՕՂԵՍԱ. — պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. եղբ. Մովսէսներ):

ԹԱԻՐԻՉ. — պ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

ՉՄԻԻՐՆԻԱ. — պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեարայ. վարժարան):

ՄԱՐՍԷՅԱ. — պ. Սիմէօն Միրաքեանց: Rue St Jacques № 86:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼ. — Ստեփան Վեհապետեան:

ԵՐԵՒԱՆ. — Աւետիս Աղամիրզեանց:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վելեամիսեան փողոց, տուն № 8: